

U. 21

✓-1296

17999

Ա. Ե.

1296

ԶԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՄՏԵՐԻՄ ԶՐՈՅՑՆԵՐ
ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ
 (ՄԱՍՆԱԻՈՐ ՆԿԱՐՆԵՐՈՎ)

3473

Կազմեց
Փ Ղ Շ Տ Ա Ց Ի



- Ս. մուսուրիս
- Ծննդական զորքաբաններ
- Սերնդագործում
- Կուսուրիս
- Դաշտան
- Զուգաւորուրիս
- Անկարողուրիս
- Արգասաւորում
- Յղուրիս
- Սալուրիս
- Ծննդաբերուրիս
- Սևոային հիւանդուրիսներ
- Գիջուրիս
- Ջերմամիզուրիս
- Սիճիլիս

Եւ ուրիշ հազարումէկ մանրամասնուրիսներ որոնց մասին միայն բժիշկին կամ դայեակին հետ խօսելու վարժուած էք :

Հրատարակուրիս
 ԱՐՄԻ ԺՈՂՈՎՐԴ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ
 ԵՆ «ԿԻԹԷՄՊԷՐԿ ՄՏԵՆԱՇԱՐ»Ի ԹԻՒ 14

Ձ 1913
 Կ. ՊՈԼԻՍ

Պատրաստելով այս հատորը, կը կարծենք լրացուցած ըլլալ շատ կարեւոր պակաս մը:

Մենք յաւակնութիւն չունինք նախընթաց մը ստեղծած ըլլալու: Դեռ 80ական թուականներուն՝ աւելի ետ չերթալու համար, Հայերն ալ ունեցեր էին համարձակութիւն՝ թարգմանելու կամ իւրացնելու սեռային խնդիրներու մասին խօսող հատորներ: Ու այսպէս է որ հրատարակ եղան Գաղսնիք Բնութեանը, Անուսնական Առողջապահութիւնները, Օնանու Մեղքը և նմանները, որոնք կոչուած էին բարերար դեր մը կատարել ցեղին փրկիչական բարելաւման մէջ:

Այդ շրջանին՝ անշուշտ գայթակղութիւն ալ պատճառեցին նոյն հրատարակութիւնները: Թե՛րեւս այսօր իսկ տակաւին հայ ականջներու խորթ կը հնչեն այս գրքին անունը, կողքի բացատրութիւնները, ամբողջ գիրքն իսկ...

Բայց, հարցը այն է որ հայ հասարակութիւնը, երիտասարդ թէ տարէց, քսցարձակապիս կարօտ է այնպիսի հրատարակութիւններու, որոնք հասիկ-հասիկ խօսին իրեն՝ մտերիմ մակրատեսութիւններ:

Հայ երիտասարդն ու մանկամարդունին պարտաւոր են գիտնալ, ուրիշ բաներու կարգին, եթէ ո՛չ անոնցմէ առաջ, գաղսնիքները՝ իրենց սեռական կեանքին, իրենց սերնդական գործարաններու բնախօսութեան, անոնց պաշտօնին, անոնց առողջապահութեան, անոնց արդիւնաւոր գործածման: Անպարկեշտութիւն չէ այս, ո՛չ ալ գայթակղական: Բոլոր քաղաքակիրթ ազգերը, սկսելով հին

Հիլլէններէն մինչեւ այսօրուան մաքրակրօն Անդրիացիները, առանձին ուշադրութիւն դարձուցած են այս հարցին, կանոններ սահմանած, անհամար հրատարակութիւններ հանած, լուսաբանութիւններ, ծանօթութիւններ հրատարակած են: Ու տարօրինակ պիտի ըլլար որ, Արեւելքի մէջ արեւմտեան գաղափարներու սահմաններէն ըլլալ յուսակնող հասարակութիւն մը, որպիսին է հայ ժողովուրդը, կեղծ ամօթխածութենէ մը տարուած խորշէր այսքան բնական, այսքան արարական ու զուտ մարդկային ձեռնարկէ մը:

Մեռական կեանք, ամուսնական առողջապահութիւն, սերնդագործութիւն են.—հարցեր են ասոնք որոնց մասին միայն փոփոտութիւններով խօսելու վարժուած են մեր մէջ, և կամ, իրապէս դայթակղելին՝ խօսած են ու կը խօսին պատերու տակ, քիթ քիթ, տեսակ մը խենէշ արտայայտութիւններով, ձեռքի, դէմքի այլանդակ շարժումներով: Քիչերն են որ, ըմբռնելով իրենց բնասօսական դերը իրրեւ սերնդագործող էակ, լրջօրէն կը մօտենան հարցին, հետամուտ են գիտական ծանօթութիւն մը աւելի ստանալու, իրենց դերին աւելի լաւ պատրաստուելու, բնութեան պարզեւած ձիրքերը, հանդիսի և արտադրութեան կարողութիւնները պահանջուած պայմաններու մէջ օգտագործելու: Արեւելեան ունակութիւն է,—մեր մէջ մարդիկ առանց քաշուելու երկարօրէն կը զբաղին մարմնի այս կամ այն մասի վիճակով, ու կը կարմրին, անխմատ վարանումներ կ'ունենան, երբ խնդիրը կը դառնայ բուն իսկ ա՛յն մասերուն կամ այն գործողութեանց վրայ որոնք կեանքն առ ձեռն կրնան:

×

Ինչպէս ըսինք, աննախընթաց ձեռնարկ մը չէ որ կը փորձենք. բայց կը հաւատանք թէ՛ ի՞ր տեսակին մէջ լաւագոյն հրատարակութիւնն է ո՞ր հրապարակ կը հանենք: Ամէն բանէ առաջ, պէտք է նկատել որ գիտութիւնը շատ մը նորութիւններ երեւան բերած է վերջին քսանամեակին մէջ, հետեւաբար նախորդ հայերէն հրատարակութիւնները—եթէ երբեք մնացած է անոնցմէ—շատ բան կորսնցուցած են իրենց արժէքէն: Երկրորդ, չոր ուցամաք թարգմանութիւն մը, կամ խրթին՝ մասնագիտական, կամ վերջապէս մէկ հեղինակի մը գործէն փոխադրութիւն մը չէ այս հատորը: Մենք աչքի առջեւ ենք ունեցած Մեռային խնդիրներու, Անուսնական առողջապահութեան վերաբերող եւրոպական մէկէ աւելի գործեր, բոլորն ալ անվիճելի հեղինակութիւններ, ինչպէս Տոքթ. Կարնիէ, ֆրանսացի ականաւոր բժիշկ-հեղինակը, որուն Marriage (Ամուսնութիւնը) 17րդ տպագրութեան արժանացաւ, Տոքթ. Իվան Պլօք, գերմանացի գիտնական-ընկերաբանը, (The Sexual Life of Our Times) (Մեռական Կեանքը արդի ժամանակներու մէջ), Տոքթ. Փօրէլ, Տոքթ. Հօլ, և ուրիշներ, հայ թէ օտար: Մենք ջանացինք կարելի եղածին չափ հանրամատչելի դառնալ, իրենց պարզագոյն վիճակին վերածելով գիտական մանրամասնութիւնները:

Գրքին կցած ենք նաեւ շարք մը պատկերներ որոնք կ'օգնեն աւելի խոր ըմբռնելու զանազան ծանօթութիւններ, աւելի մօտէն տեղեկանալու կազմախօսական մանրամասնութեանց:

Իսկ պրակ-պրակ վաճառման եղանակը, զոր ընդհանրացուց «Կիւթէմպէրլը» ժողովրդական Մատենաշարը, կը կարծենք թէ լաւագոյն պատեհութիւնն է՝ որպէսզի ամէնէն համեստ ամուրին կամ ընտանիքի հայրն ալ կարենայ օգտուիլ սեռական գիտութեան վերջին խօսքէն:

Փ Ղ Շ Ս Ա Յ Ի

Ա. — ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ

1.—ԸՆԴԻՏԱԳՈՒՐ ԱԿՏԱՐԿ

Մարդուն մէջ բնազդական պէտք մը կայ սիրելու: Սրբունէի Թերեզա յնախօսական-հոգեբանական ճշմարտութիւն մըն է որ կը հռչակէր, երբ կ'ըսէր, իր վառ երեւակայութեան ամէնէն բանաստեղծական արտայայտութեամբ.

— «Դժոխքն է այն միակ վայրը ուր մարդիկ չեն սիրեր»:

Նորածինը կը սիրէ իր մայրը և կը ժպտի զայն տեսնելուն. երախան կը սիրէ իր մանկութեան ընկերները: Չափահասը կը սիրէ իր բարեկամները, և բարեկամութիւնը, միացած սերնդագործական բնազդին, իրեն փնտռել կուտայ կին մը՝ ամուսինը ընելու և անոր հետ բաժնելու կեանքի վաղանցուկ հաճոյքներն ու անվախճան վիշտերը: Սէրը, համաձայն պարտականութեան օրէնքին, մարդուն բովանդակ բարոյական կեանքն է. սիրտը մարդկային բնութեան անկիւնաքարն է:

Ամուսնութիւնը, եթէ նկատենք իբրև պայմանագրութիւն մը, կը ներկայացնէ այնպիսի հանգամանքներ որոնցմէ զուրկ է մարդկային ուրիշ

որ եւ է տեսակ գործառնութիւն: Սովորաբար պայմանագրութիւններու մէջ մարդ միայն իր նիւթական շահերը կը շօշափէ. ամուսնութեան մէջ՝ նկատի ունի իր մտաւոր և բարոյական անձնաւորութիւնն ալ:

Ամուսնութիւնը՝ միացումը, մէկի վերածումն է երկու անհատներու. անոր շնորհիւ սեռական կրկնակ բնութիւնը կը ձեւափոխուի միակ բնութեան մը՝ աւելի հզօր և աւելի գեղեցիկ: Ամուսնութենէն առաջ, կայ սղամարդ մը և կին մը, որոնց առաջինը կը զանազանուի իր իմացականութեան ոյժով, միւսը՝ իր զգայնութեան զօրութեամբ: Ամուսնութենէն յետոյ, մարդկային էակն է որ իր միութեան մէջ կ'ամփոփէ իր իւրաքանչիւր կէսին մէջ անջատուած բոլոր կարողութիւնները, — իմացականութիւնը կը գեղեցկանայ զգայնութեամբ և զգայնութիւնը կը բեղնաւորուի իմացականութեամբ: Արիստոփան՝ իր Խորհրդածութիւն Սիրոյ վրայ գործին մէջ, կ'ըսէ թէ տարփանքը երբ ուժգին է, փափաք կը ներշնչէ մեր էութիւնը ձուլելու սիրուած առարկայի գոյութեան մէջ և անկէ միակ էակ մը կազմելու: Արիստոտէլ ալ նոյն կարծիքը կը յայտնէ:

Ամուսնութիւնը կ'իրականացնէ այդ ցանկութիւնը, մաքրագործելով զայն, եթէ մանաւանդ պահանջուած լրջութեամբ կատարուած է ընտրութիւնը, եթէ իրապէս երջանիկ միութիւն մըն է որ կը կազմուի: Պզատոն հանճարեղ առակի մը մէջ կը ներկայացնէ երկու կէսերը, որոնք իբրեւ թէ մէկ ամուսնութիւնն են կէս էին նախնա-

կան աշխարհի մը մէջ, և իրար կը փնտռեն, իրար կը գտնեն ու կը միանան նոր միութեամբ մը:

Այրը առանց կնոջ և կինը առանց սղամարդու՝ անկատար էակներ են բնական կարգին մէջ: Ո՛րքան աւելի հակադրութիւն կայ իրենց նկարագիրներուն մէջ, այնքան աւելի միութիւն կայ իրենց ներդաշնակութեան մէջ:

Այսպէս ուրեմն, ամուսնութիւնը կը կազմէ նոր էակ մը՝ արտաքին որոշ գործարաններով, բայց խառնուած միակ սիրոյ մը, միակ մտածումի մը, միակ կամքի մը մէջ:

Եւ մարդկային էակին ընդերքէն կը ծնի նոր արարած մը, արտադրուած՝ հօր բեղնաւորիչ ոյժով և աճած՝ մօր տքնաջան երկունքով: Ու ինչպէս որ ամուսիններու հողերանական երկուութեան մէջ միութիւնը կ'արտայայտուի միեւնոյն կամքով և մտածումով, նոյն այդ միութիւնը բնախօսական երկուութեան մէջ ալ տեղի կ'ունենայ իրենց երկուքին համար հասարակաց զաւակի մը ծնունդով: Մինչև և այդ՝ ամուսնութիւնն ուրիշ բան չէր եթէ ոչ երկու էակներու յարաբերութիւնը իրենք իրենց մէջ. հիմա կը կերպարանափոխուի, երրորդ մըն ալ կը կապուի իրենց հետ. առաջ միայն միութիւն կար երկուութեան մէջ. հիմա կ'ունենանք միութիւն՝ երրորդութեան մէջ: Հայր, մայր և զաւակ՝ երեքը միասին կը կազմեն նոր անհատականութիւն մը, որ կը կոչուի ընտանիք, — ընկերային էակ մը, խարիսխը՝ նախնական ընկերութեանց և պատկերը՝ ապագայ ընկերութեանց:

2. — Ե՞րբ ամուսնանալ

Ամուսնութեան տարէքի մտաւն ոչինչ կարելի է ըսել որոշ և բացարձակ: Այդ տարիքը կը տարրերի համաձայն կլիմային և անհատին, համաձայն իւրաքանչիւր մարդու խառնուածքին, կազմութեան և առողջութեան: Երկու սեռին հասարակ անհրաժեշտը այն է՝ որ արքունիքի հասած ըլլան, այսինքն՝ ընդունակ ըլլան սերընդագործութեան: Կատարեալ աճում մարմնի, ամբողջութիւն կեանքի կարեւոր գործարաններու, մասնաւորապէս ծննդախառն գործարաններու, այնպէս որ կրնան: Կատարել իրենց պաշտօնը առանց վնասելու առողջութեան, — ասոնք են լաւագոյն ընդհանուր հանգամանքները սերնդագործական հասունութեան, անհրաժեշտ պայմաններ՝ որպէս զի ամուսնութիւնը ունենայ լաւագոյն արդիւնքներ:

Առանց կանգ առնելու գործարանային այս անհրաժեշտ հասունութեան վրայ, բոլոր երկիրներու օրէնսդիրները զանազան տարիքներ նշանակած են, համաձայն իրենց հայեցողութեան: Լիկուրգոս 37 նշանակած էր տղամարդոց համար, իսկ Սողոմոն՝ 35, որպէս զի քաջարի ռազմիկներ ըլլան: Նոյն իսկ Հռոմի մէջ արգելուեցաւ ամուսնանալ 40էն առաջ: Իսկ կիներուն համար տարիք նշանակուած է Մանու հնդիկ օրէնսդիրին կողմէ՝ 8, Նումայի կողմէ՝ 12, և պէտք է ըսել որ եր-

կուքն ալ պարզապէս հաճոյքի գործիքներ կը նկատէին զանոնք: Լիկուրգոս, որ ուրիշ բան չէր փնտռեր կիներէն բացի միայն առողջ ուժեղ սերնդագործներ, ամուսնութեան տարիք նշանակած են 20: Հին Գերմանները արրունքի տարիք ընդունած էին 18՝ աղջիկներուն և 20 այրերուն համար: Այսօր իսկ, Փրուսիոյ մէջ ամուսնութեան տարիքն է 15՝ աղջիկներուն համար և 19՝ տղամարդոց համար, մինչ Աւստրիոյ մէջ 16 է առաջիններուն համար և 20՝ վերջիններուն համար: Յրանսայի մէջ՝ օրէնքը սահմանած է արրունքի հասակը, — այսինքն՝ 18 տարեկան՝ տղամարդուն համար և 15 տարեկան՝ կնոջ համար. իսկ սովորաբար աղջկան համար ընդունուած տարիքն է 17էն 18, և երիտասարդին համար՝ 24էն 25, ինչ որ յաճախ դեռ շատ կանուխ կը նկատուի:

Իսկ մեր մէջ, Հայաստանի և Անատոլի խորերը, նոյն իսկ մեր հարեւան Նիկոմիդիոյ, Պարալլակի ևն. գիւղերուն մէջ ամուսնութեան տարիքը ամէնէն երկրորդական կէսն է... Գաւառներու մէջ դուք դժուար կը գտնէք 12-15 տարեկան աղջիկ, որ արդէն ամուսնացած և երկու զուկի տէր եղած չըլլայ: Իսկ երիտասարդները սովորաբար կ'ամուսնացնեն 14-20 տարեկանին: Երկու պարագային ալ, չարիքը աննկարագրելի է, և ոչինչ զօրած է այդ աղետալի սովորութիւնը, այդ անգիր օրէնքը գոնէ սահմանափակելու...

Իրապէս արրունք չէ կնոջ դաշտանի հոսումը և մարդուն սերմին մէջ բեղնաւորիչ ճճիներու

գոյութիւնը: Այդ երեւոյթը՝ պարզապէս առաջին նշանն է մարդկային կազմի տճման մէկ շրջանին:

Արբանքը կատարեալ չէ՝ տղամարդուն համար՝ 14էն 18 տարիներուն, ոչ ալ 12էն 15 տարիներուն՝ կնոջ համար, ինչպէս նշանակած են օրէնքները: Սովորաբար միջին հաշուով երկուերեք տարի պէտք է, իր լրութեան համար:

Իրբեւ ընդհանուր կանոն, առողջապահութիւնը կը պատուիրէ որ տղամարդը ամուսնանայ 25-33 տարեկանին և կինը՝ 20-26: Պղտոնն ալ այսպէս յիշած է և վիճակագրութիւններն ալ այդպէս կը ցուցնեն: Բայց պէտք է նկատել որ կլիման մեծ ազդեցութիւն կը գործէ, և տաք երկիրներու մէջ աւելի կանուխ կը սկսի արբունքը: Յետոյ, մեծ տարբերութիւն կը գործեն միջավայրը, քաղաքի պայմաններն ու գիւղի պայմանները:



Կանխահաս ամուսնութիւն կը կոչուին այն միութիւնները որոնք տեղի կ'ունենան արբունքէն առաջ: Այդպիսի միութիւնները կը սպառեն թէ տղամարդուն և թէ՛ կնոջ սերնդագործական ընդունակութիւնները և կանխահաս անկարողութիւն մը յառաջ կուգայ: Գիւղի անասնաբուծը կ'ուշացնէ կենդանիներու զուգաւորութիւնը, երբ տեսնէ որ շատ կանուխ կը մօտենան իրարու: Պարզ փորձառութեամբ սորված է այս բանը: Մտառը հաւերը կէս առ կէս աւելի պզտիկ հաւկիթներ կ'ածեն քան տարեջները, և ինչպէս հաստատած է Պէխլիթայն, հազուադէպ է որ քածի մը առաջ բեղնաւորութեան ստատիստիկան:

մեծ հասակ ունենան: Նոյն շրջանայեցութիւնը աւելի մեծ աստիճանով մը անհրաժեշտ է մարդկային մարմնի աճման համար. Կանխահասօրէն վատնել բեղնաւորիչ սերմը, կը նշանակէ խափանել մարդու գործարաններուն, մկաններուն աճումը, տկարացնել անոր մտքի պայծառութիւնը և պատրաստել կթոտ՝ նուազուն գոյութիւն մը:

Կանխահաս ամուսնութիւնները արտադրուած սերունդին վրայ կը թողուն ընդհանուր անկարութեան դրոշմ մը որ մեծապէս կը նպաստէ ժառանգական հիւանդութեանց յետագայ բորբոքման: Շատ մը նորածիններ աւելի տխրած են ու փափուկ քան իրենց կրտսեր եղբայրները կամ քոյրերը: Ուսուցիչներ յաճախ կը դիտեն որ այս վերջինները մտքով ալ գերազանց են: Կը հետեւի թէ արտադրիչ կարողութիւնը կը պահանջէ կրկնակի վարժութիւն, որպէս զի կատարելութեան կնիք մը թողու իր արդիւնքին վրայ:

Մահերու թիւն ալ շատ մեծ կ'ըլլայ կանխահաս ամուսնութեանց հետեւանքով: Տարաբաղաբար մենք չունինք վիճակագրութիւններ, հաստատելու համար թէ՛ օրինակի համար Վանի, Պիթլիսի, Տիգրանակերտի կամ նոյն իսկ Պրուսայի գիւղերուն մէջ ինչքան ջիւան կեանքեր կը փճանան, իրբեւ հետեւանք կանխահաս ամուսնութեանց, այսինքն իրբեւ հետեւանք տգիտութեան և բազմազան աղետալի նախապաշարումներու: Տանք, գոնէ, քաղաքակիրթ ազգերէ օրինակներ, եթէ արդէն բուսական չեն մեր ամենօրեայ պատմութիւնները, ընտանեկան թշուառութեանց ան-

աւելի մանրամասնութիւնները:—Վիճակագրութեան մը համաձայն, Յրանսայի մէջ 20 տարեկանէն վար պատանիներու մահուան համեմատութիւնն է հազարին 6, 9: Արդ, վերջերս հաստատուեցաւ որ այդ տարիքէն առաջ ամուսնացած 7-8000 պատանիներէ մեռած են հազարին 40-50 համեմատութեամբ: Թէ ուղղակի ամուսնութիւնն է պատճառ այդ մահերուն, — փաստը այն է որ Փարիզի մէջ, ուր երիտասարդները կանուխէն կը հանդիպին դիւրին սիրաբանութեանց, 18-20 տարիքի մահաթիւր 1000ին 2 համեմատութեամբ աւելի բարձր է քան Յրանսայի միւս մասերուն մէջ:

Աւելի մեծ վտանգ կայ կնոջ համար, մանաւանդ որ ան պղտիկ է և փափուկ: Կանխահաս ամուսնութեան մը հետեւանքով ստիպուած իր վտիտ մարմնին մէջ կազմել ու կրել նոր էակը, մանկամարդուհին՝ դեռ երեխայ—ինչպէս բիւրաւոր անխօս Հայուհիներ—կրնայ զրկուիլ իր գոյութեան անհրաժեշտ նիւթերէն, իր աճումը կատարեալ չըլլալով, և պարզապէս ծնունդ կուտայ վիժածներու:



Յապաղած Ամուսնութեան անպատեհութիւններն ալ կինը կը կրէ մեծագոյն չափով: Այս պարագային, կինը աւելի տրամադիր է վիժման, որովհետեւ արգանդը չընդլայնիր, կոնքի ոսկորներուն յօդերը պէտք եղածին պէս չթուլնալով, ծննդաբերութիւնը կը դժուարանայ և տաժանելի կը դառնայ, իսկ տղաբերքի հետեւանքները՝ աւելի երկար կը տեւեն և աւելի վատնաւոր կը դառնան: Գալով զաւակներուն, անոնք զուրկ կ'ըլլան իրենց տարիքին յատուկ աշխուժութենէն և զուարթու-

թենէն: Ասոնք ենթակայ են ուխրաթեֆուրեան (rachitisme) և յաճախ հիւժախտէ կը մեռնին, թէև և իրենց ծնողքը զերծ ըլլան այդ հիւանդութենէն: Եթէ երբեք ապրին, շատ չեն աճիր և կանխահասօրէն կը բռնուին տեղատեսական հիւանդութիւններէ (մայսալը):

Ինչ կը վերաբերի ոչ-հաւեւաստիան ամուսնութեանց, դիւրին է ըմբռնել անոր հետեւանքները: Վառվառն, կենսալիր մանկամարդուհի մը ինչպէս կրնայ կողակից դառնալ տարիքէն մաշած և յաճախ զգայական հաճոյքներէ ջլատ տղամարդու մը: Այս վերջինը ինքզինքը դատապարտած կ'ըլլայ աւելի կամ նուազ յամր անձնասպանութեան մը, և, ինչպէս այնքան գեղեցկօրէն զխտել կուտայ Այեքսանդր Հարտի,

Մեկ բան միայն,
Նոյն բանը պիտի գործածուի,
Ձիկնը անկողին և անկողինէն գերեզման առաջնորդիւ հաւար:

Երիտասարդի և ծերի անյարմար ամուսնութիւններով, մարդոց բարոյականն ալ կը խաթարուի, — որովհետեւ, ընդհանրապէս այդպիսի միութեանց գլխաւոր շարժառիթներն են շահախնդրութիւն՝ երիտասարդին կողմէ, մոլի ցանկասիրութիւն՝ ծերին կողմէ: Միտախն ծերացած ամուսիններու միջեւ, ցանկութիւնները կը մարին միութեամբ. մինչդեռ երիտասարդութիւնը զանոնք կ'արթնցնէ բուռն թափով, մանաւանդ որ քնացած կամ մարած էին: Այդ առփանքի ախտաւոր հանգամանքը և վայրագ, հիւանդագին

արտայայտութիւնները տրամագծապէս հակառակ արդիւնքներ կուտան: Երիտասարդ ամուսին մը ինչպէս պիտի պատասխանէ հրապոյրէ և գեղեցկութենէ զուրկ պառաւի մը զրգուիչ և կրկնակի գգուանքներուն, եթէ խննէչ մը չէ: Յուսախար իր պատրանքներուն մէջ, իր բնագղչներուն և հայրութեան ծրագիրներուն մէջ—որովհետեւ պառաւ կինը այլ եւս անընդունա՛յ է յըութեան—չատչանցած ուրիշ ընկիւք չպիտի ունենայ բայց միայն գրօնուկ և ցօփ կիներու մէջ փնտուկ իր ճաշակներուն, իր երիտասարդական ցանկութիւններուն գոհացումը և հարստութեան գործածումը, եթէ կարենայ ձեռք անցընել:

Պարագան աւելի ծանր է մանկամարդ աղջկան համար, երբ համոզկեր խօսքերով կամ արտաքին ճնշումով բերեր միացուցեր են ձերուկի մը: Կատարեալ հակադրութիւն՝ թէ ֆիզիքական և թէ բարոյական տեսակէտով: Ծերուկին տարփանքը ծիծաղելի է և քսամնելի և կ'ազդէ այնպիսի գարշանք մը որ հաւասար է ազգապղծութեան գաղափարին: Զգաստութիւնը ի հարկէ բացակայ է այս խայտանքին մէջ ուր զգայարանքներու մոլեգնութիւնը ոչ կը մեղմանայ, ոչ ալ բանաստեղծական հանգամանք մը կ'առնէ սրտին սիրատարփ թռիչներով:

Մանկամարդուհին անշուշտ կրնայ մայր դառնալ, ինչքան ալ ձեր ըլլայ իր ամուսինը: Առանց բողորովին վաւերական նկատելու այն պատմութիւնները որոնց համաձայն 75, 80, 86, 94, 100 և մինչեւ 120 տարեկանին ամուսնացած ձերունի-

ներ հայր եղած են, գիտութիւնը կատարելապէս հաստատած է որ, հակառակ սեռական ախորժակի աստիճանական նուազման, տղամարդուն սերնդագործական կարողութիւնը կը տեւէ ամբողջ կեանքին մէջ, եթէ ծննդական գործարանները, ինչպէս և իր առողջութիւնը անվթար մնացած են: Վակնէր ողջ սերմնակենդաններ գտած է 60-70 տարեկան այրերու սերմնարաններուն մէջ, իսկ ուրիշ գիտնական մը՝ մինչեւ 86 տարեկան ձերունիներու սերմին մէջ: Կը հետեւի թէ, այդ տարիքին մէջ իսկ տղամարդիկ կրնան տակաւին հայր ըլլալ, բայց շատ քաջառիկ պարագայ է այս, որովհետեւ, այդ անամնիկներուն գոյութիւնը չի բաւեր, եթէ անոնք չունին կենսունակութեան և արգասաւորութեան համար պահանջուած պայմանները:

Եւ յետոյ, ինչ զաւակներ կրնան արտադրուիլ... Ծերութեան ծնունդներն են ընդհանրապէս՝ վատառողջ, կենսական հիւթերը խանգարուած, տկար, ախեղծ, աւշային, եթէ ոչ խոյլի ենթակայ (սրտանաչը) երեխաներ: Մատղաշ ձերեր են ատոնք, զուրկ ընականոն պայմաններու մէջ ծնած երեխաներու երեւոյթէն և կենսական ոյժէն:

Զարմանալի է որ, մինչ քաղաքակիրթ երկիրներու մէջ օրէնքը տարիքի նուազագոյն սահման մը նշանակած է երկու սեռերուն համար ալ, քմահաճ միութիւններ արգիւելու մտքով, ուղղակի չէ սահմանած առաւելագոյն տարիքներ, որպէս զի անկէ անդին ամուսնութիւն չկատարուի: Երկու պարագային ալ, վտանգները զոնէ հաւա-

«Մտերիմ գրոյցներ»



1296-81

24-1304

սար են, կենսակիցներուն և իրենց զաւակներուն համար, ինչպէս կը վկայէ հետեւեալ սպանիական առակն ալ.—

«Տօն Եռան տէլ Փարքօ պարտէզ մը ունէր, որուն մէջ կամար մը կազմել ուզեց, այնտեղ գտնուած երկու ծառերով: Մէկը պղտկ էր, իսկ միւսը մեծ. և սակայն, հակառակ այդ անհաւասարութեան, վերջինը գտաւ իր տէրը: Չանսալով բանականութեան ձայնին, որովհետեւ ըթամիտ մըն էր, Տօն Եռան պղտիկ ծառի չատարին կապեց մեծ ծառին կատարը: Ինչպէս դիւրաւ հասկընալի է, այս զուգաւորումը այնքան տաժանելի եղաւ խեղճ ծառերուն համար ո՞ր, երկուքն ալ ճարճատեցան իրենց կատաղութենէն: Իր կապանքը խորտակելու համար, մեծ ծառը այնքան քաշեց որ քանի մը ցնցումներով արմատախիլ ըրաւ պղտիկը, և անով պտակուած, նորէն դէպ ի երկինք բարձրացուց իր կատարը. բայց, իր ծանրութենէն ճնշուելով, շատ չանցած գետին ինկաւ:

«Ահա թէ ինչու մարդիկ կ'ըսեն թէ անհաւասար միութիւնները քանդում կը պատճառեն և իրենք զիրենք ալ կը քանդեն:»



3.— Արեւակցական ամուսնութիւնները

Բոլոր երկիրներու և բոլոր ժամանակներու քաղաքային և կրօնական օրէնքները արգիլած են մօտիկ ազգականներու ամուսնութիւնը: Միայն բարբարոս ժողովուրդներու մէջ է որ հայրը կըրնայ ամուսնանալ իր աղջկան հետ, որդին՝ մօրը հետ կամ եղբայրը՝ իր հարազատ քրոջ հետ: Այս կառքի ամուսնութիւնները հակառակ են նոյնքան բնութեան որքան բարոյականի օրէնքներուն, և իրաւամբ այսպնուած բոլոր քաղաքակիրթ ազգերուն կողմէ, իբրեւ ազգապղծութիւն: Մենք այդպէսի հրէշային միութիւններու մասին չէ որ պիտի խօսինք:

Մովսէս այդ արգելքը կը սահմանափակէ միայն մօրեղբոր կամ քեռաղջկան կամ մօրաքրոջ և եղբորորդիին միջեւ, իբրեւ հետեւանք այն խառնակեցութեան որ կը տիրէր այն ատեն հրէական ընտանիքներուն մէջ (Ղեւա.ԺԸ, 12, 13, 14): Մահմետական օրէնքը կ'արգիլէ նաեւ ամուսնութիւնը՝ սանտուին, կաթնքրոջ և սանուհիին հետ, հասկցնելով թէ պէտք է զգուշանալ ոչ միայն արիւնի, այլ և ընակարանի նոյնութենէն: Այդ արգելքները հաստատուած են աւելի ընտանեկան յարկի սրբութեան քան անձնական առողջապահութեան համար, աւելի՛ բարոյական քան առողջական նկատումներով:

Քրիստոնէութեան առաջին շրջաններուն, կաթողիկ եկեղեցին այդ արգելքը տարածեց մինչեւ եօթներորդ պորտը: Յետոյ սակայն աստիճանաբար իջեցուց մինչեւ չորրորդ պորտ: Եւ ոչ միայն այդքան, այլ և իրաւունք տուաւ այդ արգելքն ալ դրժելու, զրամական պարգեւներով: Իսկ Ֆրանսայի քաղաքային օրէնքը աւելի լայն տրամադրութիւններ դրաւ, արգելքը սահմանափակեց երկրորդ պորտի, ուրիշ նկատում չունենալով բայց միայն ցեղը զերծ պահել այլասերումէ և չխաթարել ծնողքի ու զաւկի փոխադարձ յարգանքը: Առ հապարակ նոյն տրամադրութիւնները կան Անգլիոյ և ուրիշ եւրոպական երկիրներու մէջ:

Մեր մէջ, եկեղեցիի հայրեր՝ ենթարկուելով օտար և մանաւանդ լատինական ազդեցութեանց, պաշտօնապէս հաստատած են եօթներորդ պորտը, մինչ բուն հայկական օրէնսդրութիւնը ընդունած է ազգակցութեան մինչեւ չորրորդ աստիճանը: Եւ արդէն, պակաս չեն վեցերորդ, հինգերորդ, մինչեւ չորրորդ կամ աւելի պակաս աստիճանի ամուսնութիւններ, որոնք թէեւ «մեզօք» կը նկատուին, բայց և այնպէս մաս կը կազմեն իրական կեանքին: Յաճախ յուզուած է այդ կաշկանդումը աստիճան մը մեղմացնելու խնդիրը. բայց ապարդիւն: Անհատներ միայն, ինչպէս Խրիմեան Հայրիկ, իրենց սեփական նախաձեռնութեամբ արտօնած են վեցերորդ, եթէ չենք սխալի մինչեւ հինգերորդ պորտի ամուսնութիւններ:

Համարին ամուսնութեանց բուն վտանգն այն է որ արտադրութեանց արիւնը չի նորոգ-

ուիր: Իրարու հետ ամուսնացող շատ մօտիկ ազգականներ ունենալով գրեթէ նման կազմ և նման խառնուածք կամ բնաւորութիւն, ատով իսկ կը խափանեն իրենց միութեան բեղմնաւորութիւնը և սերունդին կատարելագործումը. ուրիշ խնդիր, եթէ երկուքն ալ կը գտնուին երիտասարդութեան, ոյժի և առողջութեան բացառիկ պայմաններու մէջ, զերծ ժառանգական ո՛ր և է արատէ: Այդպիսի ամուսն մը իր սերնդագործութեան մէջ պիտի բերէ ոյժի և կազմաւորութեան նոյնանման տարրեր, նման թերութիւններով կամ յատկութիւններով. այնպէս որ ուրիշ բան չի կրնար յառաջ գալ, բայց միայն համանման, եթէ ոչ նուազած, պզտիկցած, այլասերած արտադրութիւն մը: Փոխանակ զանազան ազգակներու, զորս պիտի բերէին երկու օտարականներ այդ գործողութեան մէջ, նիւթերու, ոյժերու և զգացումներու այլազանութեամբ, արենակցական ամուսնութիւնը պիտի ունենայ միայն մէկ ազգակ: Այլ եւս չկայ փոխադարձ ազդեցութիւն մէկէն միւսին վրայ, ոչ ալ հակազդեցութիւն կամ բարեփոխում, հետեւաբար և չկայ փոփոխութիւն արտադրութեան բնոյթին մէջ: Երբ միշտ միեւնոյն հունտը միօրինակ ձեւով ցանուի միեւնոյն հողին մէջ, վերջը վերջը կուտայ ստոր և այլասերած պտուղներ: Զաւակներու բարելաւումը, կատարելագործումը կ'ապահովուի կենակիցներէն մէկուն կամ միւսին նորոգումով, նոր, գերազանց տարրերով:

Համարին ամուսնութեանց այս արդիւնքները աւելի յաճախ մօր կողմէ տեղի կ'ունենան

քան թէ հօր: Եւ շատ պարզ է այս, քանի որ մայրը մեծագոյն դերը կը կատարէ սերնդագործութեան մէջ. ինքն է որ ամբողջ ինն ամիս իր արգանդին մէջ կը սնուցանէ երեխան՝ իր սեփական հիւթով, իր արիւնով և յետոյ իր կաթով: Վիճակագրութիւններ կը հաստատեն թէ արեւակցական անհաշիւ ամուսնութիւններու հետեւանքով էր որ անհետացան, Եւրոպայի մէջ, շատ մը պատմական տուներ: Մ. Նահանգներու զանազան հիւանդանոցներուն մէջ կատարուած ուսումնասիրութիւն մը կը ցուցնէ թէ խուլ-համբերու 10%օը, կոյրերուն 5%օը և բթամիտներուն զրեթէ 15%օը հետեւանք են եղբորորդիներու կամ քեռորդիներու ամուսնութեան: 757 նման ամուսնութիւններէ 256ը խուլ-համբ, կոյր կամ բթամիտ զաւակներ ունեցած էին: Թէեւ այս տեսութեան հակասող փաստեր ալ պակաս չեն, բայց, անուբանայի է որ մօտիկ ազգականներուն կենակցութիւնը անպատշաճ է և հազիւ թէ ունենայ բարերար հետեւանք:

Այս առթիւ բժշկական դիտութիւնը կը յիշէ եզական դէպք մը. — 1863ին, մեծահարուստ Փորթուկացի մը, Տա Սուղա Տահօմէի մէջ (Ափրիկէ) չորս հարիւր գերուհիներու հետ կենակցելով, ունեցած էր երեսունի չափ զաւակ: Երկրին թագաւորները բռնադատեցին որ ասոնք բոլորը միասին ապրին, ամէնէն դարչելի խառնակեցութեամբ: Այսպէս կրցան արտադրել մինչեւ երրորդ սերունդ, իրենք իրենց միջեւ կազմելով ամէնէն մօտիկ պորտի և նոյն իսկ հրէշային միութիւններ, առանց ունենալու ո՛չ խուլ, ոչ համբ, ոչ կոյր,

ոչ ալ բթամիտ կամ անկար զաւակներ: Եւ սակայն թշուառութիւնը, խենէշութիւնը և սիֆիլիզը փճացուց խառնածիններու այս հօտը, որոնց մորթը արագօրէն վերադարձաւ մութ-սեւի, թէեւ ծնած էր սպիտակամորթէ մը:



4.— Ամուսնութեան առաւելութիւններ

Աւելորդ պիտի ըլլար երկարօրէն ծանրանալ ամուսնութեան առաւելութիւններուն վրայ: Եթէ մանաւանդ կնքուած ըլլայ որոշ տարիքին և ցանկալի պայմաններու մէջ, ամուսնութիւնը երանութեան աղբիւ: մըն է անհատին համար և ապահով երաշխիք մը՝ բարոյականութեան համար: Շարժման մէջ դնելով անհատներու բոլոր ոյժն ու գործունէութիւնը, ամուսնութիւնը բարերար ազդեցութիւն մը կը գործէ, յառաջ բերելով առողջութիւն, բարքերու բարելաւում և երկարակեցութիւն:

Ամուսնացածները աւելի երկար կ'ապրին քան ամուրիները: Պարզ սրամաքանութիւնը այսպէս կ'ըսէ. իսկ բոլոր ժամանակներու վիճակագրութիւնները աւելին կը հաստատեն: Վաւերական հետազօտութեանց համաձայն, 25-40 տարեկան 100 անհատներէ միեւնոյն տարիքին մէջ կը մեռնին 28 ամուրի և միայն 18 ամուսնացած: 42 տարեկանին հասած 78 ամուսնացողներու դիմաց, միայն 40 ամուրի կայ: Տարբերութիւնն աւելի

նշանակելի է այդ տարիքէն ետք: Վաթսուն տարեկան 100 անհատներէ 48ը ամուսնացած են, և միայն 22ը ամուրի. իսկ ութսուննոց ճերմակներու մէջ՝ երեքը ամուսնացած և մէկը միայն ամուրի: Շատ հազուադէպ է որ ամուրի մը հարիւր տարիէն աւելի ապրած ըլլայ: Այս իրողութիւնները կը հաստատուին Գերմանիա, Անգլիա, Ֆրանսա, Ամերիկա և ուրիշ տեղեր կատարուած պաշտօնական տեղեկագիրներով, որոնց մանրամասնութիւնները զանց կ'ընենք: Նկատելի է որ երկարակեցութեան տեսակէտով՝ կիները այնքան ալ նշանակելի առաւելութիւն չեն ունենար, որովհետեւ՝ իրենց առողջութեան մեծապէս կը սպառնայ ծննդաբերութիւնը՝ իր բերած զանազան հետեւութիւններով: Աւելի պարզ բացատրութեամբ, ամուսնութեան շնորհիւ այրը հինգ տարի կ'աւելցնէ իր կեանքին վրայ, կինը՝ չորս տարի:

Բազմազան են ամուսնութեան միւս բարիքները:

Սերտօրէն կեանքին կապելով, ամուսնութիւնը աստիճան մը կը փրկէ անձնասպանութենէ և յիմարութենէ: Առաջին անգամ Վոլթէոն էր որ յայտարարեց թէ ամուրիները միայն անձնասպան կ'ըլլան՝ կեանքէն զզուելով: Անշուշտ յարաբերական ճշմարտութիւն մըն է այս: Զանազան մայրաքաղաքներու մէջ կատարուած խզամիտ հետազոտութիւններ կը հաստատեն թէ 100 անձնասպաններէ 67ը ամուրի էին: Բժիշկ մը ուսումնասիրութեան ենթարկեց 4595 անձնասպանութեան զէպքեր, և երեւան հանց թէ 2080ը

ամուրի էին՝ 560ը՝ իրենց կիներէն զրկուած, իսկ միայն 1644ը ամուսնացած: Ուրիշ հմուտ բժիշկ մը հաստատած է որ 764 այր յիմարներէ 492ը ամուրի էին և 50ը՝ իրենց կիները կորսնցուցած, իսկ միայն 201ը ամուսնացած: 1726 յիմար կիներէ 980ը ամուրի էին, 291ը այրի, 397ը ամուսնացած:

Ամուսնութեան ազդեցութիւնը փրկարար է նաև ռազմործական տեսակէտով: Պ. Պէրթիյօն հաստատած է որ 100 ամուրի ռազմործի զէմ՝ 49 ամուսնացած ռազմործ կայ:

Ի հարկէ, առարկութիւններ շատ կան ամուսնութեան սկզբունքին և ձեւերուն զէմ: Այդ առարկութիւնները քիչ մը շատ կը նմանին բժշկութեան և բժիշկներու զէմ եղած պարսաւանքներուն: Շատեր կը ծաղրեն երկուքն ալ, բայց ամէնքն ալ անոնց կ'ապաւինին, երբ հիւանդանոց, և աւելի դիւրահաւանները նոյն իսկ անձնատուր կ'ըլլան շատախօսի մը շողակրատութիւններուն: Այսպէս ալ, բոլոր աշխարհ կամայ ահամայ կ'ամուսնանայ օրինաւոր կամ կէս-վաւերական ձեւերով: Սրամիտ Ֆրանսացի մը դիտել տուած է.

Անուսնացի՛ր, շատ շատ գործ մը ըրած պիտի ըլլաս.
Մի անուսնուար, — աւելի շատ ըրած կ'ըլլաս.
Բայց երբեք մի՛ մոռնար,
Որ շատագոյնը շախի բշխալին է . . .



5. — Ամուրութիւնը

Եթէ ամուսնութիւնը սէրն է որ կը ճառագայթէ և կը վերանորոգէ կեանքը, փթթում տալով մայր էակի բոլոր սիրայոյզ կարողութիւններուն, ամուրութիւնը, ընդհակառակն, մահ է և ոչնչացում, և հետեւաբար դատապարտելի՝ բարոյականի և առողջապահութեան տեսակէտով: Ամբողջութիւնն և ամուրութիւնը տեսակ մը նախատելի վիճակ էին Հրէաներուն մէջ, և պատճառ ենթակա հանրային ժողովներէն դուրս ձգելու: Մովսէսի օրէնքը յորդոր կը կարգար ամուսնութեան և կը քաջալերէր զայն՝ զինուորութենէ զերծ հռչակելով ամուսնացողները: Իսկ այսօր բոլորովին հակառակն է կրօնական ամուրութեան պարագան:

Կա՛մաւոր ամուրութեան մէջ պէտք չէ հաշուել անոնք որ զայն կը կրեն հարկէն ստիպուած, — թշուառութեան հետեւանքով, կամ պարտականութիւն մը կատարելու, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ գլուխ հանելու համար, — վեոջապէս ունին այնպիսի վիճակներ որ անհաշտ են ամուսնական կեանքի հետ: Պէտք է դուրս ձգել մանաւանդ անոնք որ ամուրի կը մնան առողջական պատճառներով և կազմական թերութիւններու հետեւանքով:

Այս կամաւոր ամուրութիւն չէ, այլ բռնադատուած, և ցանկալի է որ անոնք որոնք իրենք

զիրենք անյարմար կը նկատեն իրենց ճաշակին, կամ իրենց գաղտնի կիրքերուն պատճառով, աւելի յօժարութեամբ հրաժարին ամուսնութենէ: Գոնէ աստիճան մը կը պակսին դայթակղալից բաժանումները, անբարոյական պառակտումները, ամուր ամուսնութիւնները: Մարդկային ընկերութիւնը բան մը չպիտի կորսնցնէր, եթէ բնութեան անժառանգներ, դէգ, անընտել էակներ որոնք կը սիրեն մեկուսի ապրիլ, հեռ՛ւ իրենց նմաններու ակնարկէն, մինչև վերջը մնային ամուրի: Առողջապահութիւնն ալ կը թոյլատրէ ամուրի պահել այդպիսի սեւամաղձները, որոնք կը դողդղան իրենց առողջութեան վրայ և որոնց համար կազմական ամենափոքր ազդեցութիւնը խոշոր դէպք մըն է: Այդպիսիները ամուսնութեան մէջ ուրիշ բան չեն կրնար բերել եթէ ոչ մանկական մտահոգութիւն մը, վրդովում մը, խանգարելով իրենց կենսակցին հանգիստը:

Կարգ մը անձերու մէջ, բարոյական ազդեցութիւնը այնքան հզօր է Ֆիզիքականին վրայ, որ կը տիրապետէ: Կեանքի պահպանման անհրաժեշտ պէտքերէն դուրս, ինչպէս ուտել-խմելը, միւս բոլոր գործողութիւնները, մասնաւորապէս սերնդագործութիւնը կրնան ընդարմանալ, ընդհատուիլ, կ'ըսես՝ անդամալուծուիլ: Երբ հոգին հասուիլ, կ'ըսես՝ առարկայով մը, զրուսուած՝ վսեմ և յարատեւ գաղափարով մը, ամուրութիւնը օգտակար և նոյն իսկ անհրաժեշտ կը դառնայ, ինչպէս սիրային յուսախառութիւնը, սիրականի մը կորուստը կրնայ երկար ստեն սա-

նելի դարձնել զայն: «Նկարչութիւնը նախանձոտ կին մըն է որ երբեք չի հանդուրժեր մրցակցի» — կը պատասխանէր Միքէլ Անճէյօ, երբ կ'առաջարկէին ամուսնանանալ: Նեւտոն ալ չամուսնացաւ, իսկ Մօլիէր մինչեւ վերջը զղջաց ամուսնացած ըլլալուն համար կնոջ մը հետ որ երբեք չհասկըցաւ իր հանձարը: Պայրըն լքեց իր ընտանեկան յարկը, շարունակելու համար իր ճակատագրին արկածախնդրական արշաւը: Քօնդ՝ յափշտակուած բնազանցութեան բարձր ուսումնասիրութիւններով, իր հանձարին ստեղծագործութեանց մէջ սպառեց այն բոլոր կենսունակութիւնը զոր պիտի գործածէր ամուսնական կեանքին մէջ: Նոյն իսկ կ'ըսեն թէ ամուսնութիւնը մեծ հանձարներու առանձնայատուկ վիճակն է: Պզատոն, Անակրէոն, Լիւկրէչիա, Վիրգիլիոս, Հարատիոս ամուրի մնացին, իսկ Պէյքըն, Կէօթէ, Լա Փօնթէն ամուսնացան իրենց ամէնէն գեղեցիկ գործերն արտադրելէ յետոյ: Գիտնական մը ըսած է թէ պետական մարդիկը և գրագէտները անյարմար են ամուսնութեան, բայց ուրիշ նոյնքան հեղինակաւոր գիտնական մը կ'ապացուցանէ թէ մտաւորական ասպարէզները անհրաժեշտ կը դարձնեն ամուսնութիւնը: Կնոջ մը սէրը և ընտանիքի մը հոգերը կը թեթեւցեն այդ տաժանելի աշխատանքները և կը քաջալերեն զանոնք:

Կամառոր անուսնութիւնը տեսակ մը ընկերային վէրք է, որուն հետեւանքները կը կրեն ամէնէն համեստ հասարակութիւններն անգամ, թէև չեն կրնար ջնջել պատճառները:

Ամուրին զուրկ չէ գորովանքէ, բայց յոռի ուղղութիւն մը կուտայ այդ ազնիւ և քաղցր բնազդին: Այդ գորովանքը միշտ անկատար է, որովհետեւ ինք անկատար էակ մըն է: Ամուրին, կ'ըսէ Յրանքլին, իրարմէ անջատուած մկրատ մըն է, որ բանի չի ծառայեր առանց միւս կէսին, զոր մարդիկ փողոց կը նետեն կամ անպէտ մետաղներու դէզին մէջ: Եւ յետոյ, ընդհանրապէս ամէնէն նողկալի հակումները կ'ունենայ մշտապէս ամուրին, խենէշ է, եսասէր է, ակամայ գերի կը դառնայ բազմազան մոլութիւններու և թշուաթիւններու: Ամուրի մը իր տարփանքներով ի հարկէ կը քաջալերէ բողոթիւնը կամ կը պղծէ ամուսնական անկողինը: «Որքան նուազին ամուսնութիւնները, այնքան կը նուազի ամուսնական հաւատարմութիւնը» ըսած է Մոնթէսքիէօ, Քրանսացի ականաւոր գրագէտը: Ամուրիները թշնամիներն են ամուսնացած մարդերու, և պէտք է զգուշութեամբ ընդունուին անոնց տան մէջ, ըլլան վարդապետ թէ վանական, քաղաքացի թէ գինուորական: Հետաքրքիր մը հաստատած է որ բոլոր խենէշ և տալիանարար գիրքերը մեծամասնաբար ամուրիներու կողմէ գրուած են:

Գիտելի է որ երբ պետութիւն մը դէպի կործանում կը դիմէ շնորհիւ յոռի վարչութեան մը, կամ հարստութեանց ծայրայեղ անհաւասարու-

Թեան ամուսնութեանց թիւը կը նուազի, բնակչութեան թիւին հետ մէկտեղ: Եւ ընդհակառակն, թէ՛ ամուսնութեանց և թէ՛ բնակչութեան թիւը նախանձեղի կերպով կ'աճի ա՛յն երկիրներուն մէջ որ լաւ կը կառավարուին և ուր հարստութիւնը այնպէս բաժնուած է որ մեծ թուով մարդիկ կրնան ամուսնանալ, աուն-տեղ ըլլալ և ապրիլ իրենց ընտանիքին հետ: Այս ճշմարտութեանց կենդանի վկաներն եղած են Հոսով և Հիւպատոսներու իմաստուն վարչութեան՝ օրով, և դարձեալ նոյն Հոսով՝ իր մոլեգնած կայսրերուն բռնակալութեան օրով, և Յունաստանը՝ Արիստիտէսի և Լէոնիատոսի օրով Ստորին Կայսրութեան ապականած Յունաստանը: Կենդանի օրինակներ են, դարձեալ, մեր Պոլիսը և գաւառները, հայ պանդխտութեան քսամենկի պատմութիւնները... Երբ ժողովուրդները կը գտնուին խախտուած կացութեան մէջ, կրբ հարստութիւնը կամ կարողութիւնը խիստ սնհաւասար կերպով բաժնուած է, ամուրու-թիւնը զարհուրելի յառաջդիմութիւններ կ'ընէ, տարփանքն ու սուփանքը գաղտնի ձևեր կը ստանան, և իբրև հետեւանք՝ անհամեմատ կ'աճին ընկեցիկները, վիժումները, որդեսպանութիւնները, ու բարքերը կը խաթարուին... Այն ատեն զո՛ւր է ազազակել ամուրիներուն դէմ, մասնաւոր սուրքեր հաստատել անոնց գլխուն. ամուրու-թիւնը կը տեւէ ու կ'աճի ինչպէս մահացու ախտանշան մը: Բոլորովին հակառակը տեղի կ'ունենայ այն ժողովուրդներուն մէջ ուր հարստութիւնը և ընկերային իրաւունքները ար-

դարութեամբ բաշխուած են: Որքան ճիշտ է առածը.— «Ուր որ ցորեն կը հասնի, հոն հարսնիք մը տեղի կ'ունենայ»: Եւ զարմանալի չէ ցոփ և կամաւոր ամուրին աւելի յաճախ կը գտնուի մեծ քաղաքներու քան թէ՛ գիւղերու մէջ: Հայաստանէն մինչեւ Ֆրանսա, գիւղերու մէջ բոլոր անոնք որ կրնան ծայրը ծայրին բերել, կ'ամուսնանան առանց երկար բարակ մտածելու:

Եթէ սիրելը ապրիլ է, ամուրիները չեն ապրիլ, որովհետև գոյութեան բուր կը քաշեն ընտանեկան երանութեան շրջանակէն դուրս: Ամուրիները այն են ժողովուրդի մը համար, «ինչ որ են կամարէն բաժնուած քարերը՝ շէնքի մը համար. անոնք ուրիշ բան չեն ընել եթէ ոչ փութացնել շէնքին քայքայուածը:» Եւ եթէ վերջին պահուն զղջան իսկ, նորէն չարիք են մարդկութեան համար. որովհետև, մեծամասնաբար անոնք են որ կը կազմեն ոչ-համեմատական ամուսնութիւնները, և ո՛չ երջանիկ կը դառնան, ո՛չ ալ կրնան առոյգ զաւակներ արտադրել:

Պարսաւորիչ անուրուրիւն.— Բոլորովին տարբեր բան է այս, և հաստատուած՝ կարգ մը սպարէզներու համար: Այսպէս, կաթոլիկ և օրթոտոքս եկեղեցիները, ու անոնցմէ ազդուելով՝ մեր մայրենի եկեղեցին ալ, իրենց պաշտօնեաներուն արգիլած են ամուսնութիւնը: Լուսաւորչական եկեղեցին աստիճան մը լայն է դարձեալ, և քահանաներուն կ'արտօնէ ամուսնանալ, թէև առաջին

դարերուն մէջ կաթողիկոսներ իսկ կ'ամուսնանային, ինչպէս Գրիգոր Լուսաւորիչ և իր սերունդը: Ու այսպէս է որ հազարաւոր, միլիոնաւոր երիասարգներ—երկու սեռէն ալ—կրօնաւոր դառնալով, կ'ենթարկուին, բռնի ամուրութեան այնպիսի տարիքի մը մէջ, ուր ճաշակները, ընդունակութիւնները, կեանքի վերջնական զբաղումները ո՛չ կրնան ձանչցուիլ, ո՛չ ալ գծուիլ: Պատանութեան անփորձութիւնը, բուռն և անկեղծ հաւատքի մը խանդավառութիւնը, յուսախարութիւններն ու սրտազեղութիւնները, մոլեռանդութիւնը, բայց մանաւանդ զինուորութենէ ազատելու փափաքը կրնան յաւիտենապէս ամուրի մնալու խօսքեր ըսել տալ, որոնք պիտի հերքուին վաղը, բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ Եկեղեցին կը համարձակի ի՛նք զրկել այդ հազարաւորները իրենց ամէնէն թանկագին առանձնաշնորհէն, — առսպիտա իրաւունքէն: Ինչպէս շատ բաներու մէջ, այստեղ ալ Եկեղեցին չարաչար գործածած է իր իշխանութիւնը:

Իրանը աւելի՞ իմաստուն է արդեօք:

Պարսիկ աստուածաբաններու վարդապետութեան համաձայն, մասնաւորապէս երեք բաներ հաճելի են Աստուծոյ, — սերնդագործել, ճկել և յորինել: Մանուկի, ծառի և գրքի երրեակ խուրձէն կազմուած այս եռոտանկին վրայ է որ, ներկայ կեանքէն վերջը, մարդը կը հասնի յաւիտենական երանութեան:

Շատ են առարկութիւնները՝ եկեղեցականներու ամուսնութեան դէմ: Կ'ըսեն թէ եկեղեցական պաշտօնները՝ իրենց վեհութեամբ անհաշտ են ամուսնութեան պարտականութիւններուն հետ. թէ վանականը կամ վարդապետը երկնքին հետ կապուած կէս-հոգեւոր էակ մը ըլլալով, պէտք չէ ո՛ր և է կապ ունենայ աշխարհի հետ, թէ խորաներու ծառայութեան սահմանուած ըլլալով, պարտի հոն ներկայանալ հրեշտակային սրբութեամբ: Այդ ըմբռնումին հետեւանքով էր որ սրբազան պաշտօններ ստանձնող Հրէաները պարտաւոր էին իրենց կիներէն բաժնուիլ, որքան ատեն որ կը սպասաւորէին տաճարին մէջ: Հեղինակ մը կը վկայէ թէ միեւնոյն սովորութիւնը կը տիրէր հեթանոսներուն մէջ:

Հոգեւորականութիւնը, կ'ըսեն, գիտութեան աւանդապահն ըլլալով, ամուրութեան մէջ կը գըտնէ մտքի այն ազատութիւնը որ անհրաժեշտ է հիմնովին սերտելու համար ժողովուրդին քարոզելի բարձր ճշմարտութիւնները: Իր հոգին, որուն զսպանակները թուլցած չեն մարմնական հաճոյքէն, աւելի ընդունակ է ծանր հայեցողութեանց նուիրուելու և երբեմն ամէնէն վսեմ յղացումներուն բարձրանալու: Եթէ եկեղեցականները ամուրի չմնային, մարդկութիւնը պիտի զրկուէր մէկէ աւելի տաղանդներէ, հոյակապ գործերէ, գիւտերէ:

Ո՞րքան ճիշտ են այս պատճառաբանութիւնները:

Կամ ուրիշ ձեւով, արդեօք այս բոլոր պատճառաբանութիւնները բաւարար են, հոգեւորականները բացարձակապէս զրկելու ամուսնութենէն:

Առաջին քրիստոնեաներուն մէջ, ամուսնիները չէին կրնար մասնակցիլ հանրային պաշտօններու: Յիսուս ինք ամուսնի մնաց իր առաքելութիւնը գլուխ հանելու համար, բայց ո՛չ արգիլեց, ոչ ալ յանձնարարեց ամուսնութիւնը: Իսկ Պողոսի հակամուսնական յորդորները ուրիշ արժէք չունին, բայց միայն ամուսնութեան ուխտակալ կուսակցի մը՝ կրօնաւորի մը խօսքերուն արժէքը: Եկեղեցական ժողովներն ալ յաճախ իր թուղթերուն վրայ հիմնած են իրենց վճիռները:

Այդ վճիռներուն դէմ խստօրէն բողոքողները անհամար են, թէ մեր և թէ օտարներուն մէջ: Եւրոպայի մէջ ամէնէն աւելի մաքառեցան Լուտեր և Կալվին: Անոնք իրենց իսկ օրինակով ուսուցին թէ մեծ եկեղեցիի մը պետերը կրնան լաւ ամուսիններ և ընտանիքի տիպար հայրեր դառնալ, առանց վնասելու իրենց առաքելութեան: Մեր քահանաներուն, ինչպէս և բողոքական պատուելիներուն և հրեայ բարօններուն կեանքը և դործունէութիւնը անվիճելի հերքում մըն է բոլոր անոնց որ այս կամ այն պատճառաբանութեամբ կը ջատագովեն եկեղեցականներու ամուսնութիւնը:

6.—Կարելի՞ է ժուժկալ մնալ

Ամուսնութեան պաշտպանները ուրիշ առարկութիւն մըն ալ ունին.—Կ'ըսեն թէ այդ արգելքը չի զրկեր հոգեւորականը՝ ոչ իր ազատութենէն, ոչ ալ բնութեան ամէնէն անուշ հակումներէն: Անոնց կարծիքով, մարդը կրնայ գիւրաւ հրաժարիլ վերարտադրող բնազդի կիրառումէն. ամէն բան կախում ունի վարժութենէ և կամքէ: Իրենց ասպարէզը մտնելէ առաջ, անոնք գիտէին անոր բոլոր պարտաւորութիւնները...

Բողոքովին վիճելի է՝ այս տեսութիւնն ալ: Նախ որ, կուսակրօն երիտասարդները ընդհանրապէս այդ ուխտը կ'ընեն 18-20-25 տարեկան հասակին, որ երբեք յարմար չէ այդ քան պատասխանատու յանձնառութիւններ ստորագրելու: Եւրոլմաներ այրերուն համար որոշած էր 40, իսկ կիներուն համար՝ 32 տարիքը, կուսակրօնութեան ուխտ ընելու համար: Ուրիշ օրէնսդիր մը չէր ընդուներ որ աղջիկները մարապետ դառնան 40էն առաջ:

Նկատեցէք ուրիշ պարագայ մը.—Ապրելով քաղաքի մէջ, ընկերութեան մէջ, կուսակրօնը, մանաւանդ ոչ-վանականը, միշտ ենթակայ է դրդուելու և սեռական գոհացման պահանջն զգալու, ինչպէս բոլոր մարդիկ: Խցիկի՝ խոստովանարանի մտերմութիւնը աւելի անարկու վտանգ մըն է այս տեսակէտով:

Հարց է հիմա, — այս մասնաւոր պայմաններուն մէջ, կարելի՞ է որ կուսակրօնները չունենան սեռական ներքին յարաբերութեան մարմաջը, զգաստ մնան և բացարձակ ժուժկալութիւն պահեն: Եկեղեցին Այո կը պատասխանէ, իսկ զիտութիւնը՝ Ոչ, նոյն ինքն բնախօսութեան օրէնքներուն համաձայն:

Ամէն բանէ առաջ, ըսենք թէ բացարձակ, մշանջենական ժուժկալութիւնը անիմաստ նախապաշարում մըն է, ցնորք մը՝ հակառակ և՛ բնութեան և՛ քաղաքակրթութեան, և ծնունդ՝ սեռային յարաբերութիւնը «մեղք» նկատելու միամիտ հաւատքին: Սեռային մղումը բնական էրեւոյթ մըն է, մաքուր և բոլորովին բարոյական: Մարդը բնական, ինքնածին իրաւունք մը ունի գոհացնելու իր սեռական պահանջը: Բացարձակ ճգնակեցութիւնը կամ ժուժկալութիւնը պէտք է մերժել իբրև բոլորովին անբարոյական վարդապետութիւն մը (Տօքդ. Պլօխ):

Մարդկային կազմին մէջ ամէն գործողութիւն իր շարժառիթն ունի, երբ գործարանները առողջ են և կանոնաւոր վիճակի մէջ: Բնութիւնը ոչինչ ստեղծած է առանց նպատակի: Առանց գործունէութեան գործարան, առանց օգտակարութեան բնախօսական պաշտօն՝ անըմբռնելի բաներ են և գոյութիւն չունին բնութեան մէջ: Երկու սեռերն ալ ենթարկուած են միեւնոյն օրէնքներուն, ինչ դիրքի մէջ ալ գտնուին: Կազմուածքի, խառնուածքի, դիրքի անհատական տարբերութիւնները կրնան փոփոխել անոնց պա-

հանջները, բայց երբեք չեն կրնար խափանել անոնց արտայայտութիւնը: Սեռային գործարանները չէին կրնար բացառութիւն կազմել այս օրէնքէն:

Գրգռուելով սերմնական հիւթի հոսումէն, որ տեղի կ'ունենայ կամքէ անկախաբար, այդ գործարանները կ'ունենան յանկարծական և ինքնաբեր մղում մը որ անհրաժեշտ է հիւթին արտաքսման համար: Այդ հոսումը կրնայ զսպուիլ, նուազիկ համաձայն ապրուած կենցաղին, մանաւանդ վանական կեանքին — ինչպէս որ կը գըրգռուի, կ'ածի ամուսնական պայմաններու մէջ, — բայց ո՛չ կրնայ ընդհատուիլ, ոչ ալ կասիլ: Հիւթի այդ հոսումը տեղի կ'ունենայ անզգալաբար, ինչպէս լորձունքի կամ արցունքի հոսումը, և պէտք է արտաքսուի, եթէ ոչ նեղութիւն կը պատճառէ և անկանոնութիւններ յառաջ կը բերէ: Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ են սեռային յարաբերութիւնները, այդ արտաքսումը կատարելու համար:

Երբ մարդ բնաւ յարաբերութիւն չէ ունեցած կնոջ հետ, աւելի դիւրաւ կրնայ ժուժկալ մնալ, քան այն որ անգամ մը ճաշակեր է արգիլուած պտուղը: Բայց հարցը այն է որ մշտական ժուժկալութիւնը բարեբար հետեւանք չունենար մարդկային կազմին և խառնուածքին վրայ: Այդ կարգի ժուժկալութիւնը խորունկ և սեռական տըխրութեան մը կը մատնէ ենթական, չնորհիւ սերմի պարբերական կորուստներուն, որ տեղի կ'ունենան երազափորձութեան հետեւանքով: Եւ զիտենք թէ այդ երազափորձութիւնները ուրիշ կերպով տեղի չեն ունենար, բայց միայն չնորհիւ յայրատ

երազներու, լիտի գաղափարներու, տոփական պատկերներու: Իսկ այդպիսի երազէ մը յետոյ, մարդ կ'ունենայ յուսախարութիւն, տխրութիւն, ամօթի և գարշանքի սպաւորութիւն: Անհրաժեշտ է որ բնութեան պահանջը գոհացում ստանայ, որպէս զի խաղաղութիւնը վերածնի: Ժուժկայութիւնը անբնական վիճակ է, և փոխանակ մաքի ու մարմնի անդորրութեան, փոխանակ սրտի և հոգիի խաղաղութեան զոր իբրեւ թէ պիտի ունենան կուսակրօնները, ծննդական զգայարանքը ինչ փոթորիկներ, ինչ վրդավումներ չի յարուցաներ թշուառ վանականի սրտին և խղճատանքին միջեւ: Անոնք, կուսակրօնները միայն կրնան նկարագրել այդ տագնապները: Այսօր փաստ է որ, մեր մէջ ըլլայ թէ Սպանիա, կուսակրօններուն մէկ մասը լուծեամբ կը համակերպի այդ տանջանքին, իսկ մեծամասնութիւնը, եթէ ոչ հարիւրին 95ը, իր գլխուն ճարը կը նայի հազար խայտառակութիւններով, հազար ձեւ պղծելով իր ուխտն ալ, խիղճն ալ: Ամենօրեայ պատմութիւններ են կղերական խենչնութեանց դէպքերը, դաւառի համեստ վանքէն մինչեւ Պոլսոյ փարթամ թաղերը: Իսկ այն հազուադէպ երանելիները որ կրնան առաքինի և զգաստ մնալ, անոնք ալ յաճախ դոհեր կը դառնան, ինչպէս հաստատած են բժիշկները:

Առանց բոլորովին վաւերական նկատելու այն դէպքերը որ ժամանակին հրատարակուած են իբրեւ հետեւանք ժուժկայութեան, կրնանք հաստատապէս ընել, սակայն, որ եթէ սեռային գործունէութեան ծայրայեղութիւնները բազմաթիւ ծանր

հիւանդութիւններ կը պատճառեն, բացարձակ ժուժկայութիւնն ալ նոյն հետեւանքները կ'ունենայ: Ստորոգրքիւնը՝ սեռական յարաբերութեանց առողջապահիկ կիրառումէն կախում ունի: Սերմը անսահման ժամանակով անշարժութեան դատապարտել պահել՝ կրնայ յառաջ բերել ցաւեր, խանգարում մարմնի այս կամ այն մասին, ուղեղային տագնապ, խղերի, պրիապիզմ ևն.:

Ըսել թէ բացարձակ ժուժկայութեամբ զգաստութիւնը, կուսութիւնը հնարաւոր են, նոյն իսկ կրօնական վիճակին բերումով, ո՛չ համաձայն է բնախօսութեան, ոչ ալ լուրջ: Միայն Համարթինի պէս բնաստեղծ մըն էր որ այդ յաւակնութիւնն ունեցաւ:



Բոնադասուած ամուրուքիւն.— Այս սեղմումին ենթակայ են զօրականները, շատ մը երկիրներու մէջ: Պղատոն ամուսնութիւնը կ'արգիլէր իր իտէալ հանրապետութեան ռազմիկներուն: Ֆրանք, ընդհակառակն, ամուսնութեան յորդոր կը կարդար Գերմանիոյ, անոր բնակչութիւնն աւելցնելու համար: Այնպէս նկատուած է թէ զօրականները ամէնէն գէշ ամուսինները կ'ըլլան, կամ երբ ամուսնանան, կը ձախողին իրենց ասպարէզին մէջ:

Այս խնդիրը զանազան ձեւերով կը լուծուի, համաձայն ժամանակաշրջանի, բանականներու կազմակերպութեան և ծառայութեան հանգամանքներու: Եթէ կարգ մը պետութիւններ կը պահանջեն որ

զօրականները ամուրի մնան, գլխաւոր շարժա-
ռիթն այն է որ կառավարութիւնը պարտաւոր է
օգնութեան հասնիլ սպաննուած զինուորներու
այրիներուն և որբերուն: Եւ արդէն այդ պահանջը
աւելի խստօրէն կը գործադրուի պատերազմի ա-
տեն, որովհետեւ միշտ մահուան վտանգ կայ:
Սպանիոյ մէջ 1852ին 8597 հետեւակ սպայէ և
ենթասպայէ բաղկացած գունդէ մը միայն 1879
հոգի ամուսնացած և 86ը ս.յրի մնացած էին.
այսինքն՝ հազիւ մէկ երրորդը: Աւելի վերջը են-
թասպանները ամուսնանալու կ'արտօնէին այն ա-
տեն միայն երբ խոշոր գումար մը աւանդ ձգէին:

Որքան ատեն որ մնայուն բանակները ուրիշ
պաշտօն չունին, բայց միայն պահպանել ներքին
բարեկարգութիւնը և պահակ մնալ քաղաքներու
մէջ, ամուսնութիւնը կարելի է: Բայց խնդիրը կը
փոխուի երբ պատերազմ կայ: Զօրականը ի՞նչ
սրտով երթայ պատնէշին վրայ կռուի, երբ ետին
կը ձգէ ընտանիք մը որ աչքն իրեն յառած է:
Ի՞նչպէս հաշտեցնել ընտանեկան յարկին կանոնա-
ւորութիւնը և անդորրութիւնը՝ զինուորութեան
պահանջներուն հետ, յառաջխաղացութեան վըր-
դովումներուն և ընդհանուր անստուգութեան
հետ: Ոչ մէկ մարդ կրնայ մեծ և վտանգաւոր
ձեռնարկներու մէջ նետուիլ, երբ կաշկանդուած է
ընտանիքով մը, և կնոջմով ու զաւակներով որ
խոհեմութեան, երկչոտութեան, համակերպութեան,
յաճախ նոյնիսկ ստրկութեան կը դատապարտեն
զինքը: Զինուորութեան պահանջած մարմնական
կորովը շուտ կը ցնդի ո՛չ միայն ցոփութեամբ և

սանճարձակ անառակութեամբ, այլև ամուսնա-
կան կեանքի հաճոյքներով:

Պարտաւորիչ և մնայուն զինուորութեան ներ-
կայ դրութեամբ, զինուորական ամուրութիւնն
ալ, ինչպէս կրօնականը, զօրեղ պատճառ մըն է
ծնունդներու նուազման և բարքերու ապակա-
նութեան, և իր կարգին կ'աւելնայ պատերազմի,
սովի, համաճարակներու և բիւրազան թշուառու-
թեանց տղէտներուն, որոնք կը կոտորեն մարդ-
կութիւնը: Վերջին ժամանակներու մէջ կարեւոր
բարեփոխումներ տեղի ունեցած են, սկսելով
1870ի Ֆրանքեւգերման պատերազմէն: Զին-
ուորութեան շրջանն ըլլալով ընդհանրապէս 20էն
մինչեւ 40 տարեկան, պահեստի և երկրպագան
զինուորները կրնան ամուսնանալ: Բայց չարիքը
կը մնայ միշտ չարիք:



Ամուրութեան և ժուժկայութեան այս
գլուխն աւարտելէ առաջ, յիշենք կարգ մը ման-
րամասնութիւններ ալ:

Ինչպէս զիտել կուտայ Տոքթ. Պլօխ, սե-
ռային յարաբերակալ ժուժկայութիւնը միշտ
օգտակար է մասնաւորապէս կեանքի պա-
րաստօքեան տարիներուն մէջ, բայց նաեւ անկախ
ւսեղծագործ աշխատանքի շրջանին մէջ: Այդ կարգի
ժուժկայութեան կարեւորութիւնը առաջին ան-
գամ հաստատեցին հին Իսրայելացիները: Բազմա-
թիւ իմաստուն պատուէրներ և խօսքեր կ'ապա-

ցուցանեն այս պարագան: Ժիւլիոս Փրէօս, որ խորապէս ուսումնասիրած է հին հէական բժշկութիւնը, «Սեռային խնդիրները Աստուածաշունչին և Թալմուտին մէջ» տիրող սուղ աշխատութեան մը մէջ կը պատմէ.

«Չգաստութիւնը ինճնայայտ պահանջ մըն էր ամուրիներուն համար: Թէեւ ճիշդ է որ, արքունքը կանուխ սկսելուն համար, անոնք շատ երիտասարդ տարիքի մէջ կ'ամուսնանային — 18էն 20, եւ բարունի Լուեա կը կարծէ թէ ո եւ է մէկը որ բան տարեկանին չէ ամուսնացած տակաւին, մեղքի մէջ — կամ — ինչ որ աւելի զէ կը նկատէ ինքը — մեղաւոր մտածումներու մէջ կ'անցնէ իր օրերը: Երեւ տեսակ մարդ կայ զորս Աստուած կը գովաբանէ ամէն օր, — այն ամուրին որ մեծ քաղաքի մը մէջ կ'ապրի եւ չի մեղանչեր. այն աղփար որ արծեաւոր առարկայ մը կը գտնէ եւ սիրոյ կը դարձնէ. եւ այն հարուստ որ գաղտնի կուտայ իր տասանորդը: Օր մը երբ այս վարդապետութիւնը կը կարդային բարունի Սաճրայի առջեւ, որ երիտասարդ ըլլալով, կ'ապրէր մեծ քաղաքի մը մէջ, իր դէմքը խայտառակութեամբ: Բայց Բարա դիտել տուաւ.

— Այս խօսքը քեզի համար չէ, այլ բարունի Քանինայի եւ բարունի Օսայայի պէս մարդերու, որ բոլորէր փողոցները կը բնակին, եւ կօտիկներ կը շինեն անոնց համար. բոլորը իրենց հոյ կուզան եւ իրենց վրայ կը նային, բայց անոնք հակառակ ասոր, իրենց աչիքը չեն վերցնէր բոլորէր վրայ նայելու համար:

Ամուսնութենէն յետոյ ալ, Հրէաները կը ջանային արժէքաւոր պատուիրաններով պարտադրել սեռային առժամեայ ժուժկալութեան քաղաքակրթիչ մեծ գաղափարը: Այսպէս, դաշտանի ատեն յարաբերութիւն խստօրէն արգելուած էր և մահացու մեղք կը նկատուէր: Պարագան նոյնն էր

նաեւ երբ ուրիշ ո՛ր և է արիւնահոսութիւն տեղի կ'ունենար ծննդական գործարաններէն. այն ատեն ժուժկալութիւնը աւելի երկար պէտք էր տուէր: Յարաբերութիւնն արգելուած էր նաեւ սուգի շարժումն, ծնողներու, եղբայրներու կամ քոյրերու համար: Ճամբորդութեան ատեն հիւզ մը իջեւանած հիւրերուն ալ արգելուած էր կենակցիլ, անշուշտ պատշաճութեան տեսակէտով: Արգելուած էր, վերջապէս՝ կնոջ հետ յարաբերութիւն ունենալ սովի ատեն, մարմնական ոյժերը խնայելու համար:

Ոսկեղէն առածներ կան չափաւորութեան և յարաբերական ժուժկալութեան մասին.

Հին Իսրայէլի ժողովրդական մէկ աւածին համաձայն, սեռային յարաբերութիւնը մէկն է այն ուր բաներէն որոնք գեղեցիկ են երբ կը վայելէ խիստ չափաւորութեամբ, բայց վնասակար են երբ կը վայելէ խիստ ազատօրէն. միւս բաներն են փայլ, ստացուածք, գործը, զինին, փուր, օտք ջուրը (յոզանալու եւ խմելու համար) եւ արիւնատրտիւն:

Բարունի Յովնաթան կ'ըսէր.

— Մարդը պզտիկ անդամ մը ունի. սն որ կը գոհացնէ զայն, կ'անօքեմայ. ան որ կը թողու որ անօքեմայ, գոհացու՞մ կը ստանայ:

Բարունի եղիա կ'ըսէր.

— Երբ մարդ կը դիտէ որ իր չար մղուճը աւելի հզօր է քան ինքը, թող երթայ այնպիսի տեղ մը ուր մարդիկ չեն նանչահար զինքը. թող սեւ լաթեր հագնի, սեւ ապարօտ սր զնէ, եւ թող ընէ ինչ որ կ'ուզէ իր սիրտը. բայց թող հրապարակաւ չարապիտէ Աստուծոյ անունը:

Այս՝ ուրիշ բան չի նշանակեր բայց եթէ այն թէ ընդհանրապէս ան կը զսպէ իր ցանկութիւնը որ արդէն նաեւ կամ է պտուղը, — այսինքն չափաւորութիւնը ամէնէն ապահով միջոցն է ցանկութեան դէմ. բայց ան որ, հակառակ ասոր, կը զգայ թէ մղուճը կը սպառնայ չափազանց բուռն դառնայ, դարձեալ պարտաւոր է կուռիլ անոր դէմ, եւ ամէն պարագայի մէջ անմիջապէս տեղի չտալ:

Ամփոփելով, պիտի ըսէինք.— Ամէն մարդու համար մեծագոյն բարեբաղդութիւնը պիտի ըլլար, եթէ կարենար սեռային ժուժկալութիւն պահել մինչեւ իր մարմնին և մտքին կատարեալ հասունութիւնը,—այսինքն՝ մինչեւ քսանըֆինգ տարեկանը։ Այս՝ անհնար է շատ մը պարագաներու մէջ։ Բայց անէն առողջ մարդու համար կարելի է — և այս՝ բացարձակ անհրաժեշտութիւն մըն է անհատական և բնկերային առողջապահութեան համար—**ԲՈՂՈՐՈՎԻՆ ՀԵՌՈՒ ՄՆԱԼ ՍԵՌԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵՆԷ ԳՈՆԷ ՄԻՆՉԵՒ ՔՍԱՆ ՏԱՐԵԿԱՆԸ**։ Այս հնարաւոր է առանց ո՛ր և է վնասակար հետեւանքի և երկու սեռէն ալ անհամար բազմութիւններ կը համակերպին այդ անհրաժեշտութեան։ Տօքդ. Պօլսի վկայութեամբ, քաղաքակիրթ երկիրներու մէջ աղջիկներու և մանչերու ֆիզիքական և մտային հասունութիւնը չի գուգադիպիր իրենց սեռային հասունութեան հետ, այլ ընդհակառակն տեղի կ'ունենայ 3-5 տարի ետք։ Առաջին անգամ 20-22 տարեկանին մարդ կը հասնի իր կատարեալ աճման։ Եթէ սեռային մղումը արհեստականօրէն արթնցած և գրգռուած չէ պատանութեան այդ տարիներուն, կրնայ շատ չափաւոր մնալ, առանց գիջութեան և երազափորձութեան, և դիւրաւ կը զսպուի։ Միւս սեռին հետ յարաբերութիւնները տակաւին անհրաժեշտ չեն անհատին անձնաւորութեան աճումին համար։ Մարդկային էակը տակաւին շատ բան ունի ընելիք՝ ինքն իրեն։ Առաջին անգամ՝ երրորդ տասնեակի սկզբնաւորութեան ատեն է որ

պայմանները կը փոխուին և սեռային լարումը այնքան ուժեղ կը դառնայ, որ կը պահանջէ համապատասխան և բնականօրէն արձակում, ինչ որ պիտի տար բնական գործողութիւնը՝ Եթէ այս անկարելի է, տեղի կ'ունենայ երազափորձութիւն, որ բնական էլքն է, և գիջութիւն՝ որ անբնականն է։ Եւ երբ ժուժկալութիւնը երկար ատեն կը շարունակուի այդ շրջանէն ետքն ալ, կենսական թարմութիւնը և հոգեկան ու զգայական պայմանները կը խաթարուին աւելի կամ պակաս չափով։



7.— ՆՇԱՆՏՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՅԻՒՄ

Նշանտուքը, ինչպէս գիտէք, այն խոստումն է զոր հանդիսաւորապէս և փոխադարձաբար կուտան երիտասարդն ու երիտասարդուհին, ամուսնանալէ առաջ։ Այս աւանդական սովորութիւնը, ամուսնութեան այս նախաբանը գոյութիւն ունեցած է բոլոր ժամանակներու և բոլոր ազգերու մէջ, շատ հին դարերէ ի վեր։ Յոյները, Հռոմայեցիները և Եբրայեցիները զայն կիրարկած են զանազան ձեւերով։ Նոյն իսկ մասնաւոր օրէնքադրութիւններ հաստատուած էին այս մասին։

Յունաստանի, ինչպէս առ հասարակ նոյն շրջանի բոլոր երկիրներուն մէջ, ամուսնութիւնը

ատեն մը այնքան կ'արհամարհուէր որ, այլեւս օրէնքի կարգ անցաւ տարփուհիներ պահելը: Յետոյ պետութիւնը հարկ դատեց կանոններ սահմանել, ամուսնութիւնը նուիրագործելու և պաշտպանելու համար: Ու աստիճանաբար տարածուեցան ամուսնութեան հետ կապուած սովորութիւններն ալ: Պսակը բնդհանրապէս ձմեռը տեղի կ'ունենար. իսկ նախ քան այդ՝ կը կատարուէր նշանախօսութիւն՝ աղջկան խնամակալին ձեռքով, կամ պաշտօնական անձերու միջոցով: Հոռոմի մէջ ալ նախապէս ամուսնութիւն ըսելով կը հասկնային անկանոն և քմահաճ կենակցութիւններ, հարձ պահել առանց որ և է յանձնառութեան, սանձարձակ յորտրերութիւններ մշակել, ստանց ո՛ր և է պարտականութիւն ստանձնելու կիներուն և զաւակներուն հանդէպ: Շատ վերջերն էր որ հաստատուեցաւ օրինաւոր ամուսնութիւնը, որ տեղի կ'ունենար մասնաւոր նշանախօսութեամբ, և ունէր մէկէ աւելի հանդիսաւոր ձեւեր: Ոչխար կը մորթէին, մորթը կը հանէին և հարսն ու փեսան կը նստեցնէին վրան, յետոյ անոնց կը հրամցնէին ցորենի հաց, որ կ'ըլլար նշան ամուսին անջակտելի միութեան ևն.: Իսկ Հրեաներուն մէջ պսակադրութեան հանդէսը կը տեւէր եօթն օր: Յետոյ հարսը կը լուային, անուշահոտ իւղերով կ'օծէին ու զարդարելով կ'առաջնորդէին ամպհովանիի մը տակ, փեսային տունը տանելու համար:

Այդ շրջաններուն, նշանախօսութիւնները տեղի կ'ունենային խօսքով, գրաւորապէս կամ բանբերի միջոցաւ, և հետեւեալ խօսքերով.

«Կ'ընդունիմ քեզ և ինքզինքս ալ ըեզի կ'ընծայեմ նշանախօսութեամբ»: Եւ իբրեւ գրաւական՝ սովորութիւն էր երրորդի մը յանձնել գոհարեղէն, մատանի, դրամ: Եւ դեռ մինչև այսօր նշանաձեւերու մատը մատնի մը դնելը ամէնէն սովորական յայտարարն է նշանադրութեան, առանց հաշուելու ուրիշ անհամար սիրուն ոչնչութիւններ զորս երիտասարդն ու երիտասարդուհին կուտան փոխադարձաբար, իբրեւ գրաւական իրենց խոստումին վաւերականութեան:

Հին Հայերն ալ ունեցեր են նշանտուքի և հարսնիքի հանդիսաւոր սովորութիւններ, թէև մեր պատմութիւնը որոշ տեղեկութիւններ չի հաղորդեր այդ մասին: Միայն ներկայիս տիրող ձեւերը, մանաւանդ Հայաստանի գիւղերուն հարսանեկան խրախճանութիւնները, որոնք շատ նմանութիւններ ունին հին հրէական և աստիճան մըն ալ յոյն-հռոմէական սովորութիւններու հետ, կը հաստատատեն այդ պարագան: Դեռ մինչև այսօր գաւառներու մէջ օրէնքի կարգ անցեր է՝ վանքերու ուխտագնացութեան օրերուն երկսեռ բաղմութեամբ հաւաքուիլ, պարել, նշանած ընտրել, խօսք-կապ ընել, եթէ երբեք օրօրոցէն իսկ տեղի ունեցած չէ նշանտուքը (պէշիկփէրսիւ): Ու բազմազան են յոռի սովորութիւններն ալ, ինչպէս պաշարը, որով երիտասարդը պարզապէս ծախու առած կ'ըլլայ աղջիկը:

Միանալ կամ մեռնիլ, — դարերով ա՛յս էր միակ ելքը՝ երկու նշանաձեւերու համար: Նշանտուքով եղած յանձնառութիւնը այնքան խիստ էր

որ, միայն բացառիկ ազէտ մը կրնար խզել զայն, —ինչպէս անդամի մը կորուստը, բորոտութիւն, հրապարակային գայթակղութիւն, կամ լքում՝ աւելի քան երեք տարի: Տեղ տեղ դրժումը խրատորէն կը պատժուէր գրաւականին կորուստով, կամ խոշոր տուգանքի մը հատուցումով, կամ նոյն իսկ մահու պատիժով: «Յանցաւորներուն գլուխները կտրեցէք», կը հրամայէր օրէնսդիր մը: Եկեղեցին ալ, իր կարգին, սահմանեց որոշ կանոններ, նշանախօսութեան խզումները խափանելու համար: Մինչեւ իսկ բանադրանքներ կ'արձակուէին: Այսօր շատ քիչ բան մնացած է այդ սովորութիւններէն, և քաղաքային պսակը երկրորդական գծի վրայ կը ձգէ ամէն բան, թէեւ դեռ շատ հասարակութիւններու համար, մէջն ըլլալով մերինն ալ, միայն կրօնական պսակն է օրինաւոր, կամ երկուքը միասին: Փրանսական օրէնքին առջեւ, ամուսնութեան խոստում մը, նոյն իսկ գրաւոր և պտորագրուած, ոչինչ է, անարժէք գրութիւն մը, թուղթի կտոր մը: Մանկամարդուէին ո՛չ մէկ միջոց ունի այն նշանածին դէմ որ, այդ անունին տակ իր առաջին գգուանքը և կարգ մը առանձնաշնորհումներ վայելելէ յետոյ, օր մը յանկարծ կը խզէ իր երգումը և կը լքէ զինքը անողորմ մերժումով մը: Ամէն պատրուակ ընդունելի է խզումը արդարացնելու համար, և ո՛չ մէկ բան կ'արգելէ յեղյեղուկ երիտասարդին՝ ութ օր ետք գալ ուրիշ նշանած մը ներկայացնել միեւնոյն խորանին առջեւ:

Նշանաւոր սովորութեան բացայայտ նպատակն է ժամանակ տալ երկու երիտասարդներուն՝ իրար ճանչնալու, իրարու միանալէ առաջ: Ազատ և իրարու կապուած ըլլալով, երիտասարդն և մանկամարդուէին իրար կ'ուսումնասիրեն, ճաշակելով նորածին խանդազատանքի մը զգաստ քաղցրութիւնները, և ամուսնութիւնը, դէպի ուր կը մօտենան երկուքը ձեռք ձեռքի, այն ատեն կը թուի ո՛չ միայն իրրեւ նիւթական միացում մը, այլ և իբրեւ գերազոյն նուիրագործումը հոգիներու ձուլումին: Անգլիա, Չուիցերիա, Սպանիա, Գերմանիա մասնաւորապէս պահած են կեանքի ճշմարիտ դարաշրջանին այս բանաստեղծական հանգամանքը: Անգամ մը որ խոստումները փոխանակուին, երիտասարդը այլ եւս մտերիմ մըն է աղջկան տունին մէջ, կը վայելէ ամէն դիւրութիւն՝ ուսումնասիրելու համար իր ազգայ կնոջ ճաշակներն ու նկարագիրը: Այլ եւս սրտաբաց կը խօսի անոր հետ, պտոյտի կ'ելլէ, կը թղթակցի, կ'օգտուի իր մասնաւոր իրաւունքներէն, միայն սիրոյ խոստումի մը ապահովութեամբ: Եթէ շատ երիտասարդ է, ազքատ կամ զինուոր, և հետեւարար չի կրնար բնտանիքի մը պեան ըլլալ, այն ատեն կը մեկնի, — թշուա՛ռ դարիպ, — մատանին մատը, սէրը՝ սրտին մէջ, հայրենիքը ձգելով իր սիրականը որ երբեմն տարիներ կը սպասէ առանց մոռնալու կամ մոռցուենէ: Եւ, ո՛վ գիտէ, մէկը կամ միւսը, կամ երկուքը միասին ս'ըքան գիշերներ կ'երգեն, նահապետ Քուչակին հետ.

Գիշեր ու ցորեկ կուշաւ, աճապ իւլ կարև կու շէ՞.
Այնկաի ողորմուկ կուշաւ, աշիրուս առու կու կարի.
Ա՛յ, իւլ հեռացած կարհի ով ինձի իսպար մի բերե,
Հաշի գիւլ երած հոգին դարձուցիւ շիւնի կու բերե...

Եթէ, ընդհակառակն, փեսացուն, կամ իր ապագայ աները բողբալու են, վայելքի պահերը չէ որ կը պակսին. գլուխ-գլխի անճուշ խօսակցութիւններ, ապագայ ծրագիրներ, առաջադրութիւններ... Սպասման այդ երկար ամիսները յուրջ և բեղնաւոր նուիրում մըն են ապագայ համբարաշխ՝ միասնական կեանքին, որովհետեւ սէրն ալ, տարուան պէս, ունի իր ամէնէն գեղեցիկ ամիսը որ գարունն է: «Տակաւին ամէն բան միայն խոստում է և ծաղիկ, բայց այդ անշուշտփելի բուրումները կը բաւեն սրտի զգաստ վայելքներուն համար»:

Շատեր հակառակ են նշանածներու այս օրինակի սղատութեան, և զգուշութիւններ կը պատուիրեն, ինչպէս որ մեր մէջ ալ սովորութիւն է եղած զգուշանալ զանոնք առանձին ձգելէ, և պտոյտի առեն իսկ ընկեր տալ անոնց՝ աղջկան եղբայրը, կամ մայրը կամ ուրիշ աղգական մը: Ծիշա է որ խզումները յաճախադէպ են, մանաւանդ երբ ամէն բան կարգադրուած է առաւելապէս շահու՝ դիրքի, մէկ խօսքով՝ սէրէն տարբեր նպատակներով, առանց երիտասարդին կամ աղջկան յօժարութիւնն առնելու: Բայց աւելի լաւ չէ որ բաժանումը տեղի ունենայ ամուսնութենէն առաջ, եթէ պիտի ըլլայ: Նշանտուքները տեսակ

մը անհրաժեշտ փորձեր են, երբ երիտասարդին մասին քաղուած տեղեկութիւնները կ'արտօնեն զայն մտերմութեամբ ընդունիլ աղջկան սուներ:

Իրար ջերմապէս սիրող երիտասարդ մը և մանկամարդունի մը, որ ամէն օր կը տեսնեն իրար, ընդհանրապէս կը ձգտին անվերջ երկարաձգել նշանածի կեանքը: Այդ կարգի տեսակցութիւններէ երկու ամիս յետոյ կը սկսին նիհարնալ, գունասալ, ծիւրիլ—մանաւանդ աղջիկը,— որովհետեւ այդ փորձերը անհաշտ են ժուժկալութեան հետ: Այս պարագան ստիպողական նշան մըն է ամուսնութիւնը կնքելու, երկու երիտասարդներուն առողջութեան սիրուն, եթէ ոչ անոնց առաքինութիւնը չվտանգելու համար:

—

Այլևս երկար պիտի ըլլար խօսիլ բուն հարսնիքի մասին, որ միութեան վերջնական և հանդիսաւոր նուիրագործումն է, և որուն ձեւերն ու ժամանակն ալ՝ մասնաւորապէս մեր մէջ եկեղեցիի Հայրերն են սահմանուած համաձայն իրենց շրջանի հոգեբանութեան: Այսպէս է որ, տարուան մէջ որոշ առններ, ինչպէս Բարեկենդանէն մինչեւ Առաջին Պսակ, արգիլուած է հարսնիքը ևն: Աւելորդ պիտի ըլլար, նմանապէս, խօսիլ խրախճանութեան ձեւերու մասին, որոնք կը տարբերին միջավայրէ միջավայր, քաղաքակրթութիւնէ քաղաքակրթութիւն, ժողովուրդէ ժողովուրդ, կրօնէ կրօն: Թէև և ընդհանուր նմանութիւններ չատ կան, — ինչպէս օրինակ հրազէն արձակելու սովորու-

թիւնը, որ կը տիրէ, եւ եւրոպական և հայկական գիւղերու մէջ, եւ քրիստոնեաներու եւ մահմետականներու մէջ:

Մեր գլխաւոր մտահոգութիւններէն մէկն ըլլալով սեռային առողջապահութեան պայմանները պարզել, փութանք անմիջապէս յիշեցնել թէ՛ նոյն իսկ հարսնիքի օրը զգուշանայու հազար վտանգներ կան: Նորապսակ ամուրը չափազանց յուզումի և յոգնութեան ենթակայ է այդ օրը. իրենց հագուստները յաճախ շատ բարակ են եղանակին համար. հացկերոյթի, պարի և խրախճանութեան ծայրայեղութիւնները փնասներ կը պատճառեն: Պէտք է ամէն բան չափաւորութեամբ գործածել, և եթէ պէտք կը զգացուի խոյս տայու հետաքրքիր ակնարկներէ որոնց կ'ենթարկուի մանաւանդ նորապսակ հարսը, այդ պատճառ մը չէ որ անմիջապէս մեղրալուսնի հեռաւոր ճամբորդութեան մը ձեռնարկեն, ինչպէս սովորութիւն եղած է հիմա, մանաւանդ հայ-լայֆ դասակարգին համար:

Բազմաթիւ հեղինակաւոր գիտնականներ կը դատապարտեն այդ սովորութիւնը իրեն ուղղակի փնասակար առողջութեան, չյիշելով ուրիշ նկատումներ: Պսակէն անմիջապէս յետոյ, երիտասարդ ամուրը կը սկսի մեղրալուսնի ճամբորդութիւն մը, որ յաճախ ամիսներ կը տևէ — և ահա տեղի կ'ունենան խօլ արշաւներ կառախումբով, ձիով, էշով, տաժանելի պտոյտներ՝ լեռներու մէջ, անքուն գիշերներ, ծայրայեղ անձնատուութիւն՝ տարփանքի բոլոր հրապոյրներուն: Իսկ այս բոլորին կը յաջորդէ ուժաթափութիւն մը, և կազմը

այլ եւս չի կրնար առաջուան պէս տոկալ ախտաւոր ազդեցութեանց: Այսպէս չարաչար յոգնած, ուժասպառ, նորապսակ ամուրը ինքզինքը կ'ենթարկէ, իր իջած վայրերուն մէջ, տեղական հիւանդութեանց կամ համաճարակներու: Մանաւանդ մանկամարդ հարսը ենթարկուելով այս նոր կեանքի տաժանքին, արգանդի անդադար գերբոռումներու, կրնայ ծանր և յարատեւ հիւանդութեան մը զոհ դառնալ:

Եւ յետոյ, ինչպէս դիտել կուտայ Տոքդ. կառնիէ, յանկարծական մեկնումը քիչ մը չի՞ նմանիր արտօնուած, օրինաւոր առեւանգութեան մը՝ յաղթական ամուսնին կողմէ, քանի որ հարսը մէկէն կը բաժնուի իր ծնողքէն, իր ընտանիքէն, իր սիրականներէն... Եւ մանկամարդ հարսը, որուն թերեւս հազիւ արտասանուած է սէր բառը, որ թերեւս ութ օր առաջ ձեռք անգամ սեղմած չէր իր նշանածին հետ, այլեւս, մեղրալուսնի այդ ճամբորդութեամբ, կը յանձնուի երիտասարդին, որ եթէ բիրտ մէկն է, իր վայրագութեամբ կրնայ մէկ րոպէի մէջ փճացնել ամբողջ կեանքի մը երանութիւնը:

Նկատելի պարագաներ են ասոնք, ու թէեւ կարելի չէ որոշ կանոններ սահմանել այսպիսի մանրամասնութեանց համար. բայց և այնպէս, նորապսակները և իրենց պարագաները պարտաւոր են արթուն գտնուիլ:



8. — Քանի մը խորհուրդներ՝

բարոյական առողջապահութեան մասին

Նորապսակներուն համար ալ, ինչպէս բոլոր մարդոց համար, նոյն են ֆիզիքական առողջապահութեան պայմանները՝ օդի, բնակարանի, զգեստի, մաքրութեան, ուտեստի, ըմպելիքի, մարզանքի, քունի ևն. մասին, նայած կլիմային, եղանակին, սեռին, տարիքին, խառնուածքին, սովորութեան, արհեստին, և ուրիշ տեղապրական, կազմական կամ բարոյական կարողութեանց: Մնաց որ, արդէն յատկապէս ամուսնական կեանքի առողջապահութեան մասին պիտի խօսինք հետզհետէ: Այստեղ կ'ուզէինք պարզել կարգ մը մանրամասնութիւններ, որոնք մեծ նշանակութիւն ունին մանաւանդ ամուսնացածներու բարոյական առողջապահութեան համար:

Ինչպէս ըսինք, հարմարութեան անմիջապէս յետոյ, մասնաւորապէս պէտք է զգուշանալ չափազանց յոգնութենէ, աւելորդ տաժանքներէ: Իրեւրահազորք սէրը կը պահանջէ աւելի անգործութիւն և առանձնութիւն քան սղմուկ և բազմութիւն: Խոնկան մեկուսացում մը, խաղաղ և գորովայիբ թափառումներ, որոնք առիթ կուտան ազատ մտերմութիւններու և քաղցրիկ սրտազեղումներու, սրտի խանդաղատ սլացքներու, — ասոնք կ'ուսուցանեն նորապսակներուն՝ աւելի լաւ ճանչնալ իրար, գնահատել և սիրել իրար: Այսպէս

պիտի ըլլայ մանաւանդ եթէ ամուսնացածները կը կազմեն քաջայարմար ամուսնացող մը՝ տարիքի, ընկերային պայմաններու, հարստութեան, կրթութեան, նկարագրի, համակրութեան և կրօնի նոյնութեամբ: Եւ ընդհակառակն, բոլորովին տխուր հետեւանքներ է որ պիտի ծնին անմիջապէս, եթէ ամուսնութիւնը տեղի ունեցած է թեթեւօրէն, իրարու անհաշտ պայմաններով: Այդ պարագային, հակակրթիւնները շուտով ծայր կուտան: Իւրաքանչիւրը կ'ուզէ իր կամքը քայլեցնել, — ուսել, խմել, քնանալ, հագուել, պտտիլ համաձայն իր քմահաճոյքին, առանց միւսին կարծիքը հարցնելու: Կշտամբանքները, կռիւները շուտով կը սկսին, մանաւանդ շահու խնդիրներու համար, և յաճախ առաջին օրերու այս մասը վէճերէն է որ ծնունդ կ'առնեն ամէնէն ծանր պառակտումները:

Յրանսայի քաղաքային օրէնքը հետեւեալ տրամադրութիւնները կը բովանդակէ ամուսնացողներու մասին.

«Ամուսինները պարսիկ փոխադարձաբար հաւաստիւմ մնալ եւ օգնել իրարու: Ամուսինը պարսի պաշտպանը իր կիներ, իսկ կիները պարսի հնազանդ ըլլալ իր ամուսնին:»

Ինչպէս կը տեսնուի, այս տրամադրութիւնը շատ տարբերութիւն չունի աւետարանական պատուէրէն: Ամուսնական բարոյականի խտացում մը եղեր է այս կանոնը, հիմնուած՝ երկու սեռերու կենդանաբանական և բնախօսական յօրինուածքին վրայ: Ընդհանրապէս, ամուսնութեան առաջին

օրերուն, մանկամարդ կինը երեւան կուգայ իբրեւ սրտաբայ էակ մը, անձանօթ՝ կեանքի իրազարձութեանց, լի խանդավառութեամբ, վեհ գաղափարներով և անձնուիրութեամբ: Եւ փոխանակ զայն աստիճանաբար կազմելու, փոխանակ յամբարար վարժեցնելու նոր կեանքին, յաճախ ամուսինը կը ծաղրէ անոր թարմ պատրանքները, անոր խանդավառութիւնը; կը խնդայ անոր դիւրահաւանութեան վրայ, և ուզելով զայն լուրջ ու փորձառու ընել, ընդհակառակն տարիքէն առաջ սկեպտիկ մը, յուսախար մը կը դարձնէ: Եթէ դժբախտ ամուսնութեանց թիւն այնքան մեծ է, մեղաւորը աւելի յաճախ այրերն են, որոնք չթափանցելով կնոջ նկարագրին, չեն կրնար ճշմարիտ ամուսին դառնալ:

«Կինը ս'չ միայն գեղեցիկ է անոնց համար որոնք ուրիշ բան չունին բայց միայն աչքեր ալ և, բոլոր անոնց համար որ սիրտ մը ունին, ան է և՛ սերընդագործող սեսը որ ամբողջ ինն ամիս իր կողերուն մէջ կը պահէ մարդը իր կեանքին գնով, և նաե՛ւ սանտու սեսը, որ կաթ կուտայ անոր և կը խնամէ զայն մանկութեան օրերուն:»

Այո՛, կինը էապէս բարի է, չլու և համակրելի, և դժուար չէ լրացնել զայն, կը բաւէ որ հիմնական դաստիարակութիւն մը ստանայ: Եւ չմոռնանք թէ աւելի այրն է որ կը կազմէ կինը:

Երկու ամուսինները փոխադարձաբար վստահութիւն և անկեղծութիւն պիտի ունենան: Մասնաւորապէս կինը պէտք չէ բան մը ծածկէ իր ամուսնէն, բորովհետեւ երեւան հանուած ամենա-

թեթեւ գաղտնիքը անվստահութիւն և կասկած կը յարուցանէ և երբ այդ զգացումները անգամ մը ծիլ գաննն սրտին մէջ, ևսխանձը և իր աղետալի հետեւանքները չեն ուշանար:

Նախանձէն յետոյ կուգայ անհասարկութիւնը, երդմնազանցութիւնը, որ մէկ հարուածով կը քանդէ ամուսնական կեանքին առաւելութիւնները և քաղցրութիւնները: Ի՞նչ արժէք ունին քաղաքային կամ կրօնական օրէնքով սահմանուած պատիժները, հասուցումը կամ անաթէման, երբ եղած վնասը գրեթէ անդարմանելի է: Շնացող ամուսինը կը պրծի աստուածային կամ մարդկային բոլոր օրէնքներէն, կը մոռնայ իր ընտանիքը և խառնակութիւն կը ձգէ ուրիշ տուներու մէջ: Իսկ անհաւատարիմ կինը անսիրտ մայր մըն է, որ շնորհազուրկ կը դարձնէ իր իսկ զաւակները և կը սրբապղծէ ամէնէն նուիրական պարտականութիւնները: Գէշ ամուսին մը կրնայ երբեմն լաւ հայր ըլլալ, բայց գէշ կին մը հազուադէպ է որ լաւ մայր ըլլայ, կ'ըսէ Տոքթ. Կառնիէ:

Կին մըն է որ դիտել տուած է, թէ կիները ա՛յն ատեն միայն աւելի զօրաւոր են, երբ կը սպառազինուին իրենց իսկ տկարութիւններով:

«Վա՛յ այն տունին ուր հաւը կ'երգէ և աքլորը կը լսէ», կ'ըսէ հին առած մը: Բայց երբ աքլորը երգել չի գիտեր, երբ այրը իր ամուսնի և ընտանիքի պետի կոչումին բարձրութեան վրայ չի գտնուիր, երբ ընդունակութիւն չունի, կինը եթէ օժտուած է պահանջուած յատկութիւններով, իրաւունք ունի իր խոհեմութեամբ, իր քաղցրու-

Թեամբ և խոհականութեամբ լեցնել էրկանը անկարողութեան պակասը: Ընտանիքի ծոցին մէջ ալ, ինչպէս ամէն ընկերութեան և ամէն ազգի մէջ, ան որ աւելի բան գիտէ, աւելի բան կրնայ ընել, և գործի ղեկավարութիւնը իրաւամբ կ'անցնի ամէնէն ուշիմին: Եթէ, ուրեմն, անսակ մը կոմսն դարձեր է որ այրը կը կազմէ կինը, ստոյգ է նաև որ յաճախ կինը կը կազմէ այրը: Այրը կնոջ գլուխն է, ըսած է Պօղոս առաքեալ. բայց այսօր պարզ ճշմարտութիւն մըն է որ կիներն ալ գլուխ ունին, և ինչ որ ալ ըլլայ ամուսիններու իմացական կարողութիւնը, պարտին միշտ խորհրդակցել իրենց կիներուն հետ, փոխանակ կուրօրէն և բրտօրէն հետեւելու իրենց որոշումներուն:

Մանրամասնօրէն կանոններ գծել ամուսնական կեանքի երանութեան համար, — չափազանց միամտութիւն պիտի ըլլար: Մենք նշանակեցինք միտյն տարրական կէտեր, ընդհանուր ճշմարտութիւններ, որոնք կրնան հիմ և ուղեցոյց ծառայել. բայց շատ բան ամուսինները իրենք պիտի գիտցած ըլլան կամ պիտի սորվին, առանց թիթեւօրէն նետուելու այդքան պատասխանատու կապակցութեան մը մէջ: Այս է պատճառը որ մենք չուզեցինք ծանրանալ նաև ամուսիններու յատկութիւններուն և կարողութիւններուն վրայ:

Սպանիացի բանաստեղծ մը, Քուէվէտօ, որ համբաւաւոր է Երզնիսի Ամուսնութեան դիմ անուն պարտաւորութեամբ, մինչեւ վերջը կը մերժէր ամուսնանալ: Այսպէս թէ այնպէս, կնոջական վրէժխնդրութեան մը հետեւանքով, այդ անհաշ-

տելին օր մը հարկադրուեցաւ ամուսնանալ 52 տարեկանին, և անա թէ ինչ յատկութիւններ կը պահանջէր իր առնելիք կնոջմէն.

«Պիտի ըլլայ ազնիւ, առաքինի և ուշիմ. ո՛չ ազեղ, ոչ ալ գեղեցիկ— եթէ երկու ծայրայեղութիւններէն մէկն ըլլայ, պիտի նախընտրեմ վերջինը— ոչ հարուստ, ոչ ալ աղքատ, սրպէս զի ծախու առած չըլլայ զիս, ոչ ալ ես զինքը: Կ'ուզեմ որ զուարթ ըլլայ, սրովհետև, թէ հանրութեան և թէ մտերմութեան մէջ տխրութիւնը երբեք չպիտի պակսի. կ'ուզեմ որ ո՛չ երախայ ըլլայ, ո՛չ ալ պառաւ մը...»

Ճաշակ մըն է այս, և կը բովանդակէ ընդհանուր ճշմարտութիւններ: Բայց մենք աւելի չենք զբաղիր այս հարցով, որ մեծամասնաբար կապուած է ամուսնացողներու զարգացման, խառնուածքին, միջավայրին և անհատական և ընկերային բերրական պայմաններու հետ:

Մենք զանց կ'ընենք նաև խօսիլ արուսնաշուծնան կամ զանազան ձևի բաժանումներու մասին, որոնք օրէնքով նախատեսուած են ուրիշ երկիրներու մէջ, իսկ մեր մէջ ունին քառասոյին վիճակ մը, կախուած են անհատներու, Հայրապետներու, Կրօն. Ժողովի կամ Գատաստանական Խորհուրդի հայեցողութենէն, եթէ ոչ քմահաճոյքէն: Ամուսնայութեան յատուկ օրէնք մը չունինք սակաւին, թէև կեանքը ինք արդէն կ'ուսուցանէ կերպերը, և պատկի լուծումները յաճախողէպ կը դառնան օրէ օր, և նոյն իսկ Կրօն. Ժողովը

չի քաշուիլ որը ցերեկով, մամուլին միջոցաւ հրապարակաւ յայտարարել այսինչ կնոջ կամ այնինչ տղամարդուն «կուսութեան պղծուած ըլլալը» կամ «անբարոյականութիւնը», և մէկը կամ միւսը բանադրել հանդիսաւորապէս...

Չափազանց բարդ խնդիր մըն է այս, և դուրս՝ մեր նիւթէն:



Բ. — ՍԵՐՆԴԱԳՈՐԾՈՒՄ



1. — Ընդհանուր ակնաւկ

Բոլոր գործարանաւոր էակները, այսինքն բոյսերն ու կենդանիները, կը վերարտադրուին, կը ծնին, և, որոշ պայմաններու մէջ իրենց նման էակներու ծնունդ կուտան: Այս կարողութիւնը, որ սերնդագործում կը կոչուի, անհրաժեշտ էր: Որովհետեւ բոլոր անձաները սանձաւոր տեսողութիւն ունին և կը մեռնին, միջոց մը պէտք էր որպէսզի տեսակները չանհետանային: Բնութեան համար այս թանկագին կարողութիւնը աւելի կարեւոր է քան նոյն ինքն անձատին պահպանումը: Կարելի է պարզապէս ըսել թէ անձաները կ'ապրին միայն իրար վերարտադրելու համար: Բոյսերը մեծամասնաբար, իրենց պտուղը կամ հունար արտադրելէ անմիջապէս յետոյ, կը գունատին, կը թաւամին, կը խամրին և կը մեռնին: Շատ մը ստորին անասնիկներ կը մեռնին վերարտադրուելէ անմիջապէս ետք, իսկ բարձր տեսակներու մէջ, — մարդը, օրինակի համար, — անձաները իրենց լրիւ կատարելութեան կը հասնին այն տարիքին մէջ միայն ուր ընդունակ են վերարտադրելու, և յետոյ նորէն

անկատար կը դառնան և կը սկսին մեռնիլ, ան-
միջապէս որ կը կորսնցնեն այդ կարողութիւնը:

Գիտնական մը զիտել կուտայ թէ «կենդանի
էակը միայն կը ստեղծէ և կը ստեղծուի. կը
ստեղծուի որովհետեւ կը ծնի. կը ստեղծէ, որով-
հետեւ ծնունդ կուտայ:» Այսպէս ուրեմն, կեանքը
նոյն ինքն սերնդագործումն է: Էակին միւս բոլոր
զանազան գործողութիւնները պարզապէս անոր
պայմաններն են. բոլորն ալ կ'ամփոփուին և կը
յանգին սկզբնական մեծ պաշտօնին, — Սերնդա-
գործման:

Սերնդագործումը հիմն է բոլոր կենդանի գոր-
ծողութեանց, մտաւոր ըլլան թէ ուրիշ տեսակի:
Մենդաւութիւնը, որ ամէն գործանաւորութիւն
հասարակաց և մնայուն գործողութիւնն է, ուրիշ
բան չէ եթէ ոչ շարունակուած և մշտնջենաւոր-
ուած սերնդագործումը: Առանց անոր, ո՛չ մէկ
սերնդագործում կարելի պիտի ըլլար:

Ամփոփենք, առանց տւելի խորասուզուելու
գիտական տեսութեանց մէջ, — վերարտադրումը
կեանքի ամէնէն կարեւոր երեւոյթներէն մէկն է.
ան կը ծառայէ դարմանելու մահուան առթած
անընդհատ կորուստները և յառաջ կը բերէ մեռ-
նելու անողոք անհրաժեշտութիւնը. որովհետեւ,
եթէ այդպէս չըլլար, վերարտադրումը, որ միշտ
գործունէութեան մէջ է, տիեզերքը չափազանց
պիտի ծանրաբեռնէր, պիտի խճողէր կենդանի
էակներու անհուն բազմութեամբ մը:

Բուսական աշխարհին մէջ, վերարտադրումը
տեղի կ'ունենայ զանազան եղանակներով, —
հուշտ ցանկով, հողի մէջ ճիւղեր անկելով (աղուրի,
չաչ), պատուաստով ևն.: Կենդանական աշխար-
հին մէջ ալ, տեսակներուն համաձայն կը տարբե-
րին արտադրութեան կերպերը:

Իրբև ընդհանուր կանոն, ըսենք թէ ամեւ
անհաս ծնունդ կ'առնէ մասնիկի մը որ նախա-
պիս պատկանէր և որիչ նման կամ նոյն տեսակի
անհասի մը: Ուրեմն գործարանաւոր, բուսական
կամ կենդանական աշխարհին պատկանող բոլոր
էակները կը ծնին, այսինքն, իրենց կեանքը միշտ
արդիւնքն է ուրիշ կանխադոյն անհատի մը կեան-
քին: Հինքը կը հաւատային ինքնարեւ ծնուն-
դին, — և նորերուն մէջ ալ այդպէս հաւատա-
ցողներ պակաս չեն մինչեւ այսօր: Տեսնելով որ
անհամար սրղեր և ուրիշ անասնիկներ կ'երեւան
ղիակներու կամ նեխած միսերու վրայ, Արիստո-
տէս, Հերոդոտոս, Վիրգիլիոս, Պլուտարքոս կար-
ծեցին թէ անոնք պարզապէս ծնունդ կ'առնէին
ջերմութենէն և նեխումէն: Չկրնալով բացատրել,
օրինակի համար, ընդերածճիներու գոյութիւնը,
մանաւանդ անհամար բազմութիւնը ջրածճիներու
որոնք յանկարծ կ'երեւին գլինիին, քացախին,
ջուրին մէջ, նոյն իսկ երբ այդ հեղուկները եռա-
ցած են երկար տանն, բաղդատաբար նոր գիտ-
նականներ ընդունեցին թէ այդ հազարաւոր էակ-
ները ոչ հայր ունէին, ոչ ալ մայր, այսինքն չէին
ծներ: Անոնք կը կարծէին թէ այս ճճիներու կազ-
մութիւնը հետեւանք էր տիեզերական ոյժի մը,

որ ո՛չ մէկ կերպով ենթադրել չէր տար կանխա-
գոյն նման անհասանելի միջամտութիւնը: Զանա-
զան փորձեր մեծ ոյժ տուին այս կարծիքին:

Բայց շուտով երեւան ելաւ հակառակ վար-
դապետութիւն մը, աւելի բանաւոր և աւելի դրա-
կան: Դեռ 1638ին, իտալացի նշանաւոր բնախօս
մը, Րէսի, հաստատած էր թէ անկենդան միսերու
մէջ աճող սրղերը կ'արտադրուին միլիոնաւոր
ճանձերու ձգած սերմերէն: Բայց տակաւին ան-
բացատրելի կը մնար նեխումով աճած միլիոնաւոր
մանրիկ անասուններու ծնունդը, կ'երբ Սփալտն-
ժանի հրապարակ ելաւ և հաստատեց թէ ատոնք
արդիւնք են օդին մէջ յաճող անհամար սերմերու
փթթումին: Այս գիւտէն ծնունդ առաւ արդի
հաւաստեմութիւնը (panspermie), կամ սերմի
վարդապետութիւնը, որ ներհակ է այլաճնու-
թեան (hétérogénie), կամ ինքնաբեր ծնունդին՝
ինքնեղութեան:

Փասթէօն իր կարգին, մեծ լոյս սփռեց այս
խնդրին վրայ: Հաստատեց թէ մթնոլորտը լեցուն
է անհամար օտար մանրէներով և թէ ո՛ր և է անա-
պակ հեղուկ, որ զերծ կը մնայ օդի հազորդակ-
ցութեանէն կամ կը դրուի քիմիապէս մաքուր օդի
մը մէջ, անսահման ժամանակով կը մնայ առանց
աւրուելու, նեխելու, այսինքն ո՛ր և է գործանա-
ւորութիւն չի կրնար աճիլ անոր մէջ: Եւ արա-
մաբանութեամբ կը հետեւի թէ այդ օտար մար-
միւնները, որ ցանցնուած են և կը յաճին շրջա-
փիւռ օդին մէջ, սերմերն են մանրադիտական
բազմաթիւ և այլազան գործարանաւորութեանց,

որոնք կ'աճին երեւութապէս ինքնաբերաբար,
օդին ենթարկուած հաստատուն և հեղուկ նիւթե-
րու մէջ:

Եւ յետոյ, ապացուցուած է նաեւ որ նե-
խումը, հեռո՛ւ նախնական երեւոյթ մը ըլլալէ և
տիեզերական ոյժի մը շնորհիւ միլիոնաւոր անաս-
նիկներու ծնունդ տալէ, ինք ալ կ'արտադրուի
գործարանաւոր սերմերու կանխադոյն գոյութե-
նէն, — ըլլան կենդանական թէ բուսական — որոնք
իրեւ խմոր կը ծառայեն: Այսպէս, յատուկ կա-
մեցողութեամբ կարելի է նեխում յառաջ բերել հե-
ղուկի մը կամ հիւսուածի մը մէջ, այդ սերմերէն
դնելով, ցանելով կամ ներարկելով: Զուրին, կա-
թին, գարեջուրին, գինիին, քացախին և ուրիշ
հեղուկներու մէջ անոնց միայն ներկայութիւնը
կը բաւէ աւրելու այդ բոլորը, շնորհիւ իրենց
արագ աճումին և ծննդաբերութեան: Եւ ընդհա-
կառակն, կարելի է արգիլել խմորումը, խափա-
նելով կամ կասեցնելով այդ սերմերուն աճումը՝
ջերմութեամբ կամ կարգ մը թթուներով որոնք
կը սպաննեն այդ մասնիկները: Պտուղներու տար-
բազադրութիւնը, փտութիւնն ալ հետեւանք է
այս սերմերուն որոնք կը մտնեն իրենց հիւսուա-
ծին մէջ: Եւ վերջապէս նոյն այդ մասնիկներն
են որ բնական կամ արհեստական ճամբաներով
և կամ արկածով կը մտնեն մարդոց և անասուն-
ներու գործարաններուն մէջ և ծնունդ կուտան
ամէնէն ծանր հիւանդութեանց:



Մննդագործութեան ամէնէն տարրական ձեւն է հերձաճնութիւնը (fissiparité), այսինքն այն՝ որ տեղի կ'ունենայ հերձումով, պատուումով, կոտորակաւոր բաժանումով, հատումով: Այս եղանակով կը ծնին մանաւանդ ջրածնները: Անոնք երբ իրենց կեանքի մէկ որոշ շրջանին հասնին, երկայնքէն կամ խոտորնակի կը բաժնուին զսնազան հատուածներու, որոնց իւրաքանչիւրը կը վերածուի նոր գործարանաւորութեան մը:

Իսկ պսիւսմութիւն (gemmiparité) կը կոչուի այն ձեւը ուր պտուկներ և ուռեցքներ կը կազմուին անհատի մարմնին զանազան մասերուն վրայ և որոնք իրարմէ կ'անջատուին որոշ ատեն մը, նայնքան նոր գործարանաւորութիւններ արտադրելու համար: Այս ձեւը կրնայ ըլլալ արտաքին կամ ներքին, նայած թէ պտուկները ո՛ւր կ'աճին, մարմնի մակերեսին վրայ թէ ներքը: Այս ձեւը առանձնայատուկ է բոյսերուն և բազմոտանիներուն և անոնց պէս կը կազմէ փոխանցման զիծ մը՝ հերձածնութեան և ձուածնութեան միջեւ:

Վերարտադրութեան այս երկու ձեւերուն մէջ, միայն մէկ գործարանաւորութիւն պէտք է, ուրիշ մը յառաջ բերելու համար, և հարկ չկայ ծննդագործութեան յատուկ գործարաններու: Խնդիրը տարբեր է ձուածնութեան կամ սեռական ծննդագործութեան մէջ, որ կը պահանջէ երկու սեռերու գործակցութիւնը: Այն սերմը կամ ձուռն որ կը պարունակէ նոր անհատին կազմաւորութեան նախնական տարրերը, կը հայթայթուի

կնոջ ծննդական գործարաններով. բայց իրարմէ անջատուելու և աճելու համար, այդ սերմը պէտք է բեղնաւորուի կամ կենդանանայ մասնաւոր հոռնատով մը կամ հեղուկով մը, որ կը պատրաստուի և կը հայթայթուի արական գործարաններով:

Այս երկու տեսակ գործարաններու միութիւնը մէկ անհատի վրայ՝ կը կազմէ որձեւիգոթիւն, որ կը գտնուի բոյսերու մեծամասնութեան մէջ և շատ մը կակղամորթներու մէջ: Բայց մինչ բոյսը ինքնիրեն կը բաւէ, որձեւէգ՝ այսինքն թէ արու և թէ էգ կենդանիները կրնան վերարտադրուիլ միայն նմանի մը գործակցութեամբ. այսպէս են զեանի որդիքը (երկրամայր) և տրզրուկները: Մարդկային որձեւիգութիւնը շատ հազուադէպ պարագայ է և մեծամասնաբար՝ երեւութական: Այդպիսի զէպքերու մէջ, սովորաբար երկու սեռի անհատները ո՛չ մէկ գործարանն ունին և ո՛չ միւսը, և շատ յաճախ անընդունակ են սերնդագործութեան:

Ձուածնութիւնը կամ սեռական սերնդագործուելը տեղի կ'ունենայ երկու տարբեր եղանակներով, նայած թէ ո՛ւր է ձուռն, էգի ներքին թէ արտաքին մասին մէջ: Այսպէս, ձուկերուն հակիթները, զորս նախապէս կ'աճէ էգը, յետոյ արուին կողմէ կը բեղնաւորուին անոր վրայ հոսելով սերմնակաթիլը, առանց ո՛ր և է ուղղակի, անմիջական հաղորդակցութիւն անենալու էգին հետ: Չկնարոյցները սրճեասակունորէն կը բեղնա-

ւորեն ձուկերը, էգերու հաւկիթին վրայ քամելով արուններուն սերմնակաթը: Սակայն կարգ մը տեսակներու մէջ աստիճան մը մերձեցում, նոյն իսկ երկու սեռերու շփումը անհրաժեշտ է, կարծես ցուցնելու համար այս գործողութեան աստիճանաւորումը՝ ողնայարաւորներու զանազան դասերուն մէջ:

Թռչուններուն և ստնաւորներուն մէջ, ուր հաւկիթը կամ ձուկը աւելի կամ նուազ խորութեամբ պահուած կը մնայ էգին ներսը, բեղնաւորիչ հեղուկը պէտք է ուղղակի վրան հոսի մասնաւոր գործարանով մը, որպէս զի արգասաւորում տեղի ունենայ: Ասկէ՝ արուի և էգի անհրաժեշտ միաւորումը, զուգաւորութիւնը:

Բեղնաւորման հետեւանքով հաւկիթին կրած փոփոխութիւնները պատճառ կ'ըլլան որ ան թողու իր սկզբնական տեղը աւելի կամ նուազ արագութեամբ: Ինչպէս որ պտուղը ծառէն կը փրթի երբ հասուննայ, թռչուններուն մէջ հաւկիթը կ'անջատուի էգէն և կ'ածուի, յետոյ ենթարկուելու համար բնական կամ արհեստական թխսումի մը, որպէսզի՝ զարգանայ և նոր կենդանին ծնի: Հաւկիթին տեղափոխութիւնը ընդհակառակն շատ յամբընթաց է ձուակենդանածիններու մէջ (ovovivipares), ուր կը բացուի իր ճամբան անցած ատեն, այնպէս որ նոր էակը դուրս կ'ելլէ մօր ծոցէն իր վերջնական ձեւին մէջ, ինչպէս իժերը:

Իսկ ստնաւորներուն մէջ, հաւկիթը ձուարանէն ելլելով, կ'իջնայ արգանդին մէջ, ուր կը մնայ ամբողջ յղութեան շրջանին. տեսակ մը թխսում,

որու միջոցին կը զարգանայ ու կը սնանի մօրը վնասով, յետոյ բացուելու և իր վերջնական և յատուկ ձեւով ծնելու համար:


Ինչպէս կը տեսնուի, ծննդագործութեան այս զանազան ձեւերուն մէջ, կայ աստիճանական յառաջացում մը՝ ամէնէն պարզէն մինչև ամէնէն լարդը: Ինչ հսկայ տարբերութիւն պարզ հերձածութեան և մարդկային տեսաչի սերնդագործութեան միջեւ, որ կը պահանջէ երկու անջատ, առանձին սեռերու գործակցութիւնը: Եւ ինչպէս ամէն բան համեմատական է այս մեծ գործին մէջ, համաձայն ծնելիք էակներու թիւին, տեւողութեան և դերին:

Եւ անա թէ ինչքան կարեւոր է բուն իսկ նկարագրութիւնն այն գործարաններուն որ կ'ոնպատեն այս գործողութեան, և որոնց բնախօսական դերին և առողջական կացութեան մասին շատ քիչերը հիմնական ծանօթութիւններ ունին:



2.— Արական գործարաններ

Տղամարդու ծննդական գործարանները կը բաժնուին երկու խումբի, համաձայն իրենց դերին: Առաջինները կ'անջատեն, կը պատրաստեն և կը պահեն բեղնաւորիչ հեղուկը, որ կը կոչուի սերմ (sperme) և այսպէս կը կազմեն բեղնաւորութեան գործարանները: Ասոնք են անորձիկերը



Պատկ. Ա. — Տղամարդու ծննդամիզական գործարանները
(ճեղքուած Երկայնէն. կողմնակի դիրքով)

1. Քափան (rectum). 2. Միզային փամփուտ. 3. Շագանակագեղձ.
4. Քառփրբի գեղձ. 5. Սերմնային փամփուտ. 6. Սերմնային լարմ.
7. Սերմնաբեր խողովակ. 8. Միզեռակ. 9. Ուրնայարի ստորին մասը:

(տե՛ս Ա. նկարը), սերմնասար խողովակները և սերմնային փամփուտները: Միւսները կը ծառայեն այդ հեղուկը փոխադրելու և ներմուծելու կնոջ ծննդական գործարաններուն մէջ: Աստոնք են զուգաւորութեան գործարանները, — առնանդաւ կամ վարոց, — երկայն, գլանաձեւ և կանգնելի գործարան մը, որ կը բաղկանայ երկու գլխաւոր մասերէ, — փապային մարմիններ և միզուկ:

Ստորեւ անջատաբար կուտանք այդ գործարաններուն համառօտ նկարագրութիւնը:

Բեղնաւորիչ գործարաններ. — Ամորձիները երկու գեղձեր են՝ զետեղուած՝ տեսակ մը միսէ տոպրակի մէջ, որ կը կոչուի փոշտամաշկ (scrotum) և որ հաստատուած է որովայնին վարի կողմը, մէջտեղէն սկսելով: Այս ալ իր կարգին միջնամուշկով մը բաժնուած է երկու փոշտերու (bourse), իւրաքանչիւրին համար մէկ հատ: Աջակողմի ամորձին ձախէն քիչ մը աւելի խոշոր է և բարձր: Ամորձիները հաւկթածեւ են, թեթեւապէս տափակցած աջէն ձախ, և առոյգ տարիքին մէջ՝ ունին հաւու մը պզտիկ հաւկիթին ծաւալը, 30-32 կրամ ծանրութեամբ: Իրենց հիւտուածը կը բաղկանայ անհամար մանր թելերէ, որոնք խիստ տկուն են, անկապ և ծուռուծուռ, իրարու շաղապատուած և իրար անցած հալար ուղղութեամբ. այս բոլորին համագումար երկայնութիւնը կը հաշուեն մինչև 2000 մեղր: Աստոնք սերմնաբեր խողովակներն են, ուր կը կազմուի և շրջան կ'ընէ

սերմը: Իրենց միացած են երակներ, շնչերակներ, ջիղեր. և բոլորը միասին կը կազմեն սպուն-



Պատկ. Բ.— Առնանդամ եւ ամորձիք (նեղուած)
 Վերի ծայրը՝ ծեփուկն է. վարը՝ մագոս պարկածեւ մասը՝ փոսամաւելը. դէպի ձախ՝ հաւկթածելը՝ ամորձին. անոր անջատուած վերի կտորը՝ մակամորձին գլուխը:

գի հիւսք մը, այնքան սեղմ և անքակտելի ցանց մը, որ անկարելի է անոնց մէջ բան ներարկել:

Այս բոլոր սերմնաբեր խողովակները իրենց համախմբուումով կը կազմեն սպիտակ լար մը, որ կը սկսի ամորձիին վերի և ներքին եզերքէն և կ'երթայ կը ձեւացնէ երկարածիգ ցցուածք մը, որ կը կոչուի Հիկմորի մարմին: Յետոյ այս բոլորը կ'ամփոփուին կը կազմեն միակ խողովակ մը կամ ծոց մը, որ երկարածիգ, որդանման գորշ պզտիկ մարմնի մը ձեւն ունի, պառկած՝ ամորձիին վերին եզերքին վրայ, կարծես անոր վրայ աւելցած: Մակամորձիքն է այս (epididyme), ուրկէ ճամբայ կ'ելլէ, սերմնային լարին հետ, սերմնատար խողովակը, որ սերմը կը տանի իր ընդունարանին՝ սերմնային փամփուշտին մէջ, որովայնին մէջ անցնելով ուրիշ խողովակէ մը որմէ կը բաժնուի անմիջապէս յետոյ:

Սերմնային փամփուշտները (պատկեր Ա. թիւ 5) երկու թաղանթապատ պզտիկ տուպրակներ կամ կծկուած խողովակներ են, խորտուբորտ՝ անհաւասար մակերեսով, շեղակի զետեղուած մզային փամփուշտին տակ, իւրաքանչիւր կողմը մէկ հատ: Ասոնք հաստատուած ըլլալով սերմնատար խողովակէն դուրս, կը ծառայեն իրրեւ ընդունարան սերմի: Բայց այս ընդունարանէն ծայր կ'առնէ շատ պզտիկ խողովակ մը, 2-3 սանդիմեղր երկայնութեամբ, որ խիստ սուր անկիւնով մը կը միանայ սերմնատար խողովակին և կը կազմէ ցայտեցուցիչ խողովակները: Այս վերջիններն ալ իրենց կարգին համաչափօրէն կ'ուղղուին դէպի

առաջ, և գրեթէ իրարու կցուած, կը բացուին միզուկին մէջ՝ երկայնաձեւ բերանով մը, անցնելով շագանակագեղձէն: Ասկէ ծագում կ'առնէ սերմի ցայտումին խորունկ, բուռն և ցնցող զգացումը:

Շագանակագեղձը (prostate) մտուտ, գեղձիկներով լեցուն, խիստ թանձր և ընկոյզի մեծութեամբ մարմին մըն է, ծայրատ կոնի մը ձևով, որուն ստորին մասը կ'ընդ գրկէ փամփուշտի բերանը, կատարը՝ միզուկին մէկ մասը որ անմիջապէս կը յաջորդէ անոր: Զուգահեռաբար և դէպի յառաջ, միզուկին երկու կողմերուն վրայ, կը գտնուին երկու գեղձեր, որ կոչուած են երկու բնախօսներու՝ Քաուփըրի կամ աը Մէրիի անունով, որովհետեւ առաջին անգամ անոնք երեւան հանեցին կամ լուսարանութիւններ հաղորդեցին: Այս գեղձերը երկայնաձեւ են, սիսեռի մեծութեամբ, կարմրորակ, բաւական սեղմ հիւսկէնով, և իւրաքանչիւրը իր արտաքսիչ խողովակն ունի, որ միզուկին մէջ բերանով կը միանայ շագանակագեղձի 12-15 արտաքսիչ խողովակներուն հետ: Մածուցիկ, դեղնորակ և քիչ մը իւղանման հեղուկ մը դուրս կ'ելլէ այս գեղձերէն, միզուկը լցըծուն դարձնելու, զայն մէզի թթւութենէն պահպանելու և սերմին իրրեւ փոխադրիչ ծառայելու համար:

Ամփոփելով այս բոլորը, ըսենք թէ սերմնային չնչերակին արիւնը, որ կը սնուցանէ և կ'ար-

ծարծէ ամորձիքը, կը պատրաստուի և սերմի կը վերածուի այդ իսկ գործարանին մէջ, ուր յամրաբար ճամբայ կը գանէ սերմնարտադրիչ խողովակներու մէջ, հասնելու համար մակամորձին: Ասկէ կ'անցնի սերմնատար խողովակներուն մէջ, յետոյ սերմնային փամփուշտներուն մէջ, ուր կը մնայ իրրեւ պահեստի, պատեն առիթին, ցայտեցուցիչ խողովակներուն միջոցաւ արձակուելու և արգասաւորելու համար:

Կը հետեւի թէ ամորձիքները (testicules) անհրաժեշտ են, կենսական, ինչպէս կը վկայէ իրենց լատինական անունն այ (testi-վկայ): Ամորձիքները արական սեռի իսկական յատկանիշն են և ամենայաւ վկայութիւնը՝ տոնութեան և ոյժի: Յաճախադէպ է որ սղամարդ մը միայն մէկ ամորձի ունենայ փոշտամաշկին մէջ: Բայց շատ հազուադէպ է միանգամայն երեք-չորս հատ ունենալ: Բայց, մինչև սաղմնային վիճակի եօթներորդ ամիսը, ամորձիքները կը մնան փոքր մէջ, երկամիներուն տակը, և այդ շրջանէն ետք միայն կ'իջնեն փոշտամաշկին մէջ, քաշուելով պզտիկ նետրդէ մը: Այսօր հաստատուած է որ եթէ այդ նետրդը գոյութիւն չունենայ, կամ թերի, անկատար, կամ անսնական գործունէութիւն ունենայ, կրնայ խափանել կամ ուշայնել ամորձիքներուն վայրէջքը: Գիտնական մը սպոցուցած է թէ ամորձիքները այս կամ այն պատճառով յաճախ ճամբան կը մնան, կը կենան կամ վերի վայր կը շրջուին:

Այս անկանոնութիւնները սովորաբար պատճառ կը դառնան առնական անկարողութեան և

ամուլթեան: Շատ մը կենդանիներու մէջ, որոնք զուրկ են փոշտամաշկէ, ամորձիները միշտ ներսը կը մնան: Ուրիշ կենդանիներու մէջ, ինչպէս դաշտամուկերը, կ'իջնեն միայն աւփանքի շրջանին: Տեսնուած են մարդիկ զազանի մնացած ամորձիներով, որոնք ընդունակ էին սերնդագործութեան: Բայց ընդհանրապէս այդ ծածկուած ամորձիները սերմնակենդան չեն արտադրեո, անօգուտ են և սրտածառ՝ ծանր տառապանքներու և հիւանդութիւններու:

Ասոնք կը վտաստերին գրեթէ յորտուտաբար: Եւ անո թէ ինչո՞ւ բժիշկները կը յանձնարարեն զայն բուժնայ արբունքէն յետոյ:



Պատկ. Գ.—Տղամարդու ծննդամիզկն. գործարաններ (ճիշդ մէջտեղէն, երկայնու բեակն ցնդուած)

1. Աղիք. 2. Ողնայտ. 3. Մզային փամփուռ. 4. Թափան.
5. Սերմնային փամփուռ. 6. Շագանակագեղձ. 7. Սերմնասարխոյովակիին բեակն. 8. Միզուկ. 9. Ամորձի. 10. Ծեփուկ:

Սերմը ձերմկորակ հեղուկ մըն է, մածուցիկ, թանձր և մեղմանու, աղի և գրգռիչ, մասնաւոր անախորժ հոտով մը. որ կը յիշեգնէ Եալէլի ջուրին և շագանակկնիի ծաղիկին հոտը: Կը բաղկանայ մաս մը թափանցիկ հեղուկէ և ուրիշ մաս մը աւելի թանձր, փսորուտ և մանր թելերով լեցուն հեղուկէ: Այս վերջին մասի համեմատութիւնը այնքան աւելի է առաջինէն, որքան անձաւոր աւելի առոյգ է և իր արտահոտութիւնը՝ աւելի հազուադէպ: Այս երկու մասերէն կը գոյանայ աւելի հեղուկ խառնուրդ մը որ շուտով կը ջնջուի:

Սերմին բաղադրութիւնը կը զանազանուի համաձայն իր անցքի տարրեր կէտերուն: Այսպէս, կալաքարի և սպիտի բաղադրութիւն մը ունի ցայտման պահուն, յետոյ կը թանձրանայ ջերմութենէն և թթուներէն, բայց այն տսին ալ իրեն կը հառնուի շագանակագեղձէն, Քաուփըրի գեղձերէն և միզուկի անցքէն քամուած հեղուկը: Սերմը երբեք զուտ՝ անխառն չէ:


Ժամանակ մը կը կարծուէր թէ սերմը մասնաւոր կազ մը կը պարունակէ, *aura seminalis*, որ իրրեւ թէ բեղնաւոր շագին էր: Սփալանձանի հերքեց ատոր գոյութիւնը, չյաջողելով արդասաւորութիւն յառաջ բերել զանազան տեսակէ կենդանիներու մէջ: Եթէ այդ կազը մաս չի կազմեր սերմէն արտադրուած մասնաւոր և թափանցող հոտին, պէտք է արդասաւորիչ յատկութիւնը վերագրել իր բաղադրիչ տարրերէն մէկուն կամ բոլորին միանգամայն:

Մանրադիտակով նայուած ատեն, սերմը՝ իր մեծագոյն մասը կազմող հեղուկին մէջ կը ներկա-

յայնէ, — խնտո գնտիկներ, նախնական գեղձիկներ և թեկանման մարմնիկներ, որոնք շարժելու յատկութիւնն այ ունին: Ասոնց գիւտը ըրին 1677ին, և անկէ ի վեր, աւելի կատարեալ գործիքներով եղած հետազոտութիւններ հաստատեցին թէ այդ անասնիկները կը վխտան բոլոր կենդանիներու սերմին մէջ, ունենալով մասնաւոր հանգամանքներ, համաձայն տեսակին: Այսպէս, ունին ուռած մաս մը որ գլուխն է և մանրաթել մը՝ պոչի ձևով, նման դողջի պոչին, բայց աւելի բարակ վերջացած: Բուռն շարժումներ կը կատարուին պոչին կողմէ որ կը վշտվէսի և այս բոլորը զօրաւոր են իրենցմէ տասն անգամ աւելի խոշոր բիրեղներ տեղափոխելու: Ասոնք կը կոչուին Սերմնակեղաններ (spermatozoaires) որոնք բեղնաւորութեան էական գործօններն են: Սերմնակեղանները բնախօսներուն համար կը կազմեն մարդկային տեսակին նախնական տարրերը, իսկ և իսկ մանրամոլոր մարդիկ, ինչպէս կ'ըսէր Պիւֆօն: Ապա ուրեմն ինքնեզուլեան՝ ինքնարեւոյթի տեսութիւնը հէքեաթ մըն է, կամ դեռ շատ հեռուները կը մնայ:

Այս մանրադիտական անասնիկները, որոնք նախապէս կազմուած են պզտիկ ուռեղքէ մը կամ բշտիկէ մը, կը պարունակեն շատ մանր գնդիկներ, երկուքէն մինչև քսան հատ, որոնց մէջ ոչինչ կայ իրրեւ կազ կամ ողի, ինչպէս կը հաւատային երբեմն: Հետզհետէ աճելով է որ մէկ կամ աւելի մեկուսացած կէտեր երեսան կուգան իրրեւ սկզբնական տարրերը՝ սերմնակեղաններ:

րու: Ասոնք կը զարգանան այսպէս, ներփակուած բշտիկին մէջ և իրենք իրենց վրայ գալարուած,



Պատկ. 4. — Մարդ'ային սերմնակեղաններ

(Մեծցուած)
 Ա. կողմնակի տես. Բ. հակէն Գ. սերմնակեղանի մը կազմը. (Այս, ինչպէս և միւս պատկերներու շուրջը գիծեր նշանակուած են բացատրութեան համար: Այդ մանրամասնութիւններ մասնագիտական և բժիշկներու յատկապէս կ'ընեն հրատարակել:)

մինչև որ պատեանը պատուելով, շտկուին և քով քովի շարուին ինչպէս կանոնաւոր խորձ մը,

բոլորն ալ գլուխները մէկ կողմ դարձուցած: Այս վիճակին մէջ է որ կ'ելլեն ամորձիքէն, և կ'անցնին անոր թոյլ խողովակներէն. երթալու համար սերմնային փամփուշտին մէջ, ուր կը բաժնուին իրարմէ: Ահա թէ ինչո՛ւ, յաճախադէպ և իրարու ետեւէ կրկնուած զուգաւորութիւնը, մանաւանդ երիտասարդներուն մէջ, բռնի արտաքսելով դեռ կատարելապէս չկազմուած այս անասնիկները, բեղնաւորիչ յատկութենէ զուրկ՝ ամուլ սերմ մը միայն կ'արտադրէ, ինչ որ ակամայ կորուստ է:

Այս մասին ալ վիճելի հարցերը շատ են տակաւին: Կարգ մը բնախօսներ կը կարծեն թէ ինչ որ սերմնակենդան կը կոչուի, ուրիշ բան չէ եթէ ոչ պզտիկ խողովակներ, որոնք բուն սերմը կը պարունակեն: Այս տեսութիւնը շատ հիմ չունի, համաձայն ներկայ գիտութեան հետազօտութիւններուն:

Այսօր դրական ճշմարտութիւն մըն է թէ արուին սերմը կը կենդանացնէ, կ'արժարծէ էգին սերմը, ինչպէս որ բեղմնափոշին (pollen) կ'արգասաւորէ բոյսին սերմը: Ան կենդանական գոյութեան ամէնէն թանկագին հեղուկներէն մէկն է և իր հոսումը, թէև նօսը, տեղի կ'ունենայ արբունքէն մինչեւ հասուն տարիքը և նոյն իսկ մինչեւ ծերութիւն, համաձայն տարիքին, խառնուածքին, կազմին և ապրուած կեանքին: Գրգռումները, հրահրուած ցանկութիւնները կ'աւելցնեն զայն, ինչպէս որ ծանր, երկարատեւ հիւանդութիւններն ալ կ'ընդհատեն կամ կը կասեցնեն: Այն ատեն այլեւս ողջ անասնիկներ չեն գտնուիր սերմին մէջ:

Բացարձակ ժուժկալութիւնը կ'աւելցնէ պընդութիւնը և կը նպաստէ այդ հեղուկը պահելու սերմնային փամփուշտին մէջ, ուր կրնայ թանձրացնել զայն ամուր զանգուածներ կազմելու աստիճան, որոնք յետոյ արդելք կ'ըլլան արտահոսման: Ասկէ ծնունդ կ'առնեն անտանելի ցուեր, սերմնային խիթեր, որոնք ծանր գործողութիւններ կը պահանջեն:

Չուզաւորութեան գործարան. — Առնանդամը կամ վարոցը հաստատուած է որովայնին վարի կողմը, սրունքներուն ճիշտ մէջտեղը, և այն նշանն է որ առաջին ակնարկով այրը կը զանազանէ կնոջմէն: Աւելորդ է երկար նկարագրութիւն հրատարակել այս մասին, քանի որ այնքան ծանօթ է այս գործարանը, իր զանազան անուններով և փոխաբերական կոչումներով: Խնդիրը տարբեր է միզուկին և մանաւանդ փապային մարմիններուն համար, որոնք վայրկենապէս կանգնում յառաջ կը բերեն, փոխելով առնանդամին պնդութիւնը, ծաւալը և ձեւը: Թոյլ, կակուղ և առկախ, առնութեան այդ նշանը կը մեծնայ, կը կարծրանայ և կը կանգնի զանազան ազդեցութիւններու տակ, որոնք միշտ սիրոյ թելադրութիւններ չեն, սակայն:

Իր կանգնելի ըլլալու յատկութիւնը իրապէս կը սլարտի սպնդային հիւսկէնի մը, որ կը կազմէ փապային մարմինները և որ կ'երկարի երկու կողմին վրայ, ցայլոսկրէն մինչեւ առնանդամը վեր-

Չացնող կոնսաձեւ գեղձը, Լեցուելով հոսող արիւնէն, այդ հիւսկէնին օղակները կ'ուռին և այսպէս կ'եռապատկին այդ գործարանին ծաւայն ու երկայնութիւնը:

Սովորաբար, առնանդամը կտրծես ուրիշ բանի չի ծառայեր բայց միայն մէղի արտահոսման: Թուլօրէն կախուած այդ անդամը կը վերջանայ կտր ուռոցցով մը որ կը կոչուի ձեկոսկ և որուն ծայրը կը բացուի նիզուկը: Այդ բացուածքը միևնոյն ատեն կը ծառայէ սերմի արտահոսման:

Կանգնուածը յառաջ բերող պատճառները բացատրելով, հռչակաւոր հեղինակ մը, Տօքդ. Փօրէլ, կ'ըսէ.—

Այդ երեւոյթը տեղի կ'ունենայ խոռոչաւոր կամ փապայիս մարմիններ կոչուած երեք գործարաններու շնորհիւ, որոնք կը կազմեն առնանդամին գլխուոր զանգուածը: Ասոնց առաջինը, որ հաստատուած է մէջտեղը և տակը կը բաղկանայ մէկի վերածուած երկու մարմիններէ, կը շրջապատէ միզուկը և կը վերջանայ դէպի յառաջ ծաւայուն պատուկի մը ձեւով: (Այս ալ իր կարգին կը կազմէ ձեփուկը, որու մասին խօսեցանք արդէն): Միւս երկուքը համաչափօրէն հաստատուած են առնանդամի կոնակին վրայ, և իւրաքանչիւրը կը կազմէ աւելի քան մէկ երրորդ ուղիղ գլան: Երեքն ալ կազմուած են խոռոչներով կամ ծոցիկներով, որոնք կը ձեւանան արիւնային անօթներէ: Այս վերջինները սովորաբար դատարկ են, ինչ որ պատճառ կ'ըլլայ առնանդամին թոյլ և առկախ մնալուն: Ծնորհիւ խիստ բարդ մեքենականութեան մը,

որուն մանրամասնութիւնները աւելորդ պիտի ըլլար նկարագրել, Չղային գրգռումները յառաջ կը բերեն արիւնի կուտակում մը խոռոչաւոր մարմիններու ծոցին մէջ, այնպէս որ խոռոչները արիւնով կը յորդին և երեքն ալ պինդ և կարծր զանգուածներու կը փոխակերպուին: Այս կերպով զուգաւորիչ գործարանին ծաւայը կ'աւելնայ մեծապէս, և իր պնդութեան շնորհիւ կրնայ մանկ կնոջ խոռոճային: Միւսնոյն ատեն և շնորհիւ միևնոյն մեքենականութեան, միզուկի ցցուածքը կ'ուռի և փամփուշտի կողմէն կը խցէ միզուկը, մինչ ընդհակառակն սերմնային խողովակները կը բացուին դէպի միզուկին բերանը:

Այս կերպով զուգաւորիչ գործարանը պատրաստ է գործելու: Սակայն հարկ է որ կրկին և կրկին գրգռուի ձեփուկը, որպէսզի սերմի ցայտում տեղի ունենայ: Այս վերջինը կ'ըլլայ գրգռելով մասնաւոր մկան մը, որ կը ճնշէ սերմնային փամփուշտները և միզուկէն կը ցայտեցնէ սերմը: Ցայտումէն յետոյ, արիւնի կուտակումը քիչ-քիչ կը նուազի խոռոչաւոր մարմիններու մէջ և առնանդամը նորէն կը դառնայ թոյլ ու առկախ:

Այսպէս ուրեմն, այս գործարանը խիստ բարդ է և շարժման մէջ կը գրուի Չղային մէկէ աւելի գրգռումներով, որոնք կրնան խանգարուիլ զանազան ձեւերով, Չղային գրութեան հիւսանդութիւններուն մէջ: Զմուռնանք որ կանգնուածի և ցայտման Չղային կեդրոնները կրնան շարժման մէջ գրուիլ թէ ուղղակի՝ ուղեղին միջոցաւ, և թէ անուղղակի ձեփուկին գրգռումներով: Ծեփուկը

ունի չափազանց փափուկ մորթ մը կամ թաղանթ մը, որ արտաքին շփումներու դէմ պաշտպանուած է մորթի երկայն ծալքով մը. քրիստ կոչուած: Այս վերջինը յաճախ շատ նեղ է, այնպէս որ կարելի չըլլար ծեփուկին վրայէն դէպի ետ քաշել: Այն ատեն կը կազմուի ծոց մը ուր կը կուտակուին նիւթը, սերմը, մէզը ևն.:

Այս անկանոնութենէն, որ տեսակ մը հիւանդութիւն է (phimosi), զերծ են Հրէաները և Մահմետականները, չնորհիւ թլփատութեան, որ մաս կը կազմէ իրենց կրօնական դաւանութեան: Երբեմն առողջապահական պատճառներով բժիշկները պէտք կը զգան այդ գործողութիւնը կատարել նաև ոչ-Մահմետականներու կամ ոչ-Հրէաներու վրայ: Գիշութեան նողկալի ախտը, որ այնքան տարածուած է մասնաւորապէս պատանիներուն մէջ, յաճախ յառաջ կու գայ այս անկանոնութեան հետեւանքով: Այդ կը ցուցնէ թէ ծեփուկին սքարզ գրգռումը, որ սոյն պարագային հետեւանք է թլփատի ծոցին մէջ հիւթերու կուտակումին, ամէն անգամ միայն պարզ կանգնումներ չի պատճառեր, այլ և վերջը-վերջը կրնայ սերմի ցայտում յառաջ բերել:

Միզուելը թաղանթապատ խողովակ մըն է, որ կը ծառայէ մէզի և սերմի արտահոսման: Հաստատուած առնանդամին տակ, խոռոչաւոր մարմիններու մէջտեղը, ունի իբր 16 սանդիմեղր երկայնութիւն, տարածուելով միզային փամփուշտէն

մինչև ծեփուկը, որուն մէջտեղը կը գտնուի միզարեանը: Այսպէս կը զանազանուի իր ազատ, շարժուն, արտաքին և երեւցող մասը՝ ծածկուած, ներքին և հաստատ մասէն: Առաջինը, որ կը կոչուի սպնդային, ամէնէն ընդլայնելին և առաձգականն է, առնանդամին ընդ շարժումներուն հետեւելու համար, ու նաև ամէնէն երկայնն ու ամէնէն կանոնաւորը: Ծածուկ մասը, ընդհակառակն, հաստատուած է հիւսկէններուն մէջ, անշարժ և անկանոն:

Առնանդամը, որուն պատեանը ծայրէն միացած է առաձիգ թելով մը, զայն ետ քաշելու և առաջ բերելու համար, նախնական ժամանակներու մէջ ոյժի և բեղնաւորութեան խորհրդանշան նկատուելով, Արեւելքի մէջ պաշտուեցաւ Փալլոս անունով: Այդ էր պատճառը որ Յունաստանի մէջ ալ գարշելի պաշտում մը կար Պրիապի այլանդակութեան հանդէպ (արտակարգ մեծութեամբ առնանդամ): Իր կարեւորութիւնը և նախնական դարերու մէջ վայելած աւելորդապաշտական յարգանքը բխած է մանաւանդ այն ճիւղաւորային յօշոտումներէն զորս կը կատարէին վայրենիները, իրենց թշնամիներու առնանդամին վրայ, պատեբազմներու տակն:

Քաղաքակիրթ ազգերուն մէջ, ընդհակառակն, այդ գործարանը խնամով դադանի կը սպհուի, իբրև ամօթալի մաս մը. այն աստիճան որ, նոյն իսկ անպատշաճ է արտասանել իր զանազան գուհիկ յորջորջումները, ինչպէս վատութիւն և խայտառակութիւն է զարնել անոր գտնուած տեղին:

Հին Հրէաները սովոր էին այդ նողկալի յարձակման դիմելու իրենց կուրաներուն ասան: Մովսէս այս գարշելի ունակութեան առաջին ասնելոյ: համար, վճռեց կտրել ձեռքը այն կնոջ որ կը բռնէ առնութեան բնական մասերը. միեւնոյն ասան ներքինները անարժան հոշակեց յաւիանականութեան:



3.—Իգական գործարաններ

Թէ այրերու և թէ կիներու ծննդագործական գեղձերը յառաջ կուգան սաղմի միեւնոյն նախնական գործարանէն: Եթէ սաղմը արու ըլլայ, այդ գործարանը կը վերածուի երկու ամորձիներու, որոնք կամաց կամաց կ'իջնեն ածուկն ի վար և կը տեղաւորուին փոշտամաշկին մէջ: Իսկ եթէ իգական ըլլայ, սեռական երկու գեղձերը կը մնան որովայնային խոռոչին մէջ և ձուարաններու կը վերածուին:

Նոյն ինքն կնոջ աւելի բարդ դերին պատճառով, իր ծննդական գործարաններն ալ աւելի բազմաթիւ են: Բացի ձուարտադրութեան և զուգաւորութեան գործարաններէն, որոնք կը համապատասխանեն աղամարդու նոյն գործարաններուն, կինը ունի նաեւ յղութեան և կաթնատուութեան գործարանները: Այսինքն, կինը ունի չորս տարբեր գործարաններ, փոխանակ երկուքի:

Չուարտարութեան գործարանը զոյգ է կնոջ մէջ, ինչպէս սերմնային գործարանը՝ աղամարդուն մէջ: Կը բաղկանայ երկու ձուարաններէ, որոնք գեղձիկներով լեցուն երկայնաձեւ մարմիններ են, տափակցած ինչպէս նուշը կամ բակլան, գունատ կարմիրով, մակերեսը ողորկ՝ չբեղնաւորուած կինե-



Պատկ. Ե. — Կնոջ ծննդամիգական գործարանները (լայնէն բացուած)

1. Ասեղկան Սար. 2. Միգային փամփուռ. 3. Արգանդ. 4-4. Չուարան (աջ եւ ձախ). 5. Թափան:

րուն մէջ, խորտուբորտ՝ անոնց քով որ մայր են եղած: Չուարանները զետեղուած են կոնքի մուտքին մէջ, մէկ հատ՝ արգանդի իւրաքանչիւր կողմը, և թէ կազմի ու թէ պաշտօնի տեսակէտով կը համապատասխանեն ամորձիներուն: Ծննդագործու-

Թեան էական գործարաններն են ձուարանները, ուր կը կազմուին սերմերը կամ ձուիկները: Այս վերջիններէն 25-30 հատ կը գտնուի իւրաքանչիւր ձուարանի մէջ, որոնք իրենց կարգին ներփակուած են թափանցիկ բշտիկներու մէջ, կանփհատի կամ կորեկի մեծութեամբ: Այս պահարանը, որ սովորական հաւկթի կճեպին տեղը կը բռնէ, լեցուած է մածուցիկ, գեղձիկուտ, կարմիր-դեղնորակ հեղուկով մը, որ դեղնուցն է: Ասոր մէջտեղը պարզ աչքով հազիւ կը գտնազանուի պզտիկ հաստատուն մարմին մը որ կը լողայ հեղուկին մէջ: Այս՝ մանրադիտական ծիւ-բշտիկն է, որ արգասաւորուելով ծնունդ կուտայ մարդկային սաղմին:

Այս էական գործարաններուն վրայ կ'աւելնան արգանդային կամ փաղրպեան փողերը: Ասոնք երկու նեղ խողովակներ են, սագի մը փետուրին մեծութեամբ, 10-12-15 սանդիւմ երկայնութեամբ, որոնք ծնունդ առնելով արգանդին երկու վերին և հակառակ անկիւններէն, իւրաքանչիւրը կ'ուղղուի դէպի յարակից ձուարանը զոր կը ծածկեն իրենց ազատ, վրանի պէս լայնարաց և ծոպածեւ ծայրով: Այս լեզուակներէն մէկ-երկուքը ձուարանին կը մօտենան և վերեւէն կը կպչին, ձուիկը քաշելու և դէպի արգանդ առաջնորդելու համար:

Չուզաւորութեան գործարանը թաղանթապատ խողովակ մըն է, 11-12-15 սանդիւմեզր երկայնութեամբ, որ կը կոչուի խոռոնայի: Տրամագիծը մեծապէս կը տարբերի, համաձայն պէտքերուն

և պարագաներուն: Ներքին մասը կը սկսի արգանդէն, ընդգրկելով անոր բերանը: Ասկէ կ'ուղղուի վերէն վար, մզային փամփուշտին և թափանին մէջտեղէն դէպի դուրս, ուր կը վերջանայ բացուածքով մը որ կը կոչուի բունոց կամ պուց: Մկանային խաւ մը ծննդագործութեան այս ցընցուղին կուտայ իր պաշտօնին անհրաժեշտ առաձգութիւնը: Նեղ և սեղմ է արբունքի շրջանին, բայց կ'ընդլայնի հետզհետէ, տղաբերքի ատեն յղութեան արդիւնքին անցք տալու աստիճան:

Զանազան մասեր ունի այս գործարանը: Մանկամարդ աղջիկներու բունոցին մուտքը, դէպի վար, միացած է հուղաթաղանթի խոտորնակի ծալքով մը, որ աւելի կամ պակաս բարձրանալով կողմերուն վրայ, այդ խիստ բարակ և դիւրարեկ թաղանթին կուտայ կիսալուսնի մը ձեւը, մանաւանդ տարածուն մասին մէջ: Հիւսկնէ է այս, որ կուսութեան կնիքը համարուած է:

Ասկէ զատ, բունոցը շրջապատուած է, վերէն վար, երկու թաղանթային ծալքերով, որոնց արտաքին և ամենամեծ մասը կազմուած է մորթէն, իսկ պզտիկը, որ ներսը կը գտնուի, կը բազկանայ հուղաթաղանթէ: Ասոնք մեծ եւ պրզօրի շրթունքներ են, և այդպէս կը կոչուին իրենց իսկ պաշտօնին բերումով, որ է փակելով ծածկել և պաշտպանել բունոցին մուտքը: Վերի կողմէն իրենց միացման տեղը կը գտնուի բարձունք մը որ կազմուած է ցայլոսկրէն և կը կոչուի Աստիկան Սար: Այս կերպով երկու շրթները կը ձեւացնեն վեղարածեւ ծածկոց մը, որուն տակ կը գտնուի պզտիկ

ուռեցք մը, երկայնաձեւ և կանգնելի: Ծղիլը կամ կղիքորիկն է այս, որուն տակ հաստատուած է միզուկը, որ կը ծառայէ մէզը արտահանելու: Կնոջ քով միզուկը ինքն իր հաշուին կը բացուի դուրսը, բայց տղամարդու միզուկէն աւելի կարճ է և աւելի լայն: Կղիթորին կը համապատասխանէ առնանդամին և մասնաւորապէս ձեփուկին: Ան ալ, ինչպէս այս վերջինը, մասնաւորապէս յատկացուած է գրգռման և խիստ զգայուն ջիղեր ունի: Կնոջ միզուկին բերանը կը գտնուի բունոցին առջև, ուղղակի ցայտակրին տակ, ճիշտ ա՛յն տեղը ուր է առնանդամին արմատը: Բունոցին ծակը անջատ է միզուկէն, և կ'առաջնորդէ ներքին խորշը, որ կը կոչուի խոռոճայի կամ ցրնցուղ արգանդի:

Այս բոլոր յարակից մասերը աւելի կամ նուազ կ'աճին համաձայն երկիրներու, ժողովուրդներու և անձերու: Այսպէս, հիմէնը կրնայ տարածուիլ բունոցի ամբողջ բացուածքին վրայ և զայն փակել բոլորովին, արգելելով դաշտանի հոսումը, ընդհատական ցաւեր պատճառելով, վերջապէս յառաջ բերելով մահաշուք խցում մը որ կրնայ մինչև յղութիւն ձեւացնել, խափանել ամուսնութիւնը և նոյն իսկ տղաբերքը, ինչպէս բազմաթիւ օրինակներ կան, մասնաւորապէս գիւղերու մէջ:

Կղիթորին կամ ծղիկն ալ կրնայ չափազանց աճիլ: Բայց ամէնէն աւելի անկանոնութեան ենթակայ են մեծ ու փոքր շրթները: Երբեմն կը պակսին երկուքն ալ, թերի կամ յոռի կազմու-


թեան մը հետեւանքով, կամ իրարու փակած կ'ըլլան: Այս աճեւութիւնը յաճախ կը պատահի Արեւելքի մէջ, շնորհիւ օղարկութեան բարբարոս սովորոյթին: Այսինքն, նախանձոտ ամուսիններ օղակ կ'անցընեն իրենց կիներու բունոցի մեծ շրթներուն, անոնց հաւատարմութեան վստահ ըլլալու համար: Կարգ մը երկիրներու մէջ, մասնաւորապէս Թուրքիա և Պարսկաստան, անպիսի ծաւալ կը ստանան որ, սեռային մերձեցումը դժուարին կը դառնայ, եթէ ոչ սնկարելի: Բարեյոյսի կարգ մը վայրերի ժողովուրդներուն մէջ, պղտիկ շրթները այնքան կ'աճին որ զիստերուն վրայ կ'իջնեն: Ասիէ ծնած է «Հոթենթացիներու դեմքակ» բացատրութիւնը: Եւ ճիշտ այս արտակարգ վիճակէն ծագում առած է մանկամարդուհիներու բունոցի շրթներուն աւելորդ մասերը թրփատելու սովորութիւնը: Այդ գործողութիւնը, զոր կիներ կը կատարեն, յարեւման է հրէական կամ մահմետական մանչերու թրփատութեան: Երկու պարագային ալ, առողջապահիկ միջոց մըն է տաք երկիրներու համար և կը նպաստէ մաքրութեան:



Յորոքեան գործարանը մէկ ամրոցութիւն է, — արգանդի: Սա խոռոչաւոր գործարան մըն է, կը նմանի զլիսիվայր դարձած տանձի մը կամ երկայնաձեւ օղապարիկի մը. քիչ մը տափակցած առջևէն դէպի ետ: Կը գտնուի կոնքին դօզը, խոռոճայիին վերի ծայրը և անոր շարունակու-

Թիւնը կը կազմէ: Իր հասա ծայրը, որ կտոր և դէպի վեր ուղղուած է, ծածկուած է աղիքներով և կցուած՝ թոյլ ու առածիգ նեարդներով, որոնք թոյլ կուտան բարձրանայ և ընդլայնուի համաձայն պահանջին: Այստեղ է որ կը բացուին բեղնաւորուած ձուիկը արգանդին ներքը փոխադրող փողերուն բերանները: Երեխան արգանդին մէջ կ'աճի մինչև տղարեք: Արգանդին վարի մասը կ'իջնէ մինչև խոռոճային, ուր կը բացուի ուսած խոտորնակի ձեղքով մը որ կը կոչուի արգանդաբերան: Կարծես իրարու մէջ անցած, այս երկու խողովակները կը միանան և կը կազմեն միայն մէկ հաստ, ճամբայ տարու համար բեղնաւորիչ հեղուկին, ինչպէս և դաշտանին և յղութեան արդիւնքին:

Կազմուած խիստ սեղմ և ամէն ուղղութեամբ տարածուն նեարդներէ, արգանդը շատ փոքր խոռոչ մը ունի, յղութեան շրջանէն դուրս. բայց շնորհիւ իր ընդլայնուելիւ կարողութեան, խոշոր ծաւալ և տարողութիւն կը ստանայ յղութեան միջոցին: Ինչպէս դիւրին է հասկնալ, արգանդը կնոջ կեանքին մէջ ամէնէն կարեւոր գործարանն է, իր գործարանաւորութեան բեւեռներէն մէկը: Ըլլալով կեղրոնը ամսական արիւնահոսման և բոլոր կազմական ախտաւորութեանց, այդ գործարանը վճռական ազդեցութիւն ունի իր առողջութեան և կեանքի բարօրութեան վրայ: Կնոջ բոլոր ֆիզիքական և բարոյական տկարութիւնները անվրէպ հոն կը յանդին: Արգանդն է որ կինը կը չինէ, որովհետեւ կինը ամբողջովին ար-



1
2
3
4
5
6
7
8
9
10
11

12

Պատկ. 2. — Բոււնոյր՝ իր յարակից մասերով

1. Ելիկի ծածկացը.
2. Ելիկի կապը.
3. Մրգուկին արսափն բերանը.
4. Միզուկին յանցը.
5. Պարուլէնի գեղձն արսափոսի խողովակը.
6. Մրանին և բոււնոյին միջև եղած միջոցը.
7. Ելիկ կամ կոխրոսի.
8. Մեծ քրտուկ.
9. Պոսիկ քրտուկ.
10. Խոռոճայի և բերանը.
11. Հիւն.
12. Մրան:

զանդին մէջ է, ըսած է Իպոկրատ, բժշկութեան հայրը: Արգանդը կեդրոնն է արտադրութեան կեանքին, ինչպէս ստամոքսը՝ պահպանման կեանքին:

Կաթնառութեան գործարարը կը կազմեն երկու կլոր բարձունքներ, երկու «ըմբոստ նոյգներ», ինչպէս ըսած է գրագէտ մը: Երկու գեղձեր են ասոնք, ծիծ կամ սֆինկ անունով, չըջապատուած՝ քղցային և ճարպոտ հիւսկէնի զանգուածով մը որ ծաւալ և ձեւ կուտայ իրենց: Կաթնարեր խողովակներ կ'երթան կը յանգին կեդրոնը զանուած ուռեցքին, որ կը կոչուի պտուկ, ոտուն շուրջը կը տեսնուին կաթի արտահոսիչ խողովակները: Կազմուած՝ սպինգային, կանգնելի հիւսկէնով մը, պտուկը կ'ուռի և կը պնդանայ նորածինին խողրտանքէն կամ ծծուկէն: Վարդերանգ կամ թխորակ ծիր մը կը չըջապատէ պտուկը, անջատելով նուրբ, քնքոյշ, ձիւնաթոյր և փափուկ մորթը:



Հակառակ երկու սեռի այս գործարաններու այլազանութեան, տեսակ մը բացայայտ նմանութիւն կայ երկուքին միջեւ, եթէ նկատի չառնենք դիրքի և աճման տարրերութիւնները: Այսպէս, երկուքն ալ դուրսէն մազով կը ծածկուին արբունքի ատեն: Հիները լաւ չգիտնալով բոլոր մանրամասնութիւնները, նմանութեանց ընդհանուր հիմ մը կը տեսնէին: Եւ իրաւցնէ, յարաբերութիւններու ճշմարիտ համեմատականութիւն մը կայ երկուքին միջեւ, սա ուշագրաւ տարրերու-

թեամբ որ տղամարդուն մէջ դուրան են, իսկ կնոջ մէջ՝ ներսը:

Այսպէս, ձեւի և հիւսուածքի սերտ նմանութիւն մը, գործածութեան սեղմ առնչութիւն մը կայ ամորձիներուն և ձուարաններուն միջեւ, մակամորձիներուն և փալլոպեան խողովակներուն միջեւ, սերմնային փամփուշտին և արգանդին միջեւ, վարոցին և խոռոճակին միջեւ, թլիատի կապին և հիմէնին միջեւ, թլիատին և մեծ չրթնեւուն միջեւ: Բացի ծուալէն, նմանութիւնը կատարեալ է ծիծերուն համար, որոնք որոշ աճում մը կը ստանան մանչերուն ինչպէս աղջիկներուն մէջ, արբունքի չըջանին և նոյն իսկ կաթնահոյզ հեղուկ մը ծորած է անոնցմէ, երբ ծծելու փորձ եղեր է: Հումպօլտ կը ներկայացնէ 32 տարեկան Ամերիկացի մը, որ ամբողջ հինգ ամիս անուցած է իր երեխան, ի բ ի ս կ ծ ի ծ ե ը է ն ըխած շաքարոտ հեղուկով մը:


Մնաց որ, այս գործարանները կը զանազանուին հիմնական տարրերութեամբ մը, համաձայն իրենց պաշտօնին, կարծես առաջուրնէ անոնց կարեւորութիւնը շեշտելու համար: Այսպէս, պարզ և մէկ-մէկ են, երկու կողմին համար ալ, զուգաւորութեան և յղութեան գործարանները, մինչդեռ արդստաւորութեան, յղացման և կաթնատուութեան գործարանները կրկնակ են և համաչափ, ինչպէս աչքերը, ականջները, որպէս զի եթէ մէկը պակսի, հիւանդանայ կամ խաթարուի, իր համասեռը կարենայ տեղն անցնիլ, առանց վտանգելու արտադրութիւնը կամ նոր էակին կեանքը:



Արտադրիչ գործարանի բազմաթիւ անկանոնութիւններ, կազմական թերութիւններ կը պատահին երբեմն թէ մէկ և թէ միւս սեռին մէջ, ինչպէս անասուններու մէջ: Այլափոխելով անոնց ձեւը, այդ անկանոնութիւնները կը խանգարեն բնական յարաբերութիւնները և կը մնասն սերընդագործման կամ նոյն իսկ կը խափանեն զայն: Եւ իրրեւ հետեւանք, շատ անգամ ծնունդ կ'առնեն նողկալի մոլութիւններ, անբնական յարաբերութիւններ, որոնց մասին պիտի խօսինք յաջորդաբար: Յիշենք, միայն, քանի մը օրինակներ: Պատահած է որ պատանիներ խոռոճալի նմանող ծակ մը ունենան վարոցին տակ և աղջիկ նկատուին: Յետոյ յանկարծ երեւան ելած են ամորձիները: Շատ մը անկատար տղամարդիկ մկրտուած և ամուսնացած են իրրեւ կին, և իրենց բուն սեռը երեւան ելած է մահուրնէ ետք միայն:

Յետոյ, ձուարանի, արգանդի և նոյն իսկ խոռոճալի չգոյութիւնը՝ կրնայ չփոխել կիներու սեռը: Յաճախ ծլիկը այնքան խոշոր կ'ըլլայ որ, այդ դժբախտները կնատ այրերու կը նմանին: Միայն այդ գործարանին գոց ըլլալն է որ զանազանութիւն կը դնէ: Բայց կը բաւէ որ այդ կեղծայրերը արգասաւորման ենթարկուին, որպէսզի սխալը երեւան ելլէ: Այսպէս եղած է «վանական» մը, որ զաւակ բերաւ իր ճգնարանին մէջ. այսպէս եղած է հունգարացի «զինուոր» մը, որ օրը ցերեկով երեխայ մը ծնաւ դաշտին մէջ:

Այս պարագայէն ծագում կ'առնէ երեւութական որձեւիգութիւնն ալ, որ կարծել կուտայ թէ



Պատկ է.—Արգանդ և իր մասերը (ներքին տեսարան)

C Արգանդի պարանոց կամ փող. U Արգանդ. O Չախ ձուարան. O' Աջ ձուարան. V Խոռոճալի, երկայնփն նեղուած. L Չախ կողմի լայն կապ. L' աջ կողմի լայն կապ. M Արգանդա-ձուարանի կապ. R Չախ կողմի կլոր կապ. R' Աջ կողմի կլոր կապ. T Չախ կողմի ձուանցք կամ փալլոպեան փող. T' Աջ կողմի ձուանցք, որ վար փառուած է, ձուարանը ցուցնելու համար. P Ծոպաւոր ծայր փալլոպեան փողի. V' Խոռոճալի յասակը:

երկու սեռերը միացած են միեւնոյն անհատին վրայ. մանաւանդ որ, այդպիսի անկատար էակ-

ները սովորաբար իրենց բուն սեռին հակառակ արտաքին նշաններ կը ցուցնեն :

Այսպէս, կան կնամարդի այրեր՝ կոյր, քընքոյչ ձեւերով, կակուզ միտով, ճոզած, սուր ձայնով, երկչոտ նկարագրով, ցանցառ ընչացքով, լաւ չզարգացած կամ անկատար ծննդական գործարաններով, ինչպէս որ կան առնամարդ կիներ, այրական կերպարանքով, ծանր, խուպոս ձայնով, ընչացքով և աղամարդու բովանդակ յանդգնութեամբ ու ժրութեամբ : Այս ֆիզիքական խոտորումները յաճախ յառաջ կը բերին բարոյական խաթարումներ. բայց հարցը այն է որ այդ բոլոր անհատները անշատ սեռ մը ունին և որ ձեւէ գէներ չեն :

Բռտին իսկական իմաստով որ ձեւի գուժիւնը չի կրնար գոյութիւն ունենալ, որովհետեւ այդ էր նշանակէ միեւնոյն անհատին մէջ գոյութիւնը՝ թէ՛ ամորձիներու և թէ՛ ձուարաններու, որոնք արտադրութեան էական գործարաններն են : Տեսնուած են հրէշային երեւոյթներ, ինչպէս՝ առանց գլուխի և առանց անդամի երեխաներ, երկու առնանդամով մանչեր, երկու բունոցով ազջիկներ են : Մուգուած չէ սիամցի երկուորեակներուն, Ռատիքա-Տուտիքայի պատմութիւնը : — Մենք զանց կ'ընենք խօսիլ այդ հրէշային տեսարաններուն վրայ, որքան ալ հետաքրքրական ըլլան, և կ'անցնինք ուրիշ համեմատութեան մը :

Տղամարդը միջին հաշուով աւելի խոշոր է, աւելի մազեղ, լայն ուռնգեր ունի, աւելի աշխոյժ է, սէգ, յանդուգն փրապետող : Իր կմախքը

աւելի ամուր է, բայց կոնքը աւելի նեղ : Արբունքի շրջանին, ասանըվեցէն մինչեւ քսան տարեկանը, պէխերը յայր կուտան, ծնօտն ալ կը ստուերոտի. իսկ փորէն վար, ծննդական գործարաններուն շուրջը մազեր կը սկսին լուսնիլ : Իր նկարագիրը սովորաբար սրտազեղիլ է, եռանդուն, իր հիւսուածքը՝ նեարդոտ, սեղմ, խիտ. ունի թանձր ցցուն մկաններ. իր կարծր մազերը, սեւ և առատ ընչացքը, թաւամազ կուրծքը՝ զինքը լափող հուրը կ'արտայայտեն : Իր վսեմ և սրընթաց հանճարը մեծ ծրագիրներու կը մղէ զինքը, անմահութեան իզձն արթնցնելով իր սրաին մէջ :

Դարձեալ, արբունքի շրջանին է որ ամորձիները կ'աճին, ինչպէս և արտաքին բոլոր ծննդական գործարանները : Կարելի է ըսել թէ սեռային գեղձերը, ինչպէս նաև արտաքին ծննդական գործարանները, մինչև այն ատեն սաղմնային վիճակի մէջ մնացեր էին, թէև կենդնութիւն մեքենականութիւնը կը սկսի գործել դեռ անչափտառ մանչուն մէջ : Բայց եթէ սղան վաղա՛սա անկանոնութիւն մը չունի, այդ կանգնուած ո՛ր եւ է հեշտալի զգայութիւն, կամ հիւթահոտուած չի պատճառեր :

Արբունքը աւելի ուշ կը սկսի սղամարդուն համար, որովհետև իր առոյգ կազմը նախապէս աւելի կատարեալ անդառութիւն կը պահանջէ, քան թէ կնոջ փափուկ կազմը, որ սովորաբար կանխահաս է :

Կինը ընդհանրապէս տղամարդէն 1.12 մեզր պակաս հասակ ունի: Իր գլուխը աւելի պզտիկ է, ձակատը՝ նուազ լայն է և բարձր, գլխքը՝ աւելի կարճ և կոթ. կոճղը՝ աւելի լայն, անդամները աւելի կարճ, ծոնգերը՝ աւելի հաստ, ձեռքերն ու ոտքերը աւելի պզտիկ, իր վիզը աւելի երկայն է և աւելի չնորհայի. կուրծքը նուազ բարձր է, բայց խորիսխը աւելի լայն: Փորը աւելի լայն է և ցցուն. կոնքը, որ կազմուած է երանքին ոսկորներէն և սերնդագործման բնալուծարանը կը յորջորջուի, աւելի ընդարձակ և բոլորակ է քան տղամարդուն մէջ: Իր ոսկորները աւելի պզտիկ են, իր հիւսկէնները նուազ թանձր, իսկ մարմնին ցցուածքները նուազ անկիւնաւոր և շեշտուած:

Կնոջ բջջային հիւսուածքը աւելի առատ է, իսկ ճարպը՝ աւելի ճերմակ, շատ և խիտ: Մկանները նուազ զօրեղ են և նուազ ցցուն. ուստի և կինը տղամարդէն մէկ երրորդ պակաս ծանրութիւն ունի: Իր մորթը աւելի ճերմակ է, աւելի նուրբ, աւելի անօթաւոր և նուազ մազոտ, բայց գլխու մազերը աւելի երկայն են և աւելի նուրբ: Բնականէն կանոնաւոր վիճակի մէջ կինը պէխ չունի, բայց ունի մազ՝ ցայլակրին վրայ, ծննդական գործարաններուն շուրջը, ինչպէս տղամարդը: Իր ցայլակրը, որ ծածկուած է ճարպի խաւով մը, քիչ մը աւելի բարձրակարկառ է և կը կազմէ Աստղկան Սարը: Իր մարմնին բոլոր մասերը աւելի ձկուն և աւելի քնքոյշ հիւսուածք մը ունին: Կինը օժտուած է աւելի մեծ զգայնութեամբ մը, իր զգայարանները աւելի փափուկ են և աւելի

նուրբ: Իր մէջ աւելի զօրաւոր են յուզման ընդունակութիւնները, ինչպէս որ մտաւոր կարողութիւններն ալ աւելի զօրաւոր են տղամարդուն մէջ: Իր ձայնը, թէեւ նուազ ուժեղ, աւելի քաղցր է և մանաւանդ աւելի սուր: Աւելի բարձր է և ճշանդ՝ երգած ատենը և աւելի անուշ՝ երբ կը խօսի: Արտայայտիչ երեւոյթները իրենց բազմազանութեամբ և նրբութեամբ կը համապատասխանեն իր գերանուրբ զգայնութեան մասնաւոր հանգամանքին: Իր քունը աւելի երկարատեւ է, այլ յաճախ անհրաժեշտ. բայց նուազ խոր է և աւելի հանգարտ քան տղամարդուն քունը: Չափազանց ընդունակ է մագնիսացման:

Կնոջ ստամոքսը նուազ տարողութիւն ունի, իսկ լեարդը աւելի մեծ է քան տղամարդունը: Շատ անգամ կը զխտուի որ կնոջ վերջին երկու ակունները չեն երեւիր: Կինը քիչ կ'ուտէ, և աւելի փափկակեր մըն է քան շատակիր: Հաստատուած է որ հիւսնդանոցներու, բանտերու կամ պատապարաններու մէջ կիները այրերէն մէկ հինգերորդ աստիճանով նուազ մնունդ կը սպառեն: Կնոջ սիրտը աւելի պզտիկ է, բայց արեան շրջանը աւելի եռուն: Իր արիւնը աւելի շճային է, բայց նուազ նեարդխտոտ: Իր արտահոսումները նուազ առատ են: Իր ջերմութիւնն ալ նուազ է: Կինը աւելի մսկոտ է քան այրը:

Արբունքի ատեն, կաթնային գեղձերը կ'աճին, ձեւացնելով ստինքը կամ ծիծը, աւելի շեշտուած ձայրերով, որոնք կ'օգնեն ծծելուն: Կնոջ արբունքի շրջանին է որ կ'աճին ծննդական ներ-

քին թէ արտաքին գործարանները, ինչպէս և ձուեկները կը սկսին հասուննալ և դաշտանը կը հոսի:

Կինը նուազ չեշտուած սննատականութիւն ունի, աւելի ետասէր է և նուազ համբերող: Կարծես կինը աւելի մարդկային սեռին շարունակման համար կ'ապրի քան թէ իրեն համար: Այդ նպատակին համար բնութեան կողմէ տրուած պոչտոնները, — դաշտան, յղութիւն, տղարեք և կաթնատուութիւն, կը հաստատան իր ծագման այդ գերակշիռ ուղղութիւնը: Կերպարանաւորիչ յատկութիւնը աւելի զօրեղ է իր մէջ. իր սննդառութիւնն ու ինքնապահպանութիւնը այնքան նիւթ կամ մղում չեն պահանջեր քան տղամարդուն մէջ. իր կազմաւորութեան զանազան փուլերը աւելի արագընթաց են. իր աճումն ու անկումը աւելի ակներեւ են. իր արբունքը աւելի կանխահաս է և իր բեղնաւորութիւնը կը շիջանի տղամարդու նոյն ընդունակութենէն առաջ:

Աւելի իրական տարբերութիւն մը կ'երեւի տղամարդուն և կնոջ միջև, բուն իսկ իրենց փոխադարձ պաշտօններուն բերումով: Տղամարդը աւելի ծննդագործ կարողութիւն ունի, իր ախորժակով, իր սեռային պէտքերով աւելի պահանջկոտ է քան կինը: Եւ անասնական աշխարհին մէջ ալ այսպէս է, գոնէ ընտանի կենդանիները նկատողութեան առնելով: Էգին քով կաղուցքի կամ մերձեցման շրջանը, նոյն իսկ վայրենի վիճակի մէջ, միշտ սահմանափակուած է հեռուոր ժամանակամիջոցներու, որովհետեւ յաջորդաբար տեղի պիտի ունենան թխտում, ձուեկք, խնամք՝ արտադրութեան համար են: Ամբողջ այս ժամանակաշրջանի ընթացքին արուն, որ գրեթէ մաս չունի նոյն հոգերուն մէջ, անձնատուր կ'ըլլայ նոր տուփանքներու: Մէկ արու եղնիկ կը բաւէ քսան էգի,

ինչպէս մէկ եզը հարիւր կովի և մէկ խոյը՝ շատ աւելի բազմաթիւ հօտի մը:

Այսպէս կը բացատրուի բազմակնութիւնն ալ, որ բնականաբար աւելի հրապուրիչ է տղամարդուն համար, որ զայն հաստատած է իր իսկ շահը նկատի ունենալով, քան թէ կնոջ համար, որ ակամայ կ'ենթարկուի:

Սակայն պարագան բոլորովին տարբեր է բուսական աշխարհին մէջ, ուր բնութեան բոլոր ինամքները կը ձգտին տեսակներու մշտնջենական վերարտադրման: Եւ այդ գործողութեան համար, որ հարսանեկան անկողինն աւելի շքեղօրէն զարդարուած է քան, օրինակի համար, ծաղիկինը: Իգան կամ իգական գործարանը, որ կը գտնուի ծաղիկին կեդրոնը, շրջապատուած է բազմաթիւ առէջներով որոնք պիտի կատարեն բեղնաւորութիւնը: Եւ երբ գործողութիւնն աւարտի, ամէն բան կը հանդարտի, ամէն բան կը թառամի, ամէն բան կը նուաղի:

Ակնարկ մըն ալ՝ տղամարդու և կնոջ մտաւոր բազդատութեան մասին: Կնոջ հոգեբանութիւնը տարբեր է տղամարդու հոգեբանութենէն: Այս մասին բազմաթիւ գրքեր գրուած են, աւելի շատ զգացումէ, կիրքէ տարուած, քան թէ գիտական ճշգրտութեամբ: Կնատեսացները, ինչպէս Շօփէնհաուերը փիլիսոփան, ամէն տեսակէտով կը վարկարեկեն կինը, մինչդեռ իգական սեռին բարեկամները կը փառաբանեն զայն յաճախ չափազանցութեան համեմտով: Ժամանակակից գրականութեան մէջ կը տեսնենք կին հեղինակներ որ

տղամարդը կը դատեն բոլորովին այլազան ուղ-
ղութիւններով, նայած թէ ի՞նչ տրամադրութիւն-
ներ ունին, այրատեանց են թէ այրատէր:

Պարզ խօսքով, կնոջ և տղամարդու հոգե-
կան տարբերութիւնները Ֆիզիքականէն աւելի
մեծ են, այնպէս որ չափազանց դժուար է միջին
սահման մը տալ: Ընդհանրապէս, կինը աւելի
խորամանկ է, աւելի ամօթխած. իսկ այրը աւելի
բիրտ, աւելի անպատկառ: Յետոյ, կնոջ կամքն
աւելի զօրաւոր է: Երկու սեռերն ալ կրքոտ են,
իւրաքանչիւրն իր յատուկ ձեւով: Տղամարդուն
կիրքերն աւելի վայրագ են և նուազ տեւական:
Կնոջ զգացուիլ աւելի փափուկ է, թերեւս աւելի
տեւական, թէեւ զգացման առարկաներն ունե-
նան յաճախ ճղճիմ և հասարակ հանդամանք:

Տօքք. Փօրէլ հաստատած է որ սպիտակ ցեղի
տղամարդուն ուղեղը միջին հաշուով կը կշռէ
1350-1353 կրամ, իսկ կիներուն ուղեղը՝ միայն
1200-1225 կրամ: Բայց այս պարագան վճռական
նշանակութիւն մը չունի:

Գ. — ԿՈՒՍՈՒԹԻՒՆԸ

Կուսութիւնը այն վիճակն է չափահաս աղջկան
որ կատարեալ ժուժկալութեան մէջ ապրած է, մինչև
իր արբունքը: Ծիշտ ասոր համար է որ փոխա-
բերաբար կոյս անունը կը արուի այն բոլոր բանե-
րուն որ մաքուր են, որ դեւ չեն գործածուած,
որ անվթար են, որոնց ձեռք չէ դպած, որոնք
չեն քննուած, չեն մշակուած կամ ուր ոտք չէ
կոխուած:

Շատ հազուադիւտ են այն ժողովուրդները,
ի՞նչ թէ նոր, որ կուսութիւնը նկատած չըլլան
իրրեւ կատարելութեան, առաքինութեան և գե-
ղեցկութեան վիճակը, արժանի ամենամեծ գովա-
սանքի: Կոյսերու բունի պոռնկացումի կամ կու-
սութեան ծաղկի համար տխմար անտարբերու-
թիւնը բացառութիւններ են, որ աւելորդապաշտ
կամ բարբարոս կամ չափազանց այլասերած ժո-
ղովուրդներու և միջավայրերու մէջ տեղի կ'ու-
նենան: Քաղաքակիրթ երկիրներու մէջ, կուսու-
թիւնը, մանաւանդ երբ և՛ Ֆիզիքական է և՛ բա-
րոյական, կը նկատուէ՛ անգնահատելի գանձ մը:
Այս է պատճառը որ հազար ձիգ կը թափուի՛
զայն երեւան հանելու և հասկնալու համար. ինչ-
պէս նաեւ ծիծաղելի կամ բարբարոս սովորու-

թիւններ տեղի կ'ունենան՝ զայն պահելու համար . — Ինչպէս են՝ բունոցին օղակ անցընել կամ կարել, զգաստութեան գօտիներ կամ փականքներ անցընել են . : Այս է, դարձեալ, մէկ պատճառը, այն բիւրազան խարէութիւններուն որ տեղի կ'ունենան կուսութիւն կեղծելու համար :

Ամէն բանէ առաջ, ըսենք թէ միշտ մեծ մտահոգութիւններ կամ նախապաշարումներ կը աւերեն կուսութեան պղծման մասին : Կարգ մը երկիրներու մէջ՝ դայեակները, իսկ գրեթէ ամէն տեղ՝ բժիշկները և վիրաբոյժները կը կանչուին բռնաբարման դէպքերու ատեն, հաստատելու համար թէ աղջիկը կորսնցուցած է իր ֆիզիքական կուսութիւնը : Բայց, կատարուած բոլոր քննութիւններէն ստոյգ և բացարձակ նշան մը երեւան չեղեր, այսինքն չի հաստատուիր թէ կուսութիւնը անվթար կը մնայ, թէ կորսուած է : Վայրագ և դեռ նոր պատահած կուսապղծութիւն մը անշուշտ բացայայտ հետքեր կը թողու : Ստինքներուն թուլութիւնը, պտուկին և զայն շրջապատող ծիրին սեւորակ գոյնը, ծննդական արտաքին գործարաններուն կակզութիւնը և մութ կամ մանիշակագոյն դեղնութիւնը, — փոխանակ սովորական վարդերանդին — ակներեւ նշաններ են վաղեմի, կրկնուած կենակցութեան մը . բայց հոս այդ մասին չէ որ պիտի խօսինք :

Առանց դիմելու Պան աստուածին պատգամախօսութեան, կուսական վիճակը, ժուժկալութիւնը կամ ամուսնական հաւատարմութիւնը հաստատելու համար, — աւելորդ պիտի ըլլար հոս

դիտել բոլոր այն աւելորդապաշտական կամ մանկական միջոցները որ այդ նպատակով կը գործադրուէին Նին դարերու մէջ, — ինչպէս Երբայեցիներուն կրակի անզգայութիւնը, նախանձի կարկանդակը կամ անէժքի լեզի ջուրերը, կարգ մը բոյսերու ձուխը, քիթի աճաւուտին բաժանումը, ռունգերուն աւելի կամ նուազ մեծ բացուածքը, քայլու կամ մէկ կամ միւս ոտքը բարձրացնելու եղանակը, ձայնի փոփոխութիւնը և ուրիշ կարգ մը բաներ : Առաջին դարերուն Հռոմի մէջ մասնաւորապէս մեծ հաւատքով կը գործադրուէր վիզը չափելու սովորութիւնը, — այն պահուն որ կոյսը կը մանէր անկողին, կուսութենէ դաղրելու համար : Այսպէս, պարանոցը կը չափէին չուանով մը, որ մեծ հոգածութեամբ կը պահուէր մինչև յաջորդ օրը : Յետոյ կրկին կը չափէին միեւնոյն չուանով, և եթէ չափը ճիշտ նոյնն ըլլար ինչ որ նախընթաց օրը, ապացոյց էր թէ կուսութիւնը շատոնց պղծուած էր : Ընդհակառակն, չուանը շատ կարճ ըլլալով, երբ կը տեսնուէր թէ պարանոցը լայնցեր է գիշերը, ամէնէն անհաւատնին անգամ բարձրաձայն կը հռչակէին կուսութիւնը : Ահա թէ ինչու լատին բանաստեղծ մը կը գրէր սրտառուչ պարզամտութեամբ մը .

— Վաղ առաւօտ իր մայրը կամ սանտուն չպիտի կրնան հարսին պարանոցը կապել նախորդ օրուան չուանով :

Կուսութեան այս իբրեւ թէ վաւերական ապացոյցը, որ անշուշտ արդիւնք կ'ըլլար չափողին բարեացակամութեան կամ ճարտարութեան, եթէ

ոչ չուանին առաձգութեան, յետոյ իբրև ուխտանուէր կը կախուէր կուսութեան Բախտի աստուծուն մեհեանը և կը ձօնուէր կուսութեան դիցունիին: Նոյնը կարելի է ըսել նաև Աստղիկի ընծայուած ընկոյզներու մասին: Աւանդութեան համաձայն, ամուսնական գործողութիւնը կը կատարուէր ընկոյզներու ազմուկին մէջ, զորս մանուկներ կը խշրտացնէին հարսնիքի առաջին գիշերը, նոյն ինքն նորապսակներուն սենեակին մէջ, մահամերձ կուսութեան ճիշերը խզդելու համար:

— Սարսուկ, ընկոյզ, ընկոյզ տուր լաճեալուն, կ'ըսէ լատին բանաստեղծը հարսներգի մը մէջ:

— Ընկոյզ մի իննայեր, ա՛յր դու, կ'ըսէ նաև Վիրգիլիոս՝ իր «Մշակականք»ին մէջ:

Պատճառը այն էր որ Հռոմայեցիները, որոնք արդէն չափազանց աւելորդապաշտ էին և ամէն բանի մէջ այլարանութիւն կը տեսնէին, ընկոյզը կը նկատէին ամուսնական հանելուկը. պէտք էր կտորել կճեպը, հասկնալու համար թէ ինչ կը պարունակէ, կամ առողջ է թէ աւրուած:

Գարերով հիմէին ներկայութիւնը և մանաւանդ անոր պատառումէն յառաջ եկած արինա հոտութիւնը՝ տեսակ մը աւանդական յարգ ստացեր են իբրև նշաններ կուսութեան: Հելլէն դիցաբանութեան մէջ, Հիմէնը այն աստուածն էր որ ամուսնութեանց կը նախադասէր և որուն կ'ազերսէին հարսնիքներու մէջ: Հիմէն ներկայացուած էր պարմանիի մը կերպարանքով, ծաղիկներով զարդարուած: Աւանդութիւնը կ'ըսէ թէ

Հիմէնը երիտասարդ Աթէնացի մըն էր, բոլորովին աղքատ և խոնարհ ցեղէ, որ սիրահարեցաւ բարձր սերունդէ մանկամարդ աղջկան մը: Բայց չհամարձակելով իր սէրը յայտարարել, հետեւեալ ռազմավարութեան դիմեց, ինքզինքը հասկցնելու համար:

Աթէնքի մանկամարդուհիները Գեմետրէի տօնը պիտի կատարէին ծովուն վրայ: Հիմէն կնոջ կերպարանք մտաւ, անոնց ընկերանալու համար: Եւ ահա ծովահէններ յարձակեցան և գրաւեցին ցնձալից նաւակը, բայց Հիմէն միացաւ իր կարծեցեալ ընկերուհիներուն հետ և անոնց գլուխն անցաւ, գողերը սպաննելու համար: Իբրև վարձք իր քաջութեան, իրեն տուին իր սիրածը և ամուսնացաւ անոր հետ երկարատեւ խրախճանութիւններով, որոնք կոչուեցան հիմէնեան հանդէս կամ հարսնիք:

—

Ահա թէ ինչո՛ւ հիմէն կոչուեցաւ բունոցին այն թաղանթապատ բարակ մաշկը, կուսական թաղանթը, որուն պատառումը պիտի ըլլար ամուսնութեան նուիրագործումը:

Այս մասին երկար հակաձառութիւններ տեղի ունեցած են ժ. և ժ. դարերու միջոցին: Երկար առեւ, օրէնսգէտ բժիշկներ և դատաւորներ ալ այս կարծիքէն եղած են, և իբրև հետեւանք՝ բազմաթիւ անարդար վճիռներ տրուած են, դատապարտելով անմեղ մանկամարդուհիներ և արձակելով բուն յանցաւորները:

Բայց զիտական հետազոտութիւններ հաստատած են որ այդ թաղանթին ներկայութիւնը

ստոյգ, բացարձակ և հաստատուն ապացոյց մը չէ կուսութեան, ինչպէս որ անոր խզումը կամ պատառուածքն ալ անպատճառ չի նշանակեր թէ կուսութիւնը պղծուած է:

Այսօր բոլոր հեղինակները համաձայն են այս մասին և անթիւ փաստեր կան, հաստատելու համար թէ այս արկածական խզումը՝ ամուսնութենէն առաջ՝ կրնայ յառաջ գալ բազմազան պատճառներէ: Թող կուսական թաղանթը լայն ըլլայ, շատ նուրբ և թեւերու ընդոտ կամ շատ լայն շարժում մը, ոտուած մը, սլարը, առժանելի գնացք մը, ձիավարութիւն կամ կռուքի մը ոտումը, դաշտանը, սպիտակ հոտումը, բորբոքում մը, եռում մը կամ որ և է գրգռում կրնան փճացընել զայն արբունքէն առաջ կամ վերջը. մանաւանդ որ, այդ համբաւաւոր մաշկը չափազանց դիւրաբեկ է և այնքան պնդութիւն չունի շատ մը աղջիկներու մէջ:

Եթէ ընդհակառակն հիմէնը խիտ է և թանձր, միանուտ և առաձիգ, բայց ոչ այնքան զարգացած, կրնայ չարդիւել սեռական յարաբերութիւնը և զիմանալ մինչեւ տղաբերք: Այսպէս, պատահած է շատոնց ամուսնացած և ամուլ, կամ առաջին ծննդաբերութեան մը ընդդիմացող կիներու: Բայց եթէ, թանձրութեան և զիմադրութեան այս պայմաններուն մէջ, թաղանթը կը տարածուի բունոցին ամբողջ շրջապատին վրայ, կրնայ, թէ և ծախուած, անյաղթելի խոչընդոտ մը դառնալ զուգարութեան, եթէ վիրաբոյժը չի ջամատէ:

Այս բացառութիւնները կը ցուցնեն թէ պէտք չէ կուսական թաղանթին անլթար գոյութիւնը կուսութեան բացարձակ ապացոյց մը նկատել:

Արիւնահասութիւնն ալ աւելի ապահով և հաստատուն ապացոյց մը չէ: Այդ իրողութիւնը կապ ունի գործարաններու յարաբերութեան և ծննդական մասերու վիճակին հետ: Ճիշդ է, առաջին զուգարութիւնը նեղացուցիչ է և աւելի կամ նուազ ցաւառիթ երկու կենսակիցներուն համար ալ, մարմնի մասերուն անսովոր և բռնի, երբեմն նոյն իսկ արիւնաթի ձգտումին հետեւանքով. բայց այս նշանը բացարձակ կանոն չէ: Թափած արիւնը անպատճառ կուսական թաղանթին պատառումէն յառաջ չի դար. այլ յաճախ արգանդէն կը հոսի: Եթէ ներմուծող ընդունող գործարանները համեմատական են իրենց ծաւալով, եթէ ամուսնութիւնը սեղի է ունեցեր դաշտանէն յիչ առաջ կամ վերջը, կամ եթէ խոռոճակն թրջեր է ս'ր և է պատճառով մը, շատ կարելի է որ առաջին գիշերը ո՛չ արիւնաթի ըլլայ, ո՛չ ցաւառիթ, ոչ ալ նոյն իսկ դժուարակիր: Այս երեք պայմանները ոչինչ ունին էակսն կամ բացարձակ. այլ պարզապէս արկածական են և երբեմն հետեւանք՝ զիմացկուն հիմէնի մը ներկայութեան կամ խզման. բայց մանաւանդ կը ծնին առնանդամին և կնոջ գործարանին բնաւ համեմատական չըլլալէն, ներմուծելու բիրտ փորձերէն, խոռոճակն խախտնող անհարթութիւններու թիւէն, ծաւալէն և տոկոսութենէն, արգանդի խըլլրտումէն կամ ծննդական կծկումէ:

Այսպէս կամ այնպէս, երիտասարդը պէտք է մէկ կողմ դնէ ֆիզիքական կուսութեան մասին տիրող այն նախապաշարումները զորս ռամիկ աւանդութիւնը մշանջենաւորեր է մինչեւ այսօր. այն աստիճան որ, Իտալիոյ կարգ մը տգէտ գիւղերուն մէջ, տակաւին սովորութիւն է հրապարակաւ ցուցադրել հարսին շապիկը, հարսնիքի յաջորդ օրն իսկ:

Հասուն և զգաստ աղջկան կրթութեան, նախընթաց կեանքին, ընդհանուր երեւոյթին և մանաւանդ դէմքին և նայուածքին մէջ — որոնք իր հոգիին հայելին են — կա՛յ կուսական երանգ մը, պայծառութիւն մը. կայ չգիտեմ ի՛նչ մը — դժուար բացատրելի, բայց դիւրահասկնալի, — իր սովորութիւններուն և ձեւերուն, իր լեզուին, իր առանին եւ ընկերային յարաբերութիւններուն մէջ որ, քիչ շատ սրատես մարդ մը կրնայ միշտ դիտել: Ասոնք աւելի ապահով և վճռական նշաններ են կուսութիւնը եւ ժուժկալութիւնը հաստատելու համար, քան ֆիզիքական անստոյգ նշանները, բիւրազան կեղծիքներով և խաբէութիւններով:

Տղամարդուն կուսութիւնը այսպիսի դիտողութիւններու տեղի չէ տուած: Բայց գլխաւորը այն է որ, ինչպէս դիտել տուած է բարոյախօս մը, տղամարդը միշտ կ'ուզէ առաջին սիրողն ըլլալ իր

կնոջ, մինչ կինը կը գոհանայ իր աճունին վերջին սիրածն ըլլալով... Սակայն դատական տարեդրութեանց մէջ կը պատահին դէպքեր, ուր հարկ կ'ըլլայ ստուգել, ըուն իսկ աճունութեան բարիքին համար, թէ երիտասարդը առականութիւն, մարմնական կատարելութիւն ունի՞ թէ ոչ: Բայց օրէնսգէտ բժիշկներ հարկադրուած են հրաժարիլ այս ստուգման յոյսէն, որովհետեւ չկան բացարձակ և հաստատուն նշաններ: Գրեթէ անկարելի է զանազանել թէ ո՛ր մարդիկը սեռական յարաբերութիւն ունեցած են և որոնք ժուժկալ են. ո՛չ ձայնը կ'օգնէ և ոչ ալ մարմնին հոտը, ինչպէս կ'ենթադրէին: Ո՛չ մէկ ծանօթ հոտ կ'ելլէ մարմնէն, իսկ ձայնին մէջ յառաջ եկած փոփոխութիւնը արբունքի նշանն է. այսինքն այն շրջանը ուր ծննդական գործարանները իրենց բուն աճումը կը ստանան մարմնին միւս մասերուն հետ, իրենց ազդեցութիւնը դրոշմելով կոկորդին վրայ:



Դ. — Դ Ա Շ Տ Ա Ն

Ծննդաբերութեան գործարաններն այնքան սերտ առնչութիւն ունին դաշտանին հետ որ, անհրաժեշտ է այստեղ իսկ զրազի կնոջ այդ մասնաւոր և որոշ գործարանով, — թանկագին նշանը՝ իր բեղնաւորութեան:

Դաշտանը ընդհանուր և խոր ազդեցութիւն մը կը գործէ կնոջ առողջութեան և հիւանդութեան վրայ: Ինչ անունով ալ կոչենք դայն, — դաշտան, ամսական, արիւնաբեր օրեր, ապարան ևն. — Դաշտանը արիւնահոսութիւն մըն է որ տեղի կ'ունենայ պարբերաբար, սեռական գործարաններէն: Նման երեւոյթներ կը տեսնուին նաեւ ստնաւորներու էգերուն մէջ, թէեւ տարբերութիւն կայ տեսակէ տեսակ: Այսպէս, այդ հոսումը, որ արիւնոտ է կնոջ քով, արիւնագոյն է էգ կապիկին մէջ, իսկ պարզապէս խիստ՝ ուրիշ էգերու համար: Նոյն իսկ կարգ մը սատրին տեսակներու մէջ պարզ ուռոյց մը կը յայտնուի. բայց բոլորին պաշտօնը մէկ է և միայն կը տարբերի համաձայն կենդանաբանական կազմութեանց և տեսակներու ապրած բարոյական կամ ֆիզիքական միջավայրին: Բոլոր էգ կենդանիները,

զուգաւորութեան շրջանին, կ'արտադրեն նաեւ խնոտ կամ արիւնաներկ հոսում մը:

Հետաքրքիր միտքեր տեսակ մը դաշտան նշմարած են տղամարդուն մէջ, նկատողութեան առնելով անոր պարբերական արիւնահոսութիւնները. — Ինչպէս մէղի, քրտինքի տազնապներ, կամ ժուժկալութենէ յառաջ եկած կրազափորձութիւններ: Արիւնեթութիւնը (մայտաըլ), մանաւանդ, որ աւելի յաճախադէպ է տղամարդուն քան կնոջ քով, նոյնացուցեր են դաշտանին հետ, որովհետեւ կրբեմն կնոջ համար հասուն տարիքի արիւնաշատութեան տազնապ մըն է, որ դաշտանին տեղը կը բռնէ: Մասնագէտ մը կ'ըսէ թէ արիւնեթութեան այս երեւոյթը աւելի յաճախ կը դիտուի կնամարդի այրերու և ներքինիներու վրայ: Ուրիշ մը կը պնդէ որ տղամարդին ալ ունին ամսական տազնապներ:

Բայց այս բոլորը աւելի ախտաւոր երեւոյթներ են քան բնախօսական: Առողջ, երիտասարդ և առողջ տղամարդիկ զերծ են այդ անպատեհութիւններէն. իսկ անոնք որ տկար են, հիւանդկախ, ախտածէտ, ծեր, և կամ ֆիզիքական զեղծումներէն, մտքի աքնութիւններէն ուժաթափ, մասնաւորապէս կ'ունենան այդ տազնապները: Որոշ ժամանակներ և մինչեւ քանի մը օր, իրենց դէմքին գոյնը կ'աղօտանայ, քրտինքը աւելի զօրաւոր հոտ մը կը ստանայ, մարսողութիւնը կը դժուարանայ, մէղը աւելի կամ պակաս կը սղատրի, — յառաջ կուգայ որանեղութիւն,

տխրութիւն, զայրացկոտ վիճակ, աշխատանքի անհոգութիւն, մտային կարողութեանց դանդաղում: Աստուք նոպաներ են որ սխալմամբ կը համեմատուին կնոջ դաշտանին հետ:



Իսկապէս, ի՞նչ է դաշտանը:

Գրեթէ իւրաքանչիւր չորս շաբաթը անգամ մը, մէկ կամ երկու ձուիկներ (չատ հազուադէպ է աւելին) կը հատուենան և կը նետուին փալլոպեան խողովակներուն մէջ, որոնց միջոցաւ կը հասնին արգանդին խոռոչը, վերջապէս կպելու համար անոր կողերուն, եթէ արգասաւորուած են ճամբուն վրայ: Բեղնաւորութիւնը աւելի յաճախ տեղի կ'ունենայ փալլոպեան խողովակին մէջ, երբեմն միայն արգանդին մէջ: Զուիկին հասունութիւնը և արտաքսումը ընդհանրապէս կնոջ մարմնին մէջ յառաջ կը բերեն ջղային երեւոյթ մը որ շատ կը նմանի տղամարդու կանգնումին: Արգանդի խոռոչին հուզաթաղանթը լիքն է անօթներով որոնք կրնան մեծապէս ընդլայնիլ և արիւնով ցայտել, կարգ մը ջղային կեդրոններու խափանարար աղդեցութեամբ: Եւ որովհետեւ կնոջ այդ հուզաթաղանթը խիստ բարակ է, արդիւնքը տարբեր կ'ըլլայ քան ինչ որ պիտի ըլլար տղամարդուն մէջ, — արիւնը կ'արտածորի թաղանթին մէջէն և կը հոսի դուրս, իբրեւ դաշտան: Այս երեւոյթին նպատակն է անշուշտ պէտք եղածին պէս պատրաստել արգանդին հուզաթաղանթը՝ արգասաւորուած ձուիկին հաստատման: Ամէն մարդ

գիտէ որ կնոջ դաշտանը պէտք է տեւէ միջին հաշուով երեք-չորս օր, բայց յաճախ՝ շատ անկանոն է: Ըսենք անմիջապէս թէ անպատճառ հակիրթին արտաքսումէն կախում չունի դաշտանը: Երկու երեւոյթները կրնան տեղի ունենայ իրարմէ անկախաբար. որովհետեւ դաշտանը ինքնին կախում ունի միայն ջղային գրգռումէ մը, որ կըրնայ տեղի ունենայ կամ դադրիլ, օրինակի համար, մազնիսացումով: Միւս կողմէ, կան կիներ որ երբեք դաշտան չեն ունենար, բայց և այնպէս ո՛չ միայն կանոնաւորապէս ձուիկներ կ'արտաքսեն, այլ և կրնան արգասաւորուիլ և ծոցւոր դառնալ: Սովորաբար, սակայն, երկու երեւոյթները իրարու կը կապուին ջղային անդրադարձումներով. այնպէս որ, նախ դաշտանը տեղի կ'ունենայ և յետոյ ձուիկը կը սկսի և յամբարար կը լրացնէ իր տեղափոխութիւնը:

Քիչ մը աւելի մանրամասնութեան մէջ մըտնենք.

Դաշտանը երեւան կուգայ արբունքին հետ, կ'ընդհատուի յղութեան և կաթնատուութեան միջոցին և կը դադրի արգասաւորութեան հետ: Այս է ընդհանուր և հաստատուն կանոնը: Դաշտան չունեցած կիները բացառութիւն են. իսկ այ աւելի հազուադիւրս են անոնք որ կը յղանան այդ վիճակին մէջ: Գիտնական մը դիտած է կիներ որոնք միայն իրենց յղութեան միջոցին դաշտան ունեցեր էին: Բայց սասոնք այնքան հազուադէպ զարտուղութիւններ են որ հրաշք կը թուին:

Ընդհակառակն, դրական իրողութիւն մըն է որ ձուարանները նախապէս գոյութիւն ունին աղջկան ծնած պահուն, ինչպէս ամորձիները՝ տղուն համար. հետեւաբար, արկածով ձուիկներ կրնան ածիլ սնունց մէջ և արիւնահոսում պատճառել նոյն իսկ մանկութեան շրջանին: Եւ արդէն դեռահաս աղջիկներ ցուցուցած են այդպիսի նշաններ, և առփական մարմաջը, որ յաճախ կը յայտնուի դաշտանէն սուսջ, հուսանաբար հետեւանք է այս սնունդական աճումին: Այսպէս, 8-9 տարեկան աղջիկներ արգասաւորուած են, ինչպէս կը հաստատեն բժշկական տեղեկագիրներ:

Ծայրայեղ բեղնաւորութիւն մը կրնայ ամբողջովին ոչնչացնել դաշտանը: Բժիշկները կը յիշեն ուսս այրի մը, որ առաջին անգամ դաշտան ունեցաւ միայն 36 տարեկանին, տասնըվեց դաւակ ծնելէ վերջը, որոնց մէկ քանին երկւորեակ: Տասնըհինգ տարեկանին ամուսնացած էր, սուսնց դաշտան ունենալու. յետոյ շարունակ յղի կամ ստնտու եղաւ, և դարձեալ դաշտանը չէր երեւար: Իր ամուսնին մահէն ետքն էր որ դաշտանը տեղի ունեցաւ:

Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է ամուսնութեանէն առաջ, ստուգել կնոջ ֆիզիքան ընդունակութիւնը, դաշտանին գոյութեամբ: Երբ դաշտան չկայ կամ անկատար է, պարտաւոր էք քննել հասկնալ թէ ծննդական գործարաններու կազմական անկանոնութիւններ չ'են պատճառ այդ վիճակին. հակառակ պարագային կնքած պիտի ըլլաք յաւիտենապէս ամուլ ամուսնութիւն մը, որ դառն յուսախաբութիւն պիտի պատճառէ:

Կուսական թաղանթին ծակ չըլլալը և փոքր շրթներուն իրարու կցումը բաւական յաճախադէպ խոչընդոտներ են արիւնահոսութեան, հակառակ արգանդի ցաւերու խիթերու և դաշտանի բոլոր պարբերական և ախտերուն: Այն ատեն արիւնը փակուելով և կուտակուելով արգանդին մէջ, կ'ուռեցնէ փորը: Այսպէս գիւղացի աղջիկ մը բերեր էին բժիշկին, աղջիկ մը որ երբեք դաշտան չէր ունեցած և որուն փորը վեց ամսուան յղութիւն կը ցուցնէր: Հարկ եղաւ ձեռքել կուսական թաղանթը, և ահա երկու լիտր սեւ արիւն հոսեցաւ: Բայց աղջիկն այ փրկուեցաւ:

Դաշտանը ընդհանրապէս կ'երեւայ 12-16 տարեկանին: Տաք կլիման, հիւթիչ և զրգոթիչ սնունդը, պարահանդէսները, թատերական տեսարանները, երկու սեւերու համախմբումը, առոյգ կազմուածք մը, արիւնալի խառնուածքը, նաւագնացութիւնը կը փութացնեն անոր երեւումը. իսկ հակառակ պայմանները կը յապաղեցնեն: Սովորաբար դաշտանի ազգարար նշաններն են ընդհանուր խոնջէնքի զգացում մը, որ իր հետ կը բերէ ծանրութիւն, տաքութիւն, ձգտում՝ ստորին որովայնին մէջ, մարմաջ մը՝ դեղին խնոտ հեղուկի աւելի կամ պակաս առատ հոսումով: Արիւնահոսութեան տեւողութիւնը կը տարբերի համաձայն տարիքի և կազմուածքի, քանի մը ժամէն քանի մը օր: Իր վերերեւումը կը կանոնաւորուի միայն յաջորդ երեք-չորս շաբթուան միջոցին: Այն կիները որ ամէնէն աւելի կանխահաս են արբունքի սկսելու, ամէնէն շուտ կը դադրին բեղնաւոր դառնալու:

Անկարելի է ճշդել իւրաքանչիւր դաշտանի հոսած արիւնին քանակը, որ կը տարբերի համաձայն պարագաներուն, տարիքին և կազմուածքին, երբեմն նոյն իսկ եղանակին: Սովորաբար քանի մը կաթիլ, երբեմն ճշմարիտ արիւնահոսութիւն մը կը դառնայ: Աւելի աւատ է կանխահաս կիներուն քով և տաք երկիրներու մէջ, նիհար, աւշային, վաւաչոտ, քան գէր, անաարբեր կիներու քով, քաղաքին քան գիւղին մէջ: Բազմաթիւ գիւղացի մանկամարդուհիներ տեսած են որ իրենց դաշտանը կը դադրի, կը նուազի կամ կը խանգարուի, երբ գացեր են ծառայելու մեծ մայրաքաղաքներու մէջ: Ընդհանրապէս, այդ խանգարումները, այդ անկանոնութիւնները նոյնքան վնասակար են կնոջ առողջութեան որքան անոր բեղնաւորութեան: Եւ այդ վիճակին ամէնէն յաճախադէպ հետեւանքները կ'ըլլան ջղային, արգանդային արկածներ: Ադկէ կրնան ծնիլ նաև ուրիշ երկիւղալի տաղնապներ՝ արիւնի համախուռութեան պատճառով, — ինչպէս տեսողութեան և լսողութեան խանգարումներ:

Յիմարութեան ազդեցութիւնն ալ շատ մեծ է այս գործարանաւորութեան վրայ, ըլլայ իր ճնշողական ներգործութեամբ, ջղազդեցութեան խանգարումներով, ըլլայ հիւանդներու անկատար աննդառութեամբ: Վեց ամիս անընդհատ քննութեան ենթարկուած 192 կին յիմարներու — 17էն 46 տարեկան — 27ը միայն կանոնաւորապէս դաշտան ունեցեր էին, 30ը՝ բոլորովին չէին ունեցած,

իսկ միւսները՝ անկանոն ունեցեր էին, պակաս քան թէ աւելի:

Իաշտանին դարչ հոտը պատճառ եղած է որ վնասակար յատկութիւններ վերագրուին անոր: Այլանդակ և մանկամիտ կարծիքներ մէջտեղ հանուած և տարածուած են անոր բնութեան մասին: Շատերու համար ապականած՝ շարաւոտ է դաշտանը, ուրիշներու համար՝ թունալից: Չայն գործածած են իւրեւ զրգոխ՝ աւփական գեղերու մէջ, ինչպէս և իրրեւ այրիչ՝ կոծիծնեղու և ցաներու: Իեռ շատեր կը հաւատան որ դաշտան ունեցող կնոջ մը ներկայութիւնը կը բաւէ հարսնիքի մը գինին քացիեցնելու, համեմները այլափոխելու, կաթը, կարագը թթուեցնելու, ամբողջ գետնայարկի մը բոլոր ծաղիկները խամրելու, և ուրիշ այսպիսի երեխայական միտքեր:

Այս է պատճառը որ, կարգ մը երկիրներու մէջ, կիները կը մեկուսացուին իրենց դաշտանի շրջանին, իրենց կ'արգելուի ո՛ր և է բան թրել կամ պատրաստել, հարսնիքի կամ հանրային հաւաքման մը ներկայ ըլլալ:

Իրականին մէջ, դաշտանն ալ մարմնին ճիշդ նոյն արիւնն է և անկէ կը բխի: Իպոկրատ զայն կը բաղդատէ զո՛ր մը մաքուր արիւնին հետ, իսկ Միչլէ՛ իր «Կինը» անուն բանաստեղծական երազանքին մէջ՝ սիրային խոցի մը արիւնահոսութեան: Երբ կը սկսի հոսիլ, ունի շճային, հեղուկ, գունատ երեւոյթ մը, ինչ որ կարծել տուաւ թէ զուրկ է նեարդի սպիտակ նիւթէն: Գիտնականներ հակառակը ապացուցին: Այն մաժուցիկ կամ կըպ-

չուն հանգամանքը զոր կը ստատայ ճննդական մասերէն անցած ատեն, անոնց մէջ մնալով, պարզապէս հետեւանք է արեան անօթներէն դուրս ելլելուն և խոռոճայի հոյզին հետ խառնուելուն. և պէտք է նկատել որ այս վերջինը միշտ աւելի առատ կը հոսի, դաշտանէն թէ առաջ և թէ ետքը: Մանրադիտակով հաստատուած է որ բազմաթիւ գնտիկներ կան դաշտանին ինչպէս սովորական արիւնին մէջ, վերնամաշկի և հոյզի կտորներով: Ուրեմն դաշտանը մաքուր է, անհոտ և անփնաս, երբ կիները չեն խնայեր ոչ ձերմակեղէն, ո՛չ ալ մաքրութեան բոլոր պայմանները: Գարշ հոտ մը կը ստանայ պարզապէս այդ խնամքներուն զանցառութեան հետեւանքով, մասնաւորապէս տաք երկիրներու և տաք եղանակներու մէջ, թանձրանալով, այլափոխուելով և նեխելով տեղին վրայ, սրբանին մօտերը: Ասկէ՛ նոյն այդ մասերուն գրգռումը, մարմաջը և մանաւանդ բշտիկները որոնք այնքան վտանգաւոր կը դարձնեն զուգաւորութիւնը, թէ կնոջ և թէ տղամարդուն համար: Այս ապականած հեղուկին հետ եղած շփումէն յաճախ յառաջ կուգան մակերեսի սկրաուքներ՝ ձեփուկին վրայ, որոնք կեղերու (chancres) կը նմանին առանց անոնց ծանրութիւնն ունենալու, ինչպէս նաև հոսումներ որոնք ջերմամիզութեան պատրանքը կուտան, եթէ չուտով մաքրուական խնամք տեղի չունենայ:

Այս անպատեհութիւններն են որ ոյժ տուած են ժողովրդական վաղեմի աւելորդապաշտութեանց:

Խնդիրը բոլորովին տարբեր է սխալ հոսումներու մասին, որ յառաջ կուգան արիւնի ընդհանուր այլափոխումէն և որ կը պատահին հիւանդ կիներու մէջ. կամ այն թարախալից դաշտաններուն համար, որոնք հետեւանք են արգանդի հիւանդութեան մը: Ասոնք իրապէս վտանգաւոր են, վնասակար և բաւական՝ ո՛ր և է մերձեցումէ զգուշանալու:

—

Գաշտանի հոսման կեղրոնը արգանդն է: Արիւնը անկէ դուրս կ'ելլէ բորբոքումով կամ արտաշնչութեամբ՝ քրփնքով, ինչպէս հուզաթաղանթներու բոլոր արիւնահոսութիւնները, և մասնաւորապէս քթի արիւնահոսութիւնը. բայց դրապէս չի գիտցուիր թէ երակային կամ շնչերակային խողովակներէն կ'անցնի՞ թէ ոչ: Տեսնուած է որ խոռոճայիէն կը ցայտէ յուլթեան ատեն դաշտան ունեցող կիներու քով. բայց այս բացատիկ չեղում մըն է ընդհանուր կանոնէն, տեսակ մը բնական զարտուղութիւն, նման՝ այն դաշտանին որ տեղի կ'ունենայ միզուկէն, թափանէն, թոքային խողովակներէն, ծծի պտուկներէն կամ մորթի ո՛ր և է մէկ տեղէն, ինչպէս եղած են պարագաներ: Այս անկանոնութիւնները խիստ հազուադէպ են, և գրեթէ միշտ հետեւանք իսկապէս ախտաւոր վիճակներու:

Արգանդային համախոնուումը կամ այտումը (ուռիլ), որ դաշտանի սկզբնաւորութիւնն է,

կը յայտնուի մասնաւոր նշաններով, — գլխու ցաւ, ճնշում, ծիծերու ուռում և զգայութիւն, զիստերու ցաւ, փայլատ՝ կապտածիր աչքեր, միտգոյն դէմք, ուժեղ, հեւ ի հեւ շնչառութիւն, չափազանց արամաղրութիւն՝ ներգործուելու, տպաւորուելու, հակամիտութիւն՝ սրտնեղութեան, տխրութեան, հանգիստի: Մանաւանդ տկար և ջղային կիները աւելի ուժեղ կը զգան այս բոլորը: Մէկէն մինչեւ երեք-չորս՝ օրուան տեւողութենէ յետոյ, այդ ազդարար նշանները կը նուազին կամ կը դադրին արիւնի երեւման հետ, որ, նախ նօսր, յստակ և տոգոյն, կը գունաւորուի և կը թանձրանայ աւելնալով, վերջանալու այնպէս ինչպէս որ սկստու: Եւ այն ատեն ամէն բան կարգի կը մտնէ նորէն:

Դաշտանային շրջանի այս զանազան երեւոյթներուն ատեն, որուն սովորական տեւողութիւնն է չորսէն հինգ օր, ամուսինը պարտաւոր է կըրկնապատիկ ուշադրութեամբ և զգուշութեամբ վարուիլ, որպէսզի տեղի չտայ այնպիսի նեղութիւններու և ցաւերու, որոնք խանգարելով կամ խափանելով արիւնի հոսումը, կրնան այնքան վնասակար դառնալ կնոջ առողջութեան համար:

Դաշտանի պարբերականութիւնը մեծապէս ազդած է հին բնապատումներու երեւակայութեան վրայ: Այսպէս, ամսարիւնը վերագրած են լուսնի զանազան երեւոյթներուն, անոնց հետ

կապելով զայն. անոնք կը կարծէին թէ հոր լուսինը կ'ազդէ մանկամարդ ազլիկներուն վրայ, իսկ անոր նուազումը՝ աւելի տարեց կիներուն վրայ: Բայց «ի յառաջագունէ» եղած այս բոլոր հաշիւները—որոնց նպատակն էր երեւան հանել դաշտանին գաղանի սկզբնապատճառը—անճիշտ կամ չափազանցուած դուրս եկան նոյն ինքն դաշտանի անկանոնութիւններուն առջեւ: Այսպէս, շատ կիներ դաշտան կ'ունենան, ամէն երկու կամ երեք շաբաթը անգամ մը, իսկ ուրիշներ՝ երկու կամ երեք ամիսը անգամ մը: Եւ իւրաքանչիւր շրջան երկու կամ երեք օր կը կանխէ կամ կ'ուշացնէ շատ մը կիներու մէջ: Ինչպէս հաշտեցնել ուրեմն այս բոլոր փոփոխութիւնները լուսնի երեւոյթներուն մաթեմատիքական կանոնաւորութեան հետ, առաջին և երկրորդ կիսամտեակին հետ:

Ճիշտ է, նոյն իսկ գիտնականներ փորձեր են փաստ գտնել Արիստոտէլի ժամանակէն մնացած այդ աստղաբաշխական հաւատալիքին: Գերմանացի բժիշկ մը, Շթուպեր, հիմ բռնելով 828 կիներու վրայ կատարուած փորձը (այս կիները տասը տարուան միջոցին 68 անգամ քննուած էին դարմանատան մէջ), հաստատեր է թէ լուսինը նշանակելի ազդեցութիւն մը կը գործէ դաշտանի երեւման վրայ. որովհետեւ այդ կիներուն մեծագոյն մասը դաշտան ունեցաւ առաջին քառորդին, մինչ փոքրագոյն մասին դաշտանը կը զուգադիպէր նոր լուսնին և լիալուսնին հետ: Այս բնագիտական օրէնքին առաձգութիւնն իսկ սպացոյց է իր ոչնչութեան...

Այսպէս բոլոր տիրապետող վարդապետութիւնները կարգով գործածուեր են դաշտանը բացատրելու համար: Շատեր զայն վերադարձ են արիւնի ընդհանուր յորդութեան մը, արդանդի արիւնաշատութեան և այդ գործարանի արիւնին բաղադրութեան, — բնածուխի և ազոդի չափազանցութեան: Ուրիշներու կարծիքով, խմոր մըն էր ան: Գիտնական մը դաշտանը կը նկատէր պարզապէս արգանդին կանգնումը, իսկ ուրիշ մը՝ առփական կիզանիւթ: Եղաւ գիտնական մըն ալ որ դէմ գնաց նոյն իսկ Մովսէսի և Իզուրապի վկայութեան, ենթադրելով թէ դաշտանը միշտ գոյութիւն ունեցած չէր և ուրիշ բան չէ, եթէ ոչ հետեւանքը սովորութեամբ փոխանցուած չափազանց պարարտ կենցաղի: Լաբան հեռացաւ իր Ռաքէլ աղջիկէն, երբ ան կ'ըսէր իրեն.

— Ես ունիմ ա՛յն զոր կիները վարժուած են ունենալու (Գեւ. ԺԵ. 19 և Ծննդոց Ա. 34):

Այսպիսի ենթադրութիւններ, որոնք միայն ժամանակի տիրապետող գաղափարները կը ցոլացնեն, չէին կրնար ճշմարտութեան առաջնորդել: Անոնք կը գառնան պարզ խօսքեր, անարժէք և անհիմն, կը հեռացնեն դժուարութիւնը, լուծումը, առանց լուսաբանելու: Պաշտօնի մը՝ գործունէութեան մը մեքենականութիւնը հասկնալու համար, պէտք է զայն ուսումնասիրել բուն իսկ իր գործարանին մէջ. և որովհետեւ դաշտանի արիւնը ուղղակի արգանդէն կու գայ, միայն հո՛ն կը

փնտռէին պատճառը: Յղութեան ատեն դաշտանի չգոյութիւնը այն կարծիքը գոյացուց թէ դաշտանի արիւնը սահմանուած է սողմին սնուցման, և այսպէս կը բացատրէին իր նոսումը՝ դատարկութեան վիճակի մէջ: Այս բացատրութիւնը տրամաբանական էր և հրապուրիչ: Բայց անկէ ի վեր նոր փորձառութիւններ և մանրադէտը նաստատեցին թէ սխալ է, և թէ միայն ձուարանը՝ արգաստուորութեան գործարանն է դաշտանին կեղրոնը:

Եւ արդէն, երբ ձուարաններ չըլլան, բնականորէն դաշտան ալ տեղի չունենար. իսկ եթէ ձուարանները պսկենք հանենք, դաշտանն ալ կը դադրի: Ինչպէս տղամարդուն ներքինացումը՝ մալուժը, կեսջ վրայ ալ այդ գործողութիւնը անկարելի կը դարձնէ արգաստուորումը: Հնդկաստանի մէջ, ուր շատ կիներու ձուարանները կը մուլեն, այսինքն զանոնք կը ն'ըքինացնեն այր ներքինիներու դերը կատարել տալու համար, հետեւանքը կ'ըլլայ դաշտանի անմիջական դադարում, ինչպէս նոյնը կը պատահի երբ ձուարանները կը կտրեն հիւանդութեան հետեւանքով: Այսպիսի գործողութիւններ շատ են կատարուած վերջին տարիներու մէջ:

Երեւութական, խարուսիկ բացառութիւններ եղած են, անշուշտ: Այսպէս, ամերիկացի նշանաւոր ձուարանաճատ մը, բժիշկ Սթօրըրը, երկու ձուարաններու բարձումէն յետոյ, դիտեց որ դաշտանը կը շարունակուի, առանց արիւնին քանակը կամ տեսակը փոխուելու, և կատարեալ կանոնա-

Երուսթեամբ: Ուրիշ ատեն մը, ձուարաններէն ետք արգանդը կտրեց հանեց, միայն պարանոցը թողլով, և սակայն, այս կատարեալ յօշոտումէն տանըութը օր և դաշտանային վերջին շրջանէն քսանըվեց օր յետոյ, կինը դաշտան ունեցաւ: Բայց այս, ինչպէս դիտել կու տայ նոյն բժիշկը ինք ալ, բնութեան մէկ վերջին ճիգն էր, նման ճօճանակի մը վերջին ճօճումին, երբ ա՛լ կը դաղրի զայն շարժման մէջ դնող՝ մղիչ ուժը: Նման դէպք մը պատահած է Փարիզ: Բժշկական ակադեմիան ներկայացուցին կին մը, որուն ամբողջ արգանդը հանուած էր իր պարունակած նեարդային անազին զանգուածով, և միայն պարանոցը կը մնար. բայց ձուարանները պահուած էին: Դաշտանի հետքերը տեսցին արմատախիլ արգանդի մնացորդ պղտիկ կտորին մէջ, ինչ որ արտակարգ կամ հակարնախօսական բան մը չէ, քանի որ ձուարանները գոյութիւն ունին ամսական արիւնահոսութիւն պատճառելու համար:

Միշտ կրնան պատահիլ կազմական շեղումներ, տեղի կ'ունենան՝ պարբերաբար՝ անբնական արիւնահոսումներ՝ մարմնի մակերեւոյթի ս'ր և է մէկ մասին վրայ, փոխանակ արգանդին մէջ ըլլալու, ինչպէս գիտութիւնը շատ մը դէպքեր արձանագրած է: Ուրիշ պարագաներու մէջ, դաշտանը կը շարունակուի հակառակ երկու ձուարաններու կտրատման, ինչպէս սովորական ձուարանահատումին մէջ, արգանդը անվթար մնալու պայմանով: Դաշտանային կեանքի շրջանին մէջ կատարուած 135 կրկնակ ձուարանահատումներու վրայ,

Կուղէլ 15 պարագաներ գտած է, ուր դաշտանը շարունակուած է կանոնաւորապէս ամէն ամիս, և ուրիշ 9 դէպքեր ուր դաշտանը անկանոն էր և քանակը նուազ: Ասկէ հետեւցուցին թէ ձուարանները անհրաժեշտ չեն դաշտանին համար, քանի որ ամսարիւնը տեղի կ'ունենայ առանց անոնց: Բայց կը բաւէ որ ձուարանային փոքր մասնիկ մը գտնուի հատումէն ետքը, կամ երրորդ ձուարան մը գոյութիւն ունենայ, — այն ատեն հասկնալի են այս բոլոր բացառիկ դէպքերը: Արդարեւ, երրորդ ձուարան մը կը պատահի կտրդ մը կիներու: Պէկէլ իր կատարած 350 դիագնոստիկաներուն մէջ յաւելուածական ձուարան մը գտաւ ութ կիներու վրայ: Բացառութիւնը կը հաստատէ կանոնը, և այս դէպքերը չեն հերքեր կանոնը. ընդհակառակն, կը հաստատեն թէ դաշտանին որոշիչ պատճառը կը գտնուի ձուարաններուն մէջ:

Եւ այս պատճառը երեւան հանելու համար, գիտուններ քննէր են իրենց դաշտանէն առաջ, դաշտանի միջոցին և անկէ ետք մեռած կիներու այդ գործարանները, ու անոնց մակերեւոյթին վրայ գտած են կամ փամփշտիկներէն, ձուկներէն մէկուն խոշորացումը, չափազանց աննշառութիւնը, կամ ձերմակ արատ մը որ հետեւանք է անոնց անջատման:

Դաշտանի մեքենականութիւնը կը բացատրուի այսպէս. — Ծննդական գործարանի կանոնաւոր գրգռումի մը կամ պարբերական անհրաժեշտ գործունէութեան մը հետեւանքով, ձուարաններու փամփշտիկներէն մէկը կ'ուռի, կը ցայտէ այդ

գործարաններուն երեսը և կը խզուի: Իր պարունանակած ձուիկը կը փախչի և կը բռնուի փալլոպեան փողի վրանին կողմը, յետոյ կ'անցնի խողովակէն որ զայն ուղղակի կ'առաջնորդէ արգանդին մէջ, ուր, ուռումբին, արիւնախոռոչութեանց կամ նախընթաց գործունէութեան խճողման հետեւանքով, յառաջ կը բերէ տեղական անհանգրատութիւններ, ծանրութիւն և խիթ, արիւնի հոսում՝ երեքէն հինգ օր, սրուն հետ և կ'արտաքսուի:

Ու կէմն, իւրաքանչիւր դաշտան ինքնաբեր ձուարտագրութիւն մըն է, ամսական, կամ գոնէ պարբերական ածում մը, տեսակ մը շեղում՝ կերպարանաւորիչ ոյժերու, որ, արգասաւորման և յղացման պակասին հետեւանքով կը ձգտի կարծես զայն փոխարինելու և պահպանելու, այդ պարբերական գրգռումներով, ծնունդի գործարաններու գործունէութեամբ: Իսկ զիպուածագէտները զայն նկատած են նախախնամական միջոց մը՝ սերնդագործման հիւթերը արտաքսելու, որպէսզի կուսութիւնը պահուի առանց վնասելու առողջութեան, — այսինքն լուկեայն արածնութիւն մը կ'իներու ամուրութեան, ինչպէս տեսանք նախընթաց էջերուն մէջ: Գիտնական մը դաշտանը կը նկատէ պարբերական հասունացումը՝ պտուղը արտադրելու յատուկ նիւթին: Եւ այս է պատճառը որ սերտ առնչութիւն կայ դաշտանին և արգասաւորման միջեւ, որ այլ ևս կարելի չէ դաշտանին յաջորդող 12-14 օրերէն ետքը, ոչ ալ անոր ընթացքին: Այս է պատճառը, դարձեալ,

որ դաշտան տեղի չունենար յղութեան և կաթնատուութեան միջոցին: Իր բնական յաւելուածը կը կազմեն այս նոր գործունէութիւնները. այն ատեն արիւնը կամ ոյժը — կերպարանիչ նիւթը — կը ծծուի սաղմին կամ ծծկերին կողմէ:

Այսպէս, դաշտանը ամէնէն անմերժելի վկայութիւնն է այն իրողութեան, թէ կնոջ համար սերնդագործումը իր կեանքին գերակշիռ ուղղութիւնն է, ան կը բացատրէ նաև թէ ինչո՞ւ կնոջ մէջ տուփական ցանկութիւնները այնքան հազուադէպ օրէն կ'այլասուին և վայրագ խորժակի կը վերածուին:

Դաշտանի յաճախութիւնը կամ ցանցառութիւնը, անոր առատութիւնը կամ սակաւութիւնը, վերջապէս անոր անկանոնութիւնները, որոնց մասին զանազան առարկութիւն կ'ըլլան, ընդհանրապէս արդիւնք են սպրուած կեանքին, բնակութեան, սննդառութեան, հագուածքին, տեղական հիւանդութեանց, արիւնի մէկ մասնաւոր վիճակին: Այսպէս աղքատ կ'իները, որոնք գէշ սնունդ կ'առնեն, ընդհանրապէս նուազ արիւնահոսութիւն կ'ունենան քան անոնք որ փարթամութեան մէջ կ'ապրին, ճոխ սնունդ կ'առնեն: Նմանապէս, վաւաչոտ և ցոփ կ'իները աւելի յաճախ և աւելի մեծ առատութեամբ դաշտան կ'ունենան, քան անոնք որ զգաստութիւն կը պահեն և նուազ խանդոտ խառնուածք ունին:

Դաշտանը բազմազան և խոր առնչութիւններ ունի նաև միւս գործարանաւորութեանց հետ: Այս վերջիններուն մէջ չկայ մէկը որ հեռուէն կամ մօտէն ազդեցութիւն մը չունենայ դաշտանին վրայ: Դաշտանին ջնջումը կամ խանգարումը կրնայ պատճառ ըլլալ բոլոր երեւակայելի հիւանդութեանց: Յրատառութիւնը, մանաւանդ ստորին անդամներու և մասնաւորապէս ոտքերու համար, արգանդի չքացման և արկածներու յաճախազէպ պատճառ մըն է ա՛յն կիներուն մէջ որոնք սովորաբար ոտքի վրայ կը մնան: Չքացումէն յետոյ, կրնայ պատահիլ սրունքներու մզում, արիւնոտ բիծերով, մեռած արիւնի մութ աւելի կամ նուազ լայն նշաններով, լուի խածուածքի հետքերով: Յաճախ տեսնուած են արիւնոտ ծփուն ոււոյցներ, իբրև հետեւանք դաշտանի ջնջման: Այն կիները որոնց սրունքները այրուցաւոր (ուռած) երակներ ունի, մասնաւորապէս զգուշանալու են այդ արկածներէն:

Ուղեղային գործունէութիւնը մասնաւորապէս մեծ ազդեցութիւն կ'ընէ դաշտանին վրայ, և փոխադարձաբար: Կը բաւէ, օրինակի համար, երկիրւ մը, ուրախութիւն մը, հաճոյք մը կամ ուժգին յուզում մը, դաշտանը չքացնելու համար: Երկարատեւ վիշտերն ալ նոյն հետեւանքը կ'ունենան. կարելի է ըսել թէ դաշտանը ուղեղի ճամբուն կը հետեւի: Այս տեսակէտով խիստ արտայայտիչ իրողութիւն մը երեւան հանած է Էսքուիլիօլ, յիսուն տարեկան կնոջ մը վրայ, որուն դաշտանը դադրած էր մէկ տարիէ ի վեր: Ապաժաման սէր

մը խռովեց իր անդորրութիւնը, դաշտանային հոսումն սկսաւ և տեւեց քանի մը ամիս, դըրդուելով այդ բարոյական պատճառէն:

Կարճ խօսքով, դաշտանը նոյնքան հիմնական է տեսակին աճման, որքան անհատին առողջութեան և պահպանման համար:

Դաշտանի դադարումը, գոնէ բարեխառն կլիմաներու մէջ, և մէկդի դնելով բացառութիւնները, տեղի կ'ունենայ 40-50 տարիներուն մէջ: Եւ դադարումը այնքան աւելի շուտ կ'ըլլայ որքան աւելի կանխահաս եղեր է, թէև միեւնոյն համեմատութիւնը չկայ յապաղման մէջ. և ընդհանրապէս տեւողութիւնն է երեսուն տարի:

Այստեղ աւելորդ է երկարօրէն նկարագրել այդ դադարին հանգամանքները: Կիները կանուխէն կը հասկնան թէ ե՛րբ կը մօտենայ, և պարտաւոր են համակերպիլ և նորէն մտնել զուտ անհատական կեանքին մէջ: Բարեբաղդաբար իրենց կը մնայ ամուսնին անայլայլ բարեկամութիւնը, երեխաներու սէրը, երբեմն նոյն իսկ թոռնիկներու, ընկերութեան յարգանքը, բնութեան սրբազան պահանջը ամբողջովին զո՞հացուցած ըլլալու յիշատակը, ընտանիքի մը զեկաւարումը ևն.: Բոլոր տարիքները, կեանքի բոլոր դիրքերն ու պայմանները իրենց ուրախութիւններն ունին, և հազուադէպ չեն նաև այն հրճուանքները որ կը համապատասխանեն կեանքի այդ տաճնապալի շրջանին:

Այս անունը տրուած է անոր համար որ, շատ մը սպառնալից վտանգներ կը ծագին, և եթէ կինը կրնայ խոյս տալ անոնցմէ և տոկոյ տագնապին, այնուհետեւ պիտի ունենայ կեանք մը աւելի երկարատեւ և նուազ հիւանդալոյն, քան տղամարդուն ծերութիւնը:

Այդ շրջանին մէջ է որ կը պոտահին արգանդային արիւնախոնոմ, դաշտանային խառնակութիւններ, երբեմն երկիւզայի արիւնահոսութիւններ, յաջորդական հոսումներ, սպիտակ հոսումներ, արիւնքութիւն կամ սեռատեսութիւն, արիւնամիզութիւն են: Չեն պակսիր նաև ջղային տագնապներ, ջղացաւ կամ կծկում, իսկերային կամ մերամաղձոտ երեւոյթներ: Կրնան կրկին երեւան գալ նաև թաքուն կամ մինչև այն ատեն ընդհատուած հիւանդութիւններ և իրենց ընթացքին հետեւիլ, — ինչպէս ստինքի և արգանդի պինդ ուռեցքներ կամ խլիրդ (քանսէս): Եւ սակայն, ճգնաժամի այդ շրջանը, ինչպէս արբունքը, ընդհանրապէս նուազ վտանգաւոր է ինքն իր մէջ, քան իր սկզբնաւորութեան ընթացքին: Վիճակագրութիւններ հաստատած են որ 40-50 տարեկանին, աւելի շատ տղամարդ կը մեռնի քան կին:

Իրենց կիներուն ձեռքն է փարատել այդ ճգնաժամային շրջանին փոթորիկները: Այդ շրջանը իսկապէս կը ցուցնէ այն ընթացքն ու կենցաղը զոր վարած են արգասաւորութեան միջոցին: Այն կիները որ առողջապահութեան պատուէրներուն համաձայն անցուցած են իրենց ամուսնական կեանքը, այդ տաղնապէն վախնալու քան մը չունին: Ընդհակառակն, կրնան շատ նախանձելի փոխարինութիւն մը յուսալ, վերստանալով իրենց երիտա-

սարգութեանը: Եւ իրապէս, յաճախ դիտուած է որ արգասաւորութիւնը դադրելէ յետոյ, առողջ կազմուածքներու վրայ, ճարպաւոր հիւսկէնը կ'աճի, ճարպը կը ջնջէ մորթին խորշոմները, կը կտրցնէ ձեւերը և կնոջ կուտայ թարմութեան և աշխուժութեան երեւոյթ մը, որ կը կազմէ իր երկրորդ երիտասարդութիւնը: Այդ է որ կը կոչուի վ եր ա դ ա ր ձ ի շրջան:

Դաշտանի առողջապահութիւնը շատ պարզ է, բայց պէտք է խստորէն հետեւիլ պատուէրներուն. այլապէս ամէնէն աղետալի հետեւանքները աղի կ'ունենան:

Ծնողները նախ պէտք է զգուշանան որ դաշտանը կանխահասորէն չսկսի, որովհետեւ այդ աղիտաւոր կանխահասութիւնը ամբողջ կեանքի մնացորդ մասին համար ուժաթափ կ'ընէ կիները և զանոնք կը պատրաստէ արգանդային հոսումներու, վիժումի և կնճոտ ծննդաբերութիւններու: Բազմամբոխ մայրաքաղաքներու մէջ բնակութիւնը, չափազանց անդարար ուտեստը, դինին և խահուէն, աշխարհիկ հանդէսներու չափազանցութիւնները, պարահանդէսները, յոգնեցուցիչ և զրգուիչ երեկոյթները, աւփական վէպերու ընթերցումը, գիջութիւնը ևն. ազդեցութիւններ են որոնք և շատ յաճախ կը փութացնեն իզական արբունքը, որոնցմէ հարկ է զգուշանալ, անշուշտ բանաւոր սանձաններու մէջ:

Դաշտանի առաջին երեւումէն իսկ, պէտք է մէթոտիկ կերպով նպաստել անոր շարունակման: Առոյգ մանկամարդուհիներու համար ընդհանրապէս օգտակար են բուսական և կազդուրիչ սնունդը, նստալուսանքը, մարզանքը, մտային թարթախումը, բացօթեայ պտոյտը, քանի մը սղորուկներու տեղական գործածութիւնը, մանանխով ծեփումը կամ ոտնալուսն: Իսկ անոնք որ տկար են, փափուկ, ընդհակառակն կը պահանջեն զօրացուցիչ, գրգռիչ և դարմանող սնունդ, քիչ մը ազնիւ գինի, թէյ, սեւ սուրճ, շատ տաք նստալուսանք, պարահանդէս, ձիավարութիւն, գեղջկական կեանք և իրենց ուժերուն հետ համեմատական մարզանք: Երբ այս միջոցները չեն բաւեր դաշտանը կանոնաւորելու, պէտք է երբեմն դիմել արիւնառութեան, մաքրողականներու, գրգռիչ լուսանքներու, դարձեալ գրգռիչ ոտնալուսանքու, լեղի կամ համեմաւոր գինիներու. բայց այդ դարմաններէն ո՛չ մէկը պէտք չէ գործածել առանց բժշկին խորհուրդ հարցնելու:

Անգամ մը որ դաշտանը հաստատուի, պէտք է ամենամեծ զգուշութիւն ձեռք առնել որպէսզի չդադրի: Մանաւանդ առաջին 5-6 ամիսներու միջոցին, մանկամարդուհին պէտք է մեծ ուշադրութեամբ զգուշանայ մթնոլորտի փոփոխութիւններէն, մարմնի, ձեռքերու պաղառութենէն և մասնաւորապէս ոտքերը պաղ ջուրի մէջ ձգելէն, ուժգին և՛ մանաւանդ անախորժ ցնցումներէն: Անհրաժեշտ է նաեւ ամենամեծ մաքրութիւն:

Երբ դաշտանը կատարեալպէս կանոնաւորուեցաւ, կինը, նոյն իսկ ամուսնացածը, ա՛լ ուրիշ ընկիւք չունի բայց միայն խստօրէն հետեւիլ այս առողջապահական պատուէրներուն: Դաշտանի առաջին նշաններէն մինչեւ անոր կատարեալ դադարումը, պէտք է զգուշանայ զուգաւորութենէ, և ամենամեծ մաքրութիւն պահէ անոր սկսած միջոցին: Ճերմակեղէնի կամ սրբիչի փոփոխութիւնը դաշտանը կը նուազեցնէ կամ կը կեցնէ կարգ մը կիներու քով. ուրիշներու համար ալ բոլորովին հակառակը տեղի կ'ունենայ: Այս բացառութիւններէն դուրս, պէտք է հաւատալ որ մաքրութիւնը միայն կանոնաւորութիւն և բարօրութիւն յառաջ կը բերէ:

Դաշտանի միջոցին պէտք է զգուշանալ ջեռուցիկներէ և մարմինը թրջելէ, պէտք է զրկուիլ թատրոնէ, երեկոյթէ, բուռն յուզումներէ, սուրճէն, ըմպելիներէ, պաղպաղակէ, պարահանդէսէ և բոլոր այն մարզանքներէն որ չափազանց ճիգ կը պահանջեն: Մեծ լուսանք մը, կամ գոնէ նըստալուսանք մը՝ գաղջ կամ գով ջուրով—համաձայն եղանակին— ընդհանրապէս օգտակար է դաշտանի դադարման համար:

—

Առողջապահութիւնը միայն կրնայ արդիւնաւորապէս պաշտպանել կինը՝ իր ձգնաժամային շրջանի վտանգներուն դէմ: Ուրեմն այդ շրջանին մէջ ալ, պէտք է զգուշանալ բոլոր այն բաններէն որ կրնան գրգռել արեան շրջանը, զգայնութիւնը,

ծննդական գործարանները կամ անպատեհօրէն արթնցնել տալիս ընտանիքները: Կազմուիչ, միջակ աստիճանով աննշարար ուտեստ, մեծամասնաբար բուսական և կաթնային, հրաժարում ամէն տեսակ ոգելից և համեմատը ըմպելիներէ, տաք զգեստներ՝ որոնք մեղմօրէն խթանելով մօրթը, կ'ապակեղրոնացնեն դէպի արգանդը դիմող սյժերը. չափաւոր մարզանք չոր և ազատ մթնոլորտի մը մէջ, — ասն ազնապայի շրջանի առողջապահական յակոնիկ և ամէնէն ընդհանրական դեղագիրը: Ասոնց վրայ աւելցուցէք, իբրեւ էական պայման, մտքի անգորրութիւնը, բարոյական խաղաղութիւնը, իմաստնօրէն սահմանափակուած և աշխարհային յուզումներէ ու ապաժաման ցանկութիւններէ զերծ շրջանակ մը:

Վերջին և խիստ կարեւոր պատուէր մըն ալ, — կ'ուզէ դաշտանը յղութենէն զուրս դադրել, կամ չափազանց առատ ըլլայ կամ շատ նօսր, ըլլայ անկանոն, ցաւառիթ, նեղացուցիչ, կամ իր ետեւէն բերէ սպիտակ հոտում, կսկիծներ ևն. — երբեք մի գործածեք ռաւիսիակն դարնակներ, ո՛չ սափրիչի կամ մամիկի կամ փայլի դեղագիրներ. անյապաղ դիմեցէք վտանգելի բժշկի մը: Ան միայն, տեղեկանալով կնոջ ներքին կեանքին, կրնայ դանազանել գաղտնի պատճառը այն բոլոր խանգարումներուն, բոլոր խառնակութիւններուն որոնք կը թունաւորեն ոչ միայն իր գոյութիւնը, այլ և ամուսնական երջանկութիւնը: Կանոնաւոր դաստանէ զուրկ կին մը երբեք բացարձակապէս առողջ չէ և իր նկարագիրը, իր հոգեկան տրամադրութիւնը անվրէպ կ'ազդուին անկէ:

Ե.— ԶՈՒԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ծննդագործութիւնն ըլլալով ամուսնութեան նպատակն ու վախճանը, երկու ամուսիններուն սերտ միութիւնը անհրաժեշտ է, զայն իրագործելու համար: Այս է որ կը կոչուի զուգաւորութիւն կամ մերձաւորութիւն:

Զուգաւորութիւնը ծնուցիչ գործողութիւնն է, որ կը կատարուի միասնաբար և սրուն չնորհիւ ծննդագործութեան գործարանները անմիջական շփման մէջ կը գրուին: Այս գործողութեան մեքենականութիւնն այնքան պարզ է և բնական որ, պէտք չկայ աւելորդ նկարագրութիւններու: Մարդիկ կրնան չեն սորվեցներ, և հակառակ անոր բարդ մեքենականութեան, նորածինն իսկ չի խղզուիր:

Զուգաւորութիւնը տեղի կ'ունենայ հետեւեալ պայմաններուն մէջ, — երբ թէ մտային և թէ զգայական սրու զրգուում մը յառաջ եկած է ազամարդուն ծննդական գործարաններուն վրայ, և կինը, եթէ նախ մերժելէ յետոյ, տեղի է տուեր, կամ ինքն իսկ կ'ուզէ մերձաւորութիւնը, առաջինը խոռոճպիին մէջ կը ներմուծէ իր կանգնած և բաւական կարծրացած վարոցը: Այս սերտ

միացման մէջ, թէ մէկ և թէ միւս կողմէն այն-
քան հեշտանք կայ, և իւրաքանչիւնը այնքան
անդիմադրելի հրապոյր մը, հաճոյք մը կը զգայ
որ, շատ քիչերը կը սխալին զայն կատարելու
համար: Մանաւանդ, բոլորովին բազդաւոր են
անոնք որ իրար ընտրած և սիրած են, փոխա-
դարձ սիրով մը կապուած են: Ազատ և միաճոյլ,
անոնք այլ ևս ուրիշ բան չունին, բայց միայն փո-
խադարձարար ըսել և ապացուցանել իրենց զգա-
ցած բովանդակ երանութիւնը: Այս՝ բնութեան
կողմէ տրուած ամէնէն ապահով դրաւականն է,
մարդկային տեսակի պահպանման համար և միեւ-
նոյն ատեն պատճառը՝ յաճախադէպ շեղումներու:
Երկու պայմաններ անհրաժեշտ են, այդ գոր-
ծողութիւնը բնականոն և կատարեալ դարձնելու
համար. — Գործարաններուն կանոնաւոր, բնա-
խօսական վիճակը, և կանգնումի ու ցայտումի
ընդունակութիւն՝ տղամարդուն կողմէ, որ գոր-
ծոն դերը կը կատարէ: Կանգնումը ինքնաբեր է,
ինչպէս բոլոր բնական պէտքերը, և տեղի կ'ու-
նենայ մանաւանդ երբ սիրուած կին մը կը տես-
նէք կամ անոր հետ հաղորդակցութեան մէջ
կը գտնուիք: Իսկ սերմին ցայտումը տեղի կ'ու-
նենայ գործարաններու ներմուծումէն, անոնց
անմիջական հաղորդակցութենէն, անոնց չիու-
մով յառաջ եկած ջերմութենէն և գրգռումէն,
մինչեւ որ այնքան յանկարծական և ակամայ եղա-
նակով կը պայթի, որքան ելեկտրական հոսանքը՝
երկու բեւեռներու բաղխումէն: Այս ընդունակու-
թիւնը չի կրնար գործադրուիլ երբ զեռ առնա-
կանութեան նշանները յայտնի չեն և պէտք է
գաղբի, անմիջապէս որ, տարիքի կամ հիւանդու-

թեան բերումով, այդ յատկութիւնները անհե-
տանան:

Տղամարդը ընդհանրապէս արտադրութեան
ընդունակ է արբունքէն իսկ, 15-16 տարեկանէն
մինչեւ 60-65, եթէ ոչ աւելի: Իսկ դաշտանը լա-
ւազոյն նշանն է կնոջ համար, այսինքն 13-14էն
45-50 տարեկան: Ուստի, բացի քանի մը անհա-
տական բացառութիւններէ, և կամ ցեղէն և կլի-
մայէն կախում ունեցող տարբերութիւններէ, այս
կարողութիւնը տղամարդուն համար կը տեւէ
մինչեւ 45 տարեկանը, իսկ կնոջ համար միայն 30
տարեկանը: Ասոնք են բացարձակ նուազագոյն և
առաւելագոյն սահմանները իւրաքանչիւր սեռի
համար. բայց ի հարկէ այդ ընդունակութիւնը
ածման և անկման աստիճաններ ունի:

Արտադրողներուն ֆիզիքական և բարոյական
ածումը, զարգացումը պէտք է կատարեալ ըլլայ,
որպէս զի ծնունդն ալ ըլլայ առոյգ և քաջակազմ:
Նոր էակի մը կեանք տալու համար, հա՛րկ է ու-
նենալ այդ կեանքը իր բոլոր ներգործութեամբ,
ինչ որ գոյութիւն ունի միայն կատարեալ առնա-
կանութեան շրջանին մէջ:

Առաջին տարիներու ծննդագործ կարողու-
թիւնը, երբ երիտասարդին մարմինը կ'աճի
տակաւին, ուրիշ բան չէ եթէ ոչ նախաբանը՝ իր
կատարեալ բարեշրջման: Այդ կարողութիւնը
փորձի ենթարկել և մանաւանդ զայն չարաչար
գործածելը, յառաջ կը բերէ ամէնէն աղետալի հե-
տեւանքները, ծնողներու առողջութեան և երկա-
րակեցութեան համար, զաւակներու ոյժին և հա-

ւանական յատկութիւններուն համար: Վիճակագրութիւններն ալ կը հաստատեն լիովին՝ թէ սեւական կարողութիւնը աստիճանաբար կը նուազի 45-50 տարեկանէն և ընդհանրապէս կը դադրի 55-60 կամ 65ին: Անկէ անդին, եղածը միայն բացառիկ, կամ զիտուածական կամ կասկածելի առնականութիւն մըն է:

Գործողութեան միջոցին, երկու անհատներուն, և մանաւանդ տղամարդուն կշռաւոր շարժումները աստիճանաբար կ'աւելցնեն երկու սեւերէ: Իւրաքանչիւրին հուզաթաղանթներու կամ ծննդական գործարաններու մորթին զգայուն մասերը, մինչև որ, հեշտալի զգայութիւնները, նախապէս սկսելով մանաւանդ ծեփուկէն և ծլիկէն, կը տարածուին բովանդակ ջղային զրութեան վրայ և կ'ընդհանրանան կը դառնան ուժգին հեշտանք մը, որ կը կոչուի ափրողիտեան կաղուցք կամ առիփ: Այս երեւոյթը էրիկմարդուն վրայ կը վերջանայ սերմի ցայտուժով:

Կնոջ գրգռելի տեղերը բազմազան են: Մլիկին վրայ պէտք է աւելցնել ծիծերուն ծայրերը, բունոցը ևն.: Տղամարդուն քով ալ ծեփուկէն զատ, գրգռելի մասեր կան: Կանգնումի ամէնէն զօրեղ պահուն, մանաւանդ ծեփուկը, մեծապէս կ'ընդլայնի և ուղղակի շփման մէջ է արգանդին հետ, որ բերանաբաց կ'ըլլայ այդ պահուն: Սերմի ցայտումէն յետոյ, տղամարդը կը թուլնայ և յաճախ կը թմրի քաղցր հեշտանքի մը մէջ:

Կնոջ քով ալ նման երեւոյթ մը տեղի կ'ունենայ. ծլիկը կամ կղիթորին կը պնդանայ, կ'ուռի,

և հուզաթաղանթներու անուշ և կրկնակի շփշփումը, ինչպէս միւս զգայուն մասերու հպումները իր վրայ ալ յառաջ կը բերեն հեշտալի զգայութիւն մը: Ջղային զուգակցութեամբ, կրկնակի գրգռումը յառաջ կը բերէ խոստմտի կարգ մը գեղձերուն (Պարթօլէնի գեղձեր) հոսումը, որ լարծուն կը դարձնէ բունոցը: Երբ հեշտանքը իր բարձրագոյն աստիճանին հասնի, կինն ալ կը զգայ բան մը՝ նման տղամարդու ափրողիտեան կաղուցքին կամ վաւաշին: Այս զգայութիւնը կը թափանցէ իր բովանդակ էութեան մէջ: Այս կերպով երկու սեւերուն քով ալ երեւան կուգայ իրարու մէջ թափանցելու փոխադարձ և ուժգին ցանկութիւն մը, որ հզօրապէս կը նպաստէ բեղնաւորման: Թէ տղամարդուն և թէ կնոջ քով, հեշտանքի այդ թափէն յետոյ, կու գայ ընդհանուր ախորժիկի թուլութիւն մը որ քունի կը հրուարէ:



Երիտասարդ ամուսինը չարաչար չպիտի գործածէ իր ընկերը, եթէ չուզիր յուսախարութիւններ և խղճահարութիւններ պատրաստել: Մեարալուանի երանութիւններն ու մոլեգնութիւնն անցնելէ յետոյ, պատճառ չկայ որ տղամարդը խորհուրդ չհարցնէ իր տարիքին, իր խառնուածքէն, իր կազմին, իր դբաղման և սննդառութեան, իր սովորութիւններուն և կեանքի բոլոր հանգամանքներու մասին: Ինչպէս որ պէտք է

ուտէ առանց անօթի ըլլալու, ոչ ալ խմէ առանց ծարաւ ըլլալու, ոչ ալ քնանայ առանց քունի պէտքն զգալու, պէտք չի ևս եւ զազաւորութեան հանոյ՛ններուն անձևատու ըլլայ առանց քնակակօրէն տրանսպորտած, միտած ըլլալու: Ինչպէս որ անօթութիւնը մեծ համեմն է ճաշերու, չափաւոր ժուժկալութիւն մըն ալ նոյնն է ծննդագործական հաճոյքին համար: Բուռն ցանկութիւն մը աւելի կատարեալ կը դարձնէ զայն, և անյապաղ հնազանդիլ ցանկատիրութեան ներքին ձայնին, — միակ միջոցն է իր առողջութիւնը չխորտակելու: Տուփական անհշանքը իրաւամբ նկատուած է առողջութեան նշան մը. բայց միայն ախորժակը չի բաւեր զայն գոհացնելու, եթէ կենսունակութիւն չկայ: Ուրեմն, ներքին զրգուիչներէ, անզգոյշ գգուանքներէ մղուելու պահուն չէ որ ամուսինը անձնատուր պիտի ըլլայ արատաբութեան բնագոյն, ինչպէս Պալգաք դիտել կուտայ Ասորական քնախօսութեան մէջ: Յանկատիրութիւնը, կ'ըսէ գիտնական մը, աւելի յաճախ կ'ախում ունի դատարկ կամ անզբաղ գլուխէ մը, քան ամորձիներու յորդութենէն:

Ինչ կը վերաբերի զուգաւորութիւնները կըրկնելու անջրպետին կամ թիւին, ամուսինը այս մասին ալ պէտք է զգուշանայ ամէն անապարձութենէ և չհաւատայ առասպելներու: Անշուշտ գըտնուած են ճշմարիտ ամուսնական ըմբիշներ, առնականութեան հոկաներ, Հերակլէսի ախոյեաններ: Օրինակ՝ այն ամուսինը որուն կինը գանգատեցաւ իր ծայրայեղութիւններէն և Արակոնի

քագուհին հրաւանագրով մը վճռեց օրական միայն վեց անգամ մօտեկայ: Այսպիսի դէպքերու մեծ մասը, եթէ երբեք առասպելներ չեն, կը վերաբերի այնպիսի այրերու որոնց խելքը միտքը շարունակ ծննդական գործարանին վրայ է, որոնք գերի դարձած են ախտաւոր խառնուածքի մը. բայց ասոնք շատ հազուադիւր բացառութիւններ են: Բնախօսութիւնը և փորձառութիւնը կը սորվեցնեն թէ ամորձիներուն պզտիկ ծաւալը, սերմնարտադրիչ խողովակներուն նրբութիւնը և նօսր ցայտում մը, — երբ կը կրկնուի կարճ ընդհատումով — կը հասկցնեն որ սերմը ցանցառ հոսում ունի, ուստի և չափաւոր ժուժկալութիւն մը անհրաժեշտ է կատարեալ և բեղնաւոր զուգաւորութեան համար: Այլպէս, այդ բոլոր վայրագ շահատակութիւնները ուրիշ բան չեն, եթէ ոչ ջգածութեան կամ լուսնոտութեան մոլեգնութիւններ, որոնց միջոցին յամրաբար կը հոսի փոքր քանակութեամբ հուզային և զրգուիչ հեղուկ մը, որ աւելի չազանակագեղձի և Քառփրրի գեղձերէն կը բխի քան ամորձիներէն:

Հելլէն մեծ օրէնադիրը, Սոլոն, իր Աթէնքի քաղաքակիրցներուն կանոններ սահմանած էր ամուսնական պարտականութեանց կատարման չափի մասին, համաձայն տարիքի և զբաղման, հիմ առնելով իւրաքանչիւր սեռին կրելիք յոգնութիւնը: Բայց այդ կանոնները յիշել աւելորդ է, մանաւանդ որ մեր ժամանակներու զգայասիրութիւնը և ազատութիւնը պիտի մերժէին զա-

նոնք, և յետոյ՝ այս պարագային ալ, ինչպէս ուրիշ շատ մը բաներու մէջ, ոչինչ կայ ընդհանուր կամ բացարձակ. ամէն բան յարաբերական է և անհատին հետ կապուած:

Կրնանք ստուգապէս ըսել որ զուգաւորութիւնը շատ աւելի տկարացուցիչ է ծայրայեղ՝ տաք կամ պաղ՝ կլիմաներուն, քան բարեխառն երկիրներու մէջ: Նմանապէս, գարունն ու աշունը աւելի նպաստաւոր են զուգաւորման քան ամառն ու ձմեռը: Գարնան, որ տարուան երիտասարդութիւնն է, շրջանը ոգեւորութեան, սրտազեղման և խայտանքի, մարդ մասնաւոր ձգտում մը կը զգայ ծննդագործութեան: Աշունը հոչակուած է իրրեւ ամենամեծ արդիւնաւորման եղանակը, ստեղծագործող՝ թէ բնախօսական և թէ բարոյական տեսակէտով: Չմեռը, և ամրան ամիսներուն (առանց «R»ի ամիսներ, ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիները), մեծ զգուշութիւն կը պահանջուի սեռական յարաբերութեանց համար: «Յունիսին և Յուլիսին, կ'ըսէ սպանիական երգ մը, ո՛չ կին, ո՛չ ճախրանք»: Ինչ որ կ'ապացուցանէ թէ ժողովուրդի առողջապահական բնազդը կանուխէն ըմբռներ է թէ սերմնային արտահոսումները ի՛նչքան կը տկարացնեն և կը սպառեն տաք օրերուն:

Ծաղկաւէտ երիտասարդութիւն մը և աշխոյժ առնականութիւն մը աւելի ընդունակ են զուգաւորութեան, քան մռայլ ձերութիւնը: Չկայ աւելի ծիծաղելի բան մը քան ձերունիներու տուփական յամառութիւնը:

Տարէց ամուսինները պարտին աղէկ հասկնալ թէ սերմի ցայտումը, որ իրենց համար միշտ աւելի ցաւառելի է քան ախորժելի, կը վտանգէ իրենց առողջութիւնը և կը կրճատէ իրենց կեանքը: Բազմաթիւ ձերունիներ մեռած են զուգաւորութեան պահուն, կամ անոր անմիջական հետեւանքներով: Անոնք պէտք չէ երբեք երեւակայութեամբ դգուեն իրենց երիտասարդութեան նենգաւոր յիշողութիւնները, ո՛չ ալ հաւատան իրենց բարեկամներուն կամ ծանօթներուն ստայօդքաջագործութեանց: Ծննդագործական երկարակեցութիւնը խիստ հաղուադէպ է, իսկ իրրեւ թէ իրենց առնականութիւնը պահած ձերունիներու պատմական օրինակները շատ հաւատալի չեն: Այսպէս՝ այն պատմութիւնը թէ Լեհաստանի մէկ թագաւորը երկու զաւակ ունեցաւ 90 տարեկանին: Բժշկական ասրեգրութեանց մէջ կը յիշուի նաև Անգլիացի մը, Թոմաս Փար, որ միայն հացով, կարծր պանիրով և թեթեւ գարեջուրով ապրելէ յետոյ, 120 տարեկանին ամուսնացաւ այրի կնոջ մը հետ և իր ամուսնական պարտականութիւնները կատարեց մինչեւ 140 տարեկանը: Մեռաւ երբ 152 տարեկան և 9 ամսու էր:

Աւելի վաւերական դէպքեր կը յիշէ Ֆրանսական պատմութիւնը: Մառէշալ Թիսթիէ կրորդ անգամ ըլլալով ամուսնացաւ 91 տարեկանին, իսկ Մառէշալ Ռիշլիէօ ամուսնացաւ 84 տարեկանին, ետկրորդ անգամն ըլլալով: Ասոնք հինաւուրց բացառիկ երեւոյթներ են, որոնց պէտք չէ հետեւիլ, որովհետեւ այն ատեն հարսանեկան անկողինը

ապահովապէս պիտի վերածուի դագաղի, եթէ հրաշք մը չպատահի: Դարձեալ Ֆրանսացի մըն էր, հռչակաւոր բժիշկ Մէնառ, որ սնապարծութիւնն ունեցաւ 74 տարեկանին ամուսնանալու մանկամարդ աղջկան մը հետ: Եւ Ֆրանսացի բանաստեղծը իրաւամբ դիտել կուտար թէ նոյն ջահն էր որ զինքը հարսանեկան անկողին առաջնորդեց և անկողինէն՝ գերեզման:

Սոփոկլէս արդէն ծերացած էր, մազ-մօրուք ձերմկած: Օր մը մտերիմներ հարցուցին թէ տակաւին կը վայելէ՞ սիրային հաճոյքներ: Այնքեր փիլիսոփան պերճախօս նայուածք մը ուղղելով, պատասխանեց.

— Աստուած չընէ... շատո՞նց հրաժարած եմ այդ հաճոյքներէն, այնքան յօժարութեամբ որքան պիտի փախչէի վայրենի և մոլեգնած բարեկամէ մը:

Կիկերոն ալ այդպէս կ'արտայայտուի իր «Ծերութեան Մասին» անուն գրքին մէջ:

Կը հասկցուի թէ ջղային ոյժի մը խնայողութիւնը խիստ կանոն է ծերունիներուն՝ համար և անհրաժեշտ տարր մը՝ առողջութեան և երկարակեցութեան:

Այս բոլոր նկատումներով, արդեօք յիսուն տարեկանին հասած ամէն խոհեմ մարդ պարտաւոր է հրաժարիլ սիրային վայելքներէն: Շատ բժիշկներ այդպէս կը պատուիրեն բոլոր անոնց որ կ'ուզեն երկար և քաջողջ ապրիլ, իրենց մտաւոր, շարժիչ և մարտդական ընդունակութեանց բովանդակ լրութեամբ: «Անկէ յետոյ եղած իւրա-

քանչիւր զուգաւորութիւն թիակ մը լեցուն հող է, զոր իր գլխուն կը նետէ», դիտել կուտայ ուրիշ հեղինակութիւն մը: Այն անհատները որոնք ջղային են, դիւրագրգիռ, կամ ուժասպառ՝ իրենց երիտասարդութեան ծայրայեղութիւններէն կամ զեղծումներէն, եթէ ոչ իրենց աշխատանքէն — ինչպէս գրագէտները, արուեստագէտները, գրասենեակի մէջ փակուած մարդիկ, — կամ անոնք որ թույլ են, փափուկ, տկարակազմ, վատուող, անշուշտ պարտաւոր են աստիճանաբար մեծ չափաւորութիւն պահել այդ տարիքին. նոյն իսկ այդ չափաւորութեան պէտք կը դգան: Բայց մեծամասնութեան համար, — անոնց համար որ տակաւին կատարեալ են, առոյգ և ուժեղ, այդ կանոնը անընդունելի է, դժուարակիր, եթէ ոչ վտանգաւոր նոյն իսկ իրենց ընդունակութեանց պահպանման համար: Իրենց ըլլալիք մեծագոյն պատուէրն այն է որ միայն պէտքին՝ բնականոն ցանկութեան առջեւ տեղի տան, առանց զայն սովորութիւն մը դարձնելու: «Աստղիկը ձգէ մէկ ամիս, և ան քեզ պիտի ձգէ երեք ամիս», կ'ըսէ սպանիական առակ մը: Որքան աւելի կը գործածէք զայն, այնքան աւելի կը տկարացնէ:

—

Սերմի հոսումը և մանաւանդ անոր ցայտումը ամբողջ ջղային դրութիւնը կ'ենթարկէ այնքան ծայրայեղ ցնցումի մը որ բաղդատուած է լուսնոտութեան պզտիկ նոպայի մը հետ: Ուստի և անոր հետեւող հաճոյքի զգայութիւնը շատ աւելի բուռն

և անհունապէս բարձր է քան միւս զգայարանքներու գոհացումէն ծնած հեշտանքը: Ընդհանուր կանոնը այս է.—Որքան անհրաժեշտ և գերազանց է գործարանային պաշտօնը, այնքան մեծ է անոր կանոնաւոր և պատշաճ գործածումէն ծնած հաճոյքը: Արդ, այն գործողութիւնը որ կեանք կուտայ և կը կազմուորէ զայն, իրապէս միւս գործարանաւորութեանց ամէնէն անհրաժեշտը և ամէնէն գերազանցը, գերիվերն է. որովհետեւ, բնութեան ընդհանուր կարգին և օրէնքներուն մէջ, տեսակին վերարտադրումը շատ աւելի կարեւոր է, քան անհատին պահպանումը: Ուրեմն բնական և տրամաբանական է, այդ իսկ օրէնքին համաձայն, որ ծննդագործական հաճոյքը աւելի զօրեղ ըլլայ, սրբնթաց, սաստիկ, խոր և ընդհանուր քան ուրիշ ո՛ր և է հեշտանք:

Ուրիշ կանոն մըն ալ, որ դարձեալ բացառութիւն չունի, և համազօր է նախորդին,—որքան գերազանց է գործարանային պաշտօն մը, այնքան աւելի ծանր և վտանգաւոր են անոր կիրարկման զեղծումներուն պատճառած խառնակութիւնները, հիւանդութիւններն ու չարիքները: Սերմնային արտահոսումը ուժասպառ կ'ընէ մարմինը որքան այդ հեղուկին ծորումով — և չմոռնանք որ սերմը արիւնին հիւթը՝ իսկութիւնն է, չափազանց ժլատօրէն պատրաստուած — նոյնքան անոր ընկերայող ջղային ցնցումով, սասանումով: Այս է պատճառը որ զուգաւորութենէն յետոյ տղամարդը կը մնայ նուաղուն և ուժաթափ, համաձայն իր սպառած ջղաձգական ճիւղին սաստկութեան.

որովհետեւ իր կեանքին մէկ մասը անցաւ կնոջ արգանդը, իր ծնուցիչ հեղուկով, նոր կեանքի մը արեւ տալու համար:

Այս օրէնքը դրական է. և պէտք է այդպէս ըլլար, որովհետեւ հաճոյքը անցնելէ յետոյ, և մանաւանդ այն հաճոյքէն ետք որուն կ'ընկերանայ գոյութեան փոխանցումը, յառաջ կուգայ տեսակ մը անէացում, որ գրեթէ կը մօտենայ մահուան: Ահա թէ ի՛նչ սրատեսութեամբ դիցարանութիւնը միաժամանակ և՛ հաճոյքներու և՛ յուզարկաւորութեան աստուածունի կոչեց Լիպիտէսը,—Աստղիկ և Պրոսպերէս, — ծննդագործող Աստղիկը, որ կեանք կուտայ և մարդասպան Աստղիկը՝ որ կը խլէ զայն:

Գիշ մը խորհրդածութեամբ և քանի մը բնախօսական ծանօթութիւններով, այսպէս ամէն մարդ կրնայ համոզուիլ իմաստուն ժուժկալութեան մը փրկարար ազդեցութեան, — ժուժկալութիւն՝ նոյն իսկ ամուսնական կեանքի մէջ: Այս մասին առողջապահութեան պատուէրներուն հետեւելով, ուղղակի նպաստած պիտի ըլլաք ձեր ոյժին և երկարակեցութեան: Եթէ կենդանական գործարանաւորութեան ո՛չ մէկ պաշտօնը՝ ձիրքը այնքան շքեղութեամբ տրուած չէ որքան ծննդագործութեան բնական պարգեւը, բայց և ո՛չ մէկը այնքան ազահութեամբ տրամադրուած է, որքան նոյն այդ պարգեւը: Վերջինն է որ կը յայտնուի և առաջինն է որ կը մարի:

Եւ անա այսպէս այդ գործունէութիւնը իր երեւումին, իր նպատակին և վախճանին համար

կը պահանջէ մարմինն կատարեալ զարգացումը, և ինչպէս ըսինք արդէն, կը նուազի և կը դադրի անմիջապէս որ մարմինը կը սկսի կքիլ: Որով ծննդագործ կարողութիւնը ապացոյցը և պսակումն է կազմական ոյժին, կենսունակութեան, և միաժամանակ նշանն ու արտայայտութիւնը՝ անոր անկման: Տեսակ մը կենսական յորդառատութիւն անհրաժեշտ է ուրիշի մը կեանք փոխանցելու համար, և այս՝ գոյութեան ամէնէն փառաւոր շրջանի առանձնաչորհն է: Սերմին սակաւ, նօսր հոսումը, ինչպէս և զայն քամող և պատրաստող գործարաններուն նրբութիւնը պէտք եղածէն աւելի կը բացատրեն թէ Բնութիւնը ի՞նչ ազահութեամբ, կարծես ակամայ կը թողատրէ անոր ծորումը: Այս է պատճառը որ՝ նկարագեղ պատկերով մը՝ նոյն ինքն կեանքը նկատած են հեղուկ մը կամ կենսական սկիզբը՝ խտացած և շօշափելի դարձած: Այսպէս, գիտնական մըն ալ յայտարարեց թէ կեանքը կազմուած է մանրադիտական ուղեղներէ, որոնք ծնունդ առած էին ուղղակի ուղեղէն: Հիները զայն կը նկատէին նաեւ հեղուկ մը որ կը հոսի ողնածուծէն և ուղեղէն:

Այսպէս կամ այնպէս, սերմին կարեւորութիւնը կը հաստատուի այն պարզ իրողութեամբ որ ամենափոքր մասնիկ մը կենսունակ կեանք մը կը պարունակէ և կրնայ փոխանցել զայն: Ուրիշ ոչ նուազ նշանակալից ապացոյց մըն է ոյժի և

կորովի այն յաւելումը զորս իր ներկայութիւնն ու հոսումը կու տան մարդկային կազմին, ինչպէս որ իր յաճախողէպ կորուստները արագօրէն ուժասպառ կ'ընեն և կը յոգնեցնեն մարմինը: Անգամ մը Պիլթագորոսի կարծիք հարցուցին զուգաւորութեան ժամանակի մասին.

— Ե՛րբ որ յարմար տեսնէք մեծ կորուստ մը կրել, պատասխանեց հելլէն իմաստասէրը:

Հետեւաբար, սերմնային հեղուկին բռնի հոսումն ու արտաքսումը էպպէս վնասակար են: Հայիւ եղած է որ 30 կրաւ սերմի կորուստը հաւնագոր է 1200 կրաւ արիւնի կորուստին: Այսպէս իր կազմութիւնը հակառակն է ճարպին, ինչպէս ամէն մարդ գիտէ: Ահա թէ ի՞նչու կազմական խոշոր և արագ վատթարացում մը յառաջ կու գայ սերմի շուշլ վատնումէն, առանց հաշուելու տրոփական ջրածգութիւնը, որ այնքան խորապէս կը սարսէ ջրային դրութիւնը:

«Ամէն մարդ սերմին մէջ է», կ'ըսէր Կատարինէ Մէտիչիսի հուշակաւոր բժիշկը: Ատեն մը իր բնական շտեմարաններուն մէջ մնալը մարմինն կու տայ կենսունակութիւն մը, կորով մը, որ համեմատական է ժուժկալութեան տեւողութեան հետ: Իր վերածումը կը պահէ և կ'աճեցնէ կենսական ոյժը: Դարձեալ արիւնին հետ խառնուելով, կ'արտադրէ տեսակ մը սերմնային ամենուրեքութիւն, որ կը վերածուի կեանքի բալասանի, կամ ամէնէն հեշտալի և ամէնէն հզօր խթանիչի մը: Ինչ որ կեանք կուտայ, կը ծառայէ նաեւ զայն պահելու: Այս ճամարտութեան անհերքելի

ապացոյցներն են այն յեղաշրջումը զոր կը կրէ կազմը արբունքի շրջանին, ինչպէս և կենդանիներու ներքինաջուկը, ներքինիներու անզօրութիւնը և անկարողութիւնը:

Զուգաւորութիւնը, ուրեմն, ուժեղ և առոյգ տղամարդերու գործն է: Անխորհուրդ է ան որ չուզեր ընդունիլ այս ճշմարտութիւնը: Տաժանելի է տեսնել մարդիկ որոնք կը չափազանցեն զուգաւորութեան պահանջը, և կարծես քշուած սուփիէն, անձնատուր՝ ցոփութեան, խաթարուած երեւակայութեամբ կամ մահացու ունակութիւններով յաճախ իբրեւ անդիմադրելի պէտք մը կը նկատեն ինչ որ ուրիշ բան չէ, եթէ ոչ արդիւնք՝ վաղանցիկ կամ արուեստական գրգռումներու և անհամապատասխան՝ իրենց կազմին: Յիմարութիւն չէ՞ պահանջել ցանկութենէն—ո՛րքան ալ բուռն և քմտհաճ ըլլայ—ինչ որ մարդուն կազմական և բնախօսական պայմանները կը մերժեն տալ: Եւ սակայն տխուր փաստ մըն է որ հազարաւոր երիտասարդներ կը յամառին իրենց չափազանցութիւններուն մէջ և ետ դառնալու, իրենք իրենց խնայելու խելք կ'ընեն այն ատեն միայն երբ շատ ուշ է...

Զուգաւորութեան զեղծումները յառաջ կը բերեն ծննդական գործարաններու թուլութիւն, սերմի ակամայ կորուստներ, ամորձիներու սաստիկ նիհարութիւն, ծիւրում, մէզի խցում՝ մզային փամփուշտին ջլատումով կամ շագանակու-

գեղձին խողխողումով, արիւններթուփիւններ ևն.: Այս տեղական անկանոնութիւններուն վրայ կու գան կ'աւելնան անխորժակի կորուստ, տաժանելի, տքնաջան մարտողութիւն, սրտի բաբախում, սակաւարինութիւն (anémie), որ կը յայտնուի աժժգունութեամբ և տխրութեամբ: Անկարողութեան և ամուլութեան հետ մէկտեղ, բոլոր զգայարանքները կը խաթարուին, — տեսողութիւնն ալ, յիշողութիւնն ալ, դատողութիւնն ալ: Եւ իրարու կը յաջորդեն ջղային կամ կազմական հիւանդութիւնները: Ո՛րքան ստամոքսի, սրտի, թոքերու, ուղեղի և ողնածուծի կամ ողնայարի, հիւանդութիւններ, ո՛րքան անդամալուծութիւններ և խելագարութիւններ ծնունդ են առած սեռային չափազանցութիւններէն և անոնց պատճառած սերմնային կորուստներէն: Եւ բոլոր այն հիւժախտները որ այնքան սուր, արագընթաց եղանակով մը կը զարգանան կազմական կամ ժառանգական ո՛ր և է տրամադրութենէ զերծ մարդոց վրայ, միթէ հետեւանքները չեն ողնայարի ծիւրումներու, մասնաւորապէս նորապսակ և ցոփ երիտասարդներու մէջ: Քանի՛ հազար անգամներ, մանաւանդ բազմամբոխ, փարթամ քաղաքներու մէջ, ամէն տեսակ դարմաններով անօգուտ պայքարներ կը մղուին գաղտնի հիւանդութիւններու դէմ, որոնք անտարանական ճշմարիտ հոնելուկներ են, և որոնց լուծումը կը գտնուի միայն սեռական գործունէութեան կիրառման կամ ամուսնական այնպիսի ունակութիւններու մէջ զորս շատ փափուկ է հարցաքննել...

Այս առթիւ հետաքրքիր բաղդատութիւններ շատ եղած են, մանաւանդ Արեւելքի և Արեւմտքի միջեւ: Ինչէն է որ ընդհանրապէս, Արեւելքի մէջ, հեռուն թէ մեր շուրջը, կը տեսնենք սոփական չափազանցութիւններ, բարբարոս ունակութիւններ, պժգալի սողոմականութիւն, նուազուն, սնգործ, անփոյթ, ագէտ, և հետեւաբար թշուառ և ամէն տեսակ բռնակալութեանց զոհ ամբոյս մը. իսկ անդին, Արեւմտքի մէջ — դարձեալ ընդհանուր առումով — իմաստուն ինքնազսպում, ընտանեկան երանութեան աւելի արդար բաշխում, լոյսի, ազատութեան, հաւասարութեան և բարօրութեան յառաջատական ածում, արագ բազմացում, համախումբ, գործունեայ, տքնաձան, ձեռներէց, համարձակ ազգարնակութիւն մը որ կը տարածուի և կը շարժի ինքնամղումով և պահանջին բերումով: Այս մարդկային զանգուածներն ուսումնասիրելով և պատմութիւնն ալ քննելով, փիլիսոփան ու քաղաքագէտը, ընկերարանն ու անտեսագէտը, հայրենասէրն ու յեղափոխականը նոյնքան ծանր և բարձր խորհրդածութիւններ պիտի գտնէին որքան առողջարան բժիշկը:

Սեռային չափազանցութեան չարիքները չեն սահմանափակուիր գործողներուն վրայ, այլ և ճակատագրականօրէն կ'երկարաձգուին մինչեւ անոնց սերունդը: Այն ոսկրաթեք հասակները, այն ծուռումուռ մարմինները, մեկամաղձոտ և հիւանդկախ կերպարանքները որ կը վխտան մեր շուրջը, մեծ քաղաքներու մէջ, յաճախ իրենց գոյութիւնը կը պարտին սոփական ծայրայեղութիւններէն ուժասպառ ծնողներու:

Թէ կինը ո՛ր աստիճան կը մասնակցի ծննդագործական ընազդին և հաճոյքին, — խնդիր մըն է որ կը լուծուի զանազան ձևերով: Բայց ընդհանրապէս ընդունուած է որ այդ բնազդը աւելի հրամայական է տղամարդուն մէջ, և թէ, բոլոր կենդանական տեսակներուն մէջ, արուն աւելի եռանդուն, աւելի խանդոտ է քան էգը: Արուն միշտ կը փնտռէ, կը պահանջէ էգը. և ասկէ կը հետեւցնեն թէ ժուժկալութիւնը աւելի դիւրին է կնոջ քան տղամարդուն համար:

Այս մասին ալ բացարձակ բան մը չկայ. որովհետեւ խննդութեան հակումը, որ շատ անգամ աննատական խառնուածքի հետեւանք է, կրնայ զարգանալ շորհիւ յուսի դաստիարակութեան մը, դատարկ, անաշխատ կենցաղի մը և նոյնքան դատարկ մտքի մը, լկտի ընթերցումներու և խօսակցութիւններու: Եւ որովհետեւ զգայութիւնները կրնան բաղդատուիլ միայն անո՛ր կողմէ որ կը կրէ զանոնք, դժուար է որոշել թէ զուգաւորութեան հաճոյքները աւելի խոր, աւելի բուռն են կնոջ քան տղամարդուն մէջ: Ըսած են թէ աւելի ուժեղ է տղամարդուն մէջ և աւելի տեսական՝ կնոջ քով: Բաղդատելով խոռոճպի հուզաթաղանթին տարածութիւնը՝ ձեփուկի նոյն թաղանթին հետ, ինչպէս և նկատողութեան անելով անոր վրայ գտնուած ջղային գնտիկներուն թիւը, մանաւանդ գործողութեան միջոցին կնոջ կրած ուժգին ճնշումը, պրոֆէսոր Քոպլէյ հակառակը հաստատեց: Այսինքն, նկատի ունենալով կնոջ ծայրայեղ ընդհանուր զգայնութիւնը, եզրակացուց թէ ան աւելի հեշտանք, երանութիւն պիտի զգայ քան տղամարդը:

Հարցը այն է որ Բնութիւնը ո՛չ մէկուն համար խորթ մայր է, գոնէ այս պարագային:

Հակառակ զուգաւորութեան մէջ կնոջ ունեցած նուազ գործօն դերին, ան ալ տուփական ծայրայեղութիւններ կը զգայ: Իր կրած ջղային ցընցումները բաղդատուած են իսդերիի նոպաներու: Ջարմանայի չէ որ ծննդական մասերու զրգուումը, սեռային մորթերու հիւանդութիւնները, դաշտանի խառնակութիւններն ու խանգարումները, սպիտակ հոտումները, արգանդի խախտումները, ամիութիւնը յաճախ հետեւանքն են այս ծայրայեղութիւններուն: Այսպէս ապրեցան ու մեռան Մեսայինէները, Կղէոպատրաները, Ակրիպինները և ուրիշ բազմաթիւ անյազ ցոփուհիներ որոնք այնքան հոչակ ունին պատմութեան մէջ:

Խոհեմ կիները պարտին միշտ բաւական նկատելի ինչ որ կը թոյլատրեն ամուսնին անհատական ոյժերը և պայմանները, առանց վնասելու անոր առողջութեան և կորովին. որոնք այնքան անհրաժեշտ են ընտանեկան երանութեան համար: Անոնք պէտք է նոյն իսկ չափաւորեն, որքան կարելի է, տղամարդուն խանդը, երբ ան չարաչար կը գործածէ իր ոյժը. պէտք է անոր յիշեցնեն սպառնացող վտանգները: Այս հոշտարար պաշտօնը դիւրին է մանաւանդ աւշային կիներուն համար, և իրենց ամուսինները չեն կրնար վայրագօրէն հակառակիլ: Ամուսինները պարտաւոր են յիշել թէ կինը չափազանց ջղային է, փափուկ, զգայուն և նոյն իսկ քմահաճ: Ամենափոքր հակառակութիւնը կամ դժկամակութիւնը, պզտիկ

անպատշաճութիւն մը, լրբութիւն մը, ամենաթեթեւ չկամութիւնը կը բաւեն իր կողմէ անտարբերութիւն, վայրկենական զգուանք մը յառաջ բերելու, և մտքէն ջնջելու տուփական ամէն գաղափար: Այն ատեն, ինչ որ պիտի ստանաք կիներէն, ուրիշ բան չէ բայց միայն անհամբեր և բռնադատուած կրտսորականութիւն մը. ան չպիտի նոյնանայ ձեր խանդին, ձեր տարփանքին, ձեր երանութեան հետ:

Այր թէ կին, պարտաւոր են համոզուիլ սաճմարտութեան.

— Խնայողութեամբ վայելել իր հսանոյքները՝ կը նշանակի կրկնապատկել զանոնք:



Բոլոր կենդանիներուն համար կայ զուգաւորութեան բնական ձեւ մը, որ ունի հիւանայի այլազանութիւն, համաձայն իրենց ձեւին և ծաւալին:

Այսպէս, օձերը իրարու կը փաթթուին, թռչունները կը զուգաւորուին մեծամասնաբար առանց ներմուծումի: Սարդերուն մէջ, որոնց էզը աւելի զօրաւոր է քան արուն, ինչպէս դօդօշներուն և գորտերուն մէջ, որոնց զուգաւորութիւնը կը տեւէ վեցէն ութ օր և նոյն իսկ աւելի, շատ հետաքրքիր և ուսումնասիրութեան արժանի երեւոյթներ կան:

Առանց երկար բարակ նկարագրելու կամ ջատագուելու հորիզոնական դիտել, որ հինէն ի վեր

սովորական եղած է մարդկային տեսակին մէջ, հարկ է ազգարարել թէ չափազանցուած շարժումները, բռնի և քմահաճ դիրքերը, որոնք հնարուած են շնորհիւ բողոթեան և ցոփութեան, յոգնեցուցիչ են և սովորականէն շատ աւելի մեծ ուժասպառութիւն կը պատճառեն: Անոնք նոյն իսկ յաճախ յառաջ կը բերեն վիժում, եթէ արդէն ամբողջեան պատճառ եղած չեն: Տղաբերքի ատեն երեխային ախտաւոր հանգամանքները, արգանդէն դուրս պատահած յղութիւնները, բազմաթիւ հրէշային երեւոյթներ և կազմական թերութիւններ ալ հետեւանք են այս ապօրէն դիրքերուն:

Կենդանիները միայն մէկ ձեւ ունին, իսկ մարդը, յագեցումի կամ զօրաւոր ու զեղծ վաւաչոտութեան մը դրդումով, և զանազան ձեւերով բռնաբարած է բնութեան օրէնքը: Այդ ծայրայեղութիւնները և տարօրինակութիւնները նկարագրուած են հեղին համբաւաւոր պերճաղիճներուն կողմէ (արքունական՝ բարձրաստիճան բող), որոնց ննջարանները զարդարուած էին բիւրազան լկտի պատկերներով: Մինչև այսօր ալ կը տեսնեն այդպիսի ապօրինութիւններ, թերեւս աւելի զարգացած և աւելի այլանդակ, մանաւանդ որ գաղտնի կամ յայտնի նկարագրութիւններ, պատկերներ են. հազարներով շրջան կ'ընեն աշխարհի մէկ ծայրէն միւսը:

Ինչ որ ալ ըլլայ, գիտութիւնը բարձրաձայն կը հռչակէ թէ այդ մոլորութիւնները և զեղծումները միշտ կը պատժուին, և անդորմաբար:

Կարգ մը մանաւոր վիճակներ, ինչպէս չափազանց դիրութիւնը, թանձրամտութիւնը, յառաջացած յղութիւն մը, վիժումի տրամադրութիւնը, կարգ մը աղեթափութիւններ կամ ուրիշ հիւանդութիւններ կրնան պատճառ ըլլալ գուգաւորութեան բնական և օրինաւոր ձեւերէն հեռանալու, առժամաբար կամ մշտապէս: Բայց ասոնք բացառութիւններ են: Ծննդական գործարաններու կարգ մը կազմական թերութիւններ կրնան նոյն իսկ արդելք ըլլալ արգասաւորման, բնական ձեւին մէջ, չթոյլատրելով անմիջական հաղորդակցութիւն:

Այսպէս են արգանդին վար իջնելը և դէպի առաջ, բայց մանաւանդ դէպի ետ տեղափոխութիւնները, առնանդամին չափազանց կարճ կամ երկայն ըլլալը, միջուկին անբնական բացուածք՝ ծեփուկէն վեր կամ վար, թլփատին չափազանց նեղութիւնը կամ այն հիւանդութիւնը որ կը կապէ ծեփուկին մաշկը և արդելք կ'ըլլայ զայն ետ քաշելու կամ բանալու: Այս բոլոր տձեւութիւնները կրնան յարարեալական ամբողջեան պատճառ ըլլալ. դիրքի փոփոխութիւն, դէպի ետ կամ կողմնակի, անհրաժեշտ կը դառնայ այդ պարագային: Երբ կ'ընը պզտիկ է կամ սկար, տղամարդը լաւ կ'ընէ որ ինք սակը պառկի զուգաւորութեան պահուն. իսկ քիչ մը յառաջացած յղութեան ատեն, պէտք է ետեւն անցնի, որպէսզի երեխան չձմրուի:

Բայց այսպիսի պարագաներու մէջ, որոնք դժուար կը նախատեսուին, ամուսինները պարտին բժիշկին դիմել, որ կրնայ իրենց յանձնարարել արգասաւորման ամէնէն յարմար դիրքը:

Եւ ինչպէս որ, մանաւանդ այս պարագային, «ճանձրայի դառնալու գաղտնիքը՝ ամէն բան ըսեմն է», կը վերջացնենք այս գլուխը, բոլոր գիտուններուն հետ, պախարակելով ամուսնական օնանականութեան բոլոր անորակելի շեղումները և գարշելի սովորութիւնները. որովհետեւ այդ բոլոր խայտառակ միջոցները, որոնք ծնունդ առած են յափրացումէն և շահադիտական գձուձ հաշիւներէ, կը խափանեն ամուսնութեան նպատակը և ամուսնական անկողինը կը դարձնեն զաղտնի բոզուքեան իսկական քաւտուն մը:

Զուգաւորութեան ամէնէն յարմար պահն է գիշերը, քնանալէ առաջ, երբ մարսողութիւնը վերջացած է, ինչպէս և ամուսիններու մտաւոր և կամ մեքենական աշխատանքը: Այն ատեն զուգաւորութիւնը ախորժելի թուլութիւն մը, հեշտանք մը կուտայ յոգնած սնդամներուն և քունի կը պատրաստէ ինչպէս անուշ թմրեցուցիչ մը: Բայց խնդիրը կը փոխուի, եթէ մտային ընդունակութիւնները գրգռուած են զօրաւոր լարումով մը, պարանոցէսով, երեկոյթով, համախըմբումներով կամ տեսարանով մը, որոնք արուեստական կերպով խթաներ են աւփանքը: Այն ատեն մարմինը և միտքը հանդիստ կը պահանջեն, և ոչ թէ նոր յոգնութիւն: Լաւագոյն է առտուան յետաձգել:

Անգամ մը Թոմսթընէլի հարցուցին թէ երբեք մտքէն անցուցած է ամուսնանալ:

— Երբեմն, արթնցած ատենս, պատասխանեց նշանաւոր փիլիսոփան:

Իրողութիւնն այն է որ երբեք չամուսնացաւ և չնորհիւ իմաստուն առողջապահութեան մը, կրցաւ հարիւր տարի ապրիլ: Պէտք է գիտնալ որ զարթօնքի կանգնումները միշտ աւփական ճամբիտ պէտքի մը արտայայտութիւնը չեն: Աւելի յաճախ, այդ կանգնումը յառաջ կուգայ փամփուշտին մէջ մէզի կուտակումէն, անկողնի ջերմութենէն և մանաւանդ երեսի կամ գլխու բարձերու փետուրին կամ բամբակին տաք, մեղկացուցիչ ազդեցութենէն:

— Դիտէ՞ք որ, ես դեռ կանգնումներ կ'ունենամ, — կ'ըսէր արդէն ծերուկ Լուի ԺԵ.ը իր մտերիմներէն մէկուն:

— Այդ պարագային, վեհափառ տէր, շուտով միզեցէք, պատասխանեց պալատականը:

Առողջապահական պատուէր մըն էր այս, և իր ոյժը կը պահէ մինչեւ այսօր:

Կանգնումը կրնայ տեղի ունենալ նաև ուղեղին, ողնաձուծին և ծննդագործական ջիղերուն մէկ գրգռումով, թափանին մէջ որդերու գոյութեամբ, թլփատին յատուկ ախտէն (herpès), սրբանին և առնանդամին միջեւ եղած մասին գրգռումով, աւփանքով, երեւակայութեամբ ևն: Այս բոլորը կ'ապացուցանեն թէ ոչ կանգնումին յաճախումը, ոչ ալ տեղութիւնը միշտ իրական և բնաստական պէտքի մը նշանը չեն:

Այս առթիւ հարկ է հերքել շատ մը տղամարդոց մէկ սխալ համոզումը, — այսինքն թէ

սերմը պահելը անտարբերութիւն յառաջ կը բերէ: Ատոնք պէտք է գիտնան որ մասնակի վայելքները նոյնքան ուժասպառ կ'ընեն, — եթէ ոչ աւելի — որքան ամբողջ զուգաւորութիւնը: Այդպիսի վրիպած՝ անպէտ ու անկատար տուփանքները աւելորդ տեղը կը գրգռեն, կը անարածուին մինչեւ մզային փամփուշար, կը բորբոքեն շագանակագեղձը և մէզի խցումներ յառաջ կը բերեն: Թող այս պարագան չմոռնան անառակները, ծերունիներն ու անկարողները, երբ միտք կը բերեն իրենց անցեալ վայելքները:

—

Զուգաւորութիւնը ծանր և վտանգաւոր կ'ըլլայ ճաշէն անմիջապէս յետոյ և առաջին մարսողութեան ատեն, որ կը տեւէ սովորաբար երկու երեք ժամ: Պէտք է զգուշանալ նաև դաշտանային շրջանի ատեն. այսինքն ա՛յն պահուն երբ կինը կը սկսի ցաւեր դալ իր ստինքներուն, իր զիտերուն մէջ և կը յայտնէ այն մասնաւոր գրգռելի վիճակը որ տեղի կ'ունենայ արիւնահոսութենէն առաջ և անոր հետ մէկտեղ: Այս զգուշութիւնը անհրաժեշտ է, չխանգարելու համար դաշտանին ընթացքը, որ այնքան կարեւոր է կնոջ առողջութեան համար: Մովսէս, ցեղին վատասերուն արգիլելու համար, այս մասին ամենախիստ կանոններ, նոյն իսկ մահուան պատիժներ սահմանեց թէ կնոջ և թէ տղամարդուն: Դուրանն ալ

ուժ օր միջոց կը սահմանէ, հաշուելով դաշտանի սկզբնաւորութիւնն ու վախճանը:

Պարզ խօսքով, արիւնահոսութենէն առաջ և անկէ ետք պատահած երեւոյթները, թէ բարոյական և թէ առողջապահական տեսակէտով, բնական սահմաններն են այս արգելքին: Աւելի կաշկանդուելու պէտք չկայ: Ինչպէս կնոջական բոլոր հիւանդութիւնները, այս ամսական արիւնահոսութիւնն ալ ժուժկալութիւն կը պահանջէ: Եթէ սիֆիլիզի սկզբնական պատճառ մը չէ — ինչպէս կը հաւատեն հին հեղինակներ — այդ պայմաններուն մէջ զուգաւորութիւնը կրնայ տեղի տալ զանազան ախտաւոր երեւոյթներու, — հիւանդոտ մարմաններու, մորթի բորբոքումներու, շտիկներու (սխիլոսիֆ), հոսումներու, արիւնահոսութեան ևն.:

Այլևս պատճառ չունինք, հին աստուածաբաններուն պէս, հաւատալու թէ դաշտանի միջոցին եղած զուգաւորութիւնը կ'արտադրէ բորոտ, հրէշային զաւակներ: Այն ատեն այսպէս կ'ուսուցանէին Եկեղեցիին անունով, այդ գործողութիւնն արգիլելու համար: Ընդհակառակն, այսօր գիտենք որ դաշտանին երեւոյթը միշտ աւելի կամ պակաս վնասակար է, աննպաստ է ծննդագործութեան, որովհետեւ պարզ նախապատրաստական գործողութիւն մըն է, դատարկիչ և արտաքսիչ գործողութիւն մը, և հետեւաբար հակառակ յղացման: Դաշտանին յաջորդող օրերը աւելի նպաստաւոր են այդ նպատակին համար, համաձայն ձուարանութեան օրէնքներուն, որ կը հաստատեն ամենօրեայ փորձաւորութիւնները:

Հետեւաբար, դաշտանի միջոցին զուգաւորութիւնը անպատշաճ է ո՛չ թէ որովհետեւ կրնայ հիւանդկախ կամ տձեւ զաւակներ արտադրել, այլ որովհետեւ իսկապէս զաւակ չի կրնար աւսարեղ, ոչ քնակակ, ոչ ալ զնախ: Առողջապահութիւնը, իր և ամուսնին առողջութիւնը իրաւունք կուտան կնոջ՝ դաշտանի միջոցին ամէն գոհացում մերժելու, նոյն իսկ բարոյականի անուշով:

Սեռական յարաբերութեանց ամենաթեթեւ և փաղանցութիւնը մնասակար է նաև յղութեան և կաթնատուութեան միջոցին, նոյնքան կնոջ որքան իր կրած սաղմին կամ սնուցած երեխային համար: Այդպիսի գործողութիւնները կրնան յուսի հետեւանքներ ունենայ նաև վշտի, մտահոգութեան, սուգի օրերուն: Չինաստանի մէջ երբեմն սգաւոր ամուսիններուն խստօրէն արգիլուած էր սեռական յարաբերութիւնը. նոյն իսկ սուգանք կը պահանջուէր այն կնոջմէն որ յղի կը դառնար այդ միջոցին: Նաև երիտասարդներուն արգիլուած էր սուգի առաջին երեք տարիներէն առաջ ամուսնանալ:

Անխոհեմութիւն է, նմանապէս, զուգաւորութիւն փորձել ծանր հիւանդութենէ մը կամ գործողութենէ մը ապաքինած միջոցին:



Բեղնաւորիչ զուգաւորութեան առողջապահութիւնը կը տարածուի մանաւանդ ծնելիք զաւակներուն վրայ: Ամուսինները երբեք մասնալու չեն որ, իրենց արտադրած կեանքին մէջ պիտի վերագտնեն իրենց իրական և անհատական կեանքին պայմանները: Ծնողները, առանց ուղեղու, իրապէս իրենց սերունդին կը պարտադրեն իրենց առողջութեան, իրենց ընթացքին, իրենց սխալներուն և տառապանքներուն հետեւանքները: Զուգաւորութեան միջոցին ինչ վիճակ որ ունէին Ֆիզիքական, բարոյական կամ կրքի տեսակէտով, անոր ազդեցութեամբ վճռապէս պիտի ներգործեն իրենց արտադրութեան Ֆիզիքական և բարոյական ընոյթին վրայ:

Այս ուղղակի, անհրաժեշտ առնչութիւնը գործող տարբերուն և արտադրութեան միջև տեսակ մը վարդապետութիւն էր հին դարերու փիլիսոփաներուն և բժիշկներուն համար: — Երիտասարդ, կ'ըսէր Դիոգինէս բթամիտի մը, քու հայրդ գինով էր երբ մայրդ քեզ յղացաւ:

Հելլէն գիցարանութիւնը, նեկտարէն հարրած Արամազդին ծնունդը նկատելով տձեւ և այլանդակ Հեփեսոսը, կ'ուզէր հասկցնել թէ կազմական տեսակէտով շատ արգահատելի կ'ըլլան գինովութեան զառանցանքին մէջ յղացուած զաւակները:

Անհամար հետազօտութիւններ կը հաստատեն թէ զինուութեան մէջ յղացուած զաւակները բուժ զգայարանքներ կ'ունենան և անրան կամ ապուշ կը մնան: 1864ին Փարիզի բժշկական ակադեմիան քննեց բաց գանկով հրէշ մը, որ ոչ ուղեղ ունէր ոչ ողնածուծ, և որ հանուած էր ութ ամսուան և վեց օրուան յղի կնոջ մը արգանդէն: Հայրը 30 տարեկան էր, իսկ մայրը՝ 24: Երկուքն ալ ա-

ուող ընտանիքներէ սերած, ամուսնացեր էին հինգ տարիէ ի վեր: Ունէին առոյգ զաւակ մը չորս տարեկան. և, իրենց հոգերը չաւելցնելու համար, բացարձակ ժուժկալութեամբ կ'ապրէին:

Իրիկուն մը երբ ամուսինը, որ սովորաբար խմիչք չէր գործածեր, ընտանեկան երեկոյթէ մը կը դառնար չափազանց հարբած, սխաւ գուգաւորութեան: Երեք ամիսէ ի վեր գործողութիւնը չէր կրկնած, երբ յուլիսնը հաստատուեցաւ, ամենակսկածալի վերջաւորութեամբ մը, զոր յայտնեցինք արդէն:

Այսպիսի բիւրաւոր դէպքեր կան, որոնք բուրն ալ կը հաստատեն թէ տղամարդու զինովութեան միջոցին կատարուած արդիւնաւէտ գուգաւորութիւնը պատճառ կ'ըլլայ զաւակներու լուսնոտութեան և ջղային կեղրոններու վնասման:

Սեռական արտադրութիւնները համապատասխան տարբերութիւններ կը կրեն, նաեւ, երբ գուգաւորութիւնները կը կատարուին ստամոքսը լեցուն կամ պարապ, գլուխը տաք կամ պաղ, մարմինը յոգնած կամ հանգստացած, անդորր կամ վախէն՝ խղճահարութենէն ընկճուած արամադրութիւններով, կամ միտքը հոգերով ծանրաբեռնուած: Ո՛վ չի հասկնար որ պարզ բարոյական խանդաղատանք մը, ուժգին կիրք մը, անակնկալ մը ևն. կը բաւեն վայրկեանապէս դալուկ պատճառելու, ծծկանի կաթին հոսումը խանգարելու կամ կասեցնելու: Արտառոց բան է այն համողումը թէ այրը և կինը կրնան ծննդագործել և յղանալ, առանց իրենց յարաբերութեան կամ սերունդին վրայ կրելու բարոյական ինչպէս ֆիզիքական պայ-

մաններուն հետեւանքները: Ի՞նչպէս կարելի է ուրանալ որ սրանեղ, դէգ արամադրութեան վայրկեանի մը մէջ ծնած երեխան աւելի կամ պակաս չափով չպիտի կրէ անոր հետեւանքը: Արցունքներու մէջ յղացած երեխան հազուադէպ է որ ծիծղուն բնաւորութիւն ունենայ, ոչ ալ շէնչող տրամադրութեան մէջ արգասաւորուած երեխայ մը մեղամաղձոտ խառնուածք կ'ունենայ:

Ընկեցիկ մանուկները, խառնածինները, ստուար մեծամասնութեամբ, կը մատնեն իրենց արգասաւորման վայրկեանին ողբալի դրոշմը: Ի՞նչպէս կրնայ աճիլ և զարգանալ այն սաղմը որ կը բեղնաւորուի ճակատագրական պահու մը մէջ, հրապուրանքով, վախով, բռնութեամբ—ինչպէս է պարագան բաղմաթիւ տուեւանգուած հայ մանկամարդուհիներու համար—սպականութեամբ կամ խղճահարութեամբ: Կը բաւէ աչքէ անցընել ընկեցիկներու սպաստամարանները, տեսնելու համար ոչ միայն յատկանշական կերպարանքները բաղդի և քմահաճոյքի անմեղ զաւակներուն, այլ և բոլոր երեւակայելի և աներեւակայելի այլազանութիւնները՝ խոյլի (սըրածա), ոսկրաթեքութեան, թոքախտի, սողնախտի (սեռական հիւանդութիւն մորթի, herpétisme): Անշուշտ բացառութիւններ կան. բայց, յիմարութիւն է չափազանց յափշտակուիլ, կարծելու համար թէ կը բաւէ ամուսնութենէն դուրս ծնիլ, բոլոր կազմական և բարոյական կարողութիւնները միացնելու համար:

Կանոնը այս չէ, կանոնը ասոր հակառակն է: «Սերնդագործման մէջ ալ, կ'ըսէ զիտնական մը,

տեղի կ'ունենան ճիշտ այն երեւոյթները զորս կը տեսնենք լուսանկարչութեան մէջ: Լոյսով դրոշմուած ելեկտրական պատէերը պարզապէս դէմքին և դիմադիծերուն պատկերը չէ, այլ և կացքի, շարժուձեւի, արտադրութեան և հոգեկան վիճակի՝ այն պահուն որ լուսանկարը կը քաշուէր, արեւուն լոյսը կը գործէր: Պարագան նոյնն է մեր գոյութեան մոգական լոյսով ոգեւորուած պատկերին համար: Կայծը որ կը տարածէ և կը ցոլացնէ, միայն մեր էութեան ֆիզիքական և բարոյական տիպարին դրոշմը չէ որ կը փոխանցէ. ան կը փոխանցէ նաեւ կեանքի մէջ իր ստացած դիմագծութեան արտայայտութիւնը, այն պահուն որ հաճոյքը կը բեղնաւորէ իր խայտանքն ու յափշտակութիւնը: Ուրիշ տարբերութիւն չկայ լուսանկարի հրաշալի գիւտին և սերնդագործութեան միջեւ, բայց միայն սա որ լուսանկարին մէջ՝ ներկայացումը վայրկինական է իր բոլոր ազդեցութիւններով և նմանութիւնը՝ անմիջական ու իրական. մինչ ծննդագործութեան ա՛յլ աւելի հրաշալի գործին մէջ, ընդօրինակութիւնն ու նմանութիւնը որոշ ատեն մը յետոյ երեւան կ'ելլեն:»

Այսպէս ուրեմն, դաւակը լուսանկարն է իր ծնողքին՝ ամուսնական կենակցութեան մէջ: Եւ, ինչպէս որ երբ լուսանկարուելու կ'երթանք, գեղեցիկ օր մը կը փնտռենք, զուարթ և հանգիստ պատեհութիւն մը և քիչ շատ—աւելի շատ քան թէ քիչ—խնամք կը տանինք մեր հազուատ-կապուստին, մաղերուն, շարժուձեւերուն, հազարումէկ մանրամասնութիւններու, —տեղին է նմանօրինակ զգուշութիւններ ունենալ զուգաւորութեան առողջապահութեան մէջ:

Մաքրութիւնը, որ անհրաժեշտ է ամէն բանի մէջ, շատ աւելի կենսական է սեռական գործարաններուն համար: Կակուղ, սպնգային՝ արտաքին տեսքով տղամարդուն ինչպէս կնոջ քով, և ծածկուած՝ խիստ բարակ մորթով մը, այդ գործարանները քրտինք կու տան և կը ծծեն մեծ առատութեամբ: Շարունակ լարձուելով կամ ջնարակուելով մասնաւոր՝ սերուտ կամ պանրակերպ, գարշահոտ և դանելի հեղուկէ մը, որ կը կուտակուի իրենց ծալքերուն մէջ և մարմաջներու ծնունդ կուտայ, այդ գործարանները կը գրգռուին, կը բորբոքին, սկրաուքներ կամ առոյցներ կ'ունենան:

Այս բոլոր անպատեհութիւններուն պահպանակն ու դարմանն է մաքրութիւնը, միշտ առաջին պայման՝ ֆիզիքական և յարոյական բարօրութեան, տեսակ մը առաքինութիւն—ինչպէս կ'ըսեն շատ հեղինակներ: Տարարաղղարար, այդ տարրական ու դիւրին վարժութիւնն իսկ չափազանց դանդաղ կը յառաջանայ, մանաւանդ Թուրքիոյ մէջ, քաղաքներէն մինչեւ գիւղերը: Մաքրութիւնը ծախքի հետ կապուած չէ. թշուառութեան հետեւանքով չէ որ հազարաւոր երիտասարդներ և երիտասարդուհիներ կը լողան նոկայի դարչահոտութիւններու մէջ. այլ պարզապէս արեւելեան անհոգութիւնը, ծոյլ, փեթիչակն ունակութիւնները:

Առանց մաքրութեան, ամենեւեւ երջանիկ սերը ա՛յլ սեր չէ, այդ անօրայի պէտք մը:

Ընդհակառակն, մաքրութիւնը անհրաժեշտ խթան մըն է նոյն իսկ սիրային զգացումը զօրացնելու համար: Ո՛չ մէկ բանաստեղծ պիտի կրնար այսպիսի գովք հիւսել նոյնիսկ սիրուն, բայց կեղտոտ, գարշաբոյր եարի մը համար, որպիսին երգած է Նահապետ Գուշակ:

Ծառայ ֆո դեյին մեռիմ, որ մերմակ ե գեհ կարագ եղ,
Երեսդ ե կարմիր գեհ վարդ, պռունկներդ ե պսգնկու սեղ...

Կամ, փոխարեւրաբար՝ առնելով պարսիկ բանաստեղծ Սաատիի տաղը՝

Սիրելիս մի օր ինձ մըսերմարս
Բաղնիսում ջրեց ֆաղցրարդ: մի կաւ,
Հարցրի դրամ «մո՞ւշի ես քե ամբար»,
Որ հոսիցդ սյդպիս սիրս ըզմայրեցաւ:»
Նս պսսասիսակեց. «Ես կաւ եմ չեյիմ.
Միայն հարեւան եմ եղել վարդիմ,
Որի հոսն անուշ իմ վրայ անցաւ.
Այո՛, քե յե ես հող եմ, հող չեյիմ:»

Աննկարագրելի են անմաքրութեան հետեւանքները:

Եթէ ամուսիններէն մէկը ազտօտ է, իսկ միւսը աւելի փափուկ ըլլալով կը գանի, յառաջ պիտի գայ տեսակ մը պաղութիւն, յարաբերական անկարողութիւն մը, որ կրնայ անախորժ ըլլալ և լրջօրէն վրդովել ընտանեկան խաղաղութիւնը:

Պատմութիւնը արձանագրած է ամուսնալուծումներ՝ պարզապէս իբրեւ հետեւանք ազտօտու-

թեան, խորշանքի: Այսպէս, Փրանսացի մը կին առաւ գեղանի մանկամարդուհի մը, որ իր վրայ կը մարմնացնէր կատարեալ աղջկան մը բոլոր ձիրքերը, — հարստութիւն, ծագում, տաղանդ և երիտասարդութիւն: Բայց չափազանց ազտօտ էր. այնպէս որ ամուսինը գանեցաւ և նախընտրեց ամուրի ապրիլ: Իր եղբայրը, նշանաւոր հեղինակ մը, որ արդէն կը սիրէր այդ կինը, արտօնադիր ստանալով ամուսնացաւ անոր հետ: Կինը չէր փոխած իր բնաւորութիւնը. կը մնար միշտ ազտօտ, թափթփած, գանելի: Նոր ամուսինն ալ չկրցաւ խօսք հասկցնել և ստիպուեցաւ բաժնուիլ: Սէրն ու շահը, որոնք մարդկային գործաւնութեանց ամէնէն հօր՝ հարկազրիչ չարժառիթներն են, չկրցան ջնջել երկու եղբայրներուն գանելու զգացումը:

Անշուտ, կան ճաշակի և հոտաւութեան գարտուղութիւններ: Կարգ ա՛ը անհատներ զգայական այնպիսի կազմութիւն մը ունին որ թլփատին մասնաւոր գարշահոտութիւնը և ամէնէն գանելի հոտերը հեշտալի բոյրեր կը նկատեն և անոնց շնորհիւ մեծապէս կը զրգուեն իրենց զգայարանքները: Թագաւորներ և թագուհիներ անգամ ունեցեր են այս անկանոնութիւնները:

Բայց այդ պարագան նշանակութիւն չունի: Բացարձակապէս անհրաժեշտ է ամէն օր մաքրել մարմինը, և մասնաւորապէս այն մասերը որոնք, մորթային գարշահոտ արտահոտումներ կ'արտադրեն, ինչպէս գլուխը, անութը, ոտքերը, սրբա-

նին և ծննդական գործարաններուն միջեւ եղած մասը, ծննդական գործարանները և սրբանը:

Չանց ընել մարմնին մաքրութիւնը, կը նշանակէ վտանգել առողջութիւնը, խափանել մորթի պաշտօններուն կանոնաւոր կիրառումը, կը նշանակէ հազարումէկ հիւանդութեանց ենթարկուիլ, որովհետեւ աղտոտութեամբ արիւնը չի կրնար կատարելապէս մաքրուիլ, քանի որ մարմնի մակերեսին վրայ անդադար դոյացած ազբային նիւթերը կ'ապականեն այդ կենսական հեղուկը: Մարմինը նորէն պիտի ծծէ այդ նիւթերը, եթէ չմաքրուի:

Տղամարդը պարտի ամէն օր լուացուիլ մաքուր, և, երբեմն, թեթեւապէս օձառոտ ջուրով: Պէտք է խնամով մաքրել աճուկը, ցայլովրը (գասըգ, գասըգ քէմիլի) և փոշտամաշկը (ամորձիներուն տոպրակը), որովհետեւ այդ մասերը կ'աղտոտին թանձր քրտինքէն: Պէտք չէ մուռնալ նաեւ ձեփուկին ծածքը՝ թլփատը, ուր կը գոյանայ գարշաճոտ հեղուկ մը: Եթէ թլփատը շատ նեղ ըլլալով կարելի չըլլար վեր քաշել և լուալ, ինչպէս կը պատահի ձեփուկի յատուկ հիւանդութեան ատեն (phimosi), գաղջ ջուրով յաճախակի ներարկումներ անհրաժեշտ են: Այս խնամքին զանցաւորութիւնը կրնայ ծանր հիւանդութիւններ պատճառել, մանաւանդ տաք երկիրներու մէջ:

Կնոջ համար ալ անհրաժեշտ են նոյն պայմանները, — մաքուր ջուր, մանաւանդ զաշտանի օրերուն: Ի հարկէ, կիները մեղմէ աւելին գլխեն,

— բերազան օձանելիքներ, իւղեր, ֆրեւներ և և փոռասաներ, շունչի հականեխիչ փաւսիչներ, անուշահոտութիւններ, փոշիներ՝ ակուայի թէ մորթի համար: Բայց մենք զանց կ'առնենք այդ մանրամասնութիւնները, որովհետեւ անոնք երեք-չորրորդով խարէական բաներ են, և եթէ պատահաբար, խիստ չափաւորութեամբ և ուշադիր ընտրութեամբ այս ու այն նիւթը գործածելով կարելի է որոշ օգուտ քաղել, դիւրահաւանութեան, չափազանցութեան հետեւանքով ալ բազմազան չարիքներ կը ծնին: Կը բաւէ միայն նայիլ մեր շուրջը, ամէնէն բարձրէն ամէնէն խոնարհ ընտանիքներուն մէջ, քնքոյշ մանկամարդուհիներու թաւամած դէմքերը, հասկնալու համար գոնէ հանրածանօթ փոստային աւաւելութիւնները...

Բժշկական ականաւոր հեղինակութիւններ մեծամասնաբար հակառակ են այդպիսի դեղերու գործածութեան: Տոքթ. Կասնիէ կը յանձնարարէ զուգաւորութենէն անմիջապէս յետոյ վերէն վար լուալ, ցոլուել ծննդական գործարանները, ինչպէս կ'ընէին Հռոմայեցիները, եթէ կարելի չէ ամբողջովին լուալ մարմինը բաղնիք երթալու պէս, — ինչպէս կը պատուիրէ Մահմէտական օրէնքը: Հին դարերու ժողովուրդներն ալ այդպէս կ'ընէին: Զուր, սպունգ եւ քիչ մը օձառ, — անաբոյր պէտք եղածը: Զուրը պէտք է ըլլայ ջինջ, մաքուր, աւելի աղբիւրի կամ գետակի քան թէ հորի, որովհետեւ այս վերջինը աղի ըլլալով, կրնայ գրգռել մորթը և խորտուբորտ դարձնել զայն: Զուրը պէտք է ըլլայ նաեւ աւելի կամ նուազ մեղմ, համաձայն եղանակին և իւրաքանչիւրի զգայնութեան կամ սովորութեան: Սպունգը պիտի ըլլայ մաքուր և բարակ, իսկ օձառը՝ մաքուր,

ճերմակ, չոր և լաւ շինուած, անդոյն և անրոյր: Այս մասին ալ կարծիքի տարբերութիւններ չատ կան. բայց ամէն պարագայի մէջ, պարզ ջուրէն տարբեր բան գործածելու համար, պէտք է խորհուրդ հարցնել բժիշկներուն: Տոքդ. Տաղաւարեան կը յանձնարարէ զուգաւորութեան ատեն, առաջ թէ ետք, գործածել կղիստիկ և վագելիկ:

Նստալողանքը լաւագոյն միջոցն է սահմանուած լուացումները կատարելու համար: Անշուշտ բոլորդ ալ տեսած էք յախճապակիէ այն տաշտիկը քիչ մը խոր, հաւկթածեւ, մէջտեղը՝ նեղ, իսկ ծայրերը կլոր, որ կը պարփակուի պզտիկ սեղանի մը կամ նստարանի մը մէջ: Ասոր վրայ կը նստին ինչպէս ձիու մը վրայ, — արդէն ասկէ ծագում առած է իր անունն ալ (Bidel-պզտիկ կրիվար). կը շինուի փայտէ, պրօնզէ կամ արծաթէ, եւ մասնաւորապէս յատկացուած է կիներու գործածութեան: Հռոմայեցի կիներուն աշխտն է այս, որուն գործածութիւնը գրեթէ անհրաժեշտ պայման մըն էր խառնակութեան և ցոխութեան օրերուն:

Այս կերպ լուացումները, յողանքները, չփումները, ամօքիչ դեղերու գործածութիւնը անհրաժեշտ են մանաւանդ երբ սպիտակահոտութիւններ կամ ուրիշ հասումներ տեղի կ'ունենան. այլապէս սողամարդուն առողջութիւնը կը վտանգուի:

Եթէ վերը նշանակուած դիւրութիւնները չկան, կարելի է գործածել պարզ կոնք մը, տաշտ մը կամ ո՛ր եւ է աման մը: Այս ինսամքները պէտք է այնքան աւելի մանրակրկիտ և յարատեւ ըլլան որքան մարդ տարիքը կ'առնէ. որովհետեւ, առողջապահական պատուէրին համաձայն, երիտասարդները պէտք է մաքուր ըլլան հաճելի ըլլալու համար, իսկ ծերերը՝ գանկլի չզառնալու համար:

Է. — ՍԵՌԱԿԱՆ ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ (Յաւելուածական մանրամասնութիւններ)

Սեռական ցանկութեան մասին անհրաժեշտ կը նկատենք ուրիշ շարք մը մանրամասնութիւններ ալ կցել այս գլուխին, որ սեռական կեանքի ամէնէն գլխաւոր մասերէն մէկն է:

Եթէ ակնարկ մը նետենք բնութեան վրայ, ամէն կողմ պիտի տեսնենք որ սեռերը միեւնոյն ցանկութիւնը և միեւնոյն հրապուրանքը ունին իրարու հանդէպ: Ստորին տեսակի միաբջիջ բոյսերուն մէջ, մատղաշ ծիւրը կ'ապրին ձերուկ կոճղին փաստով, ծնունդ տալու համար նոր ոստերու, իսկ արու բջիջները կամ բեղնաւորիչ փոշին կ'արգասաւորեն իգական բջիջները, ամէն կողմ ցրուելով սերմերը, որոնք ընդունակ են աճելու և սասակը արտադրելու: Բացառեցինք արդէն թէ միեւնոյն երեւոյթը տեղի կ'ունենայ կենդանական աշխարհին մէջ, մինչեւ բարձրագոյն աստիճանը, այսինքն մինչեւ մարդը: Աճելու եւ վերարտադրուելու ցանկութիւնը, որ սկզբնապէս միայն արու բջիջին յատուկ է, աստիճանաբար կը թափանցէ ջղային դրութեան մէջ, այսինքն ամբողջ

հոգեկան կեանքին մէջ: Բուռն ցանկութիւն մը, հզօր մղում մը կը վարակէ արքունքի հասած անհատին ջլոյցին դրութիւնը և դէպի միւս սեռը կը քաշէ զայն: Եսին պահպանման հոգածութիւնն ու հաճոյքը, որոնք մինչեւ այն ատեն իր էութիւնն համակող միակ տենդերն էին, տեղի կու տան այս նոր մղումին առջեւ: Ծննդագործելու փափաքը կը տիրապետէ միւս բոլորին: Միայն մէկ հաճոյք, մէկ ցանկութիւն, մէկ կիրք կը համակէ էակը և զայն կը մղէ հասնելու միւս սեռի անհատին, զայն գրկելու և անոր հետ կազմելու մէկ էութիւն, սերտ շփումով և թափանցումով: Կարծես ջլոյցին դրութիւնը կամ ամբողջ էակը վայրկենապէս ինքզինքը նորէն վերածուած կը զգայ ծննդագործ բջիջի, — այնքան հզօր են իր մէջ՝ միւս սեռի անհատին հետ ձուլուելու ցանկութիւնն ու հեշտանքը:

Բնութեան մէջ ամէն տեղ միեւնոյն տարփական ձգտումը կայ սեռերու միջեւ փոխադարձարար: Թռչունը որ կը դայլայլէ, տուփանքի հասած ստնաւորը, բզզացող միջատը, բոլորը իրենց էզին ետեւէն կ'իյնան աննկուն յամառութեամբ, վտանգելով իրենց կեանքը, մերթ խորամանկութեան դիմելով, մեր ճարտարութեան, մերթ բռնի ոյժի, — միայն թէ կարենան իրենց նպատակին հասնիլ: Էզին խանդն ալ շատ պակաս չէ. բայց ան սովորաբար նագեր, պըրանքներ կ'ընէ, դիմադրել կը կեղծէ, կը խուսափի և կեղծաւորաբար գարշանք կը ցուցնէ: Որքան դիւրաշարժ, առոյգ և ճարտար ըլլայ արուն, այնքան էզը

տրամադիր է այդ երեւութական դիմադրութեան և նազանքին: Եթէ դիտենք թիթեռնիկներու և թռչուններու սիրասարժի իսյտանքը, պիտի տեսնենք թէ ինչքան սաժանքի և ճիգերու կ'ենթարկուի արուն, իր նպատակին հասնելու համար: Իսկ հակառակը, եթէ արուն ծանրաշարժ է և ձախաւեր, յաճախ էգն է որ ընդառաջ կուգայ կամ գոնէ չի դիմադրեր: Այսպէս է պարագան կարգ մը մրջիլներու մէջ, որոնց արուն թեւ չունի, մինչ էզը թեւաւոր է: Եւ այս բոլորին վերջնական ելքն է միշտ նոյն սերտ եւ հեշտարի միութիւնը՝ զուգաւորութեամբ:

Փեթակի մը մէջ հարիւրաւոր արու մեղուներ կ'աճին, կը զարգանան ու կը զօրանան: Բայց անմիջապէս որ միակ թագունին թեւերը թափահարել կը սկսի իր հարսանեկան թռիչքին համար — որ նմանապէս միակն է — բոլոր այդ մեղուները իր ետեւէն կը խոյանան դէպի երկինք: Միակ երջանիկ արու մը, ամէնէն թեթեւաշարժն ու զօրաւորը, կը յաջողի հասնիլ անոր: Զուգաւորման արեհցութեան մէջ, արու մեղուն իր բոլոր ծննդական գործարանները կը ձգէ թագունի-մեղուի մարմնին մէջ և կը մեռնի: Այլեւս անօգուտ դարձած ըլլալով, միւս արունները բոլորն ալ աչնան կը կտորուին գործաւորութի մեղուններուն կողմէ:

Թիթեռնիկներու ցեղ մը կայ, որուն մէջ նոյնքան հրաշալի են սեռային յարաբերութիւնները: Այդ բազմատեսակ միջատները ամիսներով իբրեւ թրթուր կ'ապրին ծառերու վրայ, իսկ աւելի երկար ատեն, երբեմն մինչեւ երկու տարի, իբրեւ

հարմանակ կը քնանան բոժոժի մը մէջ, պատի մը կամ կեղեւի մը մէկ անկիւնը: Վերջապէս թի-
թեռնիկը՝ զարդարուն ամենանուրբ գոյներով,
դուրս կ'ելլէ իր պատեանէն և կը բանայ իր խո-
շոր ու առոյգ թեւերը: Սակայն ուրիշ բան չունի,
բայց միայն աղիքի տարրական անցք մը, որով-
հետեւ իր ապրելիք կարճ կեանքը այլեւս սնունդ
չի պահանջեր և միայն սիրոյ նուիրուած է: Էզը
հանգիստ կը մնայ և կը սպասէ: Զարդարուն գե-
ղեցկօրէն ճիւղաւորուած անհամար բողկուկներով
(պզտիկ եղջիւր), որոնք էգին հոտը կ'առնեն
բանի մը ֆիզիկէր հեռուէն, արուն խեղայեղ թռիչ
կը սկսի անտառներուն և դաշտերուն մէջ,
անմիջապէս որ իր թեւերը կ'ամրանան: Իր միակ
նպատակն է էգի մը հասնիլ: Այստեղ ալ անհամար
մրցակիցներ կ'ելլեն իրարու դէմ: Առաջին հաս-
նողը էգին վրայ կը խոյանայ ու քանի մը ժամ-
ուան հեշտալիք ցնցումներ և թեւերու փաթթու-
ք կը նուիրագործեն իր երանութիւնը: Արդէն ու-
ժասպառ, բայց խաղաղօրէն համակերպած բնու-
թեան օրէնքներուն, անկենդան կ'իյնայ գրեթէ
անմիջապէս վերջը, աստիճանաբար նուաղելով:
Իր մրցակիցներն ալ կը մեռնին, ուժաթափ՝ ի-
րենց երկար թռիչէն և սնունդի չգոյութեան,
բայց առանց համեղութեան նպատակին: Զու-
գաւորութենէն յետոյ, էգը կանանչ բոյսեր կը
փնտռէ, որոնք թրթուրի երկար կեանք մը պիտի
ապահովեն իր սերունդին՝ իր կարճատեւ արու-
փանքի պտուղին: Էզը այդ բոյսերուն մէջ կը
դնէ իր բեղնաւորուած հաւկիթները, որոնք խիստ

առատ են, և յետոյ շատ չանցած կը մեռնի իր կար-
գին, ինչպէս թառամած և դատարկուած ծաղիկ
մը, որ կատարած է իր գոյութեան նպատակը և
կ'իյնայ, իր տեղը ձգելով պտուղը:

Տօքդ. Փօրէլ, ինչպէս և ուրիշ բնախօսներ,
կը հաստատեն թէ մրջիւններուն մէջ ալ բոլոր
արունները կը մեռնին, օդին մէջ հարսանեկան
թռիչ մը կատարելէ անմիջապէս ետք: Այդ թռիչի
միջոցին ընդհանրապէս զուգաւորութիւնները տեղի
կ'ունենան բազմակնութեամբ. արու մը հազիւ
իր սերմը արտաքսած, ուրիշ մը կը հասնի ետե-
ւէն: Միջատներու այս տեսակին մէջ, էզը ունի
սերմնային ընդունարան մը որ յաճախ կը պա-
րունակէ շատ մը արուններու սերմը և որուն
չնորհիւ կրնայ իր հաւկիթները ածելէ անմիջապէս
յետոյ բեղնաւորել իրարու ետեւէ, քանի մը տարի
յաջորդաբար, և այսպէս գործել իրբեւ մայր
մրջնաբոյսի մը, մինչեւ 10—12 տարի, թերեւս
աւելի ալ, ինչպէս հաստատած են դիտական
հետազոտութիւններ:

Կենդանական ստորին տեսակներուն մէջ, սէրը
կը կայանայ միայն բնագոյական խոյանքին կամ սե-
ռային ախորժակին մէջ: Անմիջապէս որ բնախօ-
սական պաշտօնը կը կատարուի, սէրն ալ կը
դադրի: Միայն բարձրագոյն տեսակներուն մէջ է
որ աւելի կամ նուազ տեսական համակրութիւն
մը ծայր կուտայ երկու սեռերուն միջեւ: Ճիշդ է
որ, այստեղ ալ, նոյն իսկ մարդուն մէջ, սեռա-
յին կիրթը, տուփանքը վայրկեան մը կը գինովցնէ
բոլոր զգայարանքները և ամբողջ հոգին: Իր

տափանքի մոլեգնութեան մէջ, մարդն ալ կարծես կը նուաճուի մագական ազդեցութեամբ մը և վայրկեան մը աշխարհը կը տեսնէ այդ իսկ ազդեցութեան ներշնչած երեւոյթով: Սիրած առարկան իր աչքին կ'երեւայ երկնային, չքեղ գոյներով, որոնք կը ծածկեն իրականութեան բոլոր թերութիւնները և թշուառութիւնները: Իր սիրատարի հեշտանքի իւրաքանչիւր երկվարկեանը իրեն կը ներշնչէ զգացումներ որոնք կարծես յաւիտեան պիտի տեսնեն: Ան երգում կ'ընէ անկարելի բաներու համար և կը հաւատայ անմահ երջանկութեան մը, անհնարին յնորքներու, կնոջ կողմէ ալ փոխադարձ պատրանք մը՝ այլեւս դրախտային երեւոյթ կուտայ կեանքին: Ամէնէն ռամիկ բաները և նոյն իսկ կարգ մը բոսներ որոնք սովորաբար զգուանք կը պատճառեն, այն ատեն առարկայ կը դառնան ամենաբուռն ցանկութիւններու... Բայց, անմիջապէս որ տափանքը վերջանայ և ախորժակը գոհանայ, երեւան կուգայ յագեցման զգացումը, յափրացում: Վարագոյր մըն է որ կ'իջնէ տեսարանին վրայ, և գոնէ նոյն վայրկեանին համար, կրկին կ'երեւի մերկ իրականութիւնը:

Այս բոլոր բացատրութիւնները՝ կը ներկայացնեն երկու սեւերու տափանքին ու ախորժակին ընդհանուր բնական երեւոյթները: Մենք երկար չպիտի խօսինք անոր այլատեսութիւններուն վրայ, ինչպէս են օնանականութիւն, բողոթիւն և ըն:

Մարդկային տեսակին մէջ, մանչը առաջին անգամ սեռային տարբերութիւններու, սեռական ցանկութեան խելահաս կը դառնայ առնանդամի ակամայ կանգնումներով, իր տեսածներով, խորհրդածութեամբ և դատողութեամբ:

Անասուններու, նոյն իսկ միջատներու՝ օրինակ ճանճերու զուգաւորութիւնը հետաքրքրութիւն մը կը չարժէ անոնց մէջ որոնց սեռային ընդունակութիւնները կանխահաս են և ուժեղ. անոնք շուտով կը հասկնան պատճառը և կը մղուին նմանութիւնները հանել իրենց իսկ անձնական զգայութիւններով:

Բայց մանաւանդ իգական սեռին երեւոյթը շատ աւելի հզօր ազդեցութիւն մը կը գործէ մտքով և մարմնով առողջ մարդուն վրայ: Սակայն իգական սեռը տեսած ատեն ինչ որ մանաւանդ կը գրգռէ մանչը, բոլորովին բացառիկ բան մըն է: Այսպէս, ան կ'ազդուի տեսնելով մարմնի զանազան մասերը, որոնք սովորաբար գոց կը պահուին, զեղեցիկ հագուստներ և զարդարանքներ, մասնաւոր բոյրեր, այնպիսի կլիներ զորս չէ վարժուած տեսնելու եայն: Այս է պատճառը որ քոյրեր և եղբայրներ սեռային փոխադարձ ցանկութիւն չեն գրգռեր, — չխօսելով բացառիկ կամ հրէշային երեւոյթներու վրայ:

Այն վայրենի ժողովուրդներուն մէջ ուր մարդիկ մերկ կ'ապրին, մանչերու սեռային ցանկութիւնը չի գրգռուիր կամ հազիւ կը գրգռուի մերկ աղջիկներու տեսքէն. իսկ ընդհակառակն սաստկապէս կը գրգռուի այն մանկամարդուհիներէն

որոնք հագուած են կամ զարդարուած մասնաւոր եղանակով մը: Անշուշտ ասոնք յարաբերական տարբերութիւններ են: Էրիկմարդուն սեռային ցանկութիւնը շատ բուռն է և գոհացում չի ստանար. կինը կը գրգռէ զայն ընդհանուր եղանակով, եթէ պառաւ մը կամ գանկելիք մը չէ:

Սեռային ցանկութեան երկրորդ մէկ կարեւոր հանգամանքն է այն հրապոյրը զոր կնոջ առողջութեան, գեղեցկութեան և ոյժի երեւոյթները կը ներգործեն տղամարդուն վրայ: Քանզի և առողջ ձեւեր, բնական բոյրեր, կանոնաւոր ձայն մը, տեսքով և հպումով առողջ մորթ մը հրապոյրներ են որ կը յանկուցանեն և կը գրգռեն տղամարդը, իսկ ինչ որ վատառողջ է, թաւամած, աժգոյն, հիւանդկախ, ախտաւոր հոտ, — գարշանքի զգացում մը յառաջ կը բերէ և կը խափանէ կամ կը նուազեցնէ սեռային ցանկութիւնը:

Սեռային տափանքի առաջին զգայութիւնները բոլորովին անորոշ են. անզիտակից և մթին բան մըն է որ մանչը կը մղէ դէպի իգական սեռը և զայն ցանկալի կը դարձնէ իրեն համար: Այսպէս, խելզ մը կրնայ զարնուիլ յորդ ստինքներով, հրապուրիչ աչքերով սիրուն կնոջ մը պատկերին, և ունենալ կանգնումներ ու աննկարագրելի փափաք մը՝ զանոնք տեսնելով կամ յիշելով: Այս փափաքը մասնաւորապէս սեռական գործողութեան վրայ կը կեդրոնանայ միայն չափահասին քով, որ արդէն փորձառու է այսպիսի խնդիրներու մէջ:

Երկար ատեն, այս յաճախողէպ ցանկութիւն-

ները և մղումները գոհացում չեն ստանար: Նայելով անհատներուն, երեւակայութիւնը ամէնէն այլազան պատկերները կը միացնէ սեռային ցանկութեան նման արտայայտութիւններու, և տեղի կ'ունենան կանգնումներ՝ քունի մէջ: Մանչը շուտով կը դիտէ որ իր սեռական ցանկութիւններուն զգայութիւնը կը կեդրոնանայ իր ծննդական գործարաններուն մէջ, մասնաւորապէս ձեփուկին վրայ, բայց նաև անոր շուրջը: Իսկ կնոջ սեռական գործարաններուն գիացում կամ միայն չփոթ կերպով գուշակուած պատկերը, որ հազիւ կ'երեսնար իր ցանկութիւններու առաջին արտայայտութեանց ատեն, կը սկսի հեղհեղաբար աւելի գրգռել զինքը:

Մարդուն մէջ, բնական ըլլայ թէ վայրենի, ինչպէս անասուններուն մէջ, մանչը այն ատեն կը սկսի զուգաւորութեան փորձեր ընել:

Քաղաքակիրթ երկիրներու մէջ, ամուսնութիւնները այնքան դժուարացած են որ, տղամարդը իր տափանքը գոհացնելու համար հազարումէկ միջոցներ կը մտածէ, — սկսելով բողանոցներէն մինչև անորակելի, անբնական սովորութիւններ, — երբ սեռային ցանկութիւնը աւելի կը սաստկանայ:

Սեռային գրգռումին պատկերները, միացած՝ կանգնումներուն, ժուժկալին քունին մէջ կը ներկայանան վառ գոյներով և յառաջ կը բերեն սերմի հոսում, որ կը կոչուի երազախորձութիւն: Ընդհանրապէս տափական երազներ են ասոնք, — մերկ կիներ որ քնացողին կը փաթթուին: Այս

վերջինը այնպէս կը կարծէ թէ անոնց հետ կը զուգաւորուի. և որովհետեւ երազը սովորաբար իրականին պատրանքը կուտայ, թէ՛ տեսակով և թէ՛ զօրութեամբ, զարմանալի չէ որ, իբրև հետեւանք, տեղի կ'ունենան գրգռում և սերմնային հոսում:



Սեռային ցանկութեան և կարողութեան չափը խիստ կը տարբերին մարդուն մէջ, ինչպէս ակնարկեցինք նախընթաց գլուխով: Սեռական գրգռումն ու ցանկութիւնը երբեմն այն աստիճանի կը հասնին որ, կը կրկնուին սերմի ցայտումէն քանի մը վայրկեան ետքն իսկ: Հազուադէպ չէ տեսնել մարդիկ որոնք մէկ գիշերուան մէջ իրարու ետեւէ 10-15 անգամ զուգաւորութիւն կը կատարեն, բողանոցներու մէջ և ուրիշ տեղեր, թէև այդպիսի երեւոյթներ աւելի փստարանական են: Տոքթ. Ֆորէյ կը յիշէ պարագայ մը ուր այդ գործողութիւնը կատարուած էր երեսուց անգամ: Օր մը իրեն դիմած էր 65 տարեկան կին մը, որ կը գանգատէր իր ամուսնին անյագ ցանկութենէն: Այս մարդը, որ 63 տարեկան էր, ամէն առաւօտ ժամը 3ին կ'արթնցնէր կինը, աշխատանքին երթալէ առաջ, զուգաւորուելու համար: Այս ալ բաւական չնկատելով, գործողութիւնը կը կրկնէր ամէն իրիկուն և յաճախ նոյն իսկ կէս օրուան ճաշէն յետոյ: Շատ ամուսնուհիներ ալ իրենք կը խոստովանին թէ ծայրայեղօրէն գործած են, իրենց կնոջ հետ ամիսը մէկ անգամ կամ աւելի կենակցած ըլլալուն հա-

մար: Լուտեր, որ գործնական մարդ մըն էր, ամուսնական կեանքի համար միջին կանոն սահմանեց շաբաթը երկու կամ երեք անգամ, անուշտ հասուն տարիքին: Բազմաթիւ բժիշկներ ալ նոյն յանձնարարութիւնը կ'ընեն: Մասնագէտ մը քաջառողջներուն համար կ'արտօնէ 20—30 տարեկանին՝ երկու օրը մէկ անգամ. 30—40 տարեկանին՝ շաբաթը երկու անգամ. 40—50 տարեկանին՝ շաբաթը մէկ անգամ. 50—60 տարեկանին՝ երկու շաբաթը մէկ անգամ. 60—70 տարեկանին՝ ամիսը մէկ անգամ: Անոնք որ այսպէս կամ այնպէս տկարութիւններ ունին, պարտաւոր են խորհուրդ հարցնել, եթէ չեն ուզեր իրենց կեանքին հետ խաղալ:



Տղամարդիկ իրենց սեռական կեանքին մէջ ունին ինքնայատուկ ձգտում մըն ալ, որ վտանգաւոր է մարդկային ընկերութեան համար: Չանձրանալով մէկ կինէն, կամ միշտ մղուած նորին հրապոյրէն, անոնք մեծամասնաբար ուրիշներ կը փնտան: Այսպիսի ցանկութիւնները ընդհանրապէս կարելի է զսպել բարձրու ազնուացումով, ճշմարիտ և ազնիւ սէրով մը, ինչպէս պարտականութեան և հաւատարմութեան զգացումներով: Ընդհանուր առումով, կինը աւելի տրամադիր է մէկ ամուսինով գոհանալու քան այլը:



Առհասարակ, իգական յորդ, քաջառոյգ, երիտասարդ և առողջ կերպարանքներ, ու մանաւանդ մարմնի կարգ մը մասերուն— յատկապէս ծիծերուն և սեռական գարծարաններուն— մերկութիւններն են որ ամէնէն աւելի կը գրգռեն տղամարդուն տուփական ախորժակը: Բուրումներն ալ նոյն դերը կը կատարեն, ինչպէս և ձայնը, դեմազծութիւնը, հագուստի ձեւերը և ուրիշ բազմազան մանրամասնութիւններ:

Կան տղամարդիկ որ աւելի նիհար կամ աժգոյն կիներէն կը գրգռուին: Կարգ մը յատկութիւններ կը հրապուրեն մէկը և անտարբեր կը թողուն ուրիշ մը, — ինչպէս մազերը, անոնց գոյնը, կարգ մը հոտեր, դէմքի կարգ մը ձեւեր, հագուելու կերպ մը, ծիծերուն ձեւը ևն.: Սեռական կեանքին մէջ ալ, հակադրութիւնները կը ձգտին իրար քաշելու փոխադարձաբար: Նիհարները յաճախ կը զարնուին գէրերու, կարճաքիթերը՝ երկայնաքիթերուն, և հակադարձաբար: Կը տեսնուին յաճախ երիտասարդներ որոնք կը գրգռուին տարէց կիներու երեւոյթէն, իսկ ձերունիներ կը սիրահարին մանկամարդուհիներու կամ նոյն իսկ աղջնակներու: Այս բոլոր այլազանութիւնները սեռային ախտաբանութեան ամէնէն կարեւոր մեկնակէտերն են:

Աւելորդ է ըսել թէ մտքի և սրտի յատկութիւնները հզօրապէս կ'ազդեն սեռային ցանկութեան վրայ: Կնոջ մը կռուազան բնաւորութիւնը, պաղութիւնը և խորշումը կրնան պաղեցնել տղամարդու մը ցանկութիւնը, իսկ ընդհակառակն

դարձեալ կնոջ կողմէ բուռն տուփանք մը, անոր սէրը, գգուանքը կ'աւելցնեն և կը պահեն ախորժակը: Այստեղ խօսքը միայն զուտ անասնական սեռային բնազդի մասին է: Պարզ է թէ կնոջ ցանկասիրութիւնը առհասարակ հզօրապէս կը գրգռէ տղամարդուն տուփանքը և մեծապէս կ'աւելցնէ անոր վայելքը՝ զուգաւորութեան պահուն: Կան սակայն բացառութիւններ: Իրապէս կնոջ կողմէ ցոյց տրուած պաղութիւնն ու խորշումը տուփանքի դրդիչներ են շատ այրերու համար, որոնք համէն առներ վաւաչոտ կիներէն: Բիւրազան երանգներ և աստիճանաւորումներ կան այս մասին:

Զուգաւորութեան մէջ գործօն դերն ունենալով, տղամարդը ի հարկէ համապատասխան զգացումներ կը փնտռէ կնոջ քով, — այսինքն անոր սէրը: Բայց, միւս կողմէ, եթէ կինը չունի բնական ամօթխածութիւն մը, վերապահում, փափուկ զգացումներ, և անպատկառ ձեւերով կը գրգռէ սեռական բնազդը, գարշանքի տպաւորութիւն մը պիտի թողու կատարեալ մարդուն վրայ: Բարեբազդաբար, կատարեալ, ախտաւոր մոլութիւններէ զերծ կինը հրաշալի բնազդ մը ունի այդ երանգներէն և գիտէ իր զգացումներն յայտնել այնպիսի նրբութեամբ, որ չվիրաւորէ տղամարդը:

Սեռային բնազդը այլանդակելու և խաթարելու մեծապէս նպաստած են արդի քաղաքակրթութեան կարգ մը պայմանները և բարքերը: Այդ կերպով մարդիկ մտածեր են բնական նկա-

տելու այնպիսի յարաբերութիւններ, որոնք բացարձակապէս հակարեական են:

Այսպէս, կ'ըսեն թէ բողոքածութիւնը ընականոն զուգաւորում մը կը հայթայթէ տղամարդուն համար: Բոյր գիտնականները կը ծիծաղին այս միամտութեան վրայ. կարելի է լրջօրէն այդպիսի բացատրութիւն գործածել հանրահոյժ մը վնասողի զուգաւորութեան համար: Բողք բացարձակապէս անզգայ է գործողութեան միջոցին և կը ջանայ միայն իր յաճախողները զրգռել արհեստական միջոցներով, կեղծիքներով, պարզապէս դրամ շահելու համար, իսկ սեռային հիւանդութիւններն ալ կը ցանէ իբրև յուելուածական պարգև: Մոռնալով սեռային ցանկութեան ընական նպատակը, մարդիկ անոր տուեր են մասնաւոր ձեւեր, զայն վերածելու համար արհեստական վայելքի մը, հնարեր են ամէն կարելի միջոց՝ զայն աւելցնելու և անոր այլազանութիւն տալու համար:

Հին դարերէն մինչև այսօր, շատ քիչ բան փոխուած է այս տեսակէտով: Բայց արդի մարդիկը շատ աւելի այլազան և նուրբ միջոցներ ունին, քան բարբարոս ժողովուրդները և իրենց ուղղակի նախահայրերը, իրենց վատաւօղջ ախորժակները զօհացնելու համար: Լուսանկարչութիւնը և պատկերներու հաւատարիմ ընդօրինակման բոլոր կատարելագոյն միջոցները, փոխադրութեան յարածուն դիւրութիւնները, որոնք հազար պատահութիւններ կ'ընծայեն սեռային գաղտնի յարաբերութեանց համար, ընակարաններու, անկողին-

ներու գերանուրը պերճանքը և չափազանց հանգըստաւէտութիւնը են. հօր ազգակներ են տըրփանքի: Մէկ խօսքով, ինչպէս դիտել կուտայ Տօքո. Ֆօրէլ, մարդու սեռական ցանկութեան արուեստակեալ մշակումը ծնունդ է տուած ցոփութեան բարձրագոյն վարժարանի մը:

Այսպէս ուրեմն, սեռական գրգռման արհեստական, մշտնջենական և այլազան կրկնումները կ'աւելցնեն ցանկասիրութիւնը: Բնախօսական օրէնքի մը համաձայն, ամէն տեսակ ջղային գործողութիւն կ'աւելնայ և կ'ուժեղանայ վարժութեամբ: Մարդ ուտելով ուտելով շատակեր կը դառնայ. իսկ համազատներու վարժուելով՝ փափկաճաշակ պորտաբոյժ մը: Իր մկանները մարզելով լաւ քաղով մը կ'ըլլայ և սիրահար՝ արշաւներու: Գեղեցիկ նագուստներ հագնելու և պաղ ջուրով լուացուելու սովորութիւնը պէտք մը կը դարձնէ զանոնք: Մշտապէս բանով մը զբաղելով, մարդ համ կ'առնէ անկէ և յաճախ անոր վարպետը կը դառնայ: Միշտ հիւանդութեան մը վրայ մտածելով, վերջը-վերջը երեւակայական հիւանդ մը կ'ըլլայ: Խիստ յաճախ կրկնելով մեղեդի մը, մարդ կը վարժուի զայն սուրելու կամ քթին տակէն երգելու անգիտակցաբար:

Հակազարձարար, երբ մարմնի այս կամ այն գործունէութիւնը տեղի չունենար կամ կարգ մը զգայութիւններ չեն արժարժուիր, այս վերջինները կը տկարանան և մարդիկ աստիճանաբար կը կորսնցնեն անոնց ճաշակը կամ ըմբռնումը: Մարդ ծոյլ կը դառնայ այն մասերուն մէջ ուր անգործ

է. որովհետեւ ուղեղային դիմադրութիւնները անոնց մէջ կը կուտակուին և ծուլութիւնը միշտ կը դժուարացնէ համապատասխան գործունէութեան վերանորոգումը:

Այս օրէնքը տիրապետող է նաեւ սեռային ցանկութեան երեւոյթներուն մէջ: Յանկասիրութիւնը կը նուազի ժուժկայութեան հետեւանքով և կ'աւելնայ կրկնակի գրգռումներու և գոհացումներու չնորհիւ: Ախորժակը ուտելով կը բացուի... Ծոյերու չափազանց քնասիրութիւնը նմանօրինակ երեւոյթ մըն է: Որքան որ բաւարար քուն մը բացարձակ պայման է ուղեղային աւողջ և արտադրիչ կեանքի մը, նոյնքան ճշմարիտ է թէ մարդ կրնայ արհեստականօրէն զարգացնել քունի չափազանցուած պէտք մը:

Յանկասիրութիւնը հզօրապէս գրգռելու միջոցներ են, ուրիշ բազմաթիւ պատճառներու կարգին, պոռնիկագրական վեպերը, որոնց մէջ վիպասանը կը բորբոքէ սուփանքը, ամէն տեսակ հնարամտութիւններով. այլոյ՞, որ Նյատելով միտքը, կամքը, ինչպէս նաեւ բարոյական արգելիչ ըմբռնումներն ու զգացումները, կը գրգռէ ցանկասիրութիւնը և կոպտօրէն յառաջ նետուող մը կը դարձնէ մարդը, — գիւրին որս մը կաւատութեան և բողբոթեան, թէեւ առաջին պահէն իսկ կը տկարացնէ բուն սեռային կարողութիւնը:

Բայց ամէնէն մեծ դերը կը կատարէ բոզոթեան արդի զինարանը, ինչպէս կը կոչեն: Այնտեղ գլխաւոր դերակատարներն են կաւասները, որոնք կը շահագործեն մէկ կողմէ սղամարդուն

ցանկասիրութիւնը և միւս կողմէ կնոջ տկարութիւնն ու կաշառասիրութիւնը: Իրենց չահու ամէնէն պարարտ միջոցները կը կազմեն արական սուփանքի արհեստական գրգռումը՝ բոլոր կարելի միջոցներով. անոնց «արուեստ»ն է բոլոր ցանկալի նրբութեամբ և հրապոյրներով ցուցադրել իրենց ապրանքը, այսինքն բողբոքը, մանաւանդ երբ գործ ունին հարուստ յաճախորդներու հետ: Այս գետնին վրայ է որ կը մշակուին ամէնէն նողկալի վարպետութիւնները, նոյն իսկ զուտ ախտաբանական կիրքեր գրգռելու համար:

Ուրիշ պատճառներ ալ կու գան կ'աւելնան շահամոլութեան, կամ անոր հետեւանքներն են: Պոռնիկական պատկերներով, կամ սրիկայի մը կողմէ գիշութեան մղուած աղեկ մը իր կարգին հրապուրող մը պիտի դառնայ իր ընկերներուն: Շատ մը վաւառուտ և անխիղճ կիներ՝ պատանիներ և նոյն իսկ ամբողջ դասարաններով աշակերտներ հրապուրած են իրենց հետ պառկելու, այսպէս կանխահաս և վատաւողջ ցանկութիւններ յարուցանելով այդ անմեղ մանուկներուն մէջ:

Յանկասիրութեան չափազանցութիւններ ոչ միայն կը քակեն ընտանեկան և ամուսնական կեանքի կապերը, այլ և իրենց հետ կը բերեն սեռային զգուելի հիւանդութիւններ, յառաջ կը բերեն անկարողութիւն և ուրիշ խանգարումներ: Արուեստական գրգռումներով բորբոքած տըրփանքը հետզհետէ աւելի կը դժուարացնէ ամուսնութեան ճաշակը, հաւատարմութիւնը, միայն մէկ կնոջ հանդէպ ճշմարիտ սէր:

Հազուադէպ է որ իրենց կեանքը առտու իրիկուն հանրատուներու մէջ անցնող երիտասարդներ աւելի վերջը կարենան լաւ և հաւատարիմ ամուսիններ ըլլալ: Այդպիսի ամուսնութիւններու մեծ մասին երջանկութիւնն ալ յարաբերական է: Կատուն չի կրնար հրաժարիլ մուկերուն վրայ ցատկելու բնազդէն: Երկար ատեն բողբու հետ ապրած տղամարդուն սեռային զգացման վատթարացումը երբեք ամբողջովին չանհետանար և սովորաբար խոր և անջնջելի հետքեր կը թողու մարդկային ուղեղին մէջ: Ճիշտ է. ժառանգարար լաւ տրամադրութիւններ ունեցող երիտասարդ մը, որ միայն ատեն մը տեղի տուած է կարգ մը հրապուրիչ ազդեցութիւններու, կրնայ փրկուիլ ճշմարիտ և խորունկ սիրահարութեամբ մը, կրք ժամանակին տեղի ունենայ այդ: Բայց նոյն իսկ այդպիսիներուն քով չափազանցութիւնները հետքեր կը ձգեն, որոնք դիւրաւ կրնան մուրեցնել զինքը աւելի ետքը, յափրացնելով միակ և միեւնոյն կնոջ հետ կենակցելու միօրինակութիւնէն: Միւս կողմէ նոյն ինքն սեռային յարաբերութիւնները ամուսնութեան մէջ անդամ, երբեմն կը մղեն երիտասարդը՝ ամուսնական կեանքէն դուրս ալ զուգաւորութիւն փնտռելու, մինչ բոլորովին ժուժկալ մնացած էր ամուսնութենէն առաջ:

Սեռային ցանկութեան այս և նման խաղերը, և մանաւանդ մէկէ աւելի կիներ վայելելու առնական բնազդը պէտք չէ չփոթել նոյն ցանկասիրութեան սիստեմադիկ և անբնական մշակման հետ: Կնոջ մը մարմնական և հոգեկան հրապոյր-

ները կրնան բոլորովին ուրիշ կողմ դարձնել տղամարդուն սեռային ցանկութիւնները և բուռն թափով ուղղել հրապուրող կնոջ վրայ: Տափանքը և սիրահարութիւնը այստեղ միանալով կը կազմեն անքակտելի խառնուրդ մը, — անսպառ նիւթ վէպերու և սիրային շատ մը ճշմարիտ մեծադորդ պատմութիւններու:

Ժառանգարար փոխանցուած ախտաբանական տրամադրութիւնները մեծ դեր կը խաղան այսպիսի պարագաներու մէջ: Այսպէս, բուռն և յանկարծական սիրահարութեամբ կնքուած ամուսնութիւնները (խօսքը չենք ըներ երկտր-բարակ մտածելէ և իրար խորապէս ճանչնալէ յետոյ կնքուած սիրային ամուսնութիւններուն) աւելի տեսական չեն քան այն ամուսնութիւնները որ կը յարմարգուին զանազան նկատումներով, — շահ, դիրք ևն. որովհետեւ, տարփատենչ, ցանկասէր խասնուածքները, սրտնք սովորաբար ախտաբանական երեւոյթներ են, կը մղուին մէկ ծայրայեղութիւնէն միւսին: Այդպիսի պարագաներու մէջ սեռային ցանկութեան դարձած ազդեցութիւնը սոսկալի է. կրնայ մինչեւ անձնասպանութեան և մարդասպանութեան մղել: Այն մարդոց մէջ որոնք ուժեղ և անկախ բանականութիւն չունին, կարծիքները և ըմբռնումները յաճախ կը փոխուին: Մէկուն քով՝ սէրը ատելութեան կը վերածուի և ատելութիւնը՝ սիրոյ, արդարութեան զգացումը անարդարութեան կը փոխուի, հաւատարիմ մարդը կը դառնայ ստախօս և նենգաժէտ: Մէկ խօսքով, սեռային ցանկութիւնը մրրիկի մը

պէս շղթայազերծ կը տիրապետէ ուղեղին և բռնակալ կը դառնայ մարդու բովանդակ էութեան: Եւ ահա թէ ի՛նչու տուփանքը բաղդատեր են գինովութեան կամ մտային հիւանդութեան հետ: Նոյն իսկ ամէնէն խաղաղ պարագաներուն մէջ, այդ ցանկամոլութիւնը յաճախ պատճառ կ'ըլլայ որ ամուսինը չկարենայ կենակցիլ իր կնոջ հետ. ուրիշ խնդիր, եթէ կը յաջողի անոր մէջ երեւակայել իր տարփանքի առարկան, ենթադրելով թէ ճիշդ իր ցանկացածը, երազածն է որ կը գրկէ բազուկներուն մէջ:

Այսպէս, մարդ մը կը սիրէ իր կինը, կը յարգէ, նոյն իսկ կը պաշտէ զայն. և սակայն անոր տեսքն ու հպումը չեն յանկացուներ իր զգայարանքները, ո՛չ ցանկութիւն կը զրգռեն, ո՛չ ալ կանգնում. մինչդեռ ռամիկ զգացումներով և յաճախ սահմանափակ մտքով հրապուրիչ կին մը զգայասիրական անդամադրելի ազդեցութիւն մը կը գործէ իր վրայ, եթէ նոյն իսկ ոչ յարգանք, ո՛չ ալ ճշմարիտ սէր զգայ անոր հանդէպ: Այս պարագային, ցանկասիրութիւնը, տուփանքն է որ արմատապէս դէմ դիմաց կ'ելլէ սիրոյ հետ: Այսպիսի երեւոյթներ շատ սովորական չեն: Այն ամուսինը որու մասին խօսեցանք արդէն, կրնայ անյաղթելի ցանկասիրութեամբ մը մղուիլ զուգաւորուելու հրապուրող կնոջ հետ. բայց ո՛չ մեկ պարագայի մեջ չպիտի ուզեր իրեն կիս առնել զայն, ոչ ալ զաւակ արտադրել անոր հետ. որովհետեւ, եթէ քիչ մը խոր մտածէ, պիտի զգայ որ կ'ատէ զայն, կը վախնայ անկէ: Այստեղ, սեռային ցան-

կութիւնը կը ներշնչայցնէ անասնական վաղեմի բնազդը, որ ժառանգարար փոխանցուած է և հզօրապէս գրգռուած՝ կնոջ վաւաչոտ նայուածքներէն, առոյգ յորդ ձեւերէն, մէկ խօսքով՝ անոր զգայասիրական երեւոյթէն:

—

Զուգաւորութեան նկարագրութեան մէջ, սովորաբար շատ քիչ ուշադրութիւն նուիրուած է կնոջ ընթացքին, անոր ունեցած տրամադրութեան: Այս խնդիրը մինչեւ այսօր ալ կարօտ է շատ մը լուսաբանութիւններու: Բաղդատելով արուին հետ, էգը չափազանց նշանակելի տարբերութիւններ կը ցուցնէ, ունենալով գործօն մասնակցութիւն՝ զուգաւորութեան մէջ և հեշտանքի զօրեղ զգայութիւններ: Նշանաւոր բնախօս մը կը գրէ.

«Բնագմաթիւ կիներ զուգաւորութեան ատեն կը կրեն սեռային խլրտում մը՝ որուն կ'ընկերանան խիտ զօրեղ հեշտական զգայութիւններ: Ուրիշներ, ընդհակառակն, բոլորովին զուրկ կը թուին զգայութենէ. կան ալ որ, միայն անախորժ և տաժանելի զգայութիւն մը կ'ունենան: Շատ կիներ, սեռային ամենազօրեղ հաճոյքի այդ պահուն, մեծ քանակութեամբ հոյզ կ'արտահոսեն. բայց մեծամասնութիւնը ազատ է այդ երեւոյթէն: Նկատողութեան տունելով այս բոլոր պարագաները, կարելի է ըսել թէ՛ ճիշտ երկու կիսն որ ճիշդ ու ճիշտ իրարու նման ըրրան այս մասին:»

Բայց, նմանութիւններ շատ կան աղամար-

դու և կնոջ միջև տեղի ունեցած փոփոխութիւններուն՝ զուգաւորութեան պարագային: Գլխաւոր տարբերութիւնն այն է որ կինը սերմնային ցայտում չունի: Բայց եթէ կնոջ սերմնային փամփուշտին մէջ սերմի կուտակում չի գոյանար, երկարատեւ ժուժկալութեան մը պարագային կինն ալ իր ջղային կեդրոններուն մէջ կը զգայ վաւաչոտ ցանկութիւններու կուտակում մը, որ կը համապատասխանէ տղամարդու մարմնային: Ամուսնացած խոշոր կին մը իր բժշկին կողմէ կը մեղադրուէր իրրեւ անհաւատարիմ՝ իր ամուսնին: Կինը, առանց պատիպտտ խօսքերու, յայտարարեց թէ ինք զուգաւորութեան պէտք ունի առնուազն երկու շաբաթը անգամ մը. և թէ, երբ ամուսինը քովը չըլլայ կամ տրամադրութիւն չունենայ, առաջին հանդիպողին հետ կը համաձայնի:

Գիտութիւնը հերքած է այն կարծիքը թէ սեռային յարաբերութեան ատեն կնոջ ծննդական գործարանները գործօն դեր չունին: Տափական գրգռման միջոցին, կնոջ սիրտը աւելի շատ կը բարախէ, շրթնային շնչերակները գօրեղապէս կը տրոփեն, ծննդական գործարանները կ'ուռին և սաստկապէս կը տաքնան: Երբ ամէնէն ուժգին վաւաչը կը մօտենայ, արգանդը կը կանգնի և իր յատակը կը դպչի որովայնի յառաջակողմեան պատուարին. և որովայնին քարակ պատուարին մէջէն, փալթպեան փողերը որոշապէս կը զգացունին իրրեւ հաստ չուսններ: Խուռոճակին, մասնաւորապէս անցքին վերի մասը, կը կրէ կշռաւոր կծկում և ընդլայնում, և կատարեալ երանութիւն մը կը վերջացնէ գործողութիւնը:

Տօքդ. Ռուպօ մանրամասնօրէն նկարագրելով զուգաւորութեան ընախօսական երեւոյթները: ուրիշ բաներու կարգին կ'ըսէ.

«Գործողութեան հետեւանքով, երբ խանդը չափազանց ուժեղ է, երեւան կուգան ախտաբանական զանազան նշաններ, — ինչպէս արագացում արեան ընդհանուր շրջանի և շնչերակներու զօրաւոր զարկ. մարմինը չափազանց կը տաքնայ. մանրերակներու արիւնը կանգ կ'առնէ մկանային ընդհանուր կծկումներու հետեւանքով. և այս իսկ պատճառաւ արիւնի համախռնում տեղի կ'ունենայ ուղեղին մէջ, որու միջոցին գիտակցութիւնը և բոլոր մտային արտայայտութիւնները պահ մը կը կասին: Աչքերը կը կարմրին, սեւեռաբիբ կը դառնան և նայուածքը կը թարթափի պարապին մէջ. թարթիչները կը փակուին ջղաձգօրէն, լոյսը վանելու համար: Շատերու մէջ շնչառութիւնը հեւ ի հեւ և տաժանելի կը դառնայ, բայց ուրիշներու մէջ առժամապէս կը դադրի, կոկորդի կծկումին հետեւանքով. և օդը, ատեն մը թոքերուն մէջ փակուելէ յետոյ, վերջը-վերջը ուժգնօրէն կ'արտաքսուի, միացած անկապակից և անհասկնալի բառերու: Զղային կեդրոններու արեան համախռնութեան հետեւանքով, աննկարագրելի խառնակութիւն յառաջ կուգայ շարժումի և զգայութեան մէջ. ծայրի անդամները գալարումներ կ'ունենան, կամ զանազան ուղղութեամբ կը շարժին. և կամ կ'երկնանան ուղիղ և պնդացած. կզակները իրարու կը կցուին, այնպէս որ ակունները իրար կը կծրտեն: Շատեր տախկան

այնպիսի զառանցանքի մը կ'ենթարկուին որ, օրինակի համար, զուգաւորութեան ատեն կը բռնեն իրենց ընկերոջ մերկ՝ անպաշտպան ուսը և կը խածնեն զայն մինչեւ որ արիւնը կը հոսի: Այս զառանցական մոլեգնութիւնը սովորաբար կարճ կը տեւէ. սակայն բաւական երկար է՝ կազմական ուժերը սպառելու համար: Անոր կը յաջորդէ թմրութեան շրջան մը, որ այնքան ուժեղ է, որքան ուժեղ էր նախընթաց գրգռումը: Արուն սերմ կորսնցուցած ըլլալով, յանկարծական յոգնութիւն, ընդհանուր ակարութիւն և քնանալու արմատաղրութիւն կը զգայ, իսկ կինը, ինչքան ալ եռանդուն դեր կատարած ըլլայ գործողութեան մէջ, նուազ յոգնութիւն կը զգայ և կըրնայ, շատ չանցած, կրկնել գործողութիւնը:»

Տուփական մոլեգնութեան միջոցին պօռալու և խածնելու երեւոյթները շատ յաճախադէպ են: Տանըմարքացի մորթաբան Ռիւտօլֆ Պէրկ, բժիշկ Քոփէնհակի վեներական կին-հիւանդներու հիւանդանոցին, ամէն տարի իր տեղեկագրին մէջ կը յիշէ «տուփական խածուածքներ»ու հետեւանքները: Հարաւային Սլաւներուն մէջ, իրար խածնելու սովորութիւնը շատ ընդհանրական է: Դէմքի և ծննդական գործարաններու և անոր շրջականներուն խիստ մութ-կարմիր գունաւորումն ալ սեռային գրգռման բնախօսական մէկ հետեւանքն է. և այս գունաւորումը ա՛յլ աւելի նշանակելի կը դառնայ, չնորհիւ արական և իգական գործարաններու ուռելուն: Յետոյ, այդ միեւնոյն իրողութիւնը ծնունդ կուտայ այնպիսի զգացում-

ներու, որոնց մէջ էական, տիրապետող դեր կը կատարէ արիւնը: Այստեղ պէտք է փնտռել պատճառը, եթէ կարմիր գոյնը այնքան կարեւոր տեղ մը կը բռնէ սեռական կեանքին մէջ: Սեռային յարաբերութեան միջոցին «կարմիր տեսնելու» ձգտումը ամրապէս նիւնուած է բնախօսական երեւոյթի մը վրայ: Դարձեալ, ա՛յս է պատճառը որ բազմաթիւ ճարպիկ բողբեր կարմիր շապիկ կը հագնին:

—

Ըսինք թէ տակաւին անլոյծ կը մնայ կնոջ սեռային զգայնութեան բնութիւնը և զօրութիւնը:

Գիտնականները շատ հետաքրքիր փաստեր կը յիշեն այս մասին: Գերմանացի մը, Ալպրէխտ Էօլէնպուրկ, ուսումնասիրութեան մը մէջ կը գրէ.

«Սեռային ցանկութիւնը այնքան հզօր է, կեանքի կարգ մը երեւոյթներուն մէջ այնպիսի տարեկային ոյժ մըն է որ, ջախջախիչ կերպով կը տիրապետէ կնոջ ամբողջ կազմաւորութեան, և անոր մաքին մէջ ա՛յլ տեղ չի թողուր արտաղրութեան մասին մտածելու. ընդհակառակն, այն ատեն կինը բուն կերպով զուգաւորութեան կը ցանկայ, եթէ նոյն իսկ շատ կը վախնայ յղի մնայէ կամ յղութեան որ և է խնդիր չկայ»:

Տօքը. Պլօխ, իր մասին, կարծիք հարցուցած էր շատ մը զարգացած կիներու: Առանց բացառութեան, բոլորն ալ հերքեցին այն կարծիքը թէ կինը նուազ զգայասէր է. շատեր նոյն իսկ պըն-

դեցին թէ սեռային զգայասիրութիւնը աւելի զօրեղ է և աւելի տեւական կնոջ քան տղամարդուն մէջ: «Սեռային Բարոյականը Գերմանական Կայսրութեան Հողագործ Ժողովուրդին մէջ» անուն լուրջ ուսումնասիրութեան մէջ, հոգեւորական մը, ծանօթ Շ. Վակնէրն է որ կը գրէ:

«Մանկամարդ աղջիկները ոչ մէկ կերպով ետ չեն մնար երիտասարդներէն՝ իրենց մարմնական ցանկութիւններու ուժգնութեամբ. րնդիակառակն, չափազանց յօժար են հրապուրուելու,— այնքան յօժար որ, նոյն իսկ տարեց աղջիկներ յաճախ անձնատու կ'ըլլան անչափահաս մանչերու: Եւ աղջիկները յաջորդաբար, կարճ ընդհատումներով, անձնատու կ'ըլլան մէկէ աւելի տղամարդերու: Ու դեռ տւելին, շատ անգամ ալ աղջիկներն են որ սեռային յարաբերութեան կը հրապուրեն մանչերը. եւ այսպիսի պարագաներու մէջ, անոնք չեն սպասեր որ մանչերը միջեւ իրենց սենեակը գան. այլ իրենց կ'երթան տղուն անջատ սենեակը, կամ անոնց կը սպասեն իրենց անկողիներուն մէջ:

Նման երեւոյթներ պակաս չեն թուրքիոյ գիւղերուն մէջ, թէև ամօթխածութիւնը կ'արգիլէ շատ րան:

Երբ նկատողութեան առնենք կնոջ զգայասիրութեան ֆիզիքական հիմերը, պիտի տեսնենք որ կնոջ սեռային շրջանակը շատ աւելի շայն տարածութիւն ունի: Այս առթիւ խիստ սրամիտ նկատողութիւն մը կ'ընէ հեղինակ մը.

«Իսկապէս, կիները ուղնու ծուծով սեռ են, ծունկերէն մինչեւ վիզը: Մենք այրերս մեր գործարանը կեղրոնացուցած ենք միակ տեղ մը, դուրս ցցած, մարմնի միւս մասերէն անջատած

ենք զայն. որովհետեւ պատրաստ ենք մեկնելու: Անոնք, կիները, սեռային ընդարձակ տարածութիւն մը կամ վահան մըն են. մենք միայն սեռային նեւ մը ունինք: Ծննդագործութիւնը իրենց յատուկ տարլն է. և երբ անոր մէջ կը մտնեն, տունը կը մնան, իրենց իսկ շրջանակին մէջ. մենք այս նպատակին համար պէտք է ուրիշ տեղ երթանք: Տեւողութեան տեսակէտով ալ, ծննդագործութեան մէջ մեր մասը սահմանափակ՝ մէկ տեղ կեղրոնացած է: Մենք հազիւ տասը վայրկեան կուտանք այդ գործողութեան. իսկ կիները նոյնքան ամիսներ կը յատկացնեն: Աւելի պարզ խօսելով, կիները անդադար կը ծննդագործեն. անոնք շարունակ կը կենան վճուկի կաթնային քով, կ'եփեն ու կը խառնեն. մինչ մենք միայն ձեռք մը կ'երկնցնենք անցած ստեննիս, և աւելի բան չենք ընել, բայց միայն մէկ-երկու կտոր նետել ամանին մէջ»:

Այսպէս կամ նոյնպէս, ցանկասիրութեան տեսակէտով, ծայրայեղութիւնները աւելի շատ են կնոջ քան տղամարդուն մէջ: Կնոջ քով այդ զգացումը միշտ նոյնքան ինքնաբեր թափով մը չի զարգանար որքան տղամարդուն մէջ, և ընդհանրապէս աւելի ուշ կը զարգանայ: Կնոջ հեշտական զգայութիւնները աւելի յաճախ զուգուորութեամբ է որ կ'արթնան:

Բողմաթիւ կիներ զուրկ են ցանկասիրութեան զգացումէն: Ատոնց համար զուգուորութիւնը անախորժ, յաճախ նողկալի գործողութիւն մըն է, կամ գոնէ բան մը որ անտարբեր կը թու-

զու գիրենք: Ու ինչ որ եղական է և տեղի կուտայ այլ ընդ այլոյ խօսքերու, — այդ կարգի կիները յաճախ չափազանց պչրոտ են, կը գրգռեն տղամարդու ցանկասիրութիւնը, և սիրոյ ու գգուանքի խորունկ պէտք մը ունին:

Այս պարագան կրնանք հասկնալ, գոնէ աստիճան մը, երբ նկատենք որ բնականոն կնոջ չյագեցած ցանկութիւնները՝ ընդհանրապէս զուգաւորութեան և անոր պարգեւած հեշտանքէն աւելի, կը ձգտին այդ գործողութեան հետեւանքներուն ամբողջութեան. հետեւանքներ որոնք այնքան կարեւոր են իր բովանդակ կեանքին համար: Երբ տղամարդու մը երեւոյթը ցանկութիւններ և համակրական խանդեր կը ներշնչեն մանկամարդ աղջկան մը, այս վերջինը ամէն բանէ առաջ կ'ըլձայ զաւակներ ծնիլ միայն այդ մարդուն հետ, յաճախ անձնատուր ըլլալ անոր ինչպէս սորուկ մը, միայն անոր գգուանքները վայելի, միայն անկէ սիրուիլ, այնպէս որ ան ըլլայ միաժամանակ և՛ նեցուկը և ակը՝ իր բովանդակ կեանքին: Այստեղ խնդիրը կը վերաբերի ընդհանուր և զեռ տարտամ զգացումներու, մայր ըլլալու և ընտանիքի երանութիւնները վայելելու հզօր ըլձանքի մը, մարդուն մէջ բանաստեղծական և ասպետական իտէալը իրականացած տեսնելու բաղձանքին, զգայասիրութեան ընդհանուր պէտք մը յագեցնելու տրամադրութեան. զգայասիրութիւն մը որ բաժնուած է ամբողջ մարմնին մէջ և ո՛չ թէ ամէն բանէ առաջ կեղրոնացած

սեռային գործարաններուն կտմ զուգաւորութեան տափանքին մէջ:

Տօքդ. Պլօխ դիտել կուտայ թէ մեծամասնաբար, կնոջ ցանկասիրութեան պաղութիւնը պարզապէս երեւութական է, — կա՛մ այն է որ պայմանադրական բարոյականի քօղին, երեւութական պաղութեան նտին կը ծածկուի հրավառ ցանկասիրութեան մը. և կամ, այն տղամարդը որուն հետ յարաբերութիւն ունեցած է, չէ կրցեր պէտք եղած կերպով արթնցնել իր տափական զգայասիրութիւնը, որուն գրգռումը այնքան բարդ է և այնքան դժուար: Որովհետեւ, տղամարդուն պաշտօնն է գործադրել ինքնազսպումի իր բովանդակ կարողութիւնը, իր բոլոր ճարտարութիւնը, նուիրել ամէն ուշադրութիւն, որպէս զի կ'ինը «պատրաստ» ըլլայ: Այն տղամարդը որ միայն իր գոհացման համար կը մտածէ և չի գոհացներ իր ընկերն ալ, վայրագ էակ մըն է, կամ գոնէ չի գիտեր իր պատճառած վնասը... Շատ մը կ'իներու մէջ, դժուար է յարուցանել սեռային տրուփանքը. և այդպիսի պարագաներու տղամարդը պարտի օգնել ճարտարութեամբ և փափկութեամբ:

Եթէ տղամարդը յաջողած է ճարտարութեամբ շարժիլ, սեռային անզգայութիւնը մեծամասնաբար պիտի անհետանայ: Այս առթիւ յատկանշական ղէպք մը կը յիշեն բժշկական հեղինակութիւններ, —

Քսան տարեկան մանկամարդունի մը կար, որուն սեռային ցանկութիւնները կանուխէն ար-

թընցած էին: Արդէն իսկ ծնանականութիւն կ'ընէր հիկո քարեկանէն. յաճախ սեռային գրգռման համար մազի կեռեր կը կոխէր խոռոճալիին մէջ. մինչեւ որ օր մը անոնց մէկը ներսը մնաց և հարկ եղաւ գործողութեամբ հանել: Հակառակ ասոր, աղջիկը վերսկսաւ գիջութիւնը, գործածելով երբեմն մատը, երբեմն մոմ մը ևն.: Վերջը-վերջը ամենօրեայ սովորութիւն մը դարձաւ այս, զոր շարունակեց մինչեւ 18 տարեկանը: Յետոյ առաջին անգամ սեռային յարաբերութիւն ունեցաւ տղամարդու մը հետ, բայց բոլորովին պաղ մնաց: Նոյն պարագան կրկնուեցաւ յետագայ փորձերու մէջ, թէ՛ այդ տղամարդուն և թէ՛ ուրիշ երիտասարդներու հետ: Վերջապէս հանդիպեցաւ տղամարդու մը որուն կը համակրէր, որ յաջողեցաւ գրգռել իր սեռային ախորժակը, գործողութեան ատեն դերերը և դիրքերը փոխելով: Աւելի վերջը, բնական զիրքով զուգաւորութիւնն ալ կատարեալ ցանկասիրութիւն գրգռեց. անկէ ի վեր ծնանականութիւնը դադարեցուցած էր և զուգաւորութեան միջոցին սեռային բորբոքումը, տոխիք տեղի կ'ունենար արագօրէն, մէկ-երկու վայրկեանէն:

Իսկ եթէ սեռային պաղութիւնը տեւական կը մնայ կնոջ վրայ, այն ատեն կամ այն է որ ժառանգական ազդեցութիւններ կան. կամ սեռային զարգացումը խափանուեր է, կամ հիւսնադութիւն մը կայ (մասնաւորապէս իսղերի և ուրիշ ջղային խանգարումներ), և կամ սովորութիւն դարձած գիջութեան մը հետեւանքները կը կրէ:

Կնոջ բովանդակ մարմինը զգուսնքի պէտք ունի, քանի որ իր սեռային գրգռման շրջանակը շատ աւելի լայն է: Ըսինք արդէն թէ ծիծերուն ծայրերը կանգնողական յատկութիւն ունին և անոնց հպումը հեշտանք կը պատճառէ: Եթէ նկատողութեան առնենք այն էական կարեւորութիւնը զոր կնոջ կեանքին մէջ ունին յղութիւնը, կաթնատուութէնը և մայրական պարտականութեանց միւս բոլոր մանրամասնութիւնները, շուտով պիտի հասկնանք թէ ինչո՞ւ իր զգացումներուն և զգայութիւններուն խառնուրդը այնքան տարրեր է տղամարդու զգացումներու խառնուրդէն: Իր աւելի կարճ հասակը և տկար ոյժը՝ զուգաւորութեան մէջ ունեցած կրաւորական դերին հետ միանալով, կը բացատրեն թէ ինչո՞ւ կինը կ'ըրձայ արական առոյգ, ուժեղ նեցուկի մը: Այս է պատճառը որ սովորաբար մանկամարդ աղջիկը կը ցանկայ արի, հզօր, ձեռներէց տղամարդու մը, որ իրմէ բարձր ըլլայ, զոր հարկադրուի յարգել, և որու բազուկին մէջ ապահովութիւն զգայ: Տղամարդուն ոյժն ու ճարտարութիւնը իտէպն են վայրի կամ անմշակ աղջկան, իսկ մտաւոր և բարոյական գերազանցութիւնը՝ իտէպը կը կազմեն զարգացած մանկամարդուհին:

Ընդհանրապէս, կիները տակաւին շատ աւելի ստրուկ են իրենց բնազդներուն և սովորութիւններուն քան տղամարդիկ:

Նախնական ժողովուրդներուն մէջ, համարձակութիւնը և յանդգնութիւնը այն յատկու-

Թիւններն էին որ ամէնէն աւելի յաջողութիւն կը պարգեւէին տղամարդերուն: Ահա թէ ի՛նչու, դեռ այսօր իսկ, ամէնէն համարձակ և յանդուգն Տօն Եռանները, արկածախնդիր պարմանիները հզօրապէս կը գրգռեն կնոջ սեռային ցանկութիւնները և կը յաջողին դիւրութեամբ յափշտակել մանկամարդուհիներու մեծ մասը, հակառակ իրենց ուրիշ բազմաթիւ թերութիւններուն: Ոչինչ այնքան խորշուժ կ'ազդէ կնոջ բնազդին, որքան տղամարդուն երկչոտութիւնն ու ձախաւերութիւնը:

Մնաց որ, մեր օրերուն, խեղահաս կիները հեռո՛հեռո՛ կը խանդավառուին նաև տղամարդուն մտային դերազանցութեամբ, որ բնականաբար իր կարգին կը գրգռէ իրենց ցանկութիւնը: Ճիշդ է որ կիները անտարբեր չեն արական մարմնի գեղեցկութեան, բայց այդ յատկութիւնը այնքան չի գրգռեր իրենց ցտնկութիւնը: Զարմանալի է տեսնել անհամար կիներ որոնք սէր տուած են ծերուկ, տգեղ կամ տձեւ անհատներու: Մինչդեռ բնականոն տղամարդը սեռային ցանկութիւններ կը զգայ գրեթէ իւրաքանչիւր աւելի կամ պակաս երիտասարդ և քաջաուղջ կնոջ հանդէպ, միեւնոյն բանը տեղի չունենար կնոջ կողմէ՝ տղամարդուն հանդէպ: Այս պատճառով, կինը սեռային տեսակէտով շատ աւելի հաստատակամ է քան տղամարդը: Բացառութիւն է որ կին մը սեռային ցանկութիւններ ունենայ քանի մը տղամարդու հետ միաժամանակ. ընդհանրապէս մէկ սիրականի մը՝ կը ձգտի:

Ինչպէս որ տղամարդուն քով կան միասե-

ռականութեան գարշելի հակումներ, կինն ալ, իր կարգին, ունի տեսակ մը ցանկութիւն, աւելի կամ նուազ հետեւանք՝ սեռային անգիտակից և տարտամ զգայութիւններու որ միայն արական սեռին չի սահմանափակուիր, այլ յօժարութեամբ կը տարածուի ուրիշ կիներու, մանուկներու, նոյն իսկ անասուններու վրայ. բայց հազուադէպ է որ մոլի կիրքերու փոխուի այդ բնազդը: Ամէն կերպով առողջ, բնականոն մանկամարդուհիներ յաճախ կը սիրեն միասին պառկիլ միեւնոյն անկողնին մէջ, իրար գգուել և համբուրել, բան մը ուրկէ կը խուսափի ինքզինքը զիտցող երիտասարդ մը: Արական սեռին մէջ, այդպիսի ընդհանրացած գգուանքներ գրեթէ միշտ կը յանդին տուփանքի և կը գրգռուին անկէ, մինչ պարագան տարբեր է կնոջ քով: Տղամարդը կրնայ բաժնել սեռային ցանկութեան ճշմարիտ սէրը. այն աստիճան որ, իր վրայ, այս մասին իրարմէ բոլորովին տարբեր զգացող երկու անհատներ կրնան բնակիլ միեւնոյն ուղեղին մէջ: Տղամարդ մը կրնայ ըլլալ անձնուէր և գորովալից ամուսին, գուրգուրալ իր կնոջ վրայ, և ատոր հետ մէկտեղ, իր անասնական կիրքերը գոհացնել բողբու հետ: Կնոջ քով այդպիսի սեռային երկուութիւն մը շատ հազուադէպ և միշտ հակաբնական. որովհետեւ, սովորական կինը տղամարդուն չափ կարողութիւն չունի սեռային ցանկութիւնը բաժնելու:

Այս է բացատրութիւնը սեռային ցանկութեան՝ այն եղական քմահաճոյքներուն զորս կը տեսնենք կիներուն վրայ: Մտքով-մարմնով առողջ

կինը որ կը սիրէ տղամարդ մը՝ կրնայ սեռային ամենատեղ ցանկութիւն և հեշտական զգայութիւններ ունենայ անոր հանդէպ, երբ անոր հետ կենակցի. մինչդեռ յաճախ բացարձակապէս պաղ կը մնայ ուրիշ տղամարդու մը ամէնէն սոփական սեղմումներուն հանդէպ, եթէ չի սիրեր զայն։ Այս իսկ է պատճառը կնոջ բողբոջեան ներկայ հանգամանքներուն։ Ամէնէն վատթար հանրակիները, որոնք անընդհատ կը զուգաւորուին անհամար վճարող յաճախորդներու հետ, առանց ամենափոքր հեշտանք մը զգալու, ընդհանրապէս ունին նեցուկ մը որուն սիրահարուած են և որուն կ'ընծային իրենց բովանդակ սէրն ու սոփանքը, թողլով որ հարստահարուին և շահագործուին անոր կողմէ։

Այսպէս ուրեմն, ինչ որ բնականօն կին մը կը պահանջէ տղամարդէն, ամէն բանէ առաջ սէրն է, գուրգուրանքը, հաստատուն նեցուկ մը կեանքի համար, տեսակ մը ասպետականութիւն, և զաւակներ։ Թերեւս դիւրաւ կը հրաժարի զուգաւորութեան հեշտանքներէն, քան այս բոլորէն։ Ոչինչ այնքան պիտի գայրայնէր կին մը, որքան իր ամուսնին անտարբերութիւնը, երբ ան, օրինակի համար, պարզապէս խոհանոցի վերակացու մը կը նկատէ զայն։

Շատեր կ'ըսեն թէ կինը միջին հաշուով աւելի զգայասէր է քան այրը. ուրիշներ ալ հակառակը պնդած են։ Տօքը. Ֆորէլի համար, այս երկու կարծիքներն ալ ճիշդ չեն։ Կինը զգայասէր է ուրիշ կերպով յը։ Կնոջ ցանկասիրութեան բոլոր

առանձնայատկութիւնները հաւաքական արդիւնքն են, — 1. Սեռային գործարաններու խոր ազդեցութեան՝ իր ամբողջ գոյութեան վրայ. 2. Իր սեռային կրաւորական դերին. 3. Իր մասին մասնաւոր կարողութիւններուն։ Այս պատճառով և մասնաւորապէս իր կրաւորական դերով կը բացատրուի իր այնքան բնազդական պչրոտութիւնը, իր պճնուելու, չարութելու, նազ ընելու պէտքը. մէկ խօսքով՝ իր ճիգը՝ տղամարդերուն հաճելի ըլլալու արտաքին երեւոյթով, նայուածքով, չարժումներով և չնործով։

Այս երեւոյթները կը մատնեն մանկամարդ աղջկան սեռային բնազդական ցանկութիւնները. թէև, ինչպէս հաստատեցինք, այդ ցանկութիւնները սովորաբար ուղղակի զուգաւորութեան փափաքին չէ որ կը ձգտին։ Մինչդեռ կոյս մը իր երիտասարդութեան միջոցին կ'ունենայ նկարագրուած զգայութիւնները, բայց պարագաները որոշ չափով կը փոխուին ամուսնութեան մէջ, և ընդհանրապէս՝ իբրև հետեւանք սեռային յարաբերութեանց։ Ե՞նչ այդ յարաբերութիւնները երբէք հեշտական զգայութիւններ չեն յարուցաներ շարք մը կիներու մէջ, բայց ամենամեծ մասին մէջ — և սովորական երեւոյթն է այս — իրապէս կը զրգուեն ցանկութիւնը։ Այն ատեն սովորութիւնը յարաճուն պէտք մը կը դարձնէ զուգաւորութիւնն ու իր զգայութիւնները. և հազուադէպ չէ՞ տեսնել որ, երկար ատեն միասին ապրելէ յետոյ, դերերը փոխուին, և կինը աւելի վաւաչոտ դառնայ քան տղամարդը։

Ահա թէ ի՛նչու բազմաթիւ այրիներ կը ցանկան նորէն ամուսնանալ, և դիւրաւ կը յաջողին. որովհետեւ տղամարդը շուտով տեղի կուտայ կնոջ սեռային ցանկութեան, երբ ան կը յայտնուի բացորոշապէս, առանց երկդիմութեան: Այրի կնոջ քով, երկու հզօր զգացումներ կը պայքարին իրարու դէմ, փոփոխակի յաջողութիւններով, համաձայն անհատներուն. — մէկ կողմէ՝ կնոջական յարատեւութիւնն ու ամբողջութիւնը՝ սիրոյ մէջ, մեռած ամուսնին պաշտովը. միւս կողմէ՝ սեռային յարաբերութիւնները և անոնց հեշտական զգայութիւններէն ստացած վարժութիւնը, որ պարագայ մը կը ձգէ և հատուցում, գոհացում կը պահանջէ: Երկիւղած կամ չափազանց ուղղամիտ ու զգայուն կնոջ քով՝ առաջինը կը յաղթէ, իսկ երկրորդը՝ այն կիներուն մէջ որոնք աւելի գործնական են կամ նուազ նուրբ խառնուածք ունին, կամ պարզապէս աւելի խելքով կ'առաջնորդուին քան զգացումով:

Այս առթիւ հետաքրքրական է դիտել որ ծեր կիները այլ եւս ոչ մէկ սեռային հրապոյր ունին տղամարդուն համար, իսկ իրենք յաճախ շատ աւելի վաւաչոտ են քան մանկամարդուհիները: Ախտաբանական երեւոյթներ են ասոնք:

Յետոյ, կան չափազանց դիւրագրգիռ կիներ, որոնք իրենց գարուն տարիքէն իսկ, սեռային բուռն ցանկութիւններ կը զգան, կը սխտիս գիջութիւն ընել կամ տղամարդու վիզն իյնալ:

Այսպիսի ծայրայեղութիւնները բժշկութեան մէջ ծանօթ են այրաւոյնութիւն կամ նիւրաւոյնութիւն

թիւն անունով: Առասպելական կրնայ դառնալ անյագ մոլեգնութիւնը այս հիւանդներուն, որոնք կը գտնուին ընկերութեան բոլոր դասակարգերուն մէջ: Անոնք գիշեր ցորեկ տրամադիր են զուգաւորութեան, միայն քնանալու և ճաշելու համար ընդհատելով իրենց վաւաչոտութիւնը: Ասոնք տղամարդուն չափ ալ չեն սպառիր, որովհետեւ տուփանքին չի յաջորդեր սերմի կորուստ:

«Էրիկ մարդու խենդ» դարձած այս կիներուն դասական տիպարն է Մեսալինա Կայսրուհին — ինչպէս կը նկարագրէ Յորնալ, — որ բողանոցի մէջ անձնատուր կ'ըլլար բոլորին, առանց կատարեալ գոհացում ստանալու իր ցանկութեան: Կոնքուռ եղբայրներն ալ իրենց Օրագրին մէջ կը յիշեն ծեր տանտիրուհի մը որ քանի մը տասնեակ տարիներ անձնատուր եղաւ ամէնէն վաւաչոտ ցանկութեանց, ունեցաւ անհամար սիրողներ: Դեռ քանի մը տարի առաջ Շուտլոթէնպուրկի մէջ (Գերմանիա) կ'ապրէր գործաւորի մը կինը, որ հանրածանոթ դարձաւ իր անհաւատալի ցանկամոլութեամբ և այրամոլութեամբ: Ամուսինը մշտնջենական բանտարկութեան դատապարտուած էր: Կինը մէկ օրուան մէջ չորս-հինգ տարբեր մարդոց կը տրամադրէր ինքզինքը. հանդիպող էրիկմարդէն կը խնդրէր զուգաւորուիլ իրեն հետ:

Թէև կինը սովորական վիճակի մէջ լի է փափկութեան և ամօթխածութեան զգայումով, բայց շատ դիւրին է երկուքն ալ անհետացնել, զայն կանոնաւորապէս վարժեցնելով սեռային անպատկառութեան կամ լողութեան:

Եզական է լողերուն հողերանութիւնը: Չանոնք փրկելու փորձերը գրեթէ միշտ կը ձախողին ողորպի կերպով. շատ հազուադէպ է որ տեւական յաջողութեամբ պսակուին: Ճիշդ է որ այդ թըշուառները մեծամասնաբար ժառանգական զոհեր են, թոյլ նկարագրով, ստախոս, ծոյլ և վաւաշտ: Անոնց համար տեղի հանգստաւէտ է սպորուստ ճարկ բողութեամբ, ու բոցարձակուով կը մտնան աշխատելու վարժութիւնը, եթէ երբեք սորված էին: Ազգասութիւնը, գինովութիւնը, կամ սպորէն յարաբերութեան մը ամօթը — երբ մանաւանդ զաւակ ալ կայ — պոռնկութեան առաջնորդած է բնազմութիւ մանկամարդուհիներ. բայց բնական արամագրութիւններն ալ մեծապէս կ'ազդեն: Ու այդ վատահամբաւ շրջանակին մէջ, սննծատուր ամէն տեսակ խենէշութեանց և ալքոլամոլութեան, ենթակայ բիւրազան հիւանդութիւններու, — այդ թշուառները աստիճանաբար կը խաթարուին ու կը կորսուին: Ճիշդ է որ շատեր ալ կը փրկուին, երբ մանաւանդ լաւ նկարագիր ունին:

Բազմաթիւ ընկերաբաններ խորապէս ուսումնասիրած են այս խնդիրը, սկսելով բողութեան ծագումէն մինչեւ անոր զարհուրելի և այլազան զարգացումը՝ մեր օրերուն մէջ: Բայց այս կէտը դուրս է մեր նիւթէն, և մենք կը վերջացնենք այս գլուխը, յիշելով միայն գերմանացի գիտնական Լիպերդի հետեւեալ վկայութիւնը.

«Երկար տարիներ իրենց արհեստը ամէն օր գործադրելով, բողերուն աչքերը թափանցող,

Թաւալուն արտայայտութիւն մը կը ստանան, և քիչ մը խոշոր՝ կարկառուն են, շնորհիւ տեսողական մկաններուն անընդհատ լարման, քանի որ աչքերը գլխաւորապէս կը գործածուին յաճախողներ լրտեսելու և քաշելու: Շատերուն մէջ ծամելութեան գործարանները մեծապէս կը զարգանան. այսպէս, բերանը, որ միշտ շարժման մէջ է ուտելով կամ համբուրելով, աչքի կը զարնէ իր մեծութեամբ. ճակատը յաճախ տափակ է. ծոծրակային մասը երբեմն չափազանց կարկառուն է, գլխուն մազերը՝ յաճախ ցանցառ, և շատեր իրապէս ճաղատ կը դառնան: Եւ այս ալ իր շատ մը պատճառներն ունի, — ամէնէն առաջ՝ իր կենցաղը՝ որ դուր ու դադար չունի. — շարունակ վազք, թափառում փողոցներուն մէջ, առանց նայելու օդին, երբեմն գլխաբաց. յաճախ երկարատեւ սպիտակահոտութիւնը որմէ կը տառապին. անդադար խողանակումը, մազերը շտկրտելը, գանգրելը, իւղերով օծելը, և ստորին դասի բողերուն մէջ՝ օդի գործածութիւնը: Կոշտ, խըռպոտ ձայնը՝ բնախօսական յատկանիշն է այն կնոջ որ կորսնցուցած է իր ինքնայատուկ պաշտօնը, — մայր ըլլալու յատկութիւնները:»

Ը.— ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ



Սեռային կեանքի ամէնէն կարեւոր երեւոյթներէն մէկն է Անկարողութիւնը. այսինքն այն վիճակը երբ կարելի չըլլար բնութեան պահանջած կերպով և լիովին կատարել ծննդական գլխաւոր գործողութիւնը՝ զուգաւորութիւնը: Այդ անկարողութիւնը սովորաբար հետեւանք է ծննդական գործարաններու բացակայութեան, կամ անոնց անբաւականութեան, թերի կազմուածքին, մասնակի կամ ամբողջական տձեւութեանց: Եւ որովհետեւ այդ գործողութեան մէջ գլխաւոր, գործօն դերը կ'իյնայ սղամարդուն, անկարողութեան պատճառներն ալ յաճախ կը ծնին իր կողմէ,— ինչպէս կանգնումի, ներմուծման և ցայտումի արգելքները: Անշուշտ կինն ալ յաճախ կը նպաստէ այդ անկարողութեան և զայն տեւական կը դարձնէ իր պաղութեամբ, իր անտարբերութեամբ, իր մերժումներով. բայց, իր դերը սահմանափակ ըլլալով, միայն մէկ արմատական պատճառի մը պատասխանատու է,— բացակայութիւն կամ բացարձակ խցում՝ խոռոճպիի, խցում կամ փակում բունոցը արգանդին միացնող խողովակին, որ արգելելով առնանդամին ներմուծումը, բացարձակ խոչնդոտ մը կը դառնայ արգասաւորման:



Արական Անկարողութիւն

Երկու գլխաւոր ձեւեր ունի արական անկարողութիւնը,—

ա. Անկարելութիւն՝ կանգնումի և զուգաւորութիւնը կատարելու.

բ. Անկարելութիւն՝ արգասաւորման, շնորհիւ սերմի չգոյութեան կամ այդ հեղուկին բեղնաւորիչ յատկութենէ զուրկ ըլլալուն:

Ծննդական գործարաններու պակասին հետեւանքով անկարողութիւնը չափազանց հազուադէպ է: Գիտնական մը 6000 զինուորացուներու մէջ միայն երեք հոգի գտաւ այդպիսի դժբախտներ: Կանգնումի անկարողութիւնը յաճախ հետեւանք է կազմական թերութիւններու. իսկ այս կարգէն ամէնէն արմատականն ու անբուժելին է զուգաւորիչ գործարանին բացակայութիւնը կամ չափազանց անբաւականութիւնը: Այսպէս, պատահած են դէպքեր ուր վարոցը հազիւ ծիծի պտուկի մը մնծութիւնը ունէր: Քաջող երիտասարդ զինուորի մը վրայ վարոցին տեղ գտան պարզ ուռոյց մը, պտուկ մը ուրկէ կը միզէր: Այս անկարողութիւնը անդարմանելի է, ինչ ձեւեր կամ դեղեր ալ փորձուին:

Անկարողութեան աւելի յաճախադէպ պատճառներ են սւսացական թերութիւններ,— ինչպէս ամբողջական կամ մասնակի կորուստ վարոցի և ամորձինկրու, օրինակ՝ ներքինիներու և որձատ

անձերու քով: Եթէ ճննդական արտաքին գործարանները հանուին իսկ, սեռային ցանկութիւնը կրնայ գոյութիւն ունենալ, և երբ վարոցը մնայ, բայց ամորձիները հանուին, կանգնում և զուգաւորութիւն դարձեալ կարելի են, կը բաւէ որ ներքինացումը կատարուած ըլլայ արբունքէն յետոյ: Եւ սակայն, բացայայտ է որ նման պարագաներու մէջ առնական կարողութիւնը մեծապէս կը խանգարուի և վերջը-վերջը բոլորովին կ'անհետանայ:

Խնդիրը աւելի կը լուսաբանուի միակողմանի ներքինացումի հետեւանքները յիշելով: Այս առթիւ եզերական դէպք մը կը պատմէ աւստրիացի բժիշկ մը.

«Վիեննայի Համալսարանին մէջ իմ նախորդ պաշտօնակիցներէն մէկը ստիպուեցաւ հանել տալ իր մէկ ամորձին, որ յամառօրէն կը բորբոքէր ջերմամիզութեան հետեւանքով: Ասոր վրայ երկրորդ ամորձին կատարեալ ծիւրումի ենթարկուեցաւ: Ասիտուալի, գեղեցիկ, վայելչագեղ և համակրելի երիտասարդը կրցաւ քանի մը տարի զուգաւորութիւն կատարել. շատ գոհ էր այդ պատճառով, և յայտնապէս շողջողուն մեծարանքներ կ'ընէր կիներուն: Եւ սակայն, շատ քիչ անգամ կրնար զուգաւորութիւն կատարել և երեք տարի ետք բոլորովին քաշուեցաւ կիներու ընկերակցութենէն, աստիճանաբար մռայլ և վերապահ դարձաւ, մինչեւ որ առտու մըն ալ անհետացաւ Վիեննայէն, ընդհատեց իր ուսումը և անկէ վերջը ա՛լ բան չիմացանք իր մասին: Այս

դէպքը վառ գոյներով դրոշմուած կը մնայ մտքիս մէջ, և պայծառօրէն կը ցուցնէ թէ առնական կարողութիւնը ի՞նչ խոր ազդեցութիւն կը գործէ անհատի բովանդակ էութեան վրայ:»

Ուրեմն, եթէ երկրորդ ամորձին անվթար մնայ, զուգաւորութեան կարողութիւնը չի խափանուիր. և արտադրիչ կարողութիւնն ալ կրնայ տեւել, բայց աստիճանաբար պիտի նուազի և անհետանայ:

Անկարողութիւն յառաջ կուգայ նաև երբ վարոցին կապը չափազանց ձգտուն է, կամ երբ վրանսպարզ ուռեցքներ, չնչերակի ուռոյցներ, աւելորդ միտեր կան, որոնք արգելք կ'ըլլան կանգնումի, կամ ցաւատիթ կը դարձնեն զայն: Այն ատեն հարկ է վիրաբոյժին դիմել, դարման մը գտնելու և կանգնումը կարելի դարձնելու համար: Կրնան վէրքեր և կարծրացումներ գոյանալ փասպային մարմիններուն մէջ, մասնաւորապէս իրրեւ հետեւանք ջերմամիզութեան, և այն ատեն անկարելի կը դառնայ զուգաւորութիւնը: Փասպային մարմինները ուրիշ պատճառներով ալ կրնան կծկուիլ, նեղնալ և նորէն յառաջ կուգայ անկատար կանգնում, որ ատեն վարոցը անկիւն մը կը հակի այս կամ այն կողմէն, կամ կը ծռի, այնպէս որ չի կրնար խոռոճալին մանել:

Շատ այրիւր ալ անկարող կ'ըլլան իրենց կազմական տկարութեան, ժառանգական թերութիւններուկամ բնական պաղութեան մը հետեւանքով: Այս պատճառները երբեմն անյաղթելի են:

Մինչեւ հիմա նկարագրուած անկարողութեան

բոլոր ձեւերը նուազ յաճախադէպ են, քան անոնք որոնց մէջ ծննդական արտաքին գործարանները բոլորովին անվթար են, և խնդիրը կը դառնայ միայն կանգնողնի անկասարուքեան կամ կասարեալ ձախողման վրայ, իբրև հետեւանք ընդհանուր անկանոնութեանց:

Կանգնումը, ինչպէս նկարագրեցինք արդէն, տեղի կ'ուեննայ թէ՛ կեդրոնէն՝ ուղեղէն (հեշտագրգիւ գաղափարներով) և ողնայտէն (ուղղակի խթանելով, գրգռելով) և թէ՛ բուն խկ տեղին վրայ, ծննդական գործարաններէն (ծեփուկը շփելով են.) և կրնայ ըլլալ կամ ակտուոր և կամ գուռ բնախօսական երեւոյթ: Երբ ծննդական գործարանները բարբոքուն վիճակ ունին, մասնաւորապէս ջերմամիզութիւն՝ յառաջակողմի և յետասկողմի միզուկին մէջ, կանգնումները տեղի կ'ունենան շատ զիւրութեամբ: Մզային փամփուշտէն կրնան տրուիլ այնպիսի միզումներ որոնք կանգնում յառաջ կը բերեն, որ ծանօթ են «առտուան կանգնում» անունով: Ասոնք կ'օգտագործուին այնպիսիներու կողմէ որոնք ուրիշ կերպով բոլորովին անկարող պիտի ըլլային: Վերջապէս յետոյքին վրայ հարուածներն ալ կրնան կանգնում յառաջ բերել:

Ծերութիւնը կամ խիստ յառաջացած տարիքը պատճառ կ'ըլլան արմատական անկարողութեան, որոնց դէմ մարդիկ ի դուր կը մաքառին, և յաճախ լիստներ ալ կրելով: Աւելի ծանր է մանաւանդ այն անկարողութիւնը որ յառաջ կուգայ կանխահաս ծերութենէ մը, իբրև հետեւանք

մտքի կամ մարմնի ծայրայեղ յոգնութեան, ուժասպառութեան, եթէ ոչ իբրև արդիւնք անժուժկալութեան, գինիի, օղիի և ուրիշ ոգելից ըմպելիներու, խանութի են. անհաշիւ գործածութեան: Զուգաւորութեան չափազանցութիւնները, և մանաւանդ զիջութիւնը ճամբայ կը բանան առնական անկարողութեան, քայքայելով ամէնէն առոյգ կազմուածքները, տկարացնելով իմացականութիւնը, խաթարելով երիտասարդութիւնը և այսպէս ամօթալի ու կանխահաս անկարողութիւն մը յառաջ բերելով: Ո՛չ ժանտախար, ո՛չ պատերազմը, ո՛չ ծաղկախար կամ նման ուրիշ հարիւրաւոր հիւանդութիւններ այնքան աղէտալի հետեւանիներ չեն ունենար մարդկութեան համար, որքան գիշորեան յարաշոյք ունակութիւնը: Գիջութիւնը քաղաքակիրթ ընկերութիւններու քանդիչ տարրն է, և իր ազդեցութիւնը սոսկալի է մանաւանդ անոր համար որ, անդադար կը գործէ և գալանարար կը փորէ սերունդներու առողջութեան, ոյժին և երկարակեցութեան հիմերը, ինչպէս կը հաստատէ Տօքզ. Կառնիէ:

Սերմի ակամայ հոտումները, որոնք յաճախ հետեւանք են այդ մոլութեան, և սիֆիլիսը՝ իր սկզբնական և կազմական փորձանքներով, որ դարձեալ արդիւնք է ցոփ, սանձարձակ երիտասարդութեան մը ծայրայեղութիւններուն, խիստ յաճախադէպ պատճառներ են աւելի կամ նուազ ուղղակի և բացարձակ անկարողութեան մը:

Սպանիացի բանաստեղծ մըն է որ կը գրէ այնքան պատկերալից.

Խայտառակ մոլութեան մահացու բոյնը կը հոսի իր երակներուն մէջ... Երկչո՛ւս, ուժասպա՛ռ, անկենդա՛ն... Օ՛ կասաղութիւն, անկողինը իր շարշարա՛նքն է...

Այն ատեն ի՛նչ օգո՛ւտ ամուսնական կեանքի անդորր վայելքները փնտոել, երբ սանձարձակ և այլանդակ երիտասարդութիւն մը ցամքեցուցած է անոնց բոլոր ազգբիւրները և ապականած՝ բոլոր սերմերը: Խայտառակութիւն, ոճրագործութիւն չէ՞ խաբել համեստ և առաքինի մանկամարդութի մը:

Սակաւարինութիւնը, անդամալուծութիւնը, յօղացուը, յօղային կաթուածը (կոաթ), անկուսները, տեղական վէրքեր և ուրիշ հիւանդութիւններ ալ կրնան արգելել կանգնուած և անկարողութեան պատճառ ըլլալ:



Աշխուսողութիւնը ուղղակի կը նպաստէ անկարողութեան: Գարեջուրը կամ գինին, երբ խիստ չափաւոր քանակութեամբ աւնուի, ընդհանուր հոգեկան ոգեւորութեան հետ, յառաջ կը բերէ նաև սեռային գրգռում՝ աւելի կամ մեծ չափով: Եթէ նոյն պահուն նորէն ալքոլ աւնուի, այդ սեռային գրգռումը աւելի երկար կը տեւէ քան հոգեկան գրգռումը, որ շուտով տեղի կուտայ հոգեկան ջլատման. սոյնինքն կանգ կ'առնեն ուղեղէն բխող արգելիչ ազդեցութիւնները: Այսպէս, ալքոլի առաջին ուժպէն ծնած սեռային գրգռումը կը շարունակուի այնպիսի ատեն մը երբ մարդը արդէն կորսնցուցած է խելքի և կամքի ամէն յոյժ և իշխանութիւն, և հետեւորար զիւ-

րին որս մը կը դառնայ սեռային հրապուրանքի: Այս է պատճառը որ ալքոլը վայրկենական ազդեցութիւն կ'ունենայ. որովհետև, ընդհանրապէս հաստատուած է որ ալքոլը սեռային կարողութիւնը, ոյժն աւելցնող միջոց մը չէ: Ընդհակառակն, ան կ'աւելցնէ հեշտամոլութիւնը և սեռային ցանկութիւնը, բայց զբեթէ միշտ կ'արգելէ կանգնուած և կ'ուշացնէ տոբիքը:

Այսպէս, գիտնականներու վկայութեամբ, ալքոլի ազդեցութեան ենթակայ մարդ մը աւելի երկար ժամանակ կը պահանջէ զուգաւորութեան կատարման համար, կամ ժուժկալ մարդ մը: Եւ այս իսկ պատճառով, սեռային հիւանդութիւններէ վարակուելու վտանգը մեծապէս կ'աւելնայ. որովհետև, վարակող անհատին հետ յարաբերութիւնը երկար կը տեւէ: Բաղմաթիւ հիւանդներ, սրտք բողբէ վարակուած էին անյազօրէն արբենալէ յետոյ, կը խոտտովանին թէ սեռային գործողութիւնը խիստ երկար տեւեց, բուն իսկ ալքոլին պատճառած համեմատական անկարողութեան հետեւանքով, և այս պարագան բնականաբար տեղի տուաւ չափազանց չիման, սկրտուքներու են. և հետեւորար յառաջ բերաւ վարակում: Բժշկական գրականութեան մէջ կը յիշուին բաղմաթիւ դէպքեր, ուր երկու անհատներ յարաբերութիւն ունեցած են վարակուած բոլի մը հետ, իրարու ետեւէ, և —նշանակելի պարագայ— մէկը վարակուեր է, իսկ միւսը՝ առողջ մնացեր է: Տարակոյս չկայ որ, այդպիսի պարագաներու մէջ, յաճախ առողջ մնացողը ժուժկալ մը, եթէ ոչ գի-

նեհատ մըն էր, բաղդատմամբ վարակուածին, որ ապահովաբար ալքոլի ազդեցութեան տակ կը գտնուէր:

Ականաւոր հեղինակութիւն մը ալքոլը ուղղակի պատճառ նկատելով անկարողութեան մէկ տեսակին, կը պատուիրէ.

«Ամէն բանէ առաջ, ալքոլ մի՛ գործածէք, մասնաւորապէս իբրեւ միջոց կանգնում յառաջ բերելու: Երիտասարդութեան մէջ մարդ այդպիսի գրգռիչի պէտք չունի. իսկ ծերութեան տատն, լաւ կ'ընէ որ կարդայ Շէյքսպիրի «Մաքսիմ»էն հետեւեալ խօսքերը.

Խմիչքը ցանկութիւն կը յարուցանէ, բայց կը փնացնէ գործարութիւնը, յայրասութիւն կը գոյացնէ, եւ կը խարէ. կը գրգռէ ու կը լիւ. կը համոզէ ու կը վիսեցնէ...

Ամփոփելով, քաջողջ, բնականոն մարդուն համար ալքոլը ոչ թէ միջոց մըն է սեռային կարողութիւնը աւելցնելու, այլ ճիշդ հակառակը:

Ծխախոտի անխնայ գործածութիւնն կը խաբարէ սեռային կարողութիւնը: Նիկոթինը և սէրը այնքան անհաշտ են իրարու հետ, որքան ալքոլն ու սէրը: Այս ճշմարտութիւնը թերեւս տարօրինակ յայտնութիւն մը ըլլայ մասնաւորապէս Արեւելքի փողովուրդներուն համար, որոնք չափազանց մոլի են ծխախոտի, և դեռատի լաճէն մինչև ութսուն տարեկան ծերուկը առտու իրիկուն, եթէ ոչ գիշերն իսկ, անկողինին մէջ, կը ծխեն շարունակ, առանց նկատելու հետեւանքները:

Մէկէ աւելի գիտնականներ, Զուրպրինկէր, Հըրթ, Էօլէնպուրկ ևն. կը պնդեն թէ ծխախոտի չափազանց գործածութիւնը յառաջ կը բերէ սե-

աային կարողութեան նուազում: Կոնքուսներու Օրագրին մէջ հետեւեալ հետաքրքրաշարժ սողերը կը կարդանք.

Հակամարտութիւն մը կայ ծխախոտին եւ կիներուն միջեւ: Մէկուն հաշակը կը նուազեցնէ միւսին հաշակը: Այնքան հիշք է այս որ, սիրասոյոր Լօքարիօներ սովորաբար կը հրաժարին ծխել, որովհետեւ կը զգան կամ կը հաւատան թէ ծխախոտը կը նուազեցնէ իրենց սեռային ցանկութիւնը եւ սիրելու կարողութիւնը:

Սուրճը և թէյն ալ, երբ չափազանցութեան կը տարուին, բայց մասնաւոր մորֆինը վնասակար են սեռային կարողութեան: Գիտնական կը յիշէ անկարողութեան մասնուած բազմաթիւ տղամարդիկ որոնք սովորութիւն ունէին մեծ քանակութեամբ զօրաւոր սուրճ խմելու, օրական հինգ-վեց խոշոր գաւաթ: Ասանք սեռային կարողութիւնը վերստացան անմիջապէս որ ձգեցին սուրճը. իսկ երբ վերսկսան խմել, անկարողութիւնը նորէն երեւան եկաւ:

Առնական կարողութեան խանգարումները մեծամասնաբար հետեւանք են ջղային անկարողութեան (Նեօրասթէնի): Այսօրուան բժիշկները ամէնէն աւելի նման դէպքերու կը հանդիպին: Կան նաև անկարողութիւններ՝ առանց ջղային անկարողութեան: Այս պարագան մասնաւորապէս կը պատահի կատարելապէս առողջ երիտասարդ ամուսիններու, որոնք առաջ ամէն կերպով կարող էին և նախապէս զուգաւորութիւն կատարած են, ճիշդ պահանջուած պայմանով, կամ անգործ,

ժուժկալ կեանք մը վարած են, առանց գիջութեամբ են. ՚լնասուած ըլլալու: Այսպիսի անհատները, շնորհիւ առաջատարի գիշերուն գրգռումին, ամօթ-խածութեան, տաղտուկին ու անձկութեան, յաճախ հոգեկան անկարողութեան կը մատնուին: Գերմանացի բժիշկ Ռէթի կը խօսի կարեկցութեան ծնած անկարողութեան մասին, զոր կ'ունենայ երիտասարդը, տեսնելով տակաւին կոյս հարսին կրելիք տաւապանքը, մեղքնալով անոր, զուգաւորութեան փորձի պահուն:—

«Երիտասարդ հարս ու փեսան կը համբուրեն իրար և իրարու հետ կը մրցին գուրգուրանքով. բայց երբ խնդիրը կը լրջանայ — երբ ամուսինը կ'ուզէ վայելել իր իրաւունքները իրրեւ ամուսին — կինը անհաւատարի անձկութեան մը կը մատնուի, բոլոր անդամներով կը գողգոյայ, կը գալարուի, ճիչեր կ'արձակէ և կուլայ: Երիտասարդը ուժասպառ կ'ըլլայ, և վերջապէս, երբ կինը կը համակերպի և կը յօժարի անձնատուր ըլլալ իր ճակատագրին, տղամարդն է որ այլեւս չի կրնար կատարել իր բաժինը:»

Այսպէս, դարձեալ անկարողութիւն յառաջ կու գայ, երբ պատկեր մը, գաղափար մը յանկարծ կը ջլատէ կանգնումը: Այն ատեն արիւնը այլեւս չի կուտակուիր փապային մարմիններուն մէջ և կանգնումը կը կասի եթէ սկսած է, կամ ընտ տեղի չունենար: Օրինակ՝ խորապէս գորգ-նուած սիրանար մը, որ ուժեղ կանգնումներ ունեցած էր երբ կը պատրաստուէր զուգաւորութիւն կատարելու, կրնայ յանկարծ համակուել

ճախողեալ գաղափարով կամ ուրիշ խափանարար մտածումով մը, և ահա կը ջլատուի կանգնումը և գործողութիւնը անկարելի կը դառնայ: Այսպիսի ճախողանքի մը և անկէ անբաժան վիշտի ու ամօթի յիշատակը, նոյն իսկ նոր փորձի մը մէջ անուղղակի կանգնում յառաջ բերելու համար եղած գիտակից ճիգերը նայնքան արգելիչ պատճառներ են և վայրկենապէս կը մարնն սեռային ցանկութիւնը: Ո՛րքան աւելի մեծ է ճախողանքի մը երկիւղը, այնքան պիտի աւելնայ հոգեկան անկարողութիւնը: Այս վերջինը կրնայ սահմանափակուել միայն այս կամ այն կետի հետ զուգաւորուելու պարագային. բայց աւելի յաճախ ընդհանրական է: Շատ անգամ անկատար և անբաւական կանգնում մը միայն յառաջ կը բերէ:

Այս տկարութեան լաւագոյն դարմանն է իպոստական՝ մագնիսական թելադրութիւնը, արդէն հետեւանքն ըլլալով ինքնաթելադրութեան մը: Անկարողութեան զգացումը մեծապէս կ'ընկճէ մարդը, և այդ ընկճումը կ'աւելցնէ անկարողութիւնը: Յաճախ ալ ինքնիրենը կ'անհետանայ այս ախտանշանը:

Հոգեկան անկարողութեան տարրեր մէկ ձեւ մըն է այն, ուր կանգնում տեղի կ'ունենայ, բայց ցայտումի յաջողութեան գաղափարը այն աստիճան կը տիրապետէ որ կը ջլատէ հեշտական զգայութիւնները և սէրը, և պատճառ կ'ըլլայ որ ցայտումը տեղի ունենայ առանց հաճոյքի կամ նոյն իսկ կանգնումը դադրի խոռոճակին մէջ:

Անկարողութիւն կրնայ պատահիլ զուգաւոր-

րութեան առաջին փորձին: Կրնայ ծագիլ նաեւ աստիճանաբար: Յաճախ յառաջ կուգայ յանկարծակի, ինչպէս մինչեւ այն ատեն ուժեղ երիտասարդներու քով՝ իրենց նշանաւոր կամ ամուսնութեան ատեն: Բազմաթիւ մարդիկ կանոնաւոր կանգնում և հոսում կ'ունենան, բայց երկուքն ալ կը դադրին զուգաւորութեան պահուն, որովհետեւ հակառակ ինքնաթելադրութիւն մը անկարողութեան կը մատնէ զիրենք, չնայելով որ երկարատեւ ժուժկայութեան մէջ մնացած են և տանջուած՝ հրատոյժոր ցանկութիւններով: Սեւեռամտածում մը, երկիւղ, ախրութիւն, կասկածներ, յարգանք կամ երկչոտութիւն, սխալ հասկցում հառաչանք մը, անճաշ յիշատակ մը, երկդիմի խօսք մը, աղմուկի մը պատճառած իրորանցումը կամ օտարականի մը ներկայութիւնը խափանարար ազդեցութիւններ են, ինչպէս բացատրեցինք: Ահա թէ ինչո՞ւ ըսած են որ «զուգաւորութիւնը կը պահանջէ ինքնավստահութիւն, կնոջ հաճոյակատարութիւնը, մտքի անդորրութիւն, լուծիւն, առանձնութիւն և գաղտնիք»:

Այսպիսի անկարողութիւնները մեծամասնաբար դիպուածական, վաղանցիկ երեւոյթներ են և բուժելի:

Աւելի կը ծանրանայ խնդիրը, երբ անկարողութիւնն յառաջ կու գայ իբրեւ հետեւանք սեռային այլասերումներու: Եւ բժիշկներ զիտել կու տան թէ այսպիսի երեւոյթներ կ'ընդհանրանան ամէն օր: Այսպէս, սատականութեան, մա-

զոխականութեան, ֆէթիշականութեան և միասեռականութեան զգուելի մոլութիւնները—որոնց մասին թերեւս խօսինք յառաջիկային— կրնան շատ մը անհատներու վրայ գործել այնպիսի տիրապետող ազդեցութիւն մը որ, կամ զուգաւորութիւն չի կրնար տեղի ունենայ առանց նախապէս այդ գարշելի բնազդները գոհացնելու. կամ այդ իսկ բնազդները ամբողջովին տեղը կը բռնեն բնական զուգաւորութեան: Առաջին կարգէն են, օրինակի համար, այն դէպքերը ուր միասեռականներ իրենց կիներուն հետ յարաբերութիւն կրնան ունենալ այն ատեն միայն, երբ նախապէս գզուանքներ վայելած են իրենց այր բարեկամներէն: Կան մաղսխականներ, որոնք մինչեւ որ նախապատրաստական ձաղկումի մը չենթարկուին, չեն կրնար գործողութիւն կատարել: Երկրորդ պարագային զուգաւորութիւնը բոլորովին անկարելի կը դառնայ. տախի տեղի կ'ունենայ միայն այլասերած բնազդին գործունէութեան ատեն և յաճախ այդ կարգի մոլիները իրապէս կը գանին բնական զուգաւորութենէն:

Անկարողութեան ուրիշ ձեւ մըն ալ կայ — թէ և հագուածակ — ուր տղամարդը կրնայ զուգաւորութիւն կատարել միայն բողբոռ հետ, իսկ անկարող կը դառնայ պատուաւոր կիներու առջեւ: Բայց շատ անգամ այս արամաղրութիւնն ալ արդիւնք է սեռային խաթարումներու և մոլութիւններու, որոնք միայն բողբոռ հետ յարաբերութեամբ կրնան գոհացում ստանալ:

Տարբեր ձեւ մըն է «առժամեայ անկարողու-

թիւնը», որ ատեն անուական կարողութիւնը ամբողջովին կախում ունի «սովորութիւնէ» մը, և կը դադրի, երբ այդ սովորութիւնը փոխուի: Ֆրէնցէլ կը յիշէ մարդ մը որ իր կնոջ հետ յարաբերութիւն ունեցած էր միշտ՝ պառկելու գացած ատենը, և անկարող դարձաւ, երբ այդ սովորութիւնը ընդհատեցին. և այն ատեն կ'ուզէր առատն կանուխ կատարել գործողութիւնը: Խեղճը աստիճանաբար միայն կրցաւ վերստանալ իր կարողութիւնը և վարժուիլ նոր պայմաններուն:

Կայ, դարձեալ, ուրիշ անկարողութիւն մը, ոչ-հազուադէպ: Այն է՝ գրագէտներու և արուեստագէտներու անկարողութիւնը, իրրեւ հետեւանք մտային հզօր ճիգի մը կամ գեղարուեստական ստեղծագործութեան մը: Այս ալ սովորաբար վաղանցիկ է, և կը պատահի մտային գործունէութեան շրջաններուն: Գիտնականները այս պարագան կը բացատրեն այն օրէնքով թէ՛ նոյն պահուն սեռային կարողութիւնը երեւան կուղայ մտային արտադրիչ գործունէութեան թաքուն ձեւին մէջ: Այս տեսակ անկարողութեան հետ սերտ կապ ունի ուրիշ ձեւ մը, իրրեւ հետեւանք մտացրիւ վիճակի կամ վայրկեական գաղափարներու, որոնք յանկարծ արգելիչ պատճառներ կը դառնան: Այս յանկարծական գաղափարները կրնան ըլլալ հազար տեսակ, — զուարթ, տխուր, անձկալից, նեղացուցիչ. բայց ամէն պարագայի մէջ կը ջնջեն արդէն գոյութիւն ունեցող կարողութիւնը և անկարելի կը դարձնեն վարօցին կանգնումը:

Այսպիսի վրիպումներ հաւասարապէս կը պատահին թէ առողջ և թէ դիւրագրգիւ կամ ջղազար մարդերու: Նման անկարողութեան դասական օրինակ մըն է Ժ. Ժ. Ռուսոյի արկածախնդրութիւնը՝ վենետիկոնի ծիուլիէթթայի հետ, ինչպէս ինքն իսկ կը պատմէ իր «Սոստովանութիւն» գրքին մէջ: Փիլիսոփայ ընկերաբանը գնաց տեսնելու իր չքնաղ սիրունին, սիրտը տրոփուն՝ սեռային վայելքի հրավառ ցանկութեամբ. բայց Բնութիւնը «թոյն մը դրած էր իր գլխուն մէջ, այդ անասելի երանութեան դէմ», որուն այնքան կ'անձկար իր սիրտը: Հազիւ ակնարկ մը նետած էր գեղանի աղջկան վրայ, երբ միտքը բան մը իյնալով, սկսաւ աղու պէս լալ և բոլորովին մոռցաւ իր նպատակը: Յետոյ աւելի խորապէս կլանուեցաւ այդ գաղափարով, և սեռային ցանկութիւնները բոլորովին անհետացան ու այլ եւս չէր կրնար ապացուցանել իր անուականութիւնը: Այս եղերա-կատակերգական դրուագէն ծնունդ առաւ յուսախար աղջկան բացազանչութիւնը, որ առածի կարգ անցած է.

— *Lascia le donne et studia matematica!*
(Մինակ ձգեցէք կիները, և գացէք մաթեմատիկ սերտեցէք...)

Ուրիշ համաճարեղ մարդիկ ալ, մէջն ըլլալով բանաստեղծ Միւսէն, ունին նմանօրինակ պատմութիւններ:

Գարչանքը ուրիշ պատճառ մըն է բարոյական անկարողութեան, ըլլայ իրրեւ հետեւանք տգեղութեան, շունչի գարչահոտութեան, անմաքրութեան, բորբոքումի, ուռոյցներու կամ ուրիշ հիւանդութիւններու գոյութեան: Յանկարծական անկարողութեան յիշատակելի օրինակ մըն է Փրանսացի հռչակաւոր երաժիշտ Լիւլի պարագան:

Մեծ արուեստագէտը խենդի պէս սիրահարած էր վեներտիկցի մանկամարդ աղջկան մը, էլէօնօրայի: Նախ արհամարհոտ և պաղ, աղջիկը խանդաղատեցաւ և բերնէն փախցուց իր սիրոյ գաղտնիքը:

— Բայց, աւելին մի՛ պահանջէ ինձմէ, ըսաւ, որովհետեւ ուրիշ բան չպիտի ստանաք, բայց միայն մտքի ու սրտի անպատում ուրախութիւնները:

Նրիտասարդ Լիւլին գոհ երիւցաւ և զաղտնապահութեան հազար երգումներ ըրաւ, զորս մոռցաւ իրարու ետեւէ: Վերջապէս, տեսնելով որ իր մոլեգին թախանձանքները, իր ջերմ արցունքները և նոյն իսկ իր սպառնալիքները չեն կրնար հպատակեցնել էլէօնօրան, վերջին ճիգ մը փորձեց: Զինուած գաշոյնով մը, առտուան մէկը ելաւ և շիտակ անոր քով գնաց, և յայտարարեց թէ ինքզինքը պիտի սպաննէ: Դողդաջուն էլէօնօրան բռնելով Լիւլի թեւը և անձնատուր ըլլալով անոր գգուանքներուն, գոչեց.

— Ախ, երանի թէ չզղջաս...

Եւ ահա Լիւլի ընկրկելով, գունատեցաւ և իր անդամները յանկարծ ջլատուեցան, — էլէօնօրայի

կուրծքը բացած ատեն, վէրք մը երեւան հանած էր... Այս դէպքը վերջ տուաւ Լիւլի ալյանդակութիւններուն, և երիտասարդը վանականի հագուստ հագնելով, սկսաւ աշխարհը զարմացնել իր տաղանդով և առաքինութիւններով:

Այսպիսի տպաւորութիւններ կրնան բացարձակապէս անկարող դարձնել մարդը իր իսկ կնոջ հանդէպ: Բժշկական տարեգրութեանց մէջ կը յիշուի կին մը որ ամէն անգամ իւր էրիկը տեսնելուն ուշաթափ կ'ըլլար: Ուրիշներ ջղային տազնապներ կ'ունենան: Կին մըն այն անյայթելի գարչանք զգաց իր ամուսնէն, խարան մը (եագը) տեսնելով անոր բազուկին վրայ:

Անկարողութեան դէպքերը մեծամասնաբար կը պատկանին իսկապէս ջղային, ջղագար անկարողութեան շարքին, և մասնաւորապէս տարածուած են անոնց զարգացած դասակարգին մէջ որոնց հոգերը ծանր են, որոնք սպառիչ աշխատանքներ ունին, — ինչպէս մտաւորականները, վաճառականները, բժիշկները, խմբագիրները, սպանները, պաշտօնատարները ևն.: Զղային անկարողութեան պատճառներուն մէջ գլխաւոր դերը կը կատարեն ծայրայեղ գիշութիւնը և քրօնիկ ջերմամիզութիւնը՝ իր հետեւանքներով:

Զղային անկարողութիւնը ամէն բանէ առաջ կը յայտնուի կանգնումի և ցայտումի տարականոն պայմաններով, որոնց մէկը կամ միւսը կրնայ ինքնին նուազիլ կամ բոլորովին խափանուիլ. և

կամ, երկուքն ալ կրնան անկանոնութիւններ ցուցնել: Իսկ երբեմն ալ կը պատահի որ կանգնուած խիստ յսնախաղէկ բլայ, արտախարգօրէն զօրաւոր և երկարասնէ (պրիապ), բայց ցայտուած և հեշտական զգայութիւններ տեղի չունենան. այսպիսի կանգնումները մեծամասնաբար խիստ ցաւառիթ են: Ջրային անկարողութեան խիստ բնորոշ մէկ ախտանիշն է սերմի կանխահաս հոտուելը՝ նոյն իսկ առփանքի արտայայտութեան առաջին նշաններուն, որ ատեն կանգնուած կրնայ լիովին կատարուիլ: Կը պատահի նաև որ կանգնուած տեղի ունենայ, բայց ոչ սերմի հոսում: Եւ վերջապէս, կրնան երկուքն ալ բոլորովին վրիպիլ (անդամաշուծակալ անխարողութիւն):

Եզական ձեւ մըն է այն անկարողութիւնը որ ծնունդ կ'առնէ ձեփուկին չափազանց ցաւառիթ զգայնութեան, իրրեւ հետեւանք սեռային ջղազարութեան կամ տեղական բորբոքումներու: Այսպիսի պարագաներու մէջ, զուգաւորութեան ցաւերը յաճախ այնքան ծանր են որ, ենթակաները բոլորովին կը հրաժարին յարաբերութեան ո՛ր և է փորձէ:

Դեռ վիճելի է այն խնդիրը թէ անկարողութիւն կրնայ ծագիլ սեռային ժողովարարութեան:

Գիտնական մը կը պարզէ թէ «սեռային յարաբերութիւններէ բոլորովին և շարունակ հեռու մնալով, տղամարդու սերմարտադրիչ գործարանները—ամօրձի, սերմնային փամփուշտ, սերմնատար խողովակ— ինչպէս և վարոցը կը պղտիկնան,

տձեւ, խորշումած և անգործ կը դառնան»։ Նոյն բանը կը պատմուի հոռոմէական կայսրութեան ըմբիշներուն համար, որոնք խիստ ժուժկալութեան մէջ ապրելու բռնադատուած էին: Վիռէյ կը յիշէ «խիստ զգաստ սուրբ մը, որուն վրայ մահէն յետոյ ծննդական գործարանի հետք չդանուեցաւ...»

Այսպէս կամ այնպէս, ստոյգ է որ բացարձակ ժուժկալութիւնը կրնայ սահմանափակել առնական կարողութիւնը, գոնէ հոգեկան՝ բարոյական ազդեցութիւններով: Սմննավերջին հետազօտութիւններ կը հաստատեն թէ երկարատեւ ժուժկալութիւնը յնասակար ազդեցութիւն մը կը գործէ առնական կարողութեան վրայ, մասնաւորապէս կանգնումի և գործողութիւնը լիովին կատարելու ընդունակութեան վրայ: Տոքթ. Պլօխ կը յիշէ երկու համայնարանական փրօֆէսօրներ, դեռ հազիւ երեսուն տարեկան, որոնց երկուքն ալ տակաւին սեռային յարաբերութիւն չէին ունեցած, և մէկը ժուժկալ մնացած էր երկու տարուան ամուսնական կեանքին մէջ... Քանի մը տարի առաջ, երկուքն ալ կրկին և կրկին փորձեցին բնական զուգաւորութիւն կատարել, բայց բոլորովին ձախողեցան, որովհետեւ կանգնուած տեղի չէր ունենար: Դարձեալ գերմանացի բժիշկ մը կը ներկայացնէ երեսունընէնգ տարեկան զրագէտ մը, որ ամուսնութենէն առաջ բացարձակ ժուժկալութիւն պահած էր, որ երբեք գիջութիւն չէր ունեցած, և զօրաւոր ցանկութիւն մը կը զգար ընական զուգաւորութեան, բայց և այնպէս իր բոլոր փորձերն ապարդիւն անցան:

Հին տտեն կար արտառոց և գայթակղելի սովորութիւն մը՝ առնական կարողութիւնը ապացուցանելու համար, — դասական հարստոյր, որ ահագին աղմուկ հանեց ժ.Չ. դարուն: Եթէ ամուսիններէն մէկը բաժնուի պահանջէր անկարողութեան պատճառով, երկուքը մէկ մանրակրկիտ քննութեան կ'ենթարկուէին մանկաբարձներու, բժիշկներու և վիրաբոյժներու կողմէ: Երբեմն նոյն իսկ եթէ այս քննութիւնները չուսարանէին խնդիրը, ամուսնական առաջին մերձաւորութիւնը կը կատարուէր դատարանին կողմէ՝ նշանակուած փորձագէտներու և վկաներու ներկայութեանը:

Այս բարբարոսական փորձերուն մէջ ամէնէն աւելի ամուսինն էր որ կ'անարգուէր և կը տանջուէր: Կինը կորսնցնելու բան մը չունէր, իր կրակորական պետին հետեւանքով. ուրիշ խնդիր, եթէ խոռոճային խցուած ըլլար կամ ծակ չունենար: Ուստի, գրեթէ միշտ ինքն էր որ դատական վեհաժողովին կը դիմէր, եթէ քմահաճոյքով կամ ուրիշ նկատուածով մը ուղէր ջնջել իր ամուսնութիւնը:

Այս փորձին ծագումը կը վերագրեն անպատկառ երիտասարդի մը. որ իբրեւ անկարող ամբաստանուած ըլլալով, պահանջեց հակառակը ապացուցանել վկաներու առջեւ: Դատարանը հաւանեցաւ, ու այս սովորութիւնը օրէնքի կարգ անցաւ: Բայց, ինչպէս դիտել կուտայ սոքո. Կառնիէ, հաւանական է որ այս սովորութիւնը շատ աւելի հին ծագում ունենայ, որովհետեւ

անոր բեկորները կը գտնուին Ժ.Բ. դարու աստուածաբաններու գործերուն մէջ: Դասական ժողովները գոյութիւն ունէին նոյն իսկ Միջին Դարու առաջին շրջաններուն, երբ հանրային սովորութիւնները հեռու էին բարոյականի և վայելչութեան կանոններուն հետ հաշտուելէ: Փրանսայի մէջ 752ին հրատարակուած վանական կանոնադրութիւն մը ուղղակի կ'ակնարկէ այդ բարբարոս սովորութեան: Այդ կանոնը կը յիշէ թէ տղամարդուն անկարողութիւնը պէտք է ամուսնալուծման պատճառ մը նկատուի և կը սահմանէ զայն փորձելու ձեւը, պատուիրելով ամուսիններուն որ խաչին առջեւ երթան և եթէ անկարողութիւնը իրական է, ստոյգ է, թող իրարմէ բաժնուին:

Այս վայրենութիւնը գործադրուեցաւ Իտալիոյ, Անգլիոյ և ուրիշ երկիրներու մէջ այ, իսկ մասնաւորապէս Փրանսայի մէջ երկար ատեն դիմացաւ նշանաւոր դէմքերու հալածանքներուն, որոնք կը բացատրէին անոր անպատշաճութիւնը և աւելորդութիւնը: Պուալօ անգամ երկտող երգիծանք մը գրեց, ծաղրելով զայն: Սովորութիւնը վերջնապէս ջնջուեցաւ 1677ին, Փարիզի խորհրդարանին վճռով: Այս, ջնջուած է այդ բարբարոսութիւնը, բայց դեռ կան շատ մը տեղական «կանոններ», աւելի կամ նուազ ծիծաղելի, կոպիտ, անվայել սովորութիւններ, որոնք կը տիրեն գաւառական անկիւններու մէջ, խուլ գիւղերու խորը, նորապսակներու ամուսնական կարողութիւնը հաստատելու միամտութեամբ...

Երևակայութիւնն ալ կրնայ արգելել կանգնուածը, տգէտ, դիւրահաւան, աւելորդապաշտանհատներու մէջ, որոնք կը վրդովուին կախարդութեան կամ չարադիւթութեան խօսքէն իսկ: Այսպէս, հին Հռոմի մէջ մոգական սիրազեղեր և սպեղանիներ կը ծախէին, տղամարդուն սէր կամ սոսկում, զղուանք չնչելու, անոր խանդը սրելու կամ ջլատելու համար: Այդ կախարդները կը պարծենային թէ կրնան անկարողութեան դատարարակ ամէնէն անդուսպ տղամարդը, զանազան հանգոյցներ շինելով սև թելերէ, շղթաներէ կամ ժապաւէններէ, մագական խօսքեր արտասանելով ևն.: Այս կերպով կ'արգելէին երկու ամուսիններու կամ երկու սիրահարներու առաջին մերձաւորութիւնը, ինչպէս նաև ուղուած յարաբերութիւնները կը խզէին, կ'ընդհատէին կամ կը նորոգէին: Վիրգիլիսս իր Մշակակալնիին մէջ ակնարկութիւն կ'ընէ այս աւելորդապաշտական սովորութեանց:

Այսպէս ծագում առած է խոնջանը (ուշկուր) կապելու կամ հանգուցելու գոհնիկ սովորութիւնը, որ կը տիրէր միջին դարուն և դեռ ուրիշ դարեր, և որ կ'արգելէր ամուսիններու առաջին զուգաւորութիւնը, եթէ, արարողութեան պահուն, ներկաներէն մէկը երեք հանգոյց կաղմէր ո՛ր և է չուանէ մը կամ ժապաւէնէ մը, ամուսնացողներուն անունները և կարգ մը կախարդական խօսքեր արտասանելով: Այս երևակայական անկարողութիւնն ալ դարմանելու հա-

մար մտածեր էին ոչ նուազ ծիծաղելի միջոցներ: Փարիզի խորհրդարանը 1582ին և 1597ին մանուսան պատիժի սպառնալիքով արգելեց այդ սովորութիւնները. թէև այսօր իսկ պակաս չեն միամիտ գեղջուկներ որոնք կը հաւատան թէ չար պառաւ մը կախարդանքով «կապեր»է զիրենք:

Բազմաթիւ անհատներ, որոնք հիւանդոտ երևակայութիւն ունին կամ ենթակայ են սեւամաղձութեան, իրենք զիրենք կը համոզեն թէ չպիտի կրնան զուգաւորութիւն կատարել, որովհետև ծննդական գործարաններու տկարութիւն մը ունեցեր են կամ ունին: Համոզուած են թէ սերմներթութիւն, կծկումներ կամ ուրիշ տկարութիւններ ունին, և իրենց միտքը անդադար լլկուած այդ տիրապետող, սեւեռուն զաղափարով, ասոնք կրնան վերջը-վերջը իրապէս անկարող դառնալ:

Այսպիսի պարագաներու մէջ, կը բաւէ ուժգնօրէն ազդել այդ դժբախտներուն երևակայութեան վրայ, և, իրենց կասկածին իրականութեան հաւատալ կեղծելով, աննշան դարման մը յանձնարարել, ապահովելով թէ անպատճապիտի աղէկնան:

Վարոյի ծայրայեղ փոքրութեան, անբաւականութեան հետ մէկտեղ, անոր արտակարգ ձաւալը, չափէ դուրս համեմատութիւններն ալ

պատճառներ են անկարողութեան, քանի որ շատ դժուար է և նոյն իսկ անկարելի՝ ներմուծել այդպիսի գործարան մը: Վարոցը կրնայ ունենալ նաև թերի, հակաբնական ուղղութիւն մը, դէպի վեր, դէպի վար կամ կողմնակի, փապային մարմիններու խաթարումով ևն.: Յիշեցինք արդէն ծեփուկին բորբոքումը: Բայց ծեփուկը ծածկող մաշկն ալ, թլփատը, իր արտակարգ երկարութեամբ և լայնութեան պատճառ կ'ըլլայ անկարողութեան:

Վնասակար է թէ՛ չափազանց նեղութիւնը և թէ՛ մինչև արմատը քաշուելու չափ լայնութիւնը: Ինչպէս զանազան ուռոյցներ և վէրքեր, կարգ մը աղեթափութիւններ, սրբանի կամ ցայտակրի հիւանդութիւններն ալ կրնան արգելել ներմուծումը և եթէ ոչ անկարելի, գոնէ ցաւառիթ դարձնել զուգաւորութիւնը:

Այս պատճառները կրնան ըլլալ մնայուն կամ ժամանակաւոր. իսկ անոնցմէ ծնած անկարողութիւնն ալ կրնայ ըլլալ բացարձակ կամ միայն յարաբերական, ուղղակի կամ անուղղակի, կազմական կամ տեղական: Ամէն պարագայի մէջ, վիրաբոյժին կը մնայ զանոնք մեղմացնել կամ անհետացնել:

Ամերիկացի բժիշկ Տոքզ. Հէնրի Մօրթըն անկարողութեան տեսակները մանրամասնելով, կը յիշէ հետեւեալ պարագան. —

Անսովոր չէ նաև որ, երբ ապօրէն յարաբերութիւն մը կը փորձուի, խայտառակութեան

կամ վարակման երկիւղը, կամ կնոջ կողմէ կոպիտ դիտողութեան մը տպաւորութիւնը խափանէ կանգնումը կամ ընդհատէ զայն: Յետոյ, երբ մարդ մը վարժուած է յաջողաբար միայն մէկ կնոջ հետ կենակցելու, չի յաջողիր զուգաւորութիւն կատարել օտարականի մը հետ, մինչև որ վարժուի նորին:

Այսպէս, երիտասարդ մը իր սեռական կեանքին սկիզբէն ի վեր վարժուած էր որոշ փապարով կնոջ մը, որ խարտեաչ էր և միշտ իրեն կը հանդիպէր մետաքսէ շրջազգեստով և կօշիկները հագած. ու երբեք զուգաւորութիւն չէր կրնար ունենալ ուրիշ ո և է կնոջ հետ, եթէ ան ալ խարտեաչ չըլլար և նոյն ձևով չհագուէր:

Ամէն երկրի մէջ կան չափահաս մարդիկ որոնց արտաքին երեւոյթը մեծ նմանութիւն ունի կնոջ երեւոյթին հետ: Ունին անոր նուրբ և սլացիկ հասակը, վտիտ և երկայն անդամներ, փափուկ ձեւեր, քնքոյշ, սպիտակ և լերկ մատեր, այսինքն գրեթէ անմազ են, անպելս և անմօրուս, և իրենց սեռին մէջ կը կազմեն ուշագրաւ հակադրութիւն մը՝ նման էրիկ մարդու ձեւերով և պեխաւոր այն կիներուն որոնք կը կոչուին առնակին: Ընչացքի չգոյութիւնը կամ ցանցառութիւնը կը կազմէ այդ կնամարդիներուն գլխաւոր յատկանիշը. որովհետև, անպելս. անմօրուս մարդիկը չեն կրնար կանգնում ունենալ, ինչպէս կը

պնդէ Մորկանեի: «Լերկ բնութիւնը անընդունակ է բեղնաւորման»:

Այս տիպարներուն միւս յատկանշական գիծերն են սկար, փափուկ կազմ և աւշային խառնուածք: Իրենց հիւսուածները, թէև պարարտ, կակուղ են, իսկ մկանները՝ թոյլ: Անոնք սովորաբար տժգոյն են և խարտեաշ. թէև մորթին և մաղերուն գոյնը կը տարբերի համաձայն երկրին և կլիմային: Իրենց աչքերը, ընդհանրապէս տիուր և մուայլ, հուրք չունին, և զիմագծութիւնը, նայուածքը միայն անհոգութիւն, հեղգութիւն, անտարբերութիւն և անզգայութիւն կ'արտայայտէ: Իրենց գնացքը դանդաղ է և ծոյլ, ինչպէս մտածումը, խօսակցութիւնը. և նշանակելի կը դառնան մանաւանդ իրենց սուր, սրնգային, ճշան, ներհինի կոչուած ձայնով. քանի որ այդ բոլորը բնախօսական կապ ունին ծննդական գործարաններուն հետ: Ասոնց մէջ կան ալ որ կ'ունենան կնոջ առանձնայատուկ յատկանիշներէն մէկը, — այսինքն իրենց ստինքները մեծապէս աճած՝ կնոջական դարձած կ'ըլլան:

Այս բնական տկարութիւնը ուղղակի կ'ազդէ բարոյական խառնուածքին վրայ: Չափազանց երկչոտ և վատասիրտ, այս կարգի տղամարդիկը երկար ատեն կը պահեն իրենց մանկական խաղերն ու զուարճութիւնները: Զուրկ մտքի և սրտի մեծութենէ, անոնք անընդունակ են խոշոր, փայլուն ձեռնարկներու, քաջագործութեան և անձնուիրութեան: Յաճախ այլանդակ և անընտել, անոնք կը խուսափին ընկերութենէ, կ'ապրին

մեկուսի, նոյն իսկ իրենց ընտանիքէն ալ հեռու, անձնատուր կ'ըլլան տարօրինակ գործերու, ցուցներով ստոր և խաթարուած զգացումներ, որոնք երբեմն կ'այլասերին և վայրագ կիրքերու կը փոխուին:

Կազմական այս պայմաններուն մէջ, որոնք տրամագծապէս հակառակ են արական և իսկապէս առնական տիպարին, կենսունակութիւնը տկար է և բոլոր գործարանային պաշտօնները կը դառնան նուազուն և ընդարմացած, որով և սեռային ցանկութիւններն ալ ոչինչ են կամ խիստ թոյլ, ծոյլ: Այս բոլորը, իրենց կարգին, յառաջ կը բերեն յարաբերական անկարողութիւն:

Եւ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ, համաձայն բնութեան օրէնքին, որ երկու հակառակ սեռերը իրարու կը մօտեցնէ, երբ անոնք ո՛չ մէկ սեռային հրապոյր կը զգան իրարու հանդէպ: Այսպէս, բարոյական կամ ֆիզիքական խաթարում մըն է եղածը: Կեանքի գարունքէն թրվուուն կնոջ փափուկ և շնորհալի ձեւերուն գեղեցկութիւնը տեսնելով, անոր տկարութիւնը, ամօթխածութիւնը և նուրբ զգայնութիւնը զգալով է որ առոյգ, համարձակ, խիզախ տղամարդը ամէնէն աւելի կը հրապուրուի անկէ: Զիրենք զանազանող արտաքին հակադրութիւններէն կը ծնի փոխադարձ սէրը, և իրենց այլազան ընդունակութիւններուն ու զգայնութիւններուն փոխանցումով է որ կը գտնենք նոր կեանքը՝ իսկ այդ զգայնութիւններուն գրաւականն է հեշտանքը:

Այս կարգի անկարողութեան օրինակներ են Կովկասի հին Սկիւթացիները, որոնց մասին ակնարկութիւններ կ'ընեն Հերոդոտոս և Իստորատ, աւելցնելով թէ նոյնինքն Աստղիկը ուզեց այդ պատիժը տալ, իրենց խայտառակ առեւտուրին վրէժը լուծելու համար: Ասոնք առնականութեան բոլոր յատկութիւնները վայելելէ յետոյ, չափահասութենէն առաջ կը կորսնցնեն զայն, ինչպէս կը հաստատեն նոր երկրախոյզներ ալ, առանց կարենալու բացատրել պատճառը: Մազմօրուք կը թափին, իրենց դիմագծութիւնը կը թառամի, իրենց սեռային ցանկութիւնները կը մարին, ձայնը կը տկարանայ, մարմինը կը կորսնցնէ իրենց սեռին յատուկ ոյժն ու կորովը, և վերջապէս կը սկսին խոյս տալ ճիշդ անոնցմէ որոնց աշխատութեան և հաճոյքներուն կը մասնակցէին երբեմն. կանացի հագուստներ կը հագնին և իրենց բոլոր երջանկութիւնը կը գտնեն կիներուն նմանելով ու անոնց աշխատութիւններուն մասնակցելով: Կլիմայ և կենցաղի տեսակ, բռնի ձիավարութիւն, արիւնաուութիւն՝ ականջին ետեւէն, գիջութիւն և սերմնահոսութիւն, — այս բոլորը պատճառնկատուեցան յիշուած տարօրինակութեան. բայց ամէն կերպով չեն լուսաբաներ խնդիրը:

Այս բոլոր կանացի արտաքին հանգամանքները ճշգրտութեամբ կը տեսնուին ամորձիներէ զուրկ տղամարդոց վրայ, ինչպէս հաստատուած է Ռուսիոյ սկրպցի (ներքինացած) աղանդաւորներուն վրայ, որոնք բացարձակ ժուժկալութիւնը գերագոյն առաքինութիւն հռչակելով, չէին գոհանար ամու-

րութեամբ, այլ կը մայէին՝ կը յօշոտէին երկու սեռին ալ ծննդական գործարանները:

Կսամարդի այրերու ծննդական գործարաններու զարգացման կասուժը յաճախ կը զուգարդիպի իրենց կազմական և մտաւոր տկարութեան հետ: Իրենց վարոցը սովորաբար ձուգած է, չափազանց փոքր և թուլիկ: Նոյն իսկ կանգնած պահուն բնական պնդութիւնը չունի: Իր կակղութիւնը կը համապատասխանէ միւս հիւսուածներու կակղութեան, կը ներդաշնակուի անոր հետ: Ամորձիներն ալ փոքր են, թոյլ, ծիւրած: Երբեմն նոյն իսկ մէկ նառ միայն կ'ունենան:



Սերմի անբաւական և անկատար հոսումէն կամ անոր անկանոն ցայտումէն յառաջ եկած անկարողութիւնը պէտք չէ շփոթել տղամարդու անկարողութեան կամ ամուլութեան հետ, որ արդիւնք է սերմի չգոյութեան: Ներքինիները, որոնք միայն ամորձիներէն զրկուած են, միշտ ալ անկարող չեն, ինչպէս բացատրեցինք: Ասոնք ձակատագրականօրէն ամուլ են, և չեն կրնար սերնդագործել: Անկարողութիւն տեղի կ'ունենայ երբ ցայտումը կը կասի, կը խափանուի, կ'ընդհատուի կամ կը չեղի իր բնական ընթացքին մէջ, ո՛ր և է արդելքի մը հետեւանքով. որովհետեւ այն ատեն բռնի զուգաւորութիւնը անկատար կամ չեղեալ կը դառնայ իր վերջաւորութեան մէջ, որ ամէնէն էական և ամէնէն հեշտագրգիւ կէտն է:

Երբ ամորձիները փորին մէջ մնացած են, (cryptorchidie) կամ բորբոքած (orchite-խայս իւֆիւնէթի) և յաջորդաբար ծիւրած, երբ կարծրացած են խլիրդով (քանսէռ) կամ հիւժտխտով, յառաջ կու գայ անկարողութիւն, նեղելով, խափանելով զուգաւորութիւնը: Միզարեբանին խցումը, կամ ախտաւոր, անոնական բացուածքը — ծեփուկին վերեւ կամ տակը — միզուկին կձկուովները կամ վէրքերը կը վնասեն զուգաւորութեան կանոնաւոր կատարման: Բայց ծայրայեղ աստիճանին է որ այս թերութիւնները անկարող կը դարձնեն: Այդ պիսի տկարութիւններու ենթակայ անհատները մեծամասնաբար աւելի կամ նուազ կանոնաւորութեամբ կը զուգաւորուին, թէեւ հազուադէպ է որ կարենան արգասաւորել: Պարագան նոյնն է նաեւ սերմնաբեր խողովակներու և մակամորձիի գրգռման և խցման կամ շագանակագեղձի հիւանդութիւններու համար: Յայտումը դանդաղ է, անուղիղ, անկատար, և սերմը չի արձակուիր այն ուժգնութեամբ և արագութեամբ որ անհրաժեշտ է արգասաւորման խորհրդաւոր գործին: Այսպէս է որ ձերունիները սովորաբար զուրկ են արգասաւորելու կարողութենէն, թէեւ դեռ անասնիկներ գոյութիւն ունենան իրենց սերմին մէջ:

Կրնայ պատահիլ նաեւ որ ցայտեցուցիչ խողովակը վնասուի սերմնային փամփուշտներուն մէջ թանձրացած սերմի կուտակումով: Այսպէս, քսանըհինգ տարեկան երիտասարդի մը վրայ դիագնոստութիւն կատարուելով, տեսնուեցաւ որ

սերմնային փամփուշտները ձգտած, կարծրացած են, ինչպէս կանգնումի ատեն:

Սերմին շագանակաղեղձի մէջ մնալ և թանձրանալն ալ անկարողութեան և ամուլութեան պատճառներ են: Ասկէ յառաջ կու գան տեղական բուռն ցաւեր, խիթեր, և միզելու յաճախակի փափաքներ, իսկ այդ ախտաբանական հանգամանքն է սերմի նմանող հեղուկի մը յանկարծական ցայտումը: Գիտնական մը քննեց 55 տարեկան մարդ մը, որ կը կարծուէր թէ շագանակագեղձի հիւանդութիւն ունի: Մտտով սեղմեցին խիստ զգայուն բշտիկ մը և ահա միզուկէն ցայտեց թխորակ թեկանման զանգուած մը՝ որ քննութեամբ հաստատուեցաւ թէ կը բաղկանար խաթարուած սերմնակենդաններէ և հոյզէ: Այս անկարողութիւնը սովորաբար յառաջ կու գայ խիստ երկարատեւ ժուժկալութենէ:

Միզուկին կծկումը, որ շատերու կը պատահի իբրեւ հետեւանք բուռն կիրքերու, ծայրայեղ ցանկութիւններու, կրնայ իր կարգին ժամանակաւոր անկարողութիւն պատճառել, խցելով խողովակը և արգիլելով ցայտումը: Տոքդ. Քօքպլըն կը ներկայացնէ վենետիկցի ազնուական մը, որ այսպէս անկարող մնաց ամբողջ ամիսներ: Իրեն համար պատրանքը աւելի նպաստաւոր, աւելի գրգռիչ էր քան իրականութիւնը. որովհետեւ, յաճախ իր երազներուն կը յաջորդէր սերմի բնական ցայտում մը: Կակղեցնող դեղեր և լոգանքներ բաւական եղան, այդ անկարողութիւնը դարմանելու համար:

Արական անկարողութեան դարմանը անշուշտ շատ դժուար է, մանաւանդ որ տեսալիները շատ են և դարմանները՝ բազմազան: Ամէն բանէ առաջ, այդպիսի դժբախտները պարտին խորհրդազակցիլ բժշկին հետ: Դարմանումը լաւ արդիւնքներ կը խոստանայ, երբ ճշգրտօրէն, ուշադրութեամբ քննեն, վերլուծեն պատճառներն ու ախտանշանները:

Եթէ անկարողութիւնը հետեւանք է ջերմամիզութեան, կամ ծայրայեղ գիջութեան, Տօքդ. Պլոխ կը յանձնարարէ, — թեթեւ տաղում միզուկի և մարձում (մասաժ) շազանակագեղձի. լոգանք «ասիտ քարպօնիք»ով, նոտարոգանք տաք կամ պղղ ջուրով, կամ ելեկտրարութեան, որ սակայն մեծ զգուշութիւն կը պահանջէ: Ետտ մը պարագաներու մէջ, անկատար կանգնումին կ'օգնէ հարիւրին 10 եթերախառն լուծոյթ քափուրի, որ պէտք է քսուի ամբողջ ծննդագործական շրջանակին վրայ:

Մեքենական գործիքներ ալ փորձուած են կանգնումի համար, ինչպէս Schlittenը՝ որ յատուկ է բաւական կանգուն չեղած վարոց մը ուղղելու և կը բաղկանայ մետաղեայ երկու բարակ, յարմար ձեւով շինուած շեղքերէ, կամ Կասէնի «կանգնիչը», որ միեւնոյն ձեւով կը գործէ: Այսպիսի գործիքները օգտակար են այն չափով որ իբրև լծակ կը ծառայեն առնանդամին և որոշ ոյժ մը կուտան անոր: Ուրիշ արժէք չունին թէ ասոնք և թէ նման բազմատեսակ գործիքներ (խտացնող-ճնշող մեքենայ, «կուտակող» մեքենայ ևն.):

Որ և է տեղական կամ ընդհանուր փոփոխութիւն որ այսպէս կամ այնպէս առնչութիւն ունի անկարողութեան դէպքերու հետ, պէտք է լուրջ ուշադրութեան առնուի: Ինչ կը վերաբերի անկարողութեան ընդհանուր դարմանումին, ամէնէն առաջ պէտք է փորձել հոգեբուժական ազդեցութիւնը: Օրինակ, շատ մը պարագաներու մէջ, կարելի է առժամաբար հրաժարիլ ընդհանրապէս սեռային շրջանակի հետ կապ ունեցող մտածումներէ. իսկ այդ փորձին հիմը պիտի կազմէ բացարձակ արգելում սեռային գործունէութեան (գիջութիւն ևն.): Միեւնոյն ատեն, պէտք է զօրացնել կաւսն ու ինֆնալսանոթիւնը: Այս պարագաներուն մէջ ուշիմ կ'ին մը շատ բան կրնայ ընել, բժշկին գործը լրացնելու համար: Երբեմն կենցաղի կամ սղամարդուն ու կնոջ յարաբերութեանց մէջ փոփոխութիւն մը, բայց մանաւանդ սեռային գործողութեան ձեւի՝ դիրքի փոփոխութիւն մը կրնան յայտնապէս փրկարար ազդեցութիւն ունենալ: Զղային անկարողութիւնը, որ շատ անգամ բուն պատճառն է անկարողութեան, երբ դարմանուի, բնականաբար նպաստաւոր արդիւնք կ'ունենայ: Լաւ է որ ալքոլը և ծխախոտը բացարձակապէս արգիլուին:

Անհամար դեղեր յանձնարարուած են անկարողութեան համար, ինչպէս կոլաճանձ (գունտուզ պէօճէյի), կարոս (քէրէվիզ), ծներեկ (ասփէրթ), խավհար, դեանասունկ ևն.: Ծիշդ է որ այս բոլորը կրնան գրգռել ծննդական գործարանները. բայց ատիկա պարզապէս անկէ յառաջ կու գայ որ

արիւնի նոր հոսում մը տեղի կ'ունենայ նոյն գործարաններուն մէջ, ինչ որ շատ խարուսիկ է. և երբ փորձը յաճախ կրկնուի, մասնաւորապէս երբ կոլաճանճ գործածուի այս նպատակով, կրնայ ծանր հետեւանքներ ունենալ: Քանի մը զիտնականներ աւելի վստահութեամբ կը յանձնարարեն Փօսֆօր, սարիքնին և մանաւանդ yohimbine, — դեղ մը որ կը պատրաստուի Արեւմտեան Ափրիկէի մէջ աճող ծառի ւր կեղեւէն: Մէնտէլ, էօլէնպուրկ և Պլօխ անձնական փորձերով հաստատած են թէ այդ դեղը մեծապէս կ'օգնէ ջերմամիզութենէ կամ ջրային անկարողութենէ յառաջ եկած անկարողութեան պարագային: Իբր վաթսուն տարեկան մարդ մը, որ ծերանալէն առաջ անկարողութեան դատապարտուած էր, եօհիմպլինի շնորհիւ կրցաւ, քանի մը տարուան ընդհատումէ ետք, նորէն կանգնում ունենալ և յաճախակի զուգաւորութիւն կատարել: Էօլէնպուրկ կը յիշէ մարդ մը, — թերեւս եղակամ՝ իր տեսակին մէջ — որ միայն քանի մը օր այդ դեղէն գործածելով, վերստացաւ իր սեռային կարողութիւնը, ամբողջ տասերկու տարի անկարող մնալէ յետոյ...

Սեռային հաճոյքներու չափազանցութենէն ծնած անկարողութիւնը շատ ծանր է, բայց ոչ բացարձակապէս անբուժելի, ինչպէս օրինակներ կան: Բժիշկները կը յիշեն երիտասարդ մը, որուն սեռային ծայրայեղութիւնները այնքան կանխահաս եղած էին որ, երեսուն տարեկանին իր գործարանները ջլատուեցան: Տղան ամուսնացաւ, բայց անկարող էր: Այն ատեն զինքը դարմանի

տակ առին, տալով քինքինա, Մատերայի զինի, այծի կաթ, մնդարար ճաշ, որոնց կը յաջորդէին բացօթեայ պտոյաններ, որսի և ձիավարութեան վարժութիւններ: Վերադարձին տեղի կ'ունենար պաղ ջուրով լողանք՝ մինչեւ տասը վայրկեան, ինչպէս և մարզանք ու թեթեւ ընթրիք մը: Այս կերպով երիտասարդը 15 օրէն բժշկուեցաւ իր անկարողութենէն: Երեսուննէինք տարեկան լե՛ն իշխան մըն ալ, որ տասը տարիէ ի վեր անկարողութեան մատնուած էր տուփական չափազանցութիւններու հետեւանքով, բժշկուեցաւ նոյն եղանակով և շփումներով: Որքան ատեն որ ուղեղի կամ ողնաձուծի կազմական վնաս չկայ, կարելի է ամէն բարիք յուսալ ֆիզիքական և բարոյական կատարեալ աւողջապահութենէ մը: Հարկ է կազդուրել, ուժեղացնել կազմը, խթանելով զայն, արթնցնել երեւակայութիւնը, ուղեղային ոգեւորութիւնն ու ցանկութիւնները գրգռել տուփական առարկաներով և քաղցր գգուանքներով:

Այս բոլորէն վերջն է որ կը յանձնարարեն ցանկայարոյց դեղեր, որոնց մասին խօսեցանք արդէն: Կարգ մը բոյսերու արմատները, սոխը, սխտորը, դարապղպեղը, բրբուռը, հաշիշը, կանկառը, սունկը, տարաշխարհիկ բոյրեր, ինչպէս կոճապղպեղը (գեմմեֆիլ), վանելիան, սովորական պղպեղը, դարիճը (քարչին), հնդկընկոյղը, ևն. հոչակուած են իբրեւ տուփանք գրգռող, պարզապէս իրենց կծող, խթանող յատկութիւններուն համար. որովհետեւ ոչ ուղղակի, ոչ ալ մասնաւոր ազդեցութիւն ունին ծննդական գործարաններուն վրայ:

Կենդանական աշխարհին մէջ, ծովու և գետի թարմ և աղած ձուկերը և մասնաւորապէս անոնց սերմնակաթը միշտ հոչակուած են իբրև սուփայոյզ, իրենց պարունակած ֆոսֆորին կամ պատրաստութեան ատեն իրենց խառնուած աղին, համեմնեցողուն և նպարեղէններուն պատճառով: Այս կարգէն համբաււոր են ոստրէն (ստրիտիա), ուլականջը (միտիա), կատուածուկը, թիւնտը (փալամուտ), լոզը (սալամոն պալըզը), աղկերը (սարտեյա), մանաւանդ ծովայինները:

Համբաւ հանած են, վերջապէս ուրիշ բազմաթիւ կենդանական արտադրութիւններ, ինչպէս մուշկը, գորշ յամպարը, կուզրի (գունտուզ) հաւկիթը, այծեամի, ճագարի սեւ միսը: Բայց գիտնականները կը հաստատեն թէ ընդհանրապէս ընտիր շօքօյան, կամ racahoultի կոչուած անդարար նիւթը—որ հոտուէտ խառնուրդ մըն է քաքաօի և ընդեղէններու ալիւրին,—կաթը, թարմ հաւկիթը և ուրիշ նման ուտեստներ աւելի ազդու և վստահելի են, երբ լաւ կը մարսուին: Կազմը զօրացնելով, անոնք կը զարգացնեն, կ'աւելցնեն ծննդական կամ ուրիշ գործարաններու բնական և կանոնաւոր խանդը. մինչդեռ երբ նոյն այդ գործարանները կը խթանենք, կը գրգռենք դեղերով, մասնաւոր ազգակներով, և այս կամ այն ուղղութեամբ, կը չափազանցենք գործածութիւնը և ժամանակէն առաջ կորսնցնելու վտանգին կ'ենթարկուինք. մանաւանդ երբ միւս գործարանները, մասնաւորապէս մարսողականը, բնական պայմաններով չեն գործեր:

Գիտութիւնը բացարձակապէս կը մերժէ բզէզներու և կոլաճանճերու բաղադրութիւնները, որոնք պատճառ եղած են այնքան թունաւորումներու և փտախտներու: Կոլաճանճը զօրաւոր թոյն մըն է որ ամենավտանգաւոր հետեւանքներ կ'ունենայ ստամոքսին և ծննդական գործարաններուն վրայ: Նշանաւոր բոզ մը այդ միջատէն բաղադրուած հեղուկ մը տուաւ իր սիրահարին, և խեղճը մեռաւ միզուկի արիւնահոսութեամբ: Ուրիշ շատեր՝ դերասան, հեղինակ ևն. մեռած են նոյն կերպով: Եւ դեռ հազարաւորներ կան որ անգիտակցաբար զո՞ն գացած են բիւրազան խաբէական բաղադրութեանց: Այսպէս են Իտալիոյ «սատանիկ»ները, վեաիկեան կամ սուփական փաւսիկները, որոնք այնքան հոչակաւոր էին ատեն մը:

Հանքային աշխարհէն, հիները կը գործածէին միայն կրային բնածխաքար, բորակը, բնածխատային երկաթը (fer carbonaté), և ըմպելի ոսկին. որովհետեւ սեղեկութիւն չունէին ֆոսֆորէն, որ, բոլոր հանքային նիւթերուն մէջ, գրեթէ միակ սուփայոյզ գեղն է, թէեւ միշտ զգուշանալի և կարօ՞ւ բժշկի ներկայութեան:

Ծծուծը և ծովային աղը, իրենց գրգռիչ յատկութիւններով, սովորական միջոցներ են տըւփանք յարուցանելու: Այսպէս կը գործածուին ծծմբային ջուրերը, և աղը՝ ծովային լոգանքներով կամ խոհանոցի մէջ: Շոգիով լոգանքը, որուն կը յաջորդէ պաղ ուսոգում ծննդական գործարաններուն վրայ—կամ ուստական լոգանք—հրաշալի կերպով կ'ազդեն սեռային չափազանցութիւններէ

ուժասպառ մարդոց անկարողութեան դէմ: Բայց ասոնք ալ երկրորդական աստիճանով կը խթանեն բուն արտադրութեան գործարանը:

Ջրաբուժական մեթոտը, որ նոյնիսկ առաւելութիւն մը ունի ծովալողանքին հետ բաղդատմամբ, որովհետեւ կրնայ բուն իսկ տեղին՝ աղնածուծին կամ ծննդական գործարաններուն վրայ կատարուիլ, օգտակար է կարգ մը տկարութիւններու, սակաւարիւնութեան, և ժամանակորայէս սեռային պաղութեան դէմ: Մաքուր, յտակ, թեթեւ և օդասուն ջուրը առաջին տեղը կրնայ բռնել այս տեսակէտով: Կարթագինէի մէջ օրէնք մը կ'արգիլէր ուրիշ ս'ր և է ըմպելի գործածել ամուսնական կենակցութեան ատեն: Պէյքըն զիտած է որ առնականութիւնը կանուխէն կը տկարանայ գինոխերուն քով, իսկ կ'երկարածգուի՝ միայն ջուր խմողներուն մէջ: Արդի գիտութիւնը աւելի զօրաւոր փաստերով հաստատեց այս պարագան, ապացուցանելով թէ ալքոլամոլութիւնը կը խաթարէ հիւսկէնները, մոնաւանդ ուղեղին հիւսուածը, զոր ճարպախտի կ'ենթարկէ և կ'այլասերէ:



Այլեւս չենք ուզեր խօսիլ այն հազարումէկ տուփայոյզ դարմաններուն վրայ — ըմպելի, օշորակ, փաստիլ, դեղահատ, սպեղանի ևն. — որոնց փառարանութիւնը կ'ըլլայ տշխարհի ամէն կողմը, շողջողուն յայտարարութիւններով: Չկայ իրական, շողջողուն, անմիջական տուփայարոյց մը քան բնա-

կան սէրը, և առողջութիւնը: Երբ սէրը չի յաջողիր տուփանք յարուցանել, կը նշանակէ թէ խաթարում մը կամ հիւանդութիւն մը կայ, և մինչև որ մէկը կամ միւսը չդարմանուին, ամէն փորձ ապարդիւն է: «Ուժեղ ըլլալու համար, ըսած է Ուլիդէս, չկայ ուրիշ միջոց բայց միայն տնտեսել իր ոյժը»:

Երբ ոյժը անհետացեր է, դեղերը չէ որ պիտի վերահաստատեն կամ պիտի երկարածգեն գործունէութիւնը:

Այս կարգէն է նաև ցարասիէ աւելով երկկամինը կամ թարմ եղիճով ծննդական գործարանները ձաղկելու սովորութիւնները, որ իբրեւ թէ առնականութիւն կուտան: Նոյնքան ապարդիւն միջոց մըն է միւսը ասեղով ծեծելու բարբարոսութիւնը:



Այս ցանկայարոյց միջոցները պէտք է մեծ վերապահութեամբ և խոհեմութեամբ փորձել, մանաւանդ որ անոնց չափազանցութիւնը կամ զեղծումները կրնան յառաջ բերել ախտաւոր տուփանք մը, տրամագծապէս հակառակը անկարողութեան, — մնայուն և ցաւազին կանգնում մը, որ կը կոչուի պրիապութիւն և կ'արտայայտուի ջերմամիզական հոսումներով: Ատկէ կրնայ ծնիլ նաև տուփական մոլեգնութիւնը, որ այրերուն քով կը կոչուի իգամոլութիւն կամ ճակաճանութիւն, իսկ կիսերուն համար՝ այրամոլութիւն կամ նիւփամոլութիւն: Ցանկամոլութեան այս վիճակները այնքան

վտանգաւոր են ու ծանր՝ որքան անկարողութիւնը, և շատ չանցած հոն կ'առաջնորդեն անվրէպ:

Մայրայեղ զգայասիրութեան և տափամուտթեան այսպիսի պարագայներու մէջ, անհրաժեշտ միջոցներ են ժուժկալութիւնը և մեղմացուցիչ ազդակները, ինչպէս առատ պաղ ջուրով ընդհանուր լողանք կամ նստալողանք, կակղեցնող ծեփելիքներ (լափա) և լուացումներ: Տոքդ. Կառնիէ կը յանձնարարէ նաև կիտրոնի կամ հաղարջի հիւթով թթուած ըմպելիներ, ինչպէս և նունուֆարի, կամ հազարուկի (թօփ սալաթա), ճարճրուկի և եղերդի (րատիքիա) եփածոններ: Մասնաւորապէս տափանքը դադրեցնելու համար բժիշկները կը պատուիրեն քափուր՝ խառնուած նունուֆարի փոշիով, և ներսէն գործածելի: Գափուրաւոր և ափիոնախառն իւղեր ալ քսելով ծննդական գործարաններուն վրայ, կարելի է օգտուիլ: Լորելիայի իւղը կը յանձնարարուի ցաւառոխթ կանգնումներու դէմ: Վերջապէս օգտակար են բոլոր մեղմացուցիչ դեղերը, ափիօնը, մորֆինը ևն., ներսէն կամ դուրսէն գործածելով: Կարգ մը խառնուածքներու համար ջուր և խիստ զօրաւոր խահուէն ամենալաւ հակազդողն է տրուփանքի: Անոնք որ փորձած են այդ ազդեցութիւնը, կրնան սուրճ գործածել իրենց կամքին համաձայն: Սուրճը, ինչպէս թէյը, գինին, նոյն իսկ ոգելից ըմպելիները կարգ մը մարդոց վրայ կը ծառային աւելի իբրև մեղմացուցիչ ծննդական գործարաններու քան իբրև գրգռիչ:

Սեռային կարողութիւնը երբեմն կը նուազի կամ բոլորովին կը չբանայ կարգ մը դեղերու չափազանց գործածութենէն: Անոնք որ վարժուած են ափիօնի, քլորալի, պրոմիւր տը փօթասի և հաշիշի, հետզհետէ պիտի կորսնցնեն իրենց սեռային բնազդը և զուգաւորուելու կարողութիւնը: Նոյն վտանգին ենթակայ են այն գործաւորները որոնք կը գանուին կարգ մը քիմիական նիւթերու կազին ազդեցութիւն տակ (արսէնիք, անթիմոն, կապար ևն.): Արիւնին մէջ շաքարի չափազանցութիւնն ալ, ինչպէս կը պատահի շաքարախտի ատեն, կրնայ անկարողութիւն պատճառել, թէև անհատին առողջութիւնը և ոյժը երեւութապէս անվթար կը մնան: — Այսպիսի տկարութիւններու դարմանն է, անշուշտ, ջնջել պատճառը:

Անդամալուծական անկարողութեան դէպքերուն, ինչպէս յիշեցինք, երբեք կանգնում տեղի չունենար, թէև երբեմն կէս-կանգնումներ կը պատահին. ցայտում չըլլար, կամ տեղի կ'ունենայ առանց ո՛ր և է զգայութիւն պատճառելու և սերմը չի ցայտեր, այլ աստիճանաբար կը կաթկթի միզաբերանէն, իսկ վարոցին մորթը շատ քիչ զգայուն է, և երբեմն բոլորովին թմրած: Այս անկարողութիւնը հետեւանք ըլլալով ուղեղի կամ ողնածուծի կազմական հիւանդութեանց, ջլատում կը պատճառէ մարմնի միւս մասերուն մէջ: Գլուխի ետեւէն զօրաւոր հարուած մը մասնաւորապէս կրնայ կատարեալ անկարողութիւն պատճառել:



Իգալական Անկարողութիւն

Աւելորդ է ըսել թէ բառին բուն նշանակութեամբ անկարողութիւն չկայ կնոջ կողմէ: Բայց միեւնոյն կազմական կամ մտային խոչնդոտները և ջլատումները կը պատահին իր քով ալ, խափանելով հեշտական զգայութիւնները և տախիբը, և յաճախ գարշանք ազդելով:

Այսպէս, որքան ալ զուգաւորութեան մէջ կնոջ դերը կրտսերական և սահմանափակ ըլլայ, — բացարձակ կամ յարաբերական, բուժելի կամ անբուժելի արգելք մը կը ծագի, երբ խոռոճալին գոց է, մանր՝ հերածեւ խողովակները կծկուած են, մեծ ու փոքր շրթները իրարու կպած են, կուսական թաղանթը տոկուն է՝ կը դիմադրէ, արգանդի պարանոցը խցուած է կամ արգանդը ինք թուլացած. — վերջապէս երբ կան ուրիշ հազարումէկ շեղումներ՝ ծննդական գործարաններու կամ ընդհանուր կազմական թերութիւններ:

Երկու բժիշկներ, որոնք Անգլիացիներուն կողմէ պաշտօն ստացեր էին քննելու ժամ ա՛Սրքի կուսութիւնը, հաստատեցին թէ բունոցէն արգանդ խողովակը այնքան նեղ էր որ, ճշմարիտ անկարողութիւն մը կը պատճառէր: Եւ ահա թէ ի՛նչու այդ հերոսունին մինչեւ վերջն ալ կոչուեցաւ Օրլէանի Կոյս: Բայց այս յայտարարութիւնը շատ վստահելի չէ. որովհետեւ բազմաթիւ հեղինակներու կողմէ կը յիշուին դէպքեր ուր այդ

խողովակը հազիւ փետուրի մը տրամագիծն ունէր, և սակայն աստիճանաբար ընդլայնուելով, կարելի դարձուց թէ զուգաւորութիւնը և թէ տղարեքը,

Ամէն բանէ առաջ անհրաժեշտ է սր բունոցը, ըլլալով կնոջ բոլոր ծննդական գործարաններուն արտաքին գաւիթը, կամ «սիրոյ պալատին պողոտան», — ինչպէս կոչած են գիտնականներ իսկ, բանաստեղծօրէն, — կազմէ բնական ամբողջութիւն մը, զերծ կազմական թերութիւններէ: Բունոցը կնոջ զրգուման և հեշտանքի կեղորոնն է. ու թէեւ բացարձակապէս անհրաժեշտ չէ զուգաւորութեան, բայց անոր բնական դրդիչն ու գըրգռիչը կը կազմէ: Վէրքերն ու խաթարումները մեծապէս կը նուազեցնեն իր հրապոյրները: Այդպիսի անկանոնութիւններ կը նեղեն, կը խանգարեն և նոյն իսկ կը խափանեն զուգաւորումը:

Բունոցի բացարձակ չզոյրթիւնը խիստ հազուադէպ է. թէեւ գիտութիւնը կը յիշէ կարգ մը հրէշային դէպքեր, ուր ս՛չ մէկ հետք կար մեծ կամ փոքր շրթներու, ոչ ծլիկի, ո՛չ ս՛ր և է բացուածք, այլ հարթ հաւասար մակերես մը՝ առանց մաղի, և իրբեւ շարունակութիւնը փորին: Այսպիսի բացառութիւն մը բոլորովին կը ջնջէ կնոջ դերը, և սովորաբար իրեն հետ կը բերէ նաեւ կազմական համապատասխան թերութիւններ: ԺԸ. դարու նշանաւոր դատերուն մէջ կը յիշուի հետեւեալ պարագան. — Քսանեւհինգ տարեկան մանկամարդունի մը, քաջողջ և հաճելի երեւոյթով, 1722 օգոստոսին ամուսնացաւ երիտասարդի մը հետ: Ամբողջ վեց տարի. ամուսնական մերձե-

ցում տեղի չունեցաւ և վերջապէս, երբ կինը հաւանեցաւ քննութեան ենթարկուիլ, դայեակը հաստատեց որ խեղճը զուրկ է ծննդական գործարաններէ: Ինչ որ իր սեւը կը կազմէր, պարզապէս պինդ մարմին մըն էր՝ փոքր ծակով մը: Մանկամարդուհին խոստովանեցաւ թէ երբեք դաշտան չէ ունեցած, թէեւ շատ առողջ էր:

Այսպիսի դէպքերը միայն պատահարաբար երեւան կ'ելլեն: 1870ին, Փարիզի պաշարման ատեն, խենթուկ պառաւ մը ձերբակալուեցաւ իբրեւ լրտես: Ոստիկանատան մէջ երկու բժիշկներ քննեցին զինքը և տեսան որ ոչ ծիծ ունի; ոչ խոռոճպի, ոչ ծլիկ, ոչ ալ արգանդ: Պարզապէս բունոցի ճեղք մը կար, կազմուած՝ երկու շատ խոշոր, բարակ և ծալ ծալ շրթներով, իսկ վերեւը՝ միզարեղան մը:

Փոխանակ կատարեալ կամ սկզբնական խցումի, բունոցի արկածական խցում ալ տեղի կըրնայ ունենալ շրթներուն իրարու միացումով, իբրեւ հետեւանք վէրքերու, այրուածքներու, ծաղկախտային բորբոքումներու ևն: Այս պարագան շատ աւելի երկիւղալի է, որովհետեւ միւս ներքին գործարանները կան ու կը մնան և պիտի խանգարէ անոնց գործունէութիւնը, արգիլելով զուգաւորումն ալ: Այսպիսի վտանգներ անխուսափելի էին հին ատեն, երբ ասպետներ՝ կուրացած մոլեկան նախանձով մը, պատերազմի գացած ատեն օղակ կ'անցընէին իրենց կիներու բունոցին, որպէսզի վտանհ ըլլան անոնց զգաստութեան և հաւատարմութեան: Եւ յաճախ կը պա-

տահէր որ մեծ շրթները իրարու փակին: Այս մասին տեղեկութիւններ տուած ենք արդէն նախընթաց գլուխներով: —

Մանկամարդ աղջիկներու մէջ խոռոճպին գոց ըլլալը կը յայտնուի դաշտանի խցումով և ամսական ցաւերով, որոնք անոր հետեւանքներն են: Քսանընչնգ տարեկան կին մը, որ հինգ ամիսէ ի վեր ամուսնացած էր, այդ դժբախտութեան մէջ կը գտնուէր, բայց հասկցաւ ա՛յն ատեն միայն, երբ զուգաւորութիւն փորձեց և չյաջողեցաւ, թէեւ շարունակ ցաւեր կը զգար 18 տարեկանէն ի վեր: Երբեք դաշտան չէր ունեցած, և ծիծերն ալ շատ զարգացած չէին: Հարկ եղաւ բժիշկ կանչել, որ մասնաւոր գործիքներով ծակեց, և կինը մայր դարձաւ:

Ուրիշ կին մը չկրնալով զուգաւորուիլ, կը պատրաստուէր ամուսնալուծում պահանջելու: Բժիշկ մը նախ կակղացուցիչ դեղեր փորձեց, և յետոյ, խոռոճպի ամբողջ երկայնութեանը ներմուծեց օձադեղի (ճէնթիանա) արմատ մը, հետզհետէ աւելցնելով ծաւալը: Յետոյ անոր տեղ ներմուծեց եգիպտացորենի ցօղունի մը ծուծը, յետոյ յատկապէս պատրաստուած սպունգը, որոնք աստիճանաբար լայնացցին խողովակը և կարելի դարձուցին գործողութիւնը:

Արդարեւ, հուզաթաղանթներով պատուած խողովակները կամ անցքերը զարմանալի ընդունակութիւն ունին ընդլայնուելու, երբ փորձերը կ'ըլ-

լան աստիճանաւոր, յարատեւ և մանաւանդ՝ այնպիսի տարիքի մը մէջ ուր անդամները չեն կարծրացած: Այս առթիւ եղական դէպք մը կը պատմէ Տոքթ. Լաթոու: Գիւղացի մը իրեն կը դանդաղացէր թէ կինը ամուլ կը մնայ: Բժիշկը փոխարկարար դիտել տուաւ թէ թերեւս սւղիղ ճամբուն չի հետեւիր. բայց, դիմոցինը այնքան պարզամիտ էր որ, ապահովարար կը չփոթէր խոտոճպին և միզանցքը: Սկզբնաւորութիւնը ասժանկի եղած էր, բայց աստիճանական ընդլայնումով մը, ամուսինը նպատակին հասած էր, և իր սխալին մէջ մնաց, մինչեւ որ միզաձակութիւն մը եւ ուրիշ ծանր դէպքեր հարկադրեցին կինը՝ բժիշկ կանչելու: Այս վերջինը սարսափեցաւ, տեսնելով մահացու հետեւանքները սխալ հոսկացողութեան մը:



Կնոջ անկարողութեան ուրիշ պատճառ մըն է ծլիկին չափազանց մեծութիւնը: Եթէ անոր չգոյութիւնը կինը կը զրկէ ցանկութիւններէ, չափազանց անուսն ալ ծնունդ կուտայ ցոփութեան, վաւաչի: Այսպէս, Արակայի սեւամորթուհիները, որոնք շատ երկար ծլիկներ ունին, չափազանց վաւաչոտ են, կը խենդենան այրերուն վրայ և բեղուն ծննդաբերութիւն ունին: Մինչեւ հինգվեց բթաչափ, նոյն իսկ մատի երկայնութեամբ ծլիկներ տեսնուած են, ընդունակ՝ առնական կանգնումի: Վենեկաուհի մը կար որուն երկայն

ուկրուտ ծլիկը սարսափ կ'ազդէր տղամարդոց, իր պատճառած ցաւերուն համար: Այս բացառիկ վիճակները ուղղակի անառակութեան, գիջութիւն կը մղեն և նոյն իսկ պատճառ կ'ըլլան ուրիշ ամօթալի մոլութեան մը, — կիները կիներ կը փնտռեն տափական նպատակներով իրարու շփուելու համար: Այդ մոլութիւնը այսօր կը կոչուի Սափիովականութիւն կամ Լեսբեան հաճոյք, Լեսբոսի հոչակաւոր Սափիովին (Սաֆօ) անունով, որ ամբաստանուած էր այդ անբնական ունակութեամբ:



Կայ նաև խոռոճալի կծկումը (vaginisme), իբրեւ արգելք կնոջ զուգաւորութեան: Բունոցի ջղային մէկ վիճակն է այս, որ միացած կամ ոչ այդ անցքի կծկումին, ամուսինն մերձեցման պահուն այնպիսի ցաւեր կ'առթէ որ, կինը ակամայ ետ կը մղէ զայն:

Այս անկանոնութիւնը յառաջ կու գայ խոռոճալի մկաններուն ակամայ կծկումով, որուն կ'ընկերանայ անսովոր զգայնութիւն՝ խոռոպճի մուտքին: Յաճախ հետեւանք է գիջութեան, բայց ընդհանրապէս ձախաւեր և վայրագ զուգաւորութեանց, մանաւանդ երբ առնանդամը շատ մեծ է, իսկ խոռոպճիին մուտքը՝ շատ փոքր: Կամ երբ կնոջ ծննդական գործարանները սովորականէն աւելի առաջ երկարած են: Երբեմն խոռոճալին այնքան կը կծկուի և կը նեղնայ որ, հազիւ կարելի կ'ըլլայ փետուրի փող մը ներմուծել: Շատ

անգամ յառաջ կու գայ պղտիկ վէրքերէ, բոր-
բորումներէ կամ ծննդաբերական պատառումներէ .
մարմնական ցաւին կ'ընկերանայ հոգեկան անձ-
կութիւնն ալ՝ զուգաւորութեան իւրաքանչիւր
նոր փորձի ատեն, և հետեւանքը կ'ըլլայ անդա-
դարձ կծկում:

Երբեմն կծկումը չի սկսիր մինչեւ որ առնան-
դամը ներս մտնէ. և այդ պարագային հոն
կը փակուի կը մնայ: Քանի մը տարի առաջ այս-
պիսի նշանաւոր դէպք մը պատահեցաւ Պրէմէնի
մէջ (Գերմանիա): Նաւարանի աշխատաւորներէն
մէկը սեռային յարաբերութեան մէջ էր յետ ընկած
անկիւն մը, երբ կինը յանկարծ բռնուեցաւ այդ
ակամայ կծկումէն և այրը չկրցաւ ինքզինքը
ազատել բանտարկութենէն: Մեծ բազմութիւն մը
հաւաքուեցաւ, որու մէջէն դժբախտ ամուր փո-
խադրուեցաւ փակ կառքի մը մէջ, և հիւանդա-
նոց տարուեցաւ: Աղջկան քլորոֆորմ ներարկուելէ
ետքն էր որ կծկումը դադրեցաւ և երիտասարդն
ալ ազատեցաւ...

Տորդ. Նէֆթէլ հաստատած է որ կապարի
աղեր պարունակող շատ մը կիներ ֆոզմէքիկներ
գործածելով, խոռոճպիտ այդ հիւանդութիւնը ու-
նեցած են:

Բայց կնոջ իսկական անկարողութեան պատ-
ճառը իրապէս բարոյական է, — անտարբերու-
թիւն, պաղութիւն, գարշանք:

Նւ արդէն, գիտնականներ հաստատած են որ
սեռային անտարբերութիւնը կամ թմրութիւնը

աւելի ընդհանրական է կնոջ քան տղամարդուն
համար: Հեղինակութիւն մը ըսած է թէ տասը
կինէն չորսը որ և է զգայութիւն չեն ունենար
զուգաւորութեան ատեն, և անոր կ'ենթարկուին
առանց ուղղակի հաճոյք մը զգալու. այսինքն,
կիներուն հարիւրին 40ը կը տատապին պաղու-
թենէ, զգայութեան պակասութենէ: Բայց նորա-
գոյն հեղինակութիւններ չափազանց կը գտնեն
այդ հաշիւը. թէև ընդհանուր գիծերուն մէջ շատ
ճիշդ է: Տղամարդուն մէջ հարիւրին մէկ հազիւ
կը պատահի սեռային զգայութեան պակաս:

Կիներուն մէջ այդ դժբախտութեան պատ-
ճառները շատ են: Ամէնէն առաջ, գիջուրիւնը կնոջ
մէջ աւելի կը նուազեցնէ սեռային զգայութիւնը
քան տղամարդուն մէջ. մանաւանդ կը բթացնէ
ընական զուգաւորութեան համար անհրաժեշտ
զգայութիւնը, թէ՛ հոգեկան ազդեցութիւններով
և թէ՛ ծննդական արտաքին գործարաններու
անզգայութեամբ. որովհետև, ծլիկը պէտք եղա-
ծին պէս չի գրգռուիր ընական մերձեցման ատեն,
մինչ հզօրապէս կը գրգռուի գիշութեան միջոցին:
Տղամարդուն վայրագ փորձերը կամ անկարողու-
թիւնն ալ կ'ազդեն կնոջ սեռային պաղութեան
վրայ:

Սեռային զգայութեան տեսակէտով պաղ կի-
ներէն անոնք որ դժբախտ պայմաններու մէջ կը
գտնուին կամ այլասերած են, բող կը դառնան:
Ասոնք միշտ պաղ կը մնան իրենց արհեստին գոր-
ծադրութեան ատեն, որովհետև, սկիւնէն իսկ և

միշտ անզգայ են և կրնան իրենց բոլոր ոյժը շահագործել տղամարդը կողոպտելու համար:

Բարձրաստիճան բող մը կը պատմէր բժշկին թէ ինք այդ ասպարէզը մտաւ ոչ թէ մոլի կիրքերու հետեւանքով, — որովհետեւ ինք բոլորովին անզգայ է — այլ պարզապէս օգնելու իր ծերունի ծնողքին և ապահովելու զաւելին ապագան: Աւելցուց թէ յաջողութիւնը կը պարտէր իր պաղութեան, «որուն համար չափազանց չնորհապարտ էր»: Երբեք հազար մարքէն պակաս չէր գիջաներ, և կը ծաղրէր իր արհեստակիցները, «այն տխմար և չար աղջիկները, որոնք — երբ մանաւանդ իրենց գլուխը բռնկած է շամբանեայէն — իրենք զիրենք կը տրամադրեն ոչինչ գնով և նոյն իսկ էրիկ մարդերու ետեւէն կը վազեն...»

Տոբք. Պիօն կը յայտնէ թէ զուգաւորութեան անկարող՝ սառն կիները (frigidity) բաղդատաբար աւելի յոճախ կ'ամուսնանան քան անոնք որ աւելի զգայուն են. որովհետեւ իրենց բնական վերապահութիւնը աւելի յարգելի է տղամարդու աչքին և տեսակ մը ապահովութիւն՝ հաւատարմութեան: Այսպիսի ամուսնութիւնները բնականաբար գրեթէ միշտ դժբախտ են, որովհետեւ տղամարդը շուտով կը հասկնայ գործին էութիւնը, և ուշ կամ կանուխ կը ստիպուի դուրսը վնասել իր տուփանքին գոհացումը: Երբեմն պաղ կիները վաւաչ, տուփի զգայ կը ձեւացնեն և կը խարեն տղամարդը: Երբեմն ալ, հակառակ կնոջ յայտնի ցրտութեան կամ անզգայութեան, ամուսնական կեանքը դարձեալ գէշ աղէկ կը քաշքշուի, երբ

տղամարդը մասամբ կամ բոլորովին անկարող է և յօժարութեամբ կը հրաժարի զուգաւորութենէ:

Մարմնապէս քաջողջ վաճառական մը կար, հազիւ քառասուն տարեկան, որ, 11 տարեկանէն մինչեւ այդ տարիքը, շարունակած էր գիջութիւն ընել (11-18 տարեկանին՝ օրական երկու անգամ): Յաճախ ցայտում ունեցած էր առանց կանգնումի: Երբ քսան տարեկան եղաւ, քանի քանի անգամ զուգաւորութիւն փորձեց, բայց կանգնում չէր ունենար: Ընդհանուր առումով, երբեք կանգնում ունեցած չէր իր ուշադրութիւնը այդ նպատակին ուղղած ատեն, այլ առանց իր գործակցութեան, զուգաւորութեան փորձերէ տարբեր առթիւներու մէջ: Այսպէս, մինչեւ իր նշանտուքը, — մինչեւ երեսուն տարեկանը — երբեք բնական զուգաւորութիւն կատարած չէր, այլ միայն սեռային գոհացում ստացած էր գիջութեան չորհիւ. հետեւաբար մեծ վարանումով ամուսնացաւ, թէեւ իր նշանախօսութեան 11 ամիսներու միջոցին նուազեցուցած էր գիջութիւնը: Առաջատու գիշերը, սակայն, և անկէ վերջն ալ, զիտեց որ իր կինը բնականէն կը խորշի զուգաւորութենէ, չափազանց պաղ՝ անզգայ է, և սեռային զգայութիւններ կ'ունենայ այն ատեն միայն, երբ, ամուսինը գիջական շփումներով երեւութապէս կը գրգռէ իր ցանկութիւնը. ինքն իրեն՝ երբեք փափաք չէր զգար սեռային գոհացման, ոչ իսկ գիջութեան հետեւանքով: Երկուքը միասին եօթը տարի ապրեցան ամուսնական երջանիկ կեանք մը, գուրգուրալով իրա-

րու վրայ, առանց մէկ անգամ իսկ զուգաւորութիւն կատարած ըլլալու: Կնոջ անզգայութիւնը բնականաբար չդարմանեց տղամարդուն անկարողութիւնը, և խեղճ ամուսինը շարունակեց ինքզինքը գոհացնել առանձին գիջութեամբ:

—

Կնոջ սեռային անզգայութիւնը դարմանելու համար, ամէն բանէ առաջ պէտք է նկատողութեան առնել հոգեկան ազդեցութիւնները: Հետեւաբար, ինչպէս ուրիշ առիթով մըն ալ պարզեցինք, դարմանը աւելի շատ ամուսնէն կամ սիրահարէն կախում ունի, քան բժիշկէն: Զուգաւորութեան պայմանները պէտք է յարմարցնել իւրաքանչիւր դէպքի տեսակին հետ (դիրքի փոփոխութիւն, նախապատրաստական գգուանք եւն.): Խոստովի ցաւառիթ կծկումները, մանր մունր շեղումներ ևն. կրնան երբեմն դարմանութիւն գիտական միջոցներով և վէրքերու բուժումով: Դիտուած է որ սովորաբար անզգայ կիներ երբ յղի են, աւելի մեծ գրգռում և հեշտանք կ'ունենան զուգաւորութեան ատեն:

Այս գլուխը վերջացնելէ անաջ, աւելորդ չէ անգամ մըն ալ շեշտել որ՝ բոլորովին տգիտութիւն և միամտութիւնն է անկարողութիւնն ալ, — ինչպէս ուրիշ բազմազան գաղտնի հիւանդութիւն-

ներ — վերագրել թաքուն, գերբնական ազդեցութեանց, և հաւատալ վնակներու կամ տուժաներու, զուշակներու կամ հրաշագործներու շատախօսութիւններուն: Զուտ բնախօսական անկարողութեան դարմանը ուղղակի բժիշկը, վիրաբոյժն է որ պիտի ցուցնէ. հետեւաբար ապարդիւն են ինչպէս Քաղզէացիներուն, Սուրիացիներուն, Փիւնիկեցիներուն և Յոյներուն հնարած հազարումէկ սիրադեղերը, Զրադաշտի բազադրութիւնը (որ ուրիշ բան չէր բայց միայն կրային բնածխատ), նմանապէս ուրիշ աւելի գարշելի նիւթեր՝ դաշտանի արիւնը, մարդկային սերմ, եղունգի աղտ, մետաղներ, սողուններ, թռչուններու կամ ձուկերու աղիքներ ևն., իրենցմէ անբաժան կախարդանքներով և մոգական աստցուածքներով կամ նուսխաներով: Եթէ անգամ մըն ալ քրքրենք հին պատմութիւնը, պիտի տեսնենք, մասնաւորապէս Հռոմայեցիներուն մէջ, անհամար տեսակներ աւափայտ իզուրիւրներու: Օր չէր անցնել որ հրակէղ ըմպելիներու գործածութիւնը պատճառ չըլլար գալարումներու, անդամալուծութեան, պրիապութեան, յիմարութեան կամ մահուան:

Այսպէս էին «ծիու խնդ» (hippomane) կոչուած պիղծ և նողկալի խառնուրդը՝ միջամաներու, ձուկերու և կենդանական նիւթերու կծու և խիստ նոյրերը, կիզիչ և թափանցող օժանելիքները, որոնք հազարաւոր զոհեր տուին: Այս կերպով գարուն տարիքի մէջ մեռաւ հեշտասէր և անառակ Լուկուլլոսը, բարեկամ՝ Կիկերոնի, ինչպէս

և բանաստեղծ Լիւկրէչիան, զարհուրելի մոլեգնութեան մը ենթարկուելով: Բժշկութիւնը ի զուր կը մաքառէր այդ հրէշային փորձերուն դէմ, առաջարկելով ծծումբ և երկաթ պարունակող հանքային ջուրեր, որոնք անվնաս էին և թեթեւապէս առփայտը. Հռովմայեցիները կը նախընտրէին իրենց զօրաւոր դեղերը, որոնք զբզուրջ և արագ ազդեցութիւն մը կ'ունենային: Ասիական խնէշութիւնը խորապէս թափանցած էր Հռոմի մէջ:

Մասնաւորապէս ամուսնական կեանքին մէջ — ըսենք անգամ մըն ալ — ամէնէն ապահով տըութայոյցներն են՝ երիտասարդութիւնը, առողջ և ուժեղ կազմը, առողջ և հիւժիշ անունը, մտքի անդորրութիւն և ընտանեկան խաղաղութիւն: Իսկ ծերութիւնը, տկարացած կազմը, անբաւական աննդառութիւն, կիրքեր, հակակրօնութիւն և ընտանեկան կռիւներ՝ ամէնէն վճռական խափանարարներն են սիրոյ և առփանքի:

Առողջապահական պատուէրներն ամբողջացրնելու համար, աւելցնենք նաև թէ խիտտ հիւժեղ կամ համեմաւոր կերակուրները, գաղջ լոգանքները, շփումները, օժանելիքները, մարձումը, անկողնի տաքութիւնը կ'ուռեցնեն ծննդական գործարանները, յառաջ բերելով ընդլայնում արեան պզտիկ անոթներու կամ փողերու, և կը մղեն չափազանցութեան տանելու զուգաւորութիւնը, մանաւանդ զարնան: Անգործութիւնը, դատարկամտութիւնը, լպիրջ ընթերցումներն ու լկախ տեսարաններն ալ զրգալինք են՝ որոնցմէ պէտք

է զգուշանաք, եթէ կ'ուզէք երկարօրէն և լիովին վայելել սեռական կեանքի բոլոր հաճոյքները, և պահել ձեր ոյժն ու առողջութիւնը. ուրիշ խօսքով՝ զերծ մնալ անկարողութենէ: Իսկ ծայրայեղ ցուրտն ու տաքը, ինչպէս պաղ լոգանք, մտային չափազանց տքնութիւն, մարմնական ծայրայեղ յոգնութիւն կը ջլատեն զուգաւորութիւնը: Գինին և ոգելից ըմպելիները երբ չեն մարսուած և գինովութիւն պատճառած են, կ'արգիլեն կանգնումը: Երբ աղիքները չեն պարպուած կամ միզամանը լեցուն է, նորէն արգելք յառաջ կուգայ:

—

Երկու խօսք ալ՝ ելեկտրաբուժութեան մասին, որ մեծ համբաւ չահած է վերջերս, նոյն իսկ Պոլսոյ մէջ, իրոնե դարման մասնաւորապէս ջլային անկարութենէ՝ ուժասպառութենէ ծնած անկարողութեան: Կրկնենք անցողակի թէ այս տկարութիւնը կը պատահի մեծամասնաբար ամուսնացածներու, որոնք տարիներով անհաշիւ զուգաւորութիւններ կ'ունենան իրենց կիներուն հետ, կամ ծայրայեղ յամառ գիջագործներու, և կամ անբուժելի անառակներու, որոնք իրենց ամբողջ կեանքին մէջ, գիշեր ցորեկ առփական կիրքեր գոհացնելու մասին կը մտածեն:

Այսպէս, բժիշկներ ելեկտրական հոսանք կը փորձեն շատ մը ղէպքերու մէջ, զրական բեւեռը

գործածելով մէջքին կողմը, իսկ ժխտականը՝ վարոցին, ամորձիքներուն վրայ և սրբանին ու առնանդամին միջեւ: Հոսանքին ուժգնութիւնը պէտք է համեմատական ըլլայ հիւանդին զգայնութեան հետ, և պէտք չէ գործածուի անհանգրստութիւն պատճառելու աստիճան զօրաւոր: Առաջին անգամ այս փորձը պէտք է կատարել 48 ժամուան մէջ երկու կամ երեք վայրկեան, իսկ շուտով օրական հինգ վայրկեանի բարձրացնել: Յամառ տկարութիւններու ատեն, եթէ նորէն կանգնում տեղի չունենար, բժիշկները զրական բեւեռը կը ներմուծեն թափանիւն մէջ և աւելի զօրաւոր հոսանք մը կ'արձակեն: Երբ ծննդական գործարաններու մորթը նշանակելի թմրութիւն մը, անզգայութիւն մը կը ցուցնէ, ելեկարամագնիսական հոսանքը (ֆարաձիֆ) աւելի արդիւնաւոր է քան կալվանիքը:

Նոր բժշկութեան մէջ փորձեր եղած են նաև կապելու առնանդամին կռնակի շնչերակը, որպէս զի ուշանայ արիւնին վերադարձի հոսումը, և այսպէս փապային մարմնի կանգնողական հիւսուածք ուռի և արիւնով լեցուի: Այս գործողութիւնը կատարուած է այն ատեն երբ մասնակի կանգնում կար. բայց անմիջապէս յետոյ առնանդամը թուլցած է, առանց սերմ ցայտելու:

Թ. — Գ. Ի Զ Ո Ի Թ Ի Ի Ն

1. — Տ Ե Ս Ա Կ Ե Ե Ը

Անկարողութեան, սեռային զանազան խաթարումներու, ախտերու և հիւժման հետ ուղղակի կապ ունի հանրածանօթ այս մոլութիւնը:

Գիշորքիւնը կը կոչուի նաև օնանակաւնորքիւն, Օնանի կամ Յոլլանի անունով, որ թոռն էր Իսրայէլի: Հին Կտակարանը կը պատմէ թէ անոր հայրը պահանջեց Օնանէն որ ամուսնանայ իր Հէր եղբոր կնոջը հետ և զաւակներ արտադրէ: Օնան չախորժեցաւ այս առաջարկէն, և հօրը բռնութենէն ազատելու համար, իր առնանդամը հողին կը քսէր և այսպէս սերմի ցայտում յառաջ կը բերէր, որպէսզի զաւակ չունենայ իր եղբորը կնոջ հետ: «Այս արարքը հաճոյ չեկաւ Աստուծոյ, որ մահով պատժեց Օնանը:»

Գիջութիւնը սեռային ցանկութեան բռնի, արհեստական գոհացումն է: Մարդուն բնութեան մէջ կայ ինֆլուսոնիսմ մը (auto-erotism), ինչպէս կը կոչէ անգլիական խոշոր հեղինակութիւն մը, Տոքթ. Հէյլլօք Էլիս — այսինքն սեռային ինքնածին գրգռում մը, որ կ'արտայայտուի ինքնաբերաբար առանց ուրիշ ու է մարդու մը ուղղակի կամ անուղղակի մղումին: Գիջութիւնը ինքնատուփանքի ամենակոպիտ, ախտաւոր ձեւն

է, որ կը գործադրուի «առ ի չգոյէ լաւագունին» : Բրօֆ. Մ. Նիքօֆ կը պարզէ թէ «մարդուն կազմուածքն իսկ թոյլ կուտայ որ սեռային զգայութիւնը կրննխանասօրէն զարգանայ, երբ դեռ արտադրիչ տարրերը հասունցած չեն» : Եւ այս աններդաշնակութենէն ծնունդ կ'առնէ ինքնատուփանքի արտադրութիւնը, մարդկութեան ամենատար ցեղերէն մինչեւ քաղաքակիրթ ժողովուրդներուն մէջ : Տօքթ. Պլօս կ'ապացուցանէ որ նոյն իսկ անասուններուն մէջ գիջութիւնը ծաւալուն երեւոյթ մըն է : Այս պարզան դիտուած է ոչ միայն կենդանաբանական պարտէզներու կապիկներուն մէջ, որոնք թերեւս արդէն քաղաքակրթուած են և արձակ համարձակ, նրապարակաւ գիջութիւն կ'ընեն. այլ և ձիերուն մէջ, որոնք իրեն վարոցը կը ճօճեն մինչև որ սերունային հասում պատահի. ինչպէս և զամրիկներուն (զբոյս) մէջ, որոնք աջ ու ձախ կ'իյնան և յարմար պինդ առարկայի մը կը քուլարին : Միև նոյն բանը կը տեսնենք վայրի եղնիկներուն մէջ : Նոյն իսկ խիզերը գիջութիւն կ'ընեն : Նախնական ցեղերու մէջ գիջութիւնը թերեւս աւելի ընդհանրական է քան քաղաքակիրթ ցեղերուն մէջ : Կիւսթավ Ֆրիչ կը պատմէ թէ Հարաւային Ափրիկէի ցեղերուն մէջ գիջութիւնը իրապէս ժողովրդական սովորութիւն մըն է :

Չաւայան առիթներով բացատրեցինք թէ մանուկին մէջ սեռային ցանկութիւնը ազատօրէն կ'արտադրուի իրրեւ տեսակ մի նախազգացում, երբ տարած զգայութիւններ կ'ունենայ ծննդական

գործարաններուն մէջ և աւելի ետք՝ ծեփուկին վրայ : Երիտասարդին քով, եթէ չի կրնար բնականօրէն գոհացնել սեռային ցանկութիւնը՝ որ կը կը ճնշէ իր վրայ յարածուն գորութեամբ մը և միշտ աւելի յաճախադէպ կանգնումներով, այդ կիրքը տուփական երազներ և վերջը-վերջը երազափորձութիւններ կը պատճառէ. և կամ, ծեփուկը արհեստականօրէն զրգուելով, նշտական զգայութիւններ և սերմի ցայտում ու տոբի յառաջ կու գայ : Այս վերջինն է, դարձեալ, որ կը կոչուի գիջութիւն :

Տղամարդը գիջութիւն կը գործէ իր առնանդամը քսքսելով ձեռքին մէջ կամ կակուղ առարկայի մը : Վերջին պարագային, մանաւանդ, մերկ կիներու կամ իգական գործարաններու տուփական պատկերը կը միանայ օնանականութեան : Այս կարգի գիջութիւնը կը կոչուի փոխարինող՝ հաստեղանող, որովհետեւ ուղղակի ախտաւոր ցանկութենէ մը չէ որ կը ծնի, այլ պարզապէս կը ծառայէ փոխարինութեամբ գոհացնել բնական պէտք մը, թէև երբեք ներելի չէ, ո՛չ բնախօսական, ոչ ալ բարոյական տեսակէտով, ինչպէս պիտի բացատրենք յառաջիկային :

Մարդիկ հազարումէկ միջոցներ հնարած են գիջութեամբ գոհացում ստանալու համար : Մեկուսի գորանոցներու, հսկողութենէ ազատ գիշերօթիկ վարժարաններու մէջ, վանքերու խորը և ուրիշ նման տեղերու մէջ ամէնէն վաւաչոտ անհատները գոհացում կը փնտռեն կամ փոխադարձ գիջութեամբ, կամ արուազխտութեամբ : Տօքթ. Ֆորէլ կը հաս-

տատէ որ յաճախ տեղի կ'ունենայ նաև սողոմականութիւն կամ զուգաւորութիւն՝ կենդանիներու հետ (կով, այծ ևն.) : Ասոնք ամէնէն սովորական երեւոյթներն են : Հէյվլօք էլիս նկարագրած է պարզապէս գիշագործութեան համար հնարուած բիւրաւոր միջոցները . և կը յիշէ թէ վայրենի ցեղեր ճանաչական գործիքներ կը շինեն կիներուն համար, գրեթէ այնքան նպատակայարմար ու կատարեալ (!) որքան անոնք որ կ'արտադրուին քաղաքակիրթ ժողովուրդներու լիտի, իննչչական ճարտարարուեստին կողմէ : Ամենօրեայ գիշութեան համար սովորական միջոցներ նկատուած են՝ օրինակ Հալայի կղզիներուն մէջ՝ պանանան . իսկ՝ քաղաքակիրթ աշխարհին մէջ, և նոյն իսկ մեր շուրջը, Պոլսէն մինչև Պրուսա, կամ Տրապզոն՝ վարունգ, ստեպլին, բանջար : Բժշկական քննութիւններով, խոստովիէն և միզամանէն երեւան հանուած են մատիտներ, կրնքամոմ, պարապ ճախարակ, կարի և ուրիշ տեսակ ասեղներ կամ կեւեր, ասեղնոց, կարկին, մոմ, խից (մանթար), պատառաքաղ, ակապիտրիկ (քիւր տան), փոմատայի տուփեր, ծառաբնդիւ (աղվտրզ պէօճէյի), հաւու հաւկիթ, և մասնաւորապէս՝ վարսակոյ (ֆուրքէթա) :— Փրանսական հրատարակութեան մը մէջ կը նկարագրուի թէ ինչպէս անկարող տղամարդ մը կանգնում ունենալու համար, թոյլ տուտա որ ծառաբնդիւ մը սողայ իր առնանդամին վրայ : Հեղինակ մը դիտել կընտայ թէ արական միզուկէն գտնուած զանազան առարկաները միշտ ալ հետեւանք չեն գի-

շութեան, այլ յաճախ ներմուծուած են ուրիշի մը կողմէ, որ ախտաւոր կամ միասեռական հակումներ ունէր :

1862ին վարսակայներով գիշութիւնը այնքան սարածուած էր Գերմանիոյ մէջ որ, վիրաբոյժ մը մասնաւոր գործիք հնարեց, վարսակայները իգական միզամանէն հանելու համար : Մեր օրերուն մէջ վարսակայով գիշութիւնը չափազանց ընդհանրացած է, ինչպէս կը հաստատէ Տօքթ. Պլօխ :

Հնարուած են նաև աւելի նուրբ (?) միջոցներ, — արհեստական նմանութիւններ՝ առնանդամի, որոնց պատկերները կը տեսնուին հին բաբելական քանդակագործութեանց վրայ, Եգիպտոսի մէջ, և ամենահին ժամանակներէ ի վեր գործածութեան մէջ են եղեր Արեւելեան Ասիոյ մէջ : Սպանիացիները անոնցմէ գտան Փիլիպպեան կղզիներուն մէջ : Մասնաւորապէս ծանօթ են Պալինէզեան կիներու կնքամոմէ վարոցները : Եւրոպայի մէջ, դեռ ԺԲ. դարուն, եպիսկոպոս մըն էր որ դատապարտեց արհեստական վարոցներու գործածութիւնը : Այս հրէշային սովորութիւնը մասնաւորապէս ընդհանրացած էր իտալական վերածնութեան շրջանին, և շինութեան «ճարտարարուեստն» ալ շարունակ կը կատարելագործուէր : Ամէնէն կատարեալ, աւելի ճիշդը՝ կատարի շրջանը սկսաւ ԺԳ. դարուն, Փրանսայի մէջ : Նոյն իսկ լուրջ քաղաքագէտ մը, Միւսապօ, իր տափական վէպին՝ «Le Rideau Levé»ի մէջ մանրամասնօրէն կը նկարագրէ արհեստական առնանդամ մը (godemiché), որ կը շինուէր ար-

ծաթէ, հանճարն զ մեքենականութեամբ մը... Կը ներկուէր բնական գոյնով, նոյն խակ սերմ ցայտեցնելու կարողութիւն ունէր ան: Մենք աւելորդ կը նկատենք այդ նկարագրութիւնը: որ կը թուագրի 1786էն: Բայց դեռ այսօր իսկ, ինչպէս դիտել կուտան գիտնականներ, նման խայտառակութեանց յայտարարութիւններ կը ցրուեն շատ մը առեւտրականներ, «փարիզեան քառ չուէ նոյնութիւններ», bijoux discrets, consolateurs են. անուաներով: Իսկ շատ տեղեր լողանոցներու մէջ կը գործածեն տակաւին կաշիէ նախնական վարոցներ, — այնպէս ինչպէս կը նկարագրեն Հերոնտաս և Արիստոփանս — տափական հաճոյքներու համար:

Կան նաև բազմաթիւ ուրիշ ձևեր՝ ուղղակի մեքենական գիշուութեան: Այսպէս՝ ծննդական գործարաններու շփումն ու խլրտումը՝ հեծելանիւ կամ ձի նստելով. յաճախ՝ կարի մեքենայի մը ռանակը շարժման մէջ դնելով, չոգեկառք նստելով մարդ կ'ունենայ գիշական զգայութիւններ: Սովորաբար կիներուն մէջ միայն դիտերը իրարու շփելով տուի յառաջ կուգայ. մինչդեռ աղամարդիկ գրեթէ միշտ կը կարօտին աւելի զօրաւոր մղումի մը, ինչպէս է ձեռքի փորձը:

Յաճախ գիշուութիւնը հետեւանք է հրապուրանքի, ինչպէս խաբակակն գիջուքիւնը, որուն յարմար միջավայրեր են — ըսինք արդէն — գիշերօթիկ վարժարանները, մարտանաւեր, զօրանոցներ, գործարաններ (մանաւանդ երբ գործաւորուհիներ կան), բանտերը: Մոլորած մը կը մո-

լորեցնէ ուրիշ մէկը և ահա գիշուութիւնը կը տարածուի ինչպէս համաճարակ ախտ մը: Անհատները կ'ենթարկուին ամբոխին թելադրութեան, և չեն կրնար դիմադրել: Թօմայա կը նկարագրէ գիշերօթիկ վարժարաններ՝ ուր գիշուութիւն կը կատարուէր գրաւի մը համար, և մրցանակ կը ստանար այն տղան որ առաջին անգամ սերմի ցայտում կ'ունենար: Կը յիշէ նաև դպրոցական ակումբ մը, ուր լսիրջ ընթերցումներ տեղի կ'ունենային և արգելուած պատկերներու շնորհիւ, աշակերտները կը գրգռուէին, մինչեւ որ կանգնում կը պատահէր և ծայր կու տար ընդհանուր գիշուութիւն մը, դարձեալ գրաւով...:

Տոքը. Պիօսի կարծիքով, այս խմբական գիշուութիւնը լաւագոյն ապացոյց մըն է թէ անոնք որ գիշուութիւն կ'ընեն, պարզապէս ժառանգական ախտաւոր հակում մը չունին. որովհետեւ, չկայ մոլութիւն մը այնքան դիւրաւ թելադրելի՝ որքան գիշուութիւնը: Առողջ մանկամարդուհի մը, 31 տարեկան, որ չէր ամուսնացած, բժշկին կը պատմէր իր պատմութիւնը.

«Երբ 26 տարեկան էի, բարեկամուհի մը ըսաւ ինձի թէ քանի մը տարիէ ի վեր գիշուութիւն կ'ընէ և այնքան գերի է եղած այդ մոլութեան որ, ծանրապէս կը տառապի հետեւանքներէն: Համակրութեամբ և հետաքրքրութեամբ լսեցի իր պատմութիւնը, բայց շատ չհաւատացի, եւ ուզեցի փորձը իմ վրաս կատարել, ինդիբը աւելի լաւ հասկնալու համար, որպէս զի կարենամ օգնել բարեկամիս: Պղտիկ նեղութեամբ մը յաջո-

դեցայ արթնցնել ինչ բան որ մինչեւ ատեն թրմարած՝ անձանօթ մնացած էր իմ մէջս: Դիտմամբ սաստկացուցի սովորութիւնը և գիշեր մը — որովհետեւ սովորաբար ճիշդ պառկելէ առաջ կը փորձէի, և երբեք առտուն — իրապէս խիստ ախորժելի հեշտանք մը զգացի: Բայց միւս օրը խղճմտանքս արթնցմբ, ու նաև ցաւեր զգացի գլուխիս ետեւը և ողնայարիս վրայ: Ատեն մը ընդհատեցի սովորութիւնը, բայց յետոյ վերսկսայ, կանոնաւորապէս գիշազործելով ամիսը մէկ անգամ, իւրաքանչիւր դաշտանէ քանի մը օր ետք... Մոլութիւնը նուաճեց զիս երկիւղալի արագութեամբ, և շատ չանցած ես գերի դարձայ անոր... Իբրեւ եզրակացութիւն, ըսեմ թէ գիշութիւնը եղաւ իմ կեանքիս կոյր զիպուածներէն մէկը, որմէ շատ մը թանկագին փորձառութիւններ քաղեցի»:

Այսպէս ուրեմն, գիշազործները աւելի յաճախ թշուառ զուներ են, ուրիշ կերպով շատ պարկեշտ, բայց պարզապէս վարակուած սեռային գերզգայութեամբ: Երբեմն ալ ակարամիտներ են, զորս կը ծաղրեն կիները, և խեղճերը կը ստիպուին այդպիսի մոլութիւններու դիմել, գոհացում ստանալու համար: Կայ, անշուշտ, դասակարգ մըն ալ անպատկառներու, այլասերածներու, որոնք ուրիշ կերպով ալ խաթարուած կ'ըլլան աւելի կամ պակաս:



Գիշութիւնը թէեւ չափազանց տարածուն մոլութիւն մըն է, բայց ընդհանրապէս ո՛չ կը ճանչցուի, ո՛չ ալ կը խոստովանուի. որովհետեւ զիւրին

է ծածկել: Իսկ անոնք որ անձնատուր եղած են, դիւրաւ կ'արդարացնեն իրենք զիրենք, բնական պէտք մը գոհացնելու պատրուակով: Տօքդ. Կառնիէ կը յիշէ 33 տարեկան վանականի մը պատմութիւնը.

«Եթէ գիշերը սերմնային հոսումներ չպատահին, սերմին ճնշումը ծնունդ կուտայ ընդհանուր տկարութեան մը, գլխացաւի և անքնութեան: Կը խոստովանիմ որ յաճախ քիչ մը թեթեւալու համար, փորիս վրայ կը պառկիմ, և այդ կերպով սերմնահոսութիւն կ'ունենամ: Այն ատեն անմիջապէս ինքզինքս ազատուած կը զգամ. կարծես թէ քեռ մը վերցուցին վրայէս, և քունս կուգայ»:

Նմանօրինակ շարժափոթներ կը պարզեն ուրիշ անհամար առողջ ծնանականներ: Այդ միեւնոյն պատճառները հաւասար աստիճանով կը պատշաճին նաև բնական, ոչ-ծայրայեղ զուգաւորութեան: Գրագէտներ, խանութպաններ, աշխատաւորներ — ընկերութեան բոլոր դասակարգերէն մարդիկ խոստովանած են Տօքդ. Պլօխի թէ գիշութեամբ ըլլայ կամ ընական զուգաւորութեամբ, հարցը այն է որ իրենք փոփանք, թեթեւութիւն մը կը զգան, «բեռէ» մը, ճնշումէ մը կ'ազատին, արձակելով մարմինն մէջ կուտակուած վնասակար նիւթեր. և մտային կորով, ստեղծագործական կարողութիւն կը ստանան այդպիսի արտաքսումներէ յետոյ, անշուշտ չանցնելով բնական սահմանները: Միայն այդ արտաքսման յաճախումները կը տարբերին, համաձայն անհատներու կազմին և խառնուածքին. մէկուն համար միջոցը

ընդհատուածը կարճ կ'ըլլայ. ուրիշի մը համար՝ շատ երկար:

Գիշական մոլութիւնը միանգամայն միջոց նկատուած է քունն և հանգստութիւն ստանալու, քանի որ կ'ընդարձայնէ ջղային զգայնութիւնը: Սերմի կուտակուածը, սեռային ճնշումը յաճախ կ'աւելցնեն այն ցաւերը որ կը ծագին մարմնի ուրիշ մասերէն. և արտաքսումը կրնայ մեղմացնել կամ բոլորովին անհետացնել այդ ցաւերը: Ամերիկացի բժիշկ Քօ կը պատմէ թէ կին մը վարժութիւն ըրած էր գիշութեամբ ազատիլ դաշտան— ձուարանի սաստիկ ցաւերէ... Նշանակելի է որ այդ ցաւերուն կը միանար սեռային հզօր ցանկութիւն մը, որ կը դադրէր, երբ ցաւը դադրէր:

Ասոնք՝ կողմնակի արդարացումներն են: Յաճախ ծննդական գործարաններուն մէջ կամ մօտը պատահած տեղային ակտաւոր փոփոխութիւններ կը մղեն գիշական մոլութեան, — ինչպէս մորթի բորբոքումներ, աղիքի որդեր, թլփատի հիւանդութիւններ, բորբոքուն վիճակ՝ վարոցի կամ խոռոճակի մուտքին, վարոցի քոս (խամլիկ) և ուրիշ մարմաններ, պնդութիւն, միզային անկանոնութիւններ ևն.: Դարձեալ, մտային խանգարումներ, լուսնոտութիւն և ջղային տագնապներ յաճախադէպ պատճառներ են գիշութեան: Լուսնոտութեան նոպաներէ ետք, այդ մոլութիւնը յայտնուած է այնպիսի հիւանդներու վրայ, որոնք ուրիշ ատեն երբեք գիշութիւն չէին ըներ: Տարակոյս չկայ թէ ջղային անկարութիւնը (նէօրասթէնի) հզօրապէս կը մղէ գիշութեան: Ծայրայեղ

գիշութիւնը գրեթէ միշտ հետեւանք է և ոչ թէ պատճառ՝ այդ անկարութեան միացումին: «Արտայայտութիւնն է հիւանդութեան մը որ զարգացման ճամբուն վրայ կը գտնուի, կամ այլասերած մշտական ընդունակութեան մը:» Ասոր համար է որ Օրիէնհայմ կ'ըսէ թէ ծայրայեղ, սովորական, անյաղթելի գիշութիւնը յաճախ ժառանգական է: Անգլիոյ բժշկական տարեգրութեանց մէջ կը յիշուի պղտիկ աղջիկ մը, որ գիշագործել սկսաւ երկու տարեկանին, և հաւանօրէն այդ մոլութիւնը ժառանգած էր իր մօրմէն և մամէն. որովհետեւ այդ երկուքն ալ գիշութեան անձնատուր եղած էին իրենց ամբողջ կեանքին մէջ. և նոյնիսկ մեծմայրը յիմարանցի մը մէջ մեռած էր «գիշական յիմարութենէ»:

Այսպիսի պարագաներով կը բացատրուի նաեւ ծծկան երեխաներու գիշական տրամադրութիւնը, որ շատ յաճախադէպ է, և որուն պիտի անդրադառնանք քիչ յետոյ:



Գիշութիւնը կիներուն մէջ աւելի տարածուած է թէ այրերուն: Վիճելի խնդիր մըն է այս մինչեւ հիմա, թէեւ Տօքթ. Մէչնիքօֆ, Տօքթ. Ֆօրէլ և ուրիշ բազմաթիւ նշանակութիւններ կը կարծեն թէ աղջիկներուն մէջ այնքան ծաւալած չէ որքան տղաներուն, որովհետեւ սեռային գրգռումը ընդհանրապէս աւելի ուշ կը զարգանայ կնոջ մէջ: Էգ կապիկները գիշութիւն կ'ընեն միայն բացա-

ռիկ պարագաներու մէջ. մինչ արու կապիկներուն մէջ այդ մոլութիւնը շատ սովորական է: Տոքդ. Մէնչիքօֆ իր տեսութեան իբրև փաստ կը միշտ նաեւ այն պարագան թէ՛ շատ ազջիկներ ամուսնութենէն ետքն է որ կը ծանօթանան սեռային զգայութեանց: Տոքդ. Պլօխ լուրջ կարեւորութիւն չի տար այս փաստին, որովհետեւ, գիշութեան միջոցաւ կնոջ ունեցած զգայութիւնները բոլորովին տարբեր են զուգաւորութեան զգայութիւններէն: Թիսոյի կարծիքով, գիշութիւնը աւելի սովորական է կիներուն քան այրերուն մէջ: Ուրիշ գիտնականներ տարբերութիւն չեն դաներ երկու սեռերուն միջեւ: Էօլէնպուրկ գիշութիւնը այնքան տարածուած չի դաներ ազջիկներուն որքան մանչերուն մէջ. բայց գիտել կուտայ թէ «շատ աւելի տարածուած է քան որքան կ'երեւակային ծնողքներ և ուսուցիչներ»: Անգլիացի նոր գիտնական մը կը հաւատտէ որ արքունիքն ետք գիշութիւնը աւելի ընդհանրական կը դառնայ, որովհետեւ երիտասարդները կրնան զիւրութեամբ զօհացում ստանալ բնական ուղղութեամբ, յարաբերութեան մտնելով միւս սեռին հետ: Ուրիշ հեղինակութիւն մըն ալ կը պնդէ որ կիներուն հարիւրիւ ինկրտուելը հիկը գիշութեան կը դիմն...
Ինչքան ալ պրպտենք այս խնդիրը, կարելի չէ բացարձակ բան մը ըսել: Իրողութիւնն այն է որ, նման պայմաններու և նման պատճառներու ազդեցութեան տակ, գիշութիւնը գրեթէ հաւասարապէս կը տարածուի երկու սեռերուն մէջ, — ինչպէս կ'եզրակացնէ Տոքդ. Պլօխ:

Ըսենք թէ կնոջ մէջ ալ, այդ մոլութիւնը ծնունդ կ'առնէ կա՛մ դիպուածական գրգռումներէ, կամ գէշ օրինակներէ և կա՛մ բացարձակապէս ախտաւոր գերզգայութենէ մը: Եւ անգամ մը որ վարժութիւն ստացան, կիներն ալ, ինչպէս այրերը, դժուարութեամբ կրնան յաղթել հեշտական ցանկութիւններուն:

Կինը գիշութիւն կ'ընէ մատով շփելով ծլիկը, կամ կլոր, աւելի կամ նուազ կարծր և ողորկ առարկաներ մտցնելով խոռոճպիէն ներս, և անոնց միջոցաւ նմանցնելով զուգաւորութեան շարժումները. յաճախ պարզապէս իրարու շփելով երկու զիստերը՝ խաչածեւ և իրարու սեղմուած: Մտագործներուն մէջ, գիշութիւնը երբեմն տեղի կ'ունենայ ծայրայեղ և անընդհատ եղանակով մը, և կարելի չըլլար առջեւն առնել: Շատ խօզերիկ կիներ գիշութեան պահուն զանազան իրեր կը ներմուծեն միզուկին մէջ և այսպէս ծնունդ կու տան միզային փամփուշտի ծանր բորբոքումներու:

Սեռային գրգռման ուրիշ ձև մը, որ յաճախ բուն զուգաւորութեան տեղը կը բռնէ կնոջ համար, — լեզուով փոխադարձաբար իրարու ծլիկը լզելու սովորութիւնն է (cunnilingus): Այս մոլութիւնները, որոնք վստանդաւոր ալ են, կը ներկայացնեն սեռային ցանկութեան զազրելի խաթարումներ, և իւրաքանչիւր ինքզինքը յարգող մարդկային էակ պէտք է գանի այդպիսի ունակութիւններէ:

Տոքդ. Փօրէլի տեսութեամբ, այն աղամարդը որ այս կամ այն պատճառով չի կրնար բնական

զուգաւորութեան միջոց գտնել, պէտք է գոհանայ երազափորձութիւններով, իսկ կինը՝ հեշտազրգիւ երազներով. երկուքն ալ պիտի զգուշանան գործօն և կամաւոր գրգռումներէ: Դարձեալ, անոր կարծիքով, բողարածութիւնը կամ «ծախու սէր» գիշութեան մէկ ուրիշ տեսակն է. և ոչ թէ բնական զուգաւորութիւն:



Բժշկական հին և նոր գրականութիւնը կը յիշէ բազմաթիւ դէպքեր ծծկան երեխաներու գիշութեան, չյիշելով չափահաս տղաքը: Այդ երեւոյթը տեղի կ'ունենայ չնորհիւ մարմնի կարգ մը մասերուն մեքենական մղման, տղամարդու առաջին կանգնողական շրջանակներու ազդեցութեան: Այսպէս են երեխային շրթները, որոնք ծծելով մօրը ստինքը կամ անոր փոխանորդը, հաճոյքի ընտանական զգացողութիւն մը կ'ունենան. որուն մէջ դեր ունի նաև կաթին ջերմ հոսումը: Յաճախ կը տեսնուի որ երեխան այդ հեշտազրգիւ եղանակով ծծած ատեն, կը շփէ մարմնին զանազան զդայուն մասերը, ինչպէս կուրծքը և ծննդական արտաքին գործարանները: Ասոր կը յաջորդէ տեսակ մը հեշտանք, և յետոյ քունը: Այս պարագաներն ուսումնասիրող գիտնականը դիտել կուտայ թէ հասուն տարիքի մէջ, սեռային գոհացումը լաւագոյն միջոցն է քուն յառաջ բերելու:

Այսպիսի երեւոյթները աչքի կը զարնեն կեանքի առաջին և երկրորդ տարուան մէջ: Աւելի մեծ երեխաներու մէջ, երեք տարեկանէն սկսած, հրապուրանքն ու թելադրութիւնն ալ մեծ դեր կը խաղան: Փրօֆէսօր մը կը պատմէ թէ մանուկներու պատասպարան մը այցելած ատեն, տեսաւ իբր երեք տարեկան աղջիկ մը, որ կասկածելի շարժումներ կ'ընէր: Ինք հարցուփորձ ըրաւ և տեսչուհին պատասխանեց որ գրեթէ բոլոր աղջիկներն ալ վարակուած էին, այդ հաստատութիւնը դայէ առաջ:

Գիշութեան ուրիշ ձև մը տեղի կ'ունենայ խիստ դեռատի մանուկներու քով՝ արկածական գրգռումներով, իսկ քիչ մը աւելի մեծ մանչերուն քով՝ յիփատի հիւանդութեամբ (ֆիմոզիս). իսկ աղջիկներուն մէջ՝ իբրև հետեւանք զանազան մարմաջներու, որոնց ծնունդը կուտան շատ պզտիկ օրդեր՝ (oxyure) սրբանին և բունոցին շուրջը: Պէտք է առաջինը բժշկել թլիփատութեամբ. իսկ երկրորդը՝ հականեխականներով կամ ուրիշ մասնաւոր դարմաններով:

Այսպիսի պարագաներ, ինչպէս և գէշ օրինակներն են որ գիշտական մոլութիւնը այնքան կը ծաւալեն դպրոցներու մէջ, կը դարձնեն զայն բուրովին պլզալի և երբեմն անջնջելի վարժութիւն մը: Դեռատի մանչերու ծնանականութիւնը աւելի վտանգաւոր է քան այն որ կը սկսի արբունքէն յետոյ: Այդ մոլութիւնը ոչ միայն տղան կը դարձնէ ծոյլ, թոյլ և ամօթալի, կամ գոնէ կ'աւելցնէ այդ թերութիւնները. այլ եւ, կը խան-

գարէ անոր աննդառութիւնն ու մորսողութիւնը և հող կը պատրաստէ սեռային խաթարումներու և անկարողութեան: Սակայն յաճախ ալ կը դադարի, չնորհիւ աչալուրջ հսկողութեան մը, մարմնական և բացօթեայ մարզանքներու, երբ մանաւանդ կարելի կ'ըլլայ վարպետ ձեռքով մը աղուն ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձնել: Մեծածափ նաբար բուժելի են այսպիսի դէպքերը, երբ հիշնուած չեն ժառանգական կամ ախտաւոր տրամադրութեանց վրայ, կամ վատոգի և սկարխառնուածքներու վրայ: Երբ անհատը իր սեռական չափահասութիւնն ստացած է, սէրը և բնական յարաբերութիւնները անշուշտ լաւագոյն դարմանն են պարզապէս հրապուրանքէ և սովորութենէ ծնած գիշութեան:

Նման պարագաներու մէջ, մոլութեան դէմ կ'ազդեն ո՛չ սպառնալիքները, ոչ ալ պատիժները, այլ խանդաղատալից վստահութիւն մը՝ միացած աշխատութեան, և լաւ ու թովիչ ղեկավարում աղու մտքին: Նոր դպրոցները (Landerziehungsheime), որոնք նախ հաստատուեցան Անգլիոյ, յետոյ Գերմանիոյ, Զուիցերիոյ և Ֆրանսայի մէջ, և որոնք իրականացումն են Ռուսոյի, Փէստալոցցիի, Օուքնի և Ֆրօպէլի գաղափարներուն, պատուական դարման մըն են գիշութեան. որովհետեւ առտուրնէ մինչեւ իրիկուն կը զբաղեցնեն տղան և երբեք ժամանակ չեն թողուր յուր վարժութիւններ ստանալու: Անգամ մը որ անկողին ինկաւ, ուրիշ բան չի կրնար ընել բայց միայն քնանալ, որովհետեւ արդէն շատ յոգնած է:

Վերջապէս դպրոցի ոգին հզոր հակազդիչ մըն է ամէն դէշ ունակութեան: Տոքդ. Ֆորէլ կը պատմէ թէ աշակերտները կը խանդավառուին իրենց դպրոցով. այնտեղ իրենց ուսուցչին ընկերներն ու բարեկամները կը դառնան: Ֆիզիքական չարքաշութիւնը, բանականութեան, դատողութեան և գիտնութեան զարգացումը ներդաշնակօրէն կը միանան զգացումներու և կամքի դաստիարակութեան: Աշակերտներուն ձեռքը չեն տար չոր ու ցամաք ձեռնարկներ, այլ զանոնք կ'ընտելալին մեծ գրագէտներու և հանճարեղ իմացականութիւններու գործերուն հետ, — անշուշտ նկատողութեան առնելով իրենց կարողութիւնը: Ու միայն հմտութիւն չեն ստանար, այլ և կը մշակեն իրենց սիրտը, կը հրահրեն իրենց խանդավառութիւնը: Փոխանակ ծիւրելու պարտականութիւններու ծանրութեան և քննութիւններու դամոկեան սուրին տակ, այդ բաղդաւոր պատանիները կը ծլին կը ծաղկին կարելի եղածին չափ ապրելով իրենց սորվելիքին հետ: Այն ատեն կ'իւրացնեն ուսուցման նպատակը, որ իսկապէս իրենց անձնաւորութեան կենդանի և օգտակար մէկ մասը կը կազմէ, փոխանակ մեռած հմտութեան մը, խորթ մարմնի մը պէս պնդանալու իրենց ուղեղին մէջ, զայն ծանրաբեռնելու զոց եղած բանաձեւերով:

Աշակերտներն ու իրենց ուսուցիչները միասին կը լուացուին մերկ մարմնով: Սեռային խընդիրներու մասին բացայայտ կը խօսին պատշաճ և բնական ու տրամաբանական եղանակով մը: Ու-

սուցիչներուն և աշակերտներուն միջեւ տիրող մտերմական և բաց յարարերութիւնները, միացած մտային և ֆիզիքական ազատ աշխատանքի մը և բացարձակ հակալքութեան, ամէնէն արմատական կանխարգել և բուժիչ դարմանը կը կազմեն զիջութեան, սեռային կանխահաստութեան և բոլոր այն խաթարումներուն դէմ որոնք ժառանգական չեն:

Ամէն պարագայի մէջ, իւրաքանչիւր զիշերօթիկ հաստատութիւն կը պահանջէ մեծ խոհեմութիւն և աշխոյժ հսկողութիւն՝ սեռային տեսակէտով:

—

Ֆիջութեան մէկ ուրիշ ձեւը կայ, որ գիտութեան մէջ կը կոչուի «հոգեկան զիջութիւն»։ Այսինքն այն՝ ուր պարզապէս գաղափարներով, առանց ծննդական գործարանները ձեռքով շօշափելու, սեռային ցանկութիւն կը զրգուսի, և սուրի տեղի կ'ունենայ: Հոգեկան օնանականութիւնը, որ սաստկապէս կ'ածի ու կը զարգանայ մեր ժամանակներուն մէջ, մեծամասնաբար կը կատարուի բուն զիջութեանն անկախաբար: Այս ձեւին մէջ երեւակայութիւնը կը ճգնի ներկայացնել սեռային բնական գոհացման բոլոր ազդակները: Պարզ ֆիզիքական գործողութիւնը կը բաւէ միայն մոլութեան առաջին փորձերուն ատեն: Ամէն վարժ օնանական կը հասկնայ թէ պէտք է շուտով իր երեւակայութիւնը օգնութեան կանչէ, սեռային գոհացում ստանալու համար և

թէ վերջը-վերջը միայն գաղափարներն են որ կը տիրապետեն ամբողջ վաւաչին վրայ, ու շատ անգամ սուրի կը վերջացնէ գործողութիւն մը որ սկիզբէն ի վեր զուտ գաղափարական մնացած էր:

«Երեւակայութեան ոյժը այնքան մեծ է, զիտել կուտայ գիտնական մը, որ մէն-մենակ, առանց ֆիզիքական մղումի, կրնայ սուրի յառաջ բերել, սերմի ցայտումով, ինչպէս կը պատահէր ուսանող-ընկերներէս մէկուն, ամէն անգամ որ իր սիրականին վրայ կը մտածէր:»

Հէմընտ նոյն իսկ կը խօսի «պարզ գաղափարական բղջախոհութեան վարժուած օնանականներու վրայ, որոնք տեսակ մը ակումբ կամ ընկերութիւն կազմած էին և իրար կը ճանչնային կարգ մը նշաններով: Այս տեսակի հիւանդ մը կը պատմէր թէ իր հանդիպած կամ շոգեկառքին մէջ իր դիմացը նստած կիները միտք բերելով, երեւակայութեամբ կը մերկացնէր զանոնք, յետոյ կատարեալ մանրամասնութեամբ ինքնիրեն կը ներկայացնէր անոնց ծննդական գործարանները, և այդ պատկերացման միջոցին հեշտական ուժեղ զգայութիւններ կ'ունենար, որոնք կը յանգէին սերմի ցայտման: Ուրիշ գիտնականներ ալ կը յիշեն նմանօրինակ դէպքեր. իսկ Էօլէնպուրկ կը խօսի «գաղափարական կենակցութեան» մասին: Գաղափարները սովորաբար խննէչական են, բայց ոչ միշտ: Փօն Շրէնք Նօցինկ կը յիշէ քսան տարեկան մանկամարդուհի մը, որուն մէջ միայն տղամարդու գաղափարը, բայց նաեւ զգայական հա-

ձեկի երեւոյթներ՝ ինչպէս թատերական տեսարաններ, երաժշտական տպաւորութիւններ կամ գեղեցիկ պատկերներ ծնունդ կուտային տուփանքի:

Հոգեկան գիջութեան մաս կը կազմէ սեռային խնդիրներու մասին խոկումը, տուփանքի «ցերեկեայ երազներով»: Այսպէս, ծայր կ'առնէ տուփական շարունակելի պատմութիւն մը՝ հերոսի մը կամ հերոսուհիի մը հետ, և կը շարունակուի օրէ օր: Ընդհանրապէս այս կը պատահի անկողնին մէջ, քնանալէ առաջ: Սեռային գործունէութիւններն են որ կը կազմեն այս պատմութիւններուն նիւթը: Շատ կը պատահին խնամով հիւսուած և աւելի կամ նուազ տուփական ցերեկեայ երազներ՝ երիտասարդներու և մասնաւորապէս երիտասարդուհիներու մէջ, յաճախ այլասերումներով: Հէյլլօք Էյլիսի կարծիքով, այս երազները անպատճառ գիջութեան չեն առաջնորդեր, թէև յաճախ առիթ կ'ըլլան սերմնային հոսումներու: Այս երեւոյթը կը պատահի թէ առողջ և թէ արտաւոր անհատներու, բայց մասնաւորապէս անոնց, որոնք վառ երեւակայութիւն ունին:

Հոգեկան գիջութեան ցերեկեայ երազներուն հետ սերտ կապ ունի ուրիշ երեւոյթ մը, զոր առաջին անգամ երեւան հանեց Տոքզ. Պլօխ, կոչելով զայն *erotographomania*): Կան բազմաթիւ այրեր և կիներ որոնք կը դրդեն իրենց սիրահարները, — հոմանի, բող, մարծող ևն. — իրենց նամակներ գրել տուփայոյզ բովանդակութեամբ. կամ, ինչպէս աւելի յաճախ կը պատահի, իրենք անձամբ կը գրեն այդպիսի

նամակներ, լեցնելով անհամար և անասելի լարչութիւններով: Այսպիսի թղթակցութեանց ձեւը, որոնք տրոփուն են հրավառ ցանկամտութեամբ, դեռ բազմատարար նոր երեւան ելաւ Եւրոպայի մէջ, իբրև մասնաւոր նրբացում սեռային վայելքի... Այս ալ տեսակ մը հոգեկան օնանականութեան ազդեցութիւնն ունի: Նման լիախ նամակներու փոխանակութեան առթիւ՝ քանի մը տարի առաջ հետաքրքիր դատ մը տեղի ունեցաւ Փրուսիոյ մէջ, երկու միասեռականներու միջև: Տուփագրական թղթակցութեան բազմատարար անմեղ, աւելի կամ պակաս բնախօսական ձեւ մըն ալ կայ, որ տեղի կ'ունենայ արբունքի ատեն և որու միջոցին խիստ տարփատենչիկ նամակներ կը գրուին երեւակայական սիրողներու, և դեռ աղօտ սեռային մղումը գոհացում կը գտնէ այս տուփական երեւակայութիւններուն մէջ:



Գիտունները իսկալիս օւսուակաւորութիւն կը կոչեն այն զազրելի մոլութիւնը, որուն ենթակայ տղամարդը իր իսկ սեռէն մարդ կը փնտռէ, և ո՛չ թէ միւսէն: Ասոնք են որ կոչուած են միասեռական. իսկ փոխադարձ օնանականութիւնը կը կազմէ բնականո՞ն գոհացումը՝ իրենց այլասերած ցանկութեան: Մինչ սեռային բնական յարաբերութիւնը լաւագոյն և ամէնէն բանաւոր դարմանն է պարզ գիջութեան, այս մասին խօսք չի կրնար ըլլալ: Այդպիսի պարագաներու մէջ,

անուանութիւնը անհեկն յոռի եւ անհեկն գայրակ-
դական դարմանն է, — դիտել կուտայ Տոքդ. Թորէլ:

Հետեւաբար գիջութեան տեսակը լու սրոշե-
լու համար, շատ կարեւոր է հասկնալ թէ ինչ-
պիսի տուփական պատկերներու հետ կապուած է:
Եթէ տղամարդը կնոջ պատկերներ է որ կ'երե-
ւակայէ, պարզապէս հասարակ գիջութեան վրայ
է խնդիրը. եթէ արական պատկերներով
կը դբաղի, կը նշանակէ թէ վարչելի այլասերում
մը կայ: Իսկ եթէ վարոցին հեշտական շփումները
կապ չունին որ և է անձի պատկերին հետ խնդիրը
կասկածելի կը մնայ: Դեռատի մանուկներու հա-
մար, պարագան հասկնալի է. որովհետեւ հոգեկան-
սեռային արտայայտութիւնները կազմուած չեն դեռ:
Բայց անգամ որ արքունքի հասած է և իր տըռ-
փանքին համար որոշ պատկեր մը չկայ, կը նշա-
նակէ թէ անկանոնութեան մը կամ խաթարումի
մը առջեւ կը գտնուինք:



2.— Հ Ե Տ Ե Լ Ա Ն Բ Ն Ե Ր Ը

Գիջութեան այս զանազան ձեւերը պարզելէ
յետոյ, դառնանք այդ մոլութեան հետեւաւերումն,
համաձայն Տոքդ. Պլոխի:

Ժամանակի ընթացքին, տեսութեանց նշանա-
կելի փոփոխութիւն մը տեղի ունեցած է այս մա-
սին: Գիջութեան գիտական գրականութեան բուն
հիմնադիրը, Թիսօ, իր «Գիջութիւնը» անուն
հոշակաւոր գործին մէջ, այդ ունակութիւնը
կը կոչէ չարիքներուն չարիքը և գրքին բնաբան
ընտրած է գերմաներէն ոտանաւոր մը.

Երբ ստո՛ր տոփակելը ըլկեր է միտդ
Երեսակայի՛ մտեղ-կտախ մարդու մը
Ոսկորներուն անաւոր պատկերը,
Եւ քող փարսախ՛ ցանկութիւն:

Այս հատորը շատ յոռետես է: Թիսօի դրու-
թեան կը հետեւին Վոլթէն, իր «Փիլիսոփայական
Բառարան»-ին մէջ, և ԺԹ. դարու առաջին եօ-
թանասուն տարիներու հեղինակները:

Արդի բժշկական գիտութիւնը ալ, առանց
նախապաշարուելու այդ չափազանցութիւններէն,
կը յայտարարէ թէ գիջութիւնը աւելի վնասակար
է քան զուգաւորութիւնը: Եւ պատճառները բա-
ցայայտ են:—

Նախ, գիջութիւնը շատ կանուխ կը
սկսի, ընդհանրապէս այն տարիքին երբ մարմինը

տակաւին պահանջուած աճումն ու կարողութիւնը չունի դիմադրելու: Այնպէս որ, մանուկներուն համար այդ մոլութիւնը մասնաւորապէս վնասակար է: Արբունքէն առաջ սկսած գիջութիւնը աւելի դիւրութեամբ տեղի կու տայ ջղային տկարութեան, քան այն որ վերջը կը սկսի: Այդպիսի մանչերը կ'ունենան ընդհանուր ջղայնութիւն, անձկութեան նուազներ, անքնութիւն և մտային աճման դադարում:

Երկրորդ, գիջութիւնը շատ աւելի վտանգաւոր է քան բնական զուգաւորութիւնը, որովհետեւ կրնայ աւելի յաճախ կատարուիլ, աւելի շատ պատեհութիւններ և դիւրութիւններ ունենալով. այնպէս որ, հազուադէպ չեն մեկ օրուան մեջ չորս, հինգ, նոյն իսկ աւելի գիջութիւններ:

Երրորդ, գիջութեան հոգեկան ազդեցութիւնը շատ աւելի վնասակար է քան բնական զուգաւորութեան ազդեցութիւնը: Առանձնակի մոլութիւնը խորապէս կ'ազդէ բարեմիտ մանուկի հոգիին և նկարագրին վրայ: Դեռատի գիջագործը միշտ առանձնութիւն կը փնտռէ, կ'ամչնայ, կը քաշուի մարդկային արարածներէ, կը դառնայ վերապահ, մռայլ, ապերժանիկ, խոսնդանոտ (սեւամաղձ, մեռազր): Զափահասներուն մէջ գիջութեան նուաստացուցիչ, ապականող հանգամանքին ու մեղաւորութեան գիտակցութիւնը աւելի պայծառ, աւելի կենդանի է: Առաջին օրէն իսկ, գիջագործը ինքզինքը բացարձակապէս գերի դարձած կը նկատէ իր մոլութեան, այլ ևս յաւիտենական

պայքար մըն է՝ որ ծայր կուտայ այդ յարաճուն ցանկութեան դէմ, և ենթական կը վնասէ ո՛չ միայն ֆիզիքապէս, այլ մասնաւոր մտաւորապէս: Ասկէ ծագում կ'առնեն շարք մը կամքի հիւանդութիւններ, որովհետեւ գիջութիւնը կը ջլատէ հոգեկան և ֆիզիքական գործունէութիւնը: Շատ մը երիտասարդներու պաղ, յափրացած երեւոյթը — որոնք կարծես երբեք վայելած չեն կեանքի երիտասարդական բնածին զուարթութիւնը, — արդի մանկամարդու հիւներու ամբողջ «կիսակուսութիւնը» անկասկած հետեւանք են գիջութեան և հոգեկան օնանականութեան: Սեռային յարաբերութեան մէջ օնանականին ունեցած եսամոլութիւնը ուրիշ տեսակէտներով ալ կ'աւելցնէ իր եսամոլութիւնը. տեղի կու տայ սառնասրտութեան՝ անզգայութեան, և կը բթացնէ բարոյական աւելի փափուկ ըմբռնումները: Եւ ճիշդ այս տեսակէտով, խմբական գիջութեան դէմ սկսած պայքարը յայտնապէս ընկերային պայքար մըն է՝ այլասիրութեան համար. որովհետեւ կը ձգտի համոզել թէ պատանիներ ալ պէտք է իրենց բաժինը ստանձնեն հանրային բարիքին հետ կապ ունեցող խնդիրներուն մէջ:

Արուեստի և գրականութեան մէջ երեւան եկած մասնաւոր այլանդակութիւններ և անբնական յատկանիշներ ալ որոշ մասով հետեւանք են գիջութեան: Շատ մը գործեր յայտնապէս գիջութեան դրոշմը կը կրեն: Հէյվլօք Էլլիս այս պատճառին կը վերագրէ Կօկօլի պատմութիւններուն մասնաւոր մեկամաղձութիւնը, որովհետեւ ոուս տաղան-

դաւոր գրագէտը մոլի գիջացող մըն էր: Մեր ժամանակներուն մէջ ալ կան շատ գործեր, որոնք կասկածներ կը հրաւիրեն: Գիջութիւնը փիլիսոփայական տեսակէտով վերլուծած է Շոփէն-հաուըր (Neue Paralipomena):



Մովորական գիջութեան բնախօսական հետեւանքներն ալ իրապէս ծանր են:

Մասնաւորապէս աչքերը բազմատեսակ վնասներ կը կրեն, ինչպէս հաստատուած է բժշկական հետազօտութիւններով: Այսպէս, գիջութենէն ծնունդ կ'առնեն աչքի սպիտակուցին գրգռումները, արտեւանունքի կծկումներ, երկիւղ կամ խորշում լոյսէ եւն.: Սիրտն ալ ախտաւոր ազդեցութիւններ կը կրէ: Գիւնական մը նոյն իսկ «Գիջագործի յատուկ սիրտ» բացատրութիւնը կը գործածէ, բնորոշելու համար այդ հիւանդութիւնը, իրրեւ հետեւանք երկարատեւ ջղային գերագրգռութեան, որ կը վնասէ սիրտին և արեան անօթներուն. այդ պարագային ենթական կ'ունենայ անկանոն բաբախում, ճնշում և ցաւ կը զգայ սիրտին կողմը, կը հեւայ եւն: Եթէ ժամանակին մոլութենէն հրաժարի, այդ բոլոր երկիւղալի ախտանշաններն ալ անմիջապէս կ'անհետանան:

Շատ կարեւոր է նաեւ գիջութեան, և ջղային կամ մտային խանգարումներու առնչութիւնը: Բայց այստեղ ալ պէտք է զանազանել երկու գիջութիւնները, մէկը՝ այն որ արդիւնք է նախապէս

գոյութիւն ունեցող ջղային-հոգեկան տազնապաներու. (որովհետեւ այդ պարագային գիջութիւնը աստիճան մը հետեւանք է առաջին տկարութեան, և մասամբ պատճառ՝ այդ տկարութեան ծանրացման). և միւսը այն՝ որ սկսած է բոլորովին առողջ ջղային դրութեան մը վրայ: Երկու պարագային ալ, ինչպէս ըսինք, գիջութեան ամէնէն վտանգաւոր ազդեցութիւնները կը ծանրանան հոգեկան աշխարհին վրայ, կը կայանան մոլութեան դէմ անընդհատ, շայց միշտ ապարդիւն կռիւ մղելու տազնապին մէջ:

Գիջութիւնը նպաստաւոր տարր մըն է մտային խանգարումներու համար. և գիջակաւ յիւստութեան կ'ենթարկուին անոնք որ ժառանգական նշանակելի նախապատրաստութիւն մը ունին. և արդէն ջղային անկարութեան մասնուած են:

Բայց մանաւանդ գիջութիւնը՝ կրնայ անվիճելի կերպով ծնունդ ալ տեղական փոփոխութիւններու՝ ծննդական գործարաններուն մէջ, — ինչպէս թորթաֆած վիճակներ՝ շագանակագեղձի, սերմնէրբութիւն և շագանակագեղձի հոստւել. իսկ կրնորեն մէջ՝ ապիսակահոստութիւն, չափազանց ցաւազին դաշտակ. և ուրիշ խանգարումներ գաշտանի: Այս երեւոյթին հետ կրնայ ծագում առնել նաեւ սեռային ջղայնութեան, անկարութեան ախտաւոր վիճակը, որու մասին ակնարկութիւններ ըրինք արդէն:



Մոլի գիշութեան, այսինքն բուն ծնանիզմի ամենածանր հետեւանքներէն մէկն է խորշում՝ սեռային քնակալան յարաբերութեան, և ուրեմն սեռային խաթարումներ: Առաջինը՝ աւելի նշանակելի է իգական սեռին մէջ, երկրորդը՝ արականին մէջ:

Գիշութիւնը գլխաւոր պատճառն է կիներու սեռային պաղութեան՝ անզգայութեան և բնական զուգաւորութենէ խորշումին: Անշուշտ հոգեկան ազդեցութիւնները մեծ դեր ունին այստեղ. բայց կայ նաեւ ծննդական գործարաններու զգայութեանց որոշ ընդարմացում մը, իբրեւ հետեւանք ծայրայեղ գիշութեան: Այդպիսիները այլեւս բան չեն զգար զուգաւորութեան բնական գրգռումէն: Յետոյ, գիշութիւնը յաճախ կը կատարուի զրգռուելով իգական գործարաններու որոշ մէկ մասը, ընդհանրապէս՝ ծրիկը և չրթները. և այն ատեն այդ մասերը պէտք եղածին չափ զգայուն չեն ըլլար զուգաւորութեան պահուն: Արական սեռին մէջ, վարոյցին մասնաւորապէս զգայուն մասերը կը գրգռուին թէ՛ գիշութեամբ և թէ՛ զուգաւորութեամբ. ուստի և տղամարդը, հակառակ գիշական վարժութեան, աւելի ընդունակ է սեռային գոհացում ստանալու կանոնաւոր յարաբերութեամբ: Բայց և այնպէս, տղամարդը ունի գիշութեան կարգ մը առանձնայատուկ ձեւեր, որոնց զգայութիւնը չի գտներ բնական զուգաւորութեան մէջ: Այդպիսի դէպքերու մէջ տղամարդիկ ալ չեն կրնար տռիփ գրգռել սովորական մերձաւորութեամբ:

Բոլորովին բացայայտ է գիշութեան և սեռային խաթարումներու սերտ առնչութիւնը: Ո՛րքան աւելի կը կրկնուի գիշութիւնը, այնքան աւելի կը բթանայ բնական զգայութիւնը, և աւելի կը սաստկանան մոլի կիրքերն ու մղումները, որոնք սովորականէն սարբեր խթաններ կը պահանջեն: Այն ատեն վաւաշտ զաղափարներու գոհացման ձեւերը հետզհետէ աւելի այլազան կը դառնան և շատ չանցած կ'երթան կը յանգին խաթարումներու: Աստիճանաբար, այդ շեղումները ամրապէս արմատ կը բռնեն և վերջը-վերջը յառաջ կը բերեն կատարեալ այլասերում:

Այս կարգի հրէշութեան դասական օրինակ մըն է Ա. Թառափէօի պատմած դէպքը: Երիտասարդ մը սովորութիւն ըրած էր օրակալ եօթը-ութը անգամ զիջագործելու. և վերջը-վերջը երեւակայութիւնն այնքան բոցավառեցաւ որ, զուգաւորութեան պատկերներ կը ներկայացնէր իգական դիակներու հետ... Վերջապէս ձեռնարկեց այդ զարնուրելի զաղախարին իրագործման: Կարգադրութիւններ ըրաւ, որպէսզի կարենայ տեսնել բացուած իգական մարմիններ, սպաննուած շուներ, գերեզմանէն հանուած մարդկային դիակներ, — և այսպէս գոհացում ստանալ իր երեւակայութեան, որ խանդարուած էր գիշութեան հետեւանքով, ու յագեցնել իր սեռային կիրքը: Եւ ինչպէս որ գիշական մոլութիւնը որոշ դեր ունի միասեռականութեան մէջ — Մեքսիկացի «միւսէրասո»-ները արուագիտութեան կը վարժուին օրական քանի մը անգամ գիշութիւն փորձելով — այդ նոյն

մուլթիւնը կրնայ ծնունդ տալ նաեւ անասնա-
գիտութեան: Շրէնք-Նօցինկ կը յիշէ կին մը որ
գիջութիւն ըրած էր ամբողջ երեսուն տարի, և
վերջը-վերջը սկսաւ այնպէս երեւակայել թէ կը
զուգաւորուի յովատակի մը հետ:

—

Ինչպէս բացատրեցինք, գիջութիւնը աւելի
զիւրաւ կը դարձանուի ֆանուկներուն մէջ: Կա-
տարեալ յաջողութեան յանգելու համար, ծնողները,
ուսուցիչները և բժիշկները պէտք է գործակցին:

Ամէն բանէ առաջ, անհրաժեշտ է վերջնել
բոլոր այն տեղական կամ ընդհանուր փառաւոր
պայմանները որոնք կը նպաստեն գիջական վար-
ժութեան: Ուտեստը պէտք է ըլլայ թեթեւ և շշ-
գրգռիչ. զգեստներն ու անկողինը՝ զոր, թեթեւ և
պալ:

Դեռ 1791ին, Տօքդ. Պէրնարտ Ֆաուստ նշա-
նաւոր գիրք մը կը հրատարակէր, «Ինչպէս կ'ա-
նոնաւորել մարդու սեռային մղումը» խորագրով,
և այն տեսութիւնը կը պաշտպանէր թէ մանչերու
գիջութեան գլխաւոր պատճառն է վարտիքը կամ
տափառը: Իր կարծիքով, երեխաները խանձա-
րուրի մէջ փաթթելը ծնունդ կուտայ սեռային
գործարաններու կանխահաս զրգուման: Աւելի
ետքը, վարտիքի գործածութեամբ յառաջ կուգայ
«մեծ և խոնաւ ջերմութիւն մը, որ մասնաւորա-
պէս նշանակելի է սեռային գործարաններու կող-
մը, ուր շապիկը ծալ-ծալ կ'ըլլայ»: Նաև, «մանչը
երբ ուզէ ջուր թափել, պէտք է վարտիքէն դուրս
հանէ իր պզտիկ վարոցը: Նախ, — և վարտիք հագնե-
լու սկսելէն ետք դեռ երկար ատեն, — պզտիկ

տղան չի կրնար ինքնիրենը կարգադրել այդ գործը.
ուրիշ մանչեր, սպասուհիներ և սպասաւորներ
կ'օգնեն իրեն, կը քաշեն վարոցը, և կը խաղան
անոր հետ:

Այսպէս իր ծննդական գործարանները ձեռք
առնելով, քաշելով կամ անոնց հետ խաղալով,
մանչը կը վարժուի շարունակ յարարերու թեան
մէջ գտնուիլ այնպիսի մասերու հետ զորս այս-
պէս պիտի նկատէր արդիւրեւ, անմաքուր կամ
ամօթալի: Դեռատի աղջիկն ալ կը գտնուի նոյն
կացութեան մէջ, յաճախ օգնելով մանչուն, մա-
նուանդ երբ այս վերջինն ալ, շնորհակալութեան
համար, ուզէ իր կարգին օգնել անոր: Այսպէս
երեխան կը վարժուի խաղալու իր ծննդական
գործարաններուն հետ, և պատահական զիջութիւնը
կը դառնայ սովորական, բոլորն ալ հետեւանք՝
վարտիքի կամ անդրաւարտիքի (քիւլօթ) գոր-
ծածութեան: Այս բոլորին առաջքը առնելու հա-
մար, նոյն հեղինակութիւնը կը յանձնարարէր որ
9-14 տարեկան մանչերը աղջկան պէս հագուին:
Եւ սրտառուչ միամտութեամբ մը, կ'եզրակացնէր
թէ այդ մանուկները, «համաձայն բնութեան
օրէնքին, մանուկներ պիտի մնան և ուշ պիտի
հասունանան և մարդու սեռային մղումը պիտի
զսպուի, ու մարդկութիւնը աւելի լաւ և աւելի
երջանիկ պիտի ըլլայ»:

Թէև և այս տեսութիւնը ծիծաղելի կը թուի,
բայց ուրիշ հեղինակութիւններ ալ կը խոստովա-
նին որ ճշմարտութեան տարր մը կայ անոր մէջ.
այսինքն, չափազանց նեղ և տաք զգեստները

անկասկած կը նպաստեն գիշական ձգտումին: Բժիշկ մը կը յանձնարարէ որ ծծկեր երեխաներուն և դեռատի մանչերուն ձեռքերը պզտիկ տոպրակներու մէջ դրուին կամ անկողնի եզերքին կապուին: Հին բժիշկները յաճախ գիջութեան ենթարկուած մանուկին կ'երեւային զինուած դանակներով և մետաղներով, և կը սպառնային տանջալից գործողութիւն մը կատարել, կամ նոյն իսկ կտրել ծննդական գործարանները: Նորերն ալ յարմար կը գտնեն այսպիսի ձեւեր, որոնք երբեմն կրնան արմատական բուժում յառաջ բերել: Երբեմն գործողութեանց իրախան կատարումն ալ օգտակար է, Փուրպրինկէր դեռատի տղայ մը բժշկեց սղոցաբերան մկրտոսի մը միջոցաւ պարզապէս կտրելով անոր իրիփատին ետեւի մասը: Ո՛չ կրթութիւնը, ո՛չ ալ պատիժները ազդած չէին այս տղուն վրայ: Մանկամարդուհի մը, որ յաճախ ընկերութեան մէջ գիջութիւն կ'ընէր, բժշկեցին քանի մը անգամ տաղելով բունոցը: Ուրիշ բժիշկներ կը ծակեն թրիփառ և օղակ մը կ'անցընեն: Նոյն իսկ գիջութիւնն արգիլելու նպատակով վանդակներ հնարած են, ծննդական գործարաններուն համար, բանալին հօրը յանձնելով... Փորձուած է նաեւ առնանդամը կաշկանդել առանց բացուածքի կալանդներով կամ վիրակապերով (bandage, արդը): Երբեմն մարմնական պատիժն ալ օգտակար է: Բայց ամէնէն թանկագին միջոցն է շարունակական ուշադրութիւն՝ մանուկները հրապուրանքներու դէմ պաշտպանելու համար:

— Ծնողներ, ձեր զաւակները պաշտպանե-

ցէք սպասաւորներէն, կը բացազանչէր Ֆրանսացի գրագէտ մը:

Սխտ օգտակար են նաեւ խանդալիւր ազդարարութիւններ և բացատրութիւններ, զարգացում կորուլի, կամքի ոյժի, յանձնելով այնպիսի գործեր որոնք կը հրահանգեն տղան, կը զբաղեցնեն զայն, կամ կը զրգուն անոր փառասիրութիւնը: Կլիմայական և ջրային բուժումներն ալ արդիւնաւոր միջոցներ են: Միւսերն ձեւերը կրնան գործածուիլ չափահասներու գիջութիւնը դարմանելու համար: Բայց այս պարագային հոգեբուժական միջոցները գլխաւոր դերը կը կատարեն: Շատ մը պարագաներու մէջ հոս ալ միջուկին տաղումը և շագանակագեղձին մարձումը կրնան բժշկել: Տոքս. Պլօխ, Տոքս. Վէյլ և ուրիշներ բացարձակապէս դատապարտելի կը զըտնեն դեռատի օնանականներ առաջնորդել իսկական զուգաւորութեան, ինչպէս կ'ընեն Փարիզի «թանաւաճառները» (marchands de soupe) — ժողովրդային պատկերալից բացատրութեամբ — որոնք իրենց զեռահաս դպրոցականները գիջութենէ փրկելու համար, բողանոց կը տանին:



Գիջութենէն անբաժան է ջրային գրգռելի տկարութիւնը, անկարութիւնը կամ նեօրասթեկին, արդի քաղաքակրթութեան մէկ բնորոշ հիւանդութիւնը, բայց մանաւանդ սեռային նէօրասթէնին:

Այս հիւանդութենէն վարակուած 333 հոգի քննուեցան և հաստատուեցաւ որ 123ը, այսինքն աւելի քան մէկ երրորդը, զո՛հ եղած են չափազանց աշխատութեան կամ գիջութեան: Մէկէ աւելի բժիշկներ գիջութիւնը կը նկատեն իսկական պատճառ նէօրասթէնի: Շատ անգամ այ ուրիշ հիւանդութիւններ կը միանան, և գիջութիւնը պատճառ կ'ըլլայ կամ հետեւանք: Սրդէն սեռային շատ մը տկարութիւններ — նէօրասթէնի, չափազանց զգայութիւն, թերի զգայութիւն, սերմներթութիւն և անկարողութիւնը ինչպէս գիջութիւնը, կրնան աստիճան մը անկախ ըլլալ, յառաջ գալ զանազան պատճառներէ, և յետոյ առաջնորդել սեռային նէօրասթէնի: Յաճախ շատ զբոսուար է կամ անկարելի՝ որոշել հիւանդութեան բուն սկզբնաւորութիւնը:

Կարգ մը ծանականներ իրենք զիրենք կ'ամբաստանեն հեծեծելով, կուլան, կ'ողբան բժշկին և բարեկամներուն առջեւ՝ թէ իրենց մոլի ունակութեամբ փճացուցին իրենց գոյութիւնը: Ասոնք իրենք զիրենք կը նկատեն թշուառ մեղաւորներ, որոնց կեանքը կործանած է կամ իրենց իսկ ձեռքով կամ ուրիշներու չար խորհուրդով:

Տոքդ. Ֆորէլ դիտել կուտայ որ, եթէ սըրտցաւ հետաքրքրութեամբ հարցաքննուին այսպիսի ծանականները, ընդհանրապէս ձեռք պիտի բերուին հետեւեալ արդիւնքները. — Պիտի տեսնէք ժառանգականութեամբ աւելի կամ պակաս արատաւորուած հոգեկան կամ ջղային հիւանդներ, երկչոտ, սմսեղուկ, ուրիշներէն քաշուող, լկուած՝

հիւանդագին զգայութիւններով կամ զաղափարներով, մէկ խօսքով սեւամաղձներ կամ ախոնդանոտներ (hypochondres), որոնք տրամադիր են ամէն ցնցումի կամ իւրաքանչիւր պզտիկ տկարութեան մէջ տեսնել ծանր հիւանդութիւն, որ կը սպառնայ իրենց առողջութեան և կեանքին: Այս իսկ պատճառով անոնք կ'ապրին մշտնջենական անձկութեան մէջ: Մտային այս անկանոնութիւնը շատ անգամ բուն գիջութենէն ալ առաջ երեւան կուգայ:

Կան շատեր որոնք միայն երազափորձութիւններ ունեցած են արբունքէն իսկ, և կը կարծեն թէ գիջութիւնն է որ կը քայքայէ զիրենք: Ուրիշ շատեր իրապէս գիջութիւն կ'ընեն, որովհետեւ իրենց երկչոտ և կասկածոտ բնաւորութիւնը արգելք կ'ըլլայ հանրատուն երթալու և ուրիշ սեռային ծայրայեղութիւններ գործելու: Բայց, միւս կողմէ, ընդհանրապէս այնքան երկչոտ են որ, այդ մոլութեան ալ անձնատուր չեն ըլլար ծայրայեղօրէն, թերեւս չարաթը մէկ կամ երկու անգամ, կամ աւելի պակաս: Այսպիսիներուն մէջ քիչեր կան իբրեւ կանխահաս կամ ծայրայեղ ծանական: Եւ սակայն իրենց կազմն ու սեւամաղձոտ խառնուածքը ուղղակի նոյն մոլութեան կը մղեն, ինչպէս ըսինք:

Ամենամոլի գիջագործները—անոնք որ երբեմն օրական քանի մը անգամ սերմ կը հոսեցնեն, — կը պատկանին սեռային զգայամոլներու կարգին: Ասոնք տժգոյն, սարսափահար և հեծեծող դէմքեր չեն. այլ աւելի վաւաչոտ անձեր

որոնք դիւրութեամբ սանձակոտոր լիբրեր կը դառնան: Ասոնք ալ կրնան նոյնքան քաջարի, ճարտար և ուժեղ ըլլալ որքան ուրիշները և տրամադիր՝ ամէն շահատակութեան և յիմարութեան: Հետեւաբար, կ'ըսէ Տ. քղ. Փօրէլ, ճիշտ չէ այն համոզումը թէ անհատի մը զիրքէն և ապրելու կերպէն կրնայ հասկցուիլ որ գիշութիւն կ'ընէ՞ թէ ոչ: Այսպիսի պարագաներուն մէջ ալ, սեռային սեւամազձութիւնը ո՛չ թէ հետեւանքը, այլ պատճառն է գիշադորձութեան: Գիշական մոլութիւնը, իր ապականող ազդեցութեամբ, պատրաստ սնունդ մըն է սեւամազձոտ մտահոգութիւններով լիութեամբ անհատներու համար, որոնք շուտով անձնատուր կ'ըլլան անոր:

Կիներուն, և մասնաւորապէս մանկամարդուհիներուն մէջ, սեւամազձութիւնը շատ յաճախադէպ հիւանդութիւն մը չէ: Իգական սեռին մէջ աւելի քիչ են անոնք որ կուրան կ'ողբան թէ գիշութիւնը իրենց տունն աւերեց: Գիշադորձ կիները ընդհանրապէս կատարեալ գաղտնիք կը պահեն իրենց մոլութեան մասին և սովորաբար շատ քիչ ազդուած կը թուին:

Եւ սակայն գիշութիւնը նոյնքան վնաս կը պատճառէ իրենց, որքան սղամարդերուն: Ճիշտ է որ կիները սերմնային հոսումներ չեն ունենար, բայց ջրային զրգուման կրկնումն ու սաստկութիւնը շատ աւելի ուժեղ են, քան սղամարդուն մէջ և այս իսկ է որ ամէնէն աւելի կը սպառէ զիրենք: Միայն թէ, հետաքրքրական է որ գիշութեան մոլի կիները ընդհանրապէս նուազ կ'ա-

մէնան քան սղամարդիկը և այնքան ալ նուատացած, ընկճուած չեն թուիր: Չմոռնանք թէ գիշութեամբ տեղի ունեցած սերմնահոսութիւնը մասնաւորապէս նուատացուցիչ հետեւանք մը կ'ունենայ սղամարդուն վրայ. որովհետեւ իր նպատակէն կը վրիպի և բացարձակապէս անկանոն, անբնական գոհացում մը կուտայ սեռային ցանկութեան:

Ինչպէս սեռային վայելքի չափազանցութիւնները, գիշութիւնն ալ, իր շատ մը չարիքներուն հետ, կրնայ յառաջ բերել անկարողութիւն: Եւ ինչքան նկարագեղ են բանաստեղծին խօսքերը, այս մասին.

Երբ անգամ մը փրքի նիւրը այն բունեն որ սնունդ կուտայ իր կենսունակութեան, այդ նիւրը ա՛յ երբեք չի վերսանար իր քարմուքիւնը, եւ դուք ի գո՛ւր կը ջրե՛ք ծաղիկը, երբ արմատը չորցնէր ե...

Անգամ մը որ սովորութիւն դարձաւ, գիշութիւնը ա՛յ կը սկսի զանազան ձեւերով ազդել կեանքի և ամէն տարիքի վրայ: Նուազեցնելով երիտասարդին առնականութիւնը, զայն կը նախապատրաստէ ամէն տեսակ ծննդական այլասերումներու: Նոյն իսկ ան որ սրամազիր է այդ մոլութենէն հրաժարելու, բնական յարաբերութիւններ մշակելու համար, յաճախ, այդպիսի յարաբերութիւններու մէջ անգամ, այսպէս կամ այնպէս կը դառնայ գիշութեան, իր հաճոյքները երկարաձգելու, «նոր տեսակ» մը վայելիլու և իր

տութական զգայութիւններն՝ աւելցնելու համար: Այդպիսի պարագաներու մէջ ամենատարածական երեւոյթներ են ձեռքով շօշափումներն ու ծծումը, մանաւանդ երբ կիներ բացարձակապէս շնորհիւմանար: Այս նողկալի ունակութիւններով, ամէնէն ջղային անհատները կը կարծեն կատարելապէս յազենալ, նսնելով սուփական տենդի ամենաբարձր աստիճանին:

Քիջացողներու առնանդամը ծանրապէս կ'ազդուի շարունակական շփումներէն, ճնշումներէն և ծծումներէն, ձեփուկը ձեւափոխուելով և փապային մարմինները ընդլայնուելով, կը դառնան թոյլ և անկայուն՝ բնական զուգաւորութեան պահուն: Զուգաւորութիւնը շատ թեթեւ ազդեցութիւն կ'ունենայ: Այդ մոլութեան ներշնչած երկչոտութիւնն ու ամօթը, իրենց սեռային ցանկութիւններուն անստուգութիւնը, եթէ ոչ բացակայութիւնը, — այս բոլորը կը նպաստեն խանգարելու կանգնումը և զիրենք անյաջողութեան մասնելու՝ բնական յարաբերութեանց ատեն: Ահա թէ ինչո՞ւ գիջացողները կը նախընտրեն բոլոր բուն, անմիջական միջոցները — ձեռքով, բերնով կամ գործիքներով գրգռումները:

Պաղ, թմրած, յաճախ կնամարդի, եթէ ոչ անզգայ և նոյն իսկ միասեռական, այդ թշուառները սովորաբար բաւարար կանգնում չեն ունենար իրենց փորձերուն մէջ. ուրիշ խնդիր, եթէ գտած են կին մը որ կը խենդենայ իրենց վրայ, կը գերէ ու կը հրապուրէ զիրենք: Այլապէս, ամօթով կը մնան: Սովորութեան ուժով, շատեր կը

յաջողին կէս-կանգնում և սերմնային հոսում ունենալ տեսակ մը երկեակ գիջութեամբ: Սակայն ասոնք անկարողներ չեն, երբ ուղղակի գիջութեան կը դիմեն: Իրենց ուսած՝ գրգռելի մասերուն շօշափումն իսկ կը բաւէ կանգնում յառաջ բերելու: Ծարպիկ և հաճոյակատար կին մը դիւրաւ պիտի յաղթէր: Բայց խնդիրն այն է որ միշտ վարժուած առանձնապէս իրենք զիրենք գրգռելու, իրենց ցանկամոլութեան աստիճանին համաձայն, գիջացողները նոյն իսկ չեն գիտեր անձնատուր ըլլալ իրենց ընկեր-կնոջ, անոր բոլոր տութական ազդեցութիւնն զգալու, այդ հաճոյքին մասնակցելու և զայն պահելու համար: Անոնք կը խոստովանին թէ բան չեն զգար, ինչպէս անզգայ կիները: Այն ատեն է որ մարդիկ ճարահատ դիմում կ'ընեն տափայոյզ և ջղաբոյժ դեղերու: Ազա ուրեմն գիջութիւնը երբեմն սեռային անզգայութիւն և երկարատեւ ամուրուքիւն յառաջ կը բերէ:

Յիշենք կարգ մը յատկանշական և խօսուն օրինակներ, գիջութեան չարիքներու մասին.

Քսան տարեկան երիտասարդ մը, որ ունէր ուժեղ, գրեթէ ըմբշական կազմ, ինքզինքը ծայրայեղ գիջութեան տուաւ 15էն 18 տարեկանին: Մասնաւորապէս բաղնիքին մէջ էր որ անձնատուր կ'ըլլար այդ չարաչուք մոլութեան և նոյն իսկ օրական մինչև 15ի բարձրացուցած էր: Այս ծայրայեղութիւնները շուտով տկարացուցին իր կազմը, խանգարեցին միտքն ու յիշողութիւնը: Բարեբաղդաբար խոհեմ ազդարարութիւններ կղան և

երիտասարդը ետ կեցաւ այդ մարութիւնէն, օրինակելի ժուժկալութիւն մը պահելով մինչեւ երկու տարի: Երբ վերստացաւ իր կազմը, ինչպէս և յիշողութիւնն և միւս կարողութիւնները, վաճառականի մը քով դրուեցաւ: Այնքան եռանդով և գործունէութեամբ կը կատարէր իր պաշտօնը որ, վարպետը կը գուրգուրար իր վրայ, ինչպէս և կինը — ոչ գեղեցիկ էր, ոչ ալ երիտասարդ — բարեկամական հաւաստիքներ կը շուայէր ամէն օր: Այն ատեն տղան երես առաւ կնոջ այդ գուրգուրանքէն և կարծեց թէ ան ջերմագէտ կը սիրէ զինքը: Ինք ալ փոխադարձաբար պատասխանեց փայփայանքով. բայց, մէկ կողմէ իր երախտագիտութեան սրտակեանութիւնը բռնաբարելու երկիւղը և միւս կողմէ կնոջ տիրանալու ցանկութիւնը զինքը ենթարկեցին տաժանելի և սրտնեղ վիճակի մը: Կը բաւէր որ ակնարկ մը ընդունէր անկէ, և ահա անմիջապէս կանգնում և ցայտում կ'ունենար: Յաճախակի երազափորձութիւններ կը տանջէին զինքը և ստիպուեցաւ հրաժարական տալ պաշտօնէն:

Ուրիշ երիտասարդ մը գիջական ծայրայեղութիւններէ ետք, որոնք դադրած էին 18 ամիսէ ի վեր, խենդի պէս սիրահարեցաւ աղջկան մը: Ամէն անգամ որ անոր քով կը գտնուէր կամ անոր պատկերը կ'երեւակայէր, կանգնում կ'ունենար և վարցի ամենաթեթեւ հպումը, — ինչպէս տափատին կամ շապիկին քսուել — կը բաւէր անմիջապէս ցայտում պատճառելու: Այլապէս, ստիպուած էր անգործ մնալ և նոյն իսկ կը պա-

տանէր որ սերմնահոսութիւն ունենար միայն սեռականին ձեռքին դպչելով:

Տասնընը տարեկան պատանի մը, 11 տարեկանէն ի վեր գիջութիւն կ'ընէր ոտքի վրայ կամ նստած, գրեթէ ամէն օր՝ 15-17 տարեկանին, յետոյ աւելի պակաս: Վայելքը շատ բուռն էր մինչեւ արբունք, բայց երթալով նուազեցաւ, գրեթէ ոչնչութեան յանգելու աստիճան: Վերջերը միայն անկողնին մէջ գիջութիւն կ'ընէր և ցայտում կ'ունենար մէկ վայրկեանէն, վարոցը ոլորելով և քսելով ձախ գիտին: Մեքենական վաղեմի ունակութիւն մըն էր այս, որ կը կատարուէր առանց ցանկութեան կամ հեշտանքի: Կիները շատ սիրելով մէկտեղ, կը քաշուէր, երկշոտ էր: Անոնց տեսքը չէր զրգուեր զինքը: Տասնութ տարեկանին արտասահման երթալով, բոլորովին ազատ մնաց և ուզեց կնոջ մը հետ փորձ կատարել. հակառակ իր կամքին, մնաց պաղ ինչպէս մարմար մը ու չյաջողեցաւ կանգնում յառաջ բերել: Ամէնէն սարսափելին այն է որ երբեք ինքնաբերաբար կանգնում չէ ունեցած, այլ միշտ ձեռքով, և այն ալ հազիւ քանի մը երկվայրկեան կը տեւէր:

Այսպէս ուրեմն, գերազրգուելով, բորբոքելով ամբողջ շրային դրութիւնը, կամ պարզապէս ծննդական գործարանները, գիջութիւնը գետին կը պատրաստէ սերմնահոսութեան. որովհետեւ, այս ակամայ հոսումները թէեւ իրական անկարողութիւն չեն, բայց անկարողութեան աւելի կամ նուազ հեռաւոր պատճառ մը, սպառնալիք

մըն են: Եթէ նոյն իսկ այդպիսի անհատները բնականէն ջղային նախապատրաստութիւն մը ունեցած ըլլան, գիջութիւնը կը բաւէ այդ տկարութիւնը աւելցնելու և միայն ինքն իրեն զարգացնելու:

Գիտուն մը ըսած է թէ գիջութիւնը աւելի շատ հիւանդներ կը զրկէ բժշկին, քան զուգաւորութիւնը:

Եւ, թող աւելորդ չըլլայ քիչ մը մանրամասնորէն յիշել այն բոլոր հետեւանքները որ կը ծնին այս գարշելի մոլութենէն, երբեմն սերունդէ սերունդ երկարած գուելով:

Իրի արիւնանոտքիւնը յաճախ հետեւանք է մոլի գիջութեան, երկու սեռին համար ալ: Տասնութը-քսան տարեկան երիտասարդ մը, որ գիջութիւն կ'ընէր հանրային միզարանի մը մէջ, յանկարծ բռնուեցաւ քթի առատ արիւնահոսութենէ մը: Տղան խոստովանեցաւ թէ ուրիշ ատեն ալ այդ փորձանքին կը հանդիպէր. — Պարագայ մը որ արժանի է ծնողներու կամ ուսուցիչներու լուրջ ուշադրութեան:

Գլխու աւսիկ եւ երկարատեւ ցաւերը (céphalées), որոնք ճակատին մէջ կը կեդրոնանան և պատանիներու արբունքին կը վերագրուին, յաճախ ուրիշ պատճառ չունին, բայց միայն գիջութիւնը: Այդ ցաւերը կը զուգադիպին ուղեղային ծուլութեան, մտային աշխատանքի անընդունակութեան, և ջղային գրգռութեան հետ, որ իր կարգին ծնունդ կուտայ տխրութեան կամ բար-

կութեան, ցնորանքի, մղձաւանջի, տկարութիւններու կամ նուազումներու:

Արդէն այս վերջին պարագաները կը բաւեն մոլութենէն կասկածելու: Այնքան որ շատ են յատկանշական գիծերը՝ օնանական մը ճանչնալու, — կուրծքին վրայ ծած գլուխ մը, չափազանց աճած առնանդամ, հասակի յանկարծական բարձրացում կամ կասում, գիշախանձ ակորժակ, արագ նիհարութիւն՝ առանց երեւութական հիւանդութեան, անկանոն քալումք, լքում, թուլութիւն մարմնի, կարճ, վրդովուն կամ ընդհատուած քուն, խռպոտ, տկար և հեղձամղձուկ ձայն, պղտոր կամ մրրոտ մէզ, յաճախակի սարսուռներ են: Եթէ մանուկներ են զո՞ները, ո՞չ միայն առանձնութիւն կը փնտռեն, ծոյլ ու անհոգ են, խոյս կուտան խաղէ և շուարձութենէ, այլ և ուրիշ մանչերու հետ գտնուած ատեն, լպիրշ, անպատկառ խօսքեր և արտայայտութիւններ կ'ընեն. մինչդեռ իրենց ծնողքին կամ ուրիշ տարէց անձերու առջեւ, մեկամղձիկ և երկչոտ երեւոյթ մը կը ցուցնեն, ինչ որ կարծել պիտի տար թէ անմեղներ են: Երբ մէկը իրենց վրայ հսկել ուզէ, անմիջապէս իրար կ'անցնին և հանգիստ քուն քաշել կը կեղծեն, մինչդեռ իրականին մէջ խլրտումի մէջ են իրենք ալ, անկողինն ալ. կը բաւէ ուշադրութեամբ դիտել իրենց դէմքին ոգեւորութիւնը, մորթին քրտինքը, հեւ ի հեւ շնչառութիւնը: Երբ արթնցնէք, հանգիստ կը մնան, եթէ անմեղ են. բայց հակառակ պարագային, կ'աճապարեն վերցնել իրենց ձեռքերը զորո սովորա-

բար ծննդական գործարաններուն վրայ բռնած կը մնան. նոյն իսկ քնացած ատեն:

Տարակոյսի կամ պարզ կասկածի ատեն, մէզի մանրադիտական քննութիւնը կրնայ երեւան հանել ճշմարտութիւնը, առանց աղան մոլորեցնելու: Գիշացողներուն մէջը կը պարունակէ եթէ ոչ սերմնակենդաններ, գոնէ որոշ քանակութեամբ հուզային խնոտ նիւթ, որ կուգայ շագանակագեղձէն կամ սերմնային փամփուշտներէն, խառնուած կրային աղի բիւրեղներու: Այս աղը սերմի բաղադրիչ տարրերէն մէկն ըլլալով, մէզին մէջ իր ներկայութիւնը այնքան հաստատուն փաստ մըն է որ, կրնայ ստոյգ ախտանիշ մը նկատուիլ չափահասներու գիշութեան, եթէ ամէնէն բնորոշ նշանը չըսուց: Անչափահասներուն պարագային ալ կրնայ մոլութիւնը երեւան հանել. ուրիշ խընդիր, եթէ աղան թրթնջուկ (գուզու գուլաղը) կամ կրային աղ պարունակող ուրիշ որ և է նիւթ կերած է:

Գիշութեան հետեւանքով միզուկն ալ ծանր խանգարումներ կ'ունենայ: Ամերիկացի բժիշկ կրօս յատուկ գործիքով քննեց 331 գիշացողներու միզանցքը. (բոլորն ալ զերծ էին ջերմամիզութենէ): Երբ գործիքը ներս մտեց, միզուկը չափազանց զգայնութիւն կը ցուցնէր, ինչ որ հաստատեց թէ արիւնի համախոնում և տեղական գրգռում կուգայ. որով և հարիւրէն 88ին միզային խողովակը նեղցած էր:



Տօքթ. Կառնիէ սէրը կը նկատէ լաւագոյն միջոց մը փրկելու չափահաս գիշացողը: Ամուսնութիւնը միայն կրնայ խելքի բերել մոլեզնած երիտասարդը, եթէ սակայն անկեղծ սէր մը կնայէ իր սիրտը: Բայց հարցն այն է որ այդպիսիները յաճախ անարժան կամ անկարող են ամուսնութեան, շատերը տգիտաբար այդ լուծին տակ կը մտնեն, ուրիշներ գիտակցաբար, իբրև ոճրագործներ. իսկ մաս մըն ալ, ընդհանրապէս ամէնէն տարեցները, կը մերժեն ամուսնանալ: Եւ որովհետև հանրակնօջ քով իսկ ամօթով պիտի մնան, գիշացողները անխուսափելի կերպով կը գլորին ուրիշ բիւրացան այլասերումներու մէջ: Անոնք հետզհետէ կը վարժուին ո՛չ միայն պատերուն տակ, ծածուկ տեղեր քաշուիլ իրենց յոռի հակումներուն գոհացում պտանալու համար, այլև բազմութեան մէջ, ոտքի վրայ անգամ գիշութիւն կը փորձեն, սրունքները իրարու շփելով, վարցըր գիտներուն քսքսելով, ձեռքերը տափառին գըրպանը խօթելով եւն: Գիշական ծայրայեղութիւնները, ուղղակի ներգործելով ուղեղին վրայ, ո՛չ միայն կը լնասեն ողնածուծին, այլ և կը խաթարեն ծննդագործական զգայարանները, փոխելով անոր ուղղութիւնը: Շփումը կը դառնայ պարզ քերուքտուք. բնական գուգաւորութենէ խորշումը կ'առաջնորդէ միասեռական զաղրելի մոլութեան: Շատեր ալ սովորութիւն կը դարձնեն տախտակին վրայ կամ իրենց անկողնին մէջ պառկիլ փորի վրայ, մերկացնելով ծննդական գործարանները և կը շփուին անոնց հետ, գիշա-

ցող անասուններուն՝ մասնաւորապէս շուներուն պէս: Այս կերպով սերմի հոտում կը ստանան և կը կարծեն թէ հանգստացան: Այս միջոցին կը դիմեն, մասնաւորապէս կուսակրօնները և բանտարկեալները: Յետոյ, լեզուն և բերանը, նոյնիսկ անութներն ու ծիծերը կը կտին գլխաւոր դեր կատարել այս այլասերումներուն մէջ, յառաջ կուգայ երկու հոգիով գիշութիւնը, փոխադարձաբար ծծելու մոլութիւնները որոնք, յաճախ անկարողութեան կ'առաջնորդեն, որովհետեւ այդ ամօթալի և զաղիր սովորութիւնը աստիճանաբար կ'անհետացնէ տափական զգայնութիւնը:

Ամէն գիշութիւն, ինչ ձևով ալ փորձուի, երբ կ'երկարածուի, նոյնանման հետեւանքներ կ'ունենայ: Կը բաւէ որ զուգաւորիչ գործարանը շեղի իր գործօն, բնական և կանոնաւոր դերէն, այլ ևս բնախօսական տեսակէտով չազդուելու համար:

Տոքը. Կտունիէ կը յիշէ պաշտօնեայ մը, որ ինքզինքը գիշութեան տուած էր շատ կանուխէն, թէ և հինգ տարեկանին կտրած էին ան թեւը: Տասնըեօթէն տասնըութը տարեկանին ջղային այնպիսի տազնապներ կ'ունենար որ, զգուած, յոգնաբեկ, ջղագրգիռ՝ ուրիշ միջոց մը մտածեց. պառկեցաւ փորին վրայ և ձախ ձեռքը կէս մը դոցելով, սնոր մէջ կը ներմուծէր անդամը. յետոյ զուգաւորութիւնը կը նմանցէր ետ առաջ երեքընելով մարմինը, որպէս զի կանգնում և ցայտում տեղի ունենայ: Ու ինքզինքը կը մխիթարէր թէ այլեւս գիշութիւն չէ որ կ'ընէ, այլ զուգաւորութիւն...
—

Կրկնենք անգամ մըն ալ, — այս բոլոր արհեստական, խորշելի միջոցները թերեւս այս կամ այն կերպով թեթեւացում պատճառեն, բայց երբեք անպատիժ չեն մնար, և հազար ձեւով կ'ազդեն մարդու առողջութեան և կեանքին վրայ: Պարզ գլխու կամ ծոճրակի ցաւէն մինչեւ հիւժախաք, լուսնոտութիւնը, անդամալուծութիւնը, ողնասիւնի կորացումները կամ կուզութիւնը, զգայարանքներու խանգարումը, յիշողութեան կորուստը, մտային ընդունակութեանց նուազումը և նոյն իսկ կորուստը, բթամտութիւնն ու անբանութիւնը սովորական հետեւանքներն են գիշահան մոլութեան: Եթէ կարենայ իսկ առնական տարիքին հասնիլ, գիշացողը շատ խախուտ առողջութիւն մը կ'ունենայ, կարճ կեանք մը, չյիշելով ամօթալի անկարողութիւնը: Եւ այն ատեն, իրեն համար ալ, մարդկութեան համար ալ մեծ բարիք մըն է որ հրամարի արգաստուողումէ, որովհետեւ իր խաթարուած կազմը պիտի փոխանցէ ճղճիմ, ոսկրաթեք սերունդի մը:

Եւ այսքան աղետալի չարիք մը կանխելու համար, կը պահանջուի հազար զգուշութիւն, — ինչպէս պարզեցինք նախորդ էջերով, — օրորոցէն մինչեւ պատանութիւն, մինչեւ չափահասութիւն: Մասնաւորապէս առաջին տարիներուն, արթնութիւնը պէտք է կրկնապատկուի: Ու երբ վերջապէս տափական բնազդը կ'արթննայ, ծանուցանելով արբունքի առաջին շողերը, ուրիշ միջոցներ անհրաժեշտ են: Հայրը կամ մայրը պէտք է մտերիմ խորճողատուններն ըլլան իրենց զաւակներուն:

Նախընտրելի է որ անոնք այդ մասին կրթուին ծնողքին կողմէ, քան իրենց ընկերներուն կամ սպասաւորներու միջոցաւ, կամ լպիրշ գիրք մը ձեռք անցընելով: Այն անիմաստ վերապահութիւնը որ մասնաւորապէս կը տիրէ մեր մէջ սերունդներէ ի վեր, պարզ սովորամոլութեամբ, բոլորովին փնտաւար է այս պարագային: Մտնուկին կամ աղջկան բնական հետաքրքրութիւնը չպիտի հանդարտի, մինչեւ որ չհասկնայ թէ ինչ կ'անցնի կը դառնայ իր մարմինն մէջ: Ինչ որ ալ ըլլայ, պէտք է գոհացնել այդ հետաքրքրութիւնը, և այդ փափուկ պաշտօնին համար ո՞վ աւելի յարմար և վստահելի է. քան արթուն հայր մը կամ ուշիմ մայր մը:

Գիտնական մը կը յանձնարարէ աստիճանաբար կատարել այդ դաստիարակութիւնը, — ամէնէն առաջ զեռտտի մանչուն բացատրելով բուսական արտադրութիւնը կամ բոյսերուն սեռային կեանքը. յետոյ աստիճանաբար անցնելով — մինչ աղան ալ կը մեծնայ — կենդանական աշխարհի արտադրութեան, սխելով ամէնէն ստորին կենդանիներէն և յիշելով միայն անհրաժեշտ մանրամասնութիւնները: Ու այսպէս սղուն բացատրելով այդ գործարաններուն պաշտօնն ու ու կարեւորութիւնը, անոր կը հասկցնէք թէ ո՞րքան փնտաւար է, ամօթալի է կանխահասօրէն և ապօրէն եղանակով գործածել զանոնք:

Իսկ եթէ, հակառակ այդ զգուշութիւններուն, սղան անձնատուր եղեր է այդ մոլութիւններուն, այն ատեն բուժելու միջոցները պէտք է մտածել —

զիմելով մասնագէտներու: Ծայրայեղ պարագաներու մէջ, բժիշկները ո՛չ միայն գործողութիւններ կը կատարեն, այլ և կը յանձնարարեն բռնաշապիկներ, — ինչպէս յիմարներու համար — որոնց թեւերը թոյլ չեն տար որ ձեռքերը շարժին. քացախի մէջ թաթխուած սպունգ կը քսեն ծննդական գործարաններուն վրայ և առտու իրիկուն նշաջուր (սիւպիե) կուտան: Յաճախ միայն բարոյական — թէպէտ երկարատեւ — միջոցներն են որ կը փրկեն:

Արդի մանկավարժութիւնը կը ջատագովէ նաև երկսեռ դաստիարակութիւնը, անշուշտ նկատողութեան աւնելով միջավայրի, սեռի և տարիքի պայմանները: Գիշերօթիկ վարժարան պիտի մտնեն այն տղաքը որ վեր են 15 տարեկանէն:

Ընդհանրապէս սղուն բարիքին համար, բայց մանաւանդ զայն գիշերօթիկ փրկելու նպատակով, կ'արժէ խստօրէն կուռիլ ծուլութեան դէմ: Որովհետև, հի՛ն խօսք է, անգործութիւնը, պարագութիւնը, մայրն է բոլոր մոլութիւններուն: Եւ զարմանալի չէ որ ընդհանրապէս ջոջերու, մեծահարուստ աղաներու զաւակներ անփոյթ են, ծոյլ կեանք մը կը քաշքշեն, ո՛չ դպրոցին մէջ կ'աշխատին, ոչ ալ գործի ասպարէզին մէջ, քանի որ... կարօտ չեն: Եւ այդպիսիները բնականաբար մասնաւոր տրամադրութիւն մը կ'ունենան մոլորելու:

Մեր մէջ, մարմնամարդական ահուժներն ալ փրկարար դեր կատարելու կոչուած են այս տեսակէտով:



Ժ. — ՈՒՐԻՇ ՄՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մ|ասեռականութիւն

Միասեռականութիւնը այն քստմնելի մոլութիւնն է, որ սաստկապէս կը ճարակի, մասնաւորապէս Արեւելքի մէջ, Պոլսէն մինչև Պիթիս, Ատաբաղարէն մինչև Տիգրանակերտ, չըսելու համար բոլոր գաւառները, ուր մանաւանդ կեանքի սեղմ պայմանները, կեղծ բարոյականի մը նախապաշարումները ուղղակի այդ գարշելի ախտին կ'առաջնորդեն բիւրաւոր և միլիոնաւոր տղամարդեր: Իսկապէս արեւելեան ախտ մըն է, այսօր, այդ հրէշային խաթարումը — յարարութիւն՝ միեւնոյն սեռին հետ: Եւ դուք կը կարդաք, ամէն օր ընթացիկ լուրերու կարգին՝ պատանիներու կամ երիտասարդներու բռնաբարման փորձեր, որոնք յաճախ ոճիրով կը վերջանան, որոնց համար նոյն իսկ պաշտօնական դիմումներ կ'ըլլան... որովհետև օրէնքը հազիւ թէ պաշտպանութիւն կ'ընծայէ:

Նախորդ գլուխներու մէջ, մենք խօսեցանք զանազան այլասերումներու մասին. բայց այդ բոլորը՝ կապ ունին միւս սեռին հետ: Միասեռականին ո՛չ միայն ցանկութիւնն, այլ և բոլոր արտայայտութիւնները, ձեւերը կը կեդրոնանան իր իսկ սեռին վրայ. ան ընդհանրապէս ճշմարիտ խորշում կը զգայ միւս սեռին հետ ո՛ր և է յարաբերութենէ: Եւ այդ մոլութեան ենթակայ են երկու սեռերն ալ, — տղամարդը՝ տղամարդ կը փնտռէ (uranism) և կինը՝ կին (tribadism). Թէև առաջին պարագան որքան սովորական, երկրորդն ալ նոյնքան բացառիկ է:

Տոքթ. Պլօխ, որ վերջին տարիներս մասնաւոր հետապնդութեամբ կ'ուսումնասիրէր այս խնդիրը, զայն կը նկատէ ճշմարիտ հանելուկ մը: «Որքան աւելի փորձեցի գիտնականօրէն ուսումնասիրել զայն, այնքան աւելի առեղծուածային, մթին և անհասկնալի դարձաւ ինծի համար: Բայց միասեռականութիւնը գոյութիւն ունի: Այդ մասին տարակոյս չկայ: 1905-1906 տարիներու ընթացքին, գրեթէ ամբողջովին այս խնդրով զբաղեցայ, և առիթ ունեցայ տեսնելու և քննելու բազմաթիւ հորազատ միասեռականներ, թէ՛ այր և թէ՛ կին: Կրցայ դիտել զանոնք երկար ատեն, թե տան և թէ՛ նանրային կեանքի մէջ: Կրցայ ճանչնալ զանոնք, — անոնց կենցաղը, անոնց սովորութիւնները, անոնց կարծիքները, անոնց ամբողջ գործունէութիւնը, ո՛չ միայն իրարու հանդէպ, այլ և ուրիշ ոչ-միասեռական անհատներու և միւս սեռէն անձերու հետ: Այս փորձառու-

թիւնը հաստատեց ինծի այն անվիճելի իրողութիւնը՝ թէ ճշմարիտ միասեռականութիւնը՝ իբրեւ բնածին երեւոյթ՝ շատ աւելի աւարածուած է քան նախապէս կը կարծէի: Այնպէս որ, ես հիմա ստիպուած եմ բուն միասեռականութենէն անջատել միւս տեսակը՝ սսացական, երեւոյթական, պսսահական միասեռականութիւնը:»

Ու իբրեւ եզրակացութիւն իր զննութիւններուն, գերմանացի գիտնականը կը պնդէ որ այդ նոզկալի հակումը իրապէս կայ ոչ միայն ախտաւոր անհատներու մէջ, այլ և կատարելապէս առողջ տղաձարդերու մէջ:

Ուրիշ հուշակաւոր հեղինակութիւն մը, Մակնիւս Հիրշֆելտ, որ ամենամեծ փորձառութիւն ունի միասեռականութեան հարցին մէջ և ահագին նիւթեր, ուսումնասիրութիւններ հաւաքած է, կը հաստատէ որ միասեռականներու գոնէ հարիւրին 75ը առողջ ծնողքներէ և երջանիկ ամուսնութիւններէ ծնած են և թէ ջղային կամ մտային զարտուղութիւնները, ալքոլականութիւնը, արենակցութիւնը և սիֆիլիսը կրնան նոյնքան յաճախողէպ ըլլալ առողջ՝ բնական յարաբերութեան ձգտող անհատներու նախահայրերուն մէջ, որքան միասեռականներու ծնողքներուն մէջ: Այդ միեւնոյն հեղինակութիւնը միասեռականներու միայն հարիւրին 20-25ին մէջ կրցաւ գտնել ժառանգական արատներ:

Թուրքիոյ մէջ տիրող պայմաններն ալ աստիճան մը կը հաստատեն այս տեսութիւնը: Ժառանգական ախտաւորութենէ անկախաբար, այդ

մոլութիւնը յայտնապէս կը մշակուի ամէն կողմ, շուկաներուն մէջ որոշ տեղեր, գիւղերու մէջ, վանքերու խորը, գիշերօթիկ վարժարաններու մէջ, նոյն իսկ բազմամբոյս քաղաքներու կամ արուարձաններու մէջ, չնորհիւ խենէշական թելադրութիւններու, վարակիչ օրինակներու, կանխահաս զրգուումներու: Վիճակագրութիւն մը այս մասին, նոյն իսկ եթէ սահմանափակուէր որոշ քաղաքի մը կամ շրջանի մը վրայ, ապահովաբար զարնուրելի յայտնութիւններ երեւան պիտի հանէր, դրդեցնելով մեր «աւանդական բարոյական»ի արդէն խարխուլ, բորբոսած շէնքը. բարոյական մը որ ահագին վայնասուն կը հանէ սիրահարական համբոյրի մը համար, բայց կը հանդուրժէ որ հազարաւոր պատանիներ լղրծուին մութ անկիւններու մէջ, խաներու խորը, իբրեւ «աշկերտ» կամ «փոքրաւոր»: Բայց ինչպէս ալ մեկնուի, հարցը այն է որ այդ բարբարոս ունակութիւնը ախտ մըն է, և հետեւաբար ենթական ալ՝ ախտաւոր մը:



Բուն միասեռականութիւնը, միշտ Տոքս. Պրօխի տեսութեամբ, չի սահմանափակուիր միայն որոշ տարիքի մը, մանկութեան կամ երիտասարդութեան, չափահասութեան կամ նոյն իսկ ծերութեան: Տարբեր է տարէցներու մանկամոլութիւնը, ինչպէս կը նկարագրէ Շոփէնհաուզը, որ երեւան կուգայ ծերութեան հասակին: Տարբեր է

նաեւ, հելլէն մանուկներու տարօրինակ սէրը՝ տարէց աղամարդերու հանդէպ: Հորադատ միասեռականութեան հակուժը կը տեւէ անհատին ամբողջ կեանքի տեւողութեան միջոցին, և եթէ զօրաւոր պատճառով մը—ինչպէս բոնի ամուսնութիւն—առժամապէս ջնջուի, նորէն երեւան կու գայ. կը բաւէ որ անհատը զուրկ ըլլայ կամքէ և նկարագրէ:

Տօքթ. Փօրէլ նկարագրելով միասեռական տիպարները, կ'ըսէ թէ մանկութեան սեռային առաջին տրտայտութեան օրերն իսկ, իրենք զիրենք աղջիկ կը զգան ուրիշ մանչերու հանդէպ: Անոնք պէտք կը տեսնեն կրաւորապէս ենթարկուելու, դիւրաւ կը խանդավառուին վէպերով և արդուզարդերով, կը սիրեն կանացի գործերով զբաղիլ, աղջկան պէս հագուիլ, կիներու ընկերութեան մէջ մանել: Իրրեւ բարեկամուհիներ կ'նկատեն կիները, իրրեւ հոգիներ որ կը հասկնան զիրենք: Ընդհանրապէս հասարակ կամ ճղճիմ զգացումներ կ'ունենան. կը սիրեն կրօնական ձեւերն ու ասացուածները. կը սիրեն ինչ որ փայլուն է և ինչ որ կապ ունի հագուստի, բնակարանի շքեղութեան հետ. այնպիսի շիքութեամբ մազ կը յարդարեն և կը սնգուրուին որ, աղջիկներուն իսկ նախանձը կը գրգռեն: Այս կանացի բնութիւնը շատ անգամ ուշադրութիւն կը դրաւէ բնատանիքի անդամներուն, ինկերներու և ուսուցիչներու կողմէ, և ագիթ կուտայ զանազան կեղծանուններ, յորջորջումներ գործածելու:

Իրենց սեռային ցանկութիւնը, ընդհանրապէս

խիստ բուռն և կանխաձառ, կը սկսի իրենց մէջ մասնաւոր սէր մը զարգացնել այս կամ այն արուընկերոջ հանդէպ: Այդ սէրը յաճախ մոլեգնութեան կը հասնի: Տօքթ. Փօրէլ կը յիշէ հիւանդապահ մը, որ խենդի պէս սիրահարած էր իր մէկ ընկերոջ: Այս հրէշային տիպարը իր «սիրական»ին անուշով ծածկած էր տասը մեղր երկայնութեամբ սպիտակ չուան մը, որ կը գործածուէր հիւանդներու ձերմակեղէնները զատելու: Միահարկան այլանդակ թղթակցութիւններ, մինչև մահ հաւատարմութեան երդումներ, կատաղի նախանձ՝ իրենց «սիրահար»ին միւս բարեկամներուն հանդէպ, և նոյն իսկ ամուսնութեան խորհրդաւոր արարողութիւններ՝ ամենօրեայ երեւոյթներ են միասեռականներու մէջ: Միասեռական մը այնքան դիւրութեամբ չի սիրահարիլ ուրիշ միասեռականի մը, որքան բնականոն տղամարդերու: Մասնաւորապէս այս վերջիններն են որ կը հրապուրեն զինքը: Ինք կ'ուզէ անոնց կիներն ըլլալ, բայց որովհետեւ ընդհանրապէս զգուանքով կը մերժեն զինքը, կամ սպառնալիք կ'ընեն և կամ աւելի յաճախ կը շահագործեն զինքը երգել, խաղալ տալով, յաճախ կը ստիպուի գօհանալ իր նմաններով: Այս տիպարները գաղտնի եղբայրութիւն մը կը կազմեն իրենք իրենց մէջ, տեսակ մը ազատ որմնաղբութիւն, և իրար կը ձանձնան ամենապզտիկ նշանով, և կարծես իրար կը հոտոտեն:

Տօքթ. Փօրէլ շարունակելով պարզել միասեռականներու կամ «չեղածներու», «չըջուած»ներու յատկանշական գիծերը, կ'ըսէ թէ անոնց ցան-

կութեան առաջին երեւումը բոլորովին մասնա-
ւոր ձեւով մը կը ներկայացնէ աշխարհը, երջան-
կութիւնը և սէրը: Միասեռականը ինքն իրեն իր
կեանքին նպատակը կ'երեւակայէ սիրատարփ
միութիւն մը՝ իր սրտի սիրածին հետ, և այդ
իմաստով իր հովուերգութիւնը, իր վէպը, իր
խտէպը կը հիւսէ: Բայց աւելի ետք, երբ իր սե-
ռային ցանկութիւնը կը շեշտուի և Ֆիւլենոյն ատեն
կը տեսնէ որ մարդիկ մեծամասնաբար իրմէ տար-
բեր կը զգան, թէ մարդկութիւնը կը վերաբացա-
րուի աղամարդու և կնոջ միութեամբ ևն., դժ-
բախտ մը կ'ըլլայ և դառնութեան մէջ կ'իջնայ:
Կը նկատէ որ ծիծաղելի և վտակաւոր պիտի ըլ-
լայ յայտնել իր գաղանի հակումները, և յաճախ
ինքզինքը գիշտութեամբ կուտայ: Բայց բոլոր այն
ընկերային պատուարները որ խոչընդոտ կը հան-
դիսանան իր ցանկութիւններուն, ա'լ աւելի կը
սաստկացնեն իր գրգռումը ու այլ եւս չի կրնար
նոյնքան հաստատակամութեամբ զսպել այն փա-
փաքը՝ զոր կը զգայ կարգ մը երիտասարդներու հան-
դէպ: Այս վերջինները երբ հասկնան որ չափազանց
խանդոտ գուրգուրանք մը չէ իրենց մասին ար-
տայայտուածը, այլ սեռային անընական կիրք մը
— ի հարկէ բացայայտ զգուանք և զայրոյթ կը
յայտնեն, և այն ատեն միասեռականը ինքզինքը
ենթարկուած կը նկատէ մշտնջենական տանջանքի,
քանի որ ստիպուած է ոճրագործի մը պէս ծած-
կել իր ամէնէն բուռն ցանկութիւնները, իր մը-
տերիմ զգացումները, վերջապէս ապրիլ մասնուե-
լու կամ դատարան յանձնուելու սարսափին տակ:

պարզ է, ուրինք, որ չափազանց կը հրճուի, երբ
իմանայ թէ իր նմանները գաղանի եղբայրութիւն
մը կը կազմեն, և անմիջապէս անոնց կը միանայ,
երբ իր բարոյական հասկացողութիւնն ու կամքը
զօրաւոր չեն:

Եթէ յաջողեցաւ գտնել մարդ մը որ անձնատուր
կ'ըլլայ իրեն, միասեռականը առաջին անգամէն
խակ անոր հետ գուգաւորութեան չի մաներ: Նախ
կը գոհանայ փոխադարձ գիշտութեամբ: Միասե-
ռականներ կան որ կը նախընտրեն կրաւորական
դեր կատարել, կատարեալ հեշտանք զգալով այդ
գործողութենէն. ուրիշներ ներգործական դեր կը
կատարեն, կամ երկուքը միասին:

Միասեռականները շատ ալ հաստատ չեն իրենց
սիրոյն մէջ և ընդհակառակն հակամէտ «բազմայ-
րութեան» կամ «բազմակնութեան»: Կնոջ սէրը
խոր գարշանք կ'ազդէ իրենց. ստորին և զգուելի
կը գտնեն զայն:

Ամէնէն աւելի արբունքի միջոցին է որ երե-
ւան կ'եղեն միասեռականութեան հակումները,
ֆիզիքական և մտային առանձնայատկութիւննե-
րով:

Այս մոլութիւնը տարածուած է ժողովուրդի
բոլոր խաւերուն մէջ, գործաւորներէն մինչև
փարթամ ազնուականները, ջրեպաններէն մինչև
իշխանազունները, բժիշկ, փաստաբան, փիլիսո-
փայ, աստուածաբան, վաճառական, արուեստա-
գէտ, — բոլորն ալ իրենց ներկայացուցիչներն ու-
նին այս զազրելի մոլութեան մէջ: Եթէ, շնորհիւ
նախնական բարքերու և բարբարոս հասկացո-

զուլթեանց, արեւելեան խենչուլթիւններու ծոցին մէջ նպաստաւոր գետին գտած է միասեռականութիւնը, Եւրոպայի մէջ ալ՝ քարքի այլասերումներն ու խաթարումները զայն հասցուցած են ահաւոր համեմատութիւն մը, ընկերութեան ամենաբարձր դասերուն՝ մասնաւորապէս ազնուականութեան և զինուորականութեան մէջ, ինչպէս հաստատեցին գերմանական գայթակղութիւնները, դեռ քանի մը տարի առաջ, «Էօլհպուրկեան» կամ «Մոլթքէական» յորժորջումներով, վտանգելով նոյն իսկ իշխանազուններ:

Վերջերս Տոքզ. Մէրցպախ ուսումնասիրութիւն մը հրատարակեց միասեռականութեան և արհեստի ընտրութեան մասին, հաստատելով թէ այդ ընտրութիւնը յաճախ արգիւնք է բնական հակումի: Այսպէս, բազմաթիւ միասեռականներ կը զբաղին պատրաստ հոգուստի արտադրութեամբ և նման արհեստներով, ուրիշներ երգեցիկ սրճարաններու կամ թատրոնի մէջ դերասան կամ պարող կ'ըլլան, կիներու դեր կատարելով: Սափրիչներուն և սպասաւորներուն մէջ ալ կան բազմաթիւ միասեռականներ:

Ինչ կը վերաբերի այդ մոլութեան ծաւալումին, — տեղեկագիրները շատ հակասական են: Լայպցիցիկի մէջ, 1869ին հրատարակուած վիճակագրութիւն մը կ'ըսէ թէ Պերլին քաղաքի 700,000 բնակիչներէն 10,000ը միասեռական էին. ուրիշ բժիշկ մը 13,000 հոգինոց քաղաքի մը մէջ միայն 14 միասեռական գտած էր, երրորդ մը՝ 60,000 հոգինոց քաղաքի մը մէջ՝ 80: Այսինքն՝ հարիւ-

րին մէկ կամ երկու: Այս համեմատութիւնը ոչինչ է, անշուշտ, Արեւելքի համար, որ դասական օրօրան մը նկատուած է միասեռականութեան: Նոյն այդ վիճակագրութիւնները կը հաստատեն թէ հարիւրին 94-96 է բնական՝ կնոջ հետ յարաբերութեամբ ապրողներու թիւը. իսկ միջին հաշուով հարիւրին երեք՝ երկսեռականներու թիւը, — այսինքն անոնք որ տափական հակումներ ունին թէ՛ մէկ և թէ՛ միւս սեռին հանդէպ:

Բոլոր այս հաշիւները նկատողութեան առնելով, Տոքզ. Պլոխ կ'եզրակացնէ թէ, գերմանական կայսրութեան մէջ, 57 միլիոն բնակիչէն իբր 1,200,000ը միասեռական ըլլալու են, իսկ Պերլինի 2,500,000 բնակիչէն՝ 56,000ը:

Միասեռականութիւնը, որ տեսակ մը ժողովրդական սովորութիւն էր նախնական դարերու մէջ, վարակած է նաեւ բոլոր վայրենի ցեղերը: Եւ, եզակիան երեւոյթ, աւելի տարածուած է հուժկու Գերմաններուն և Անգլի-սաքսոններուն, քան լատին ժողովուրդներուն մէջ: Այդ մոլութիւնը կը տիրէ ինչ Սկանտինաւեցիներուն մէջ: Քանի մը տարի առաջ մէկ-երկու հատորներ հրատարակուեցան — «Միասեռական կեանքը Արեւելեան Ասիոյ մէջ» — որոնք կը հաստատեն թէ Ճարոնցիներուն, Չինացիներուն և Քորէացիներուն մէջ կը տիրէ ո՛չ միայն բնածին, այլ և արհեստականօրէն արտադրուած, ստացական միասեռականութիւն: Նոյն մոլութեան ենթակայ են Հրեաներ, Պարսիկներ, Թուրքեր, և Հայեր ալ, — խոստովանելնք:

Միասեռականութիւնը շատ աւելի մեծ դեր կատարած է պատմութեան մէջ, քան սովորաբար կը կարծուի: Սաֆօ, բանաստեղծ Փլաթէն, Միքէլ Անճէլօ, պատմաբան Եօճաննէս Փօն Միւլլէր, Ֆրանսայի Հանրի Գ. Թագաւորը, երաժիշտ Չայքովսքի, բանաստեղծ Օսքար Ուայլտ և ուրիշ բազմաթիւ ականաւոր անձեր միասեռական էին: Կարգ մը հեղինակներ կը հաւատեն թէ նոյն ակտէն վարակուած էին նաեւ Պղատոն, Սոկրատ, Մեծն Ֆրեանրիք, Կալվին, Պայրըն ևն.—Բայց այս մեղադրանքները չեն հաստատուած մինչեւ այսօր: Անվիճելի է որ բազմաթիւ տաղանդաւոր մարդիկ միասեռականներ եղած են, և այս անբնական հակումները չեն արգիլած իրենց գործունէութիւնը: Բայց այդ չի նշանակեր որ անոնք նշանաւոր գործեր արտադրեցին որովհետեւ միասեռական էին—ինչպէս կը պնդեն շատեր—այդ իրենց տաղանդը այնքան զօրաւոր էր որ, կրցան արտադրել հակառակ այդ մոլութեան:

Միասեռականը անշուշտ ամէնէն առաջ իր նմանը կը սիրէ. բայց շատ անգամ կը մօտենայ բնականոն մարդուն ալ, և այս վերջինն իսկ կը փորձուի կամ հետաքրքրութեան համար, կամ ուրիշ կերպ գոհացում չգտնելով: Շատ մը իզագող միասեռականներ մասնաւորապէս կ'ազդուին բնականոն սեռապէս հզօր կազմուածքներէ, կամ այս վերջինները կը հրապուրուին առաջիններէն, և տեղի կուտան բացօթոջ հրաւերի մը: Այս կարգէն են արու բողբոջ ալ, որոնք իրենք զիրենք կը սրամաղրեն դրամի համար:

Բռն մանկասիրութիւնը (paedophilia)

հազուադէպ է միասեռականներուն մէջ: Չափահաս թէ ծեր, անոնք գլխաւորապէս կը նախընտրեն 15էն 25 տարեկանը: Միւս կողմէ, բացառիկ երեսոյթ չէ նաեւ որ երիտասարդներ, կամ նոյն իսկ չափահաս տղամարդիկ խելք տան միմիայն տարեցներու (gerontophilia), ինչպէս որ, բնական յարաբերութեան մէջ ալ, յաճախ երիտասարդներ կը սիրահարին պառուներու կամ փոխադարձաբար:

Դարձեալ, իզացող միասեռականները կը նախընտրեն առնական տիպարներ, իսկ այս վերջիններէն շատերը մեծապէս կը խորշին կնամարդիներէն, այն արու «կին»երէն որոնք երբեմն նոյն իսկ աղջկան կեղծ անուններ կ'առնեն—ինչպէս՝ Լուիզա՝ փոխանակ Լուիի, և որոնք իրարու հետ կը խօսին իբրեւ «քոյր»,—ճիշտ ինչպէս որ Հոովի Հէլիօկապալոս կայսրը կը փափաքէր «Տիրուհի» կոչուիլ, փոխանակ Տէրի: Շատ մը միասեռականներ կը սիրեն անպիս-անմօրուս տղամարդիկը. ուրիշներ՝ պիս կամ փառաւոր մօրուք կ'ուզեն: Շատեր կը շլանան շողշողուն զգեստներէ, ինչպէս կիները: Վերջապէս, իւրաքանչիւր անհատական մանրամասնութեան գրաւիչ ոյժ մը ունի ճիշտ ինչպէս բնական յարաբերութեան մէջ (մազ, կեցուածք, քայուածք, աչքեր, իմացականութիւն, նկարագիր ևն.):

Միասեռականներու սիրային-տարփական արտայայտութիւններն ալ բազմազան են,—միշտ համաձայն Տօքզ. Պլօսի: Շատեր կը գոհանան պարզ հպումներով, գգուանքներով, համբոյրնե-

րով և գիրկընդխառնումներով: Աւելի յաճախ սեռային գոհացում կը ստանան փոխադարձ գիջութեամբ: Իսկ զուգաւորութիւնը այնքան ալ յաճախադէպ չէ, հարիւրին 6 կամ 8,—դիտել կուտայ Տօքդ. Մէրցպախ,—անշուշտ Եւրոպայի վրայ չափելով: Երբեմն ալ կը գոհանան քսքսելով, լզելով և ուրիշ պժգայի փսրձերով:

Միասեռականները ճիշդ է որ ընդհանրապէս կը խորշին կիներու հետ զուգաւորուելէ, բայց չեն ատեր բուն իսկ կինը: Ընդհակառակն, մեծամասնաբար կը սիրեն զանոնք, չաղակրատելու համար: Յետոյ, անոնք կ'ամուսնանան յաճախ անգիտակցաբար, կամ իրենց մոլութիւնը ծածկելու յոյսով, կամ պարզապէս զրամական նկատումներով: Այդպիսի ամուսնութիւնները անվրէպ դժբախտութեամբ կը վերջանան, եթէ կինը սիրոյ պէտք ունի և կը կուսնէ խնդիրը, կամ եթէ կը նախանձի, ուրիշ խնդիր, եթէ կինն ալ անզգայ մըն է՝ սեռային տեսակէտով: Մնաց որ, այդպիսի ամուսնութիւնները անբնական ալ են և խեր չունին մարդկութեան համար: Հիրշֆէյս խորապէս ուսումնասիրելով միասեռականներու ամուսնութիւնը, նկատողութեան առած է նաեւ միասեռական այրերու և միասեռական կիներու պատահական ամուսնութիւնները: Իր քննութեան արդիւնքը հաստատեց թէ այդպիսիներուն մէջ՝ տեսակին պահպանման բնազդը գրեթէ բոլորովին անգոյ է —հարիւրին հազիւ երեքը զաւակ արտադրելու փափաք ունին:

Եւ ինչքան հրէշային է իրենց արամաբանութիւնը, իրենց չքմեղանքը: Քսանըտթը տարեկան միասեռական մըն է որ կը գրէ Տօքդ. Պլօխի.

«Երբ պզտիկ էի, չորսէն վեց տարեկան, կը սիրէի դիտել արական ծննդական գործարանները, առանց գիտնալու թէ անոնք ինչո՞ւ կը հրապուրեն զիս: Կը սիրէի դիտել արական մերկութիւնը ներկայացնող արձաններ և պատկերներ: Աշխարհի մեծ գաղտնիքը իմացայ երբ 12 տարեկան էի, բայց կիները ո՛չ մէկ հետաքրքրութիւն կ'առթէին ինձի, և միշտ կը խնդրէի 10-14 տարեկան մանուկներէ՝ ինձի ցուցնել իրենց գաղտնի անդամները: Սկսայ մարմնական յարաբերութիւններ ունենալ պատանիներու հետ (18-24 տարեկան), երբ ես ինքս ալ 24 տարեկան էի: Տասնըութէն քսան տարեկան երիտասարդ ժը կին է ինձի համար: Բուն կինը անարժէք բան մըն է, զաւակ արտադրելու գործիք մը, ուրիշ ոչինչ... Երբեք ամուսնացած չեմ, և չպիտի ամուսնանամ:»

Ահա ուրիշ տիպար մը, որ գոնէ կը պարզէ թէ ո՞րն է արդիւնք և ո՞րը պատճառ.—

«Հազիւ 5 տարու կայի, երբ աղախինին հետ հանրային պարտէզները պտտած ատենս, մարդ մը տեսայ որ գիջութիւն կ'ընէր: Թէև չէի գիտեր թէ ի՞նչ է ըրածը, բայց այդ պատկերը տարիներով չարջըկեց երեւակայութիւնս: Մինչև տասնըչորս տարեկանը, իմ սեռէս ընկերոջ մը հետ մէկտեղ ապրիլը գլխաւոր դեր կը կատարէր իմ երազներուս մէջ: Տասերեք տարեկանին սիրահարեցայ դպրոցական մէկ ընկերոջս, որ սակայն շատ երես չտուաւ

ինծի: Ուրիշ քաղաք մը տեղափոխուելով, կորսըն-
ցուցի զայն: Թէև այդ միջոցին ոչինչ գիտէի սե-
ռային կեանքի մասին. բայց և այնպէս կը փնտր-
ուէի այնպիսի առարկաներ որոնք կը գրգռէին իմ
զգայասիրութիւնս: Իբր 35 տարեկան անծա-
նօթ մարդ մը հրապուրեց զիս, և զուգաւորու-
թիւն կատարեց իմ վրայ առաջին աւիթով իսկ:
Զգացի թէ սխալ բան մը կայ այս գործողութեան
մէջ, բայց այնքան կամքի ոյժ չունէի որ ինք-
զինքս ազատէի անոր արդեցութենէն: Իբր երեք
ամիս յետոյ այդ մարդը անհետացաւ: Հիմա գի-
տէի նաև թէ ի՛նչ է գիշութիւնը, որովհետև
դպրոցին մէջ այդ վարժութիւնը սովորա-
կան էր:

«Տասնըութը տարեկանին ելայ դպրոցէն. ու
մինչ իմ ընկերներուս մէջ կիներուն հանդէպ
մղումը որոշ կ'արտայայտուէր, ես, իմ մասին,
ա՛յ աւելի զօրաւոր կը զգայի թէ ի՛նչպէս ամէն
բան զիս կը մղէ դէպի տղամարդիկը: Յաճախ կը
փորձէի, անսալով բարեկամներուս թելադրու-
թեան, յարաբերութիւններ հաստատել կիսաշ-
խարհիկ կիներու հետ, բայց այդ շանը միշտ
զգուանք կը պատճառէր ինծի: Միայն արա-
կան սեռը կը հետաքրքրէր զիս...: Ու հիմա,
քսանէն քառասուն տարեկան իւրաքանչիւր
տղամարդ հետաքրքրական է ինծի համար — կը
բաւէ որ իրապէս գտնելիք մը չըլլայ: Համ-
բոյրը ամենաբարձր կարեւորութիւն ունի ինծի
համար:»



Հակառակ իրենց իբրև թէ դադարակաւ
պոռոտախօսութիւններուն, այր միասեռականները
ստուար մեծամասնութեամբ անպատկառներ և ցո-
փեր են, ինչպէս կը հաստատեն մանաւանդ հան-
րային պատասպարաններու կամ դատարաններու
մէջ տեսնուած փորձերը: Միւս կողմէ, Տօքդ-
Փօրէլ կը յիշէ բազմաթիւ միասեռականներ, որոնք
չնորհքով մարդիկ էին, նոյն իսկ ունէին փափուկ
զգացումներ, և յոռետես դարձեր էին իրենց մոլի
կիրքին առթած ամօթէն ու վիշտէն: Այս կարգի
մոլորածները յաճախ անձնասպան կ'ըլլան, իրենց
ախտաւոր ցանկութեան դէմ յուսահատական
և հերոսական պայքար մը մղելէ յետոյ: Որով-
հետև անոնք կը նախընտրեն մեռնիլ քան յաղ-
թուիլ: Այս վերջին պարագան անպատուութիւն կը
նկատեն իրենց: Ասոնք անջատ են միւս ան-
պատկառներու խմբակցութենէն, և նոյն իսկ կը
վախնան կամ զգուանք կը զգան անոնցմէ:

Միասեռականները մասնաւորապէս ենթա-
կայ են երկու ողբալի խայտառակութեանց, չյի-
շելով իրենց կացութեան միւս բոլոր գարշելի
հանգամանքները.—

Ա. Անմիջապէս որ միասեռական մը կը հաս-
կնայ իր անբնական և վտանգաւոր կացութիւնը՝
ընկերութեան մէջ, յաճախ կը ստիպուի հետեւիլ
տգէտ բարեկամներու, նոյն իսկ տգէտ բժիշկնե-
րու թելադրութեանց, և կը փորձէ բժշկուիլ ամուս-
նութեամբ, — ինչպէս զիտել տուինք արդէն:
Երբեմն կը սկսի հանրատուն երթալ, հաստատելու
համար թէ ընդունա՞կ է կոնջ հետ զուգաւորուե-

լու: Ու շատ անգամ կը յաջողի, իբրև էրիկ-մարդ-
ներկայանալով բողի մը առջև: Կը ջանայ ինք-
զինքը համոզել թէ այս փորձնական գուգաւո-
րութեան մէջ զգացած զգուանքը պարզապէս հե-
տեւանք է վճարովի ըլլալուն. և վերջապէս կը
վճռէ ամուսնանալ: Եւ ահա մարտիրոսութիւն
մըն է որ կը սկսի կնոջ համար: Միասեռականը
զայն կը նկատէ իբրև սպասուէի մը կամ տանտի-
րուէի մը. շատ քիչ անգամ կը զուգաւորուի անոր
հետ, պարզապէս պարտականութիւն մը կատա-
րելու կամ իր նման պզտիկ տիպարներ արտա-
դրելու համար. կամ շարունակ անընական, հրէ-
շային պահանջներ կ'ընէ: Իր տունը կը տանի իր
բարեկամները, աւելի ճիշտը՝ իր արու հոմանի-
ները, Յաճախ զինարբուքներ տեղի կ'ունենան,
մանաւանդ երբ կինը, որ ինքզինքը արհամարհ-
ուած և լքուած կը նկատէ, անկիւն մը քաշուե-
լով իր ցաւը կուլայ: Այսպիսի ամուսնութիւն-
ները ընդհանրապէս կը վերջանան ամուսնալու-
ծութեամբ, դառն և փոխադարձ յուսախաբու-
թիւններու շրջան մը բոլորելէ յետոյ: Եւ իրապէս
ոճրագործութիւն է քաջալերել այսպիսի միու-
թիւնները: Մեր Դատաստանական Խորհուրդի ատե-
նագրութիւնները լեցուն են նման պատմու-
թիւններով:

Բ. Միասեռականութեան հետ սերտորէն կապ-
ուած է դրամաշորթութիւնը կամ շանթաժը, հա-
զար ձեւերով: Տոքդ. Փօրէլ կը պատմէ թէ հան-
րային միլիարանները միասեռականներու սո-
վորական ժամագրավայրերն են: Այդ վարպետ

թշուառականներ, որոնք իրենց յատուկ արհեստ
ըրած են սպառնալիքով դրամ քաշելը, անոնց կը
հետեւին, կը քսուըտին և իրենք զիրենք կը
տրամադրեն դրամի համար: Բայց անմիջապէս որ
հասկնան իրենց զոնին անուշը, դիրքը, հարըս-
տութիւնը, կր սկսին դրամ շորթել, սպասուելով դա-
տարան դիմել, եթէ այսքան գումար մը չտայ: Եթէ
միասեռականը հարուստ կամ դիրքի տէր մէկն է,
այլ եւս կթան կով մը կը դուռնայ, աւար մը, և
ստիպուած է կա՛մ համակերպիլ, կա՛մ գաղթել և
կամ անձնասպան ըլլալ: Այսպէս է որ բարեկեցիկ
միասեռականները մեծամասնաբար կը կործանին,
ենթարկուելով մշտնջենական անձկութիւններու,
յուզումներու և տանջանքներու: Ֆրանսացի գիտ-
նական մըն ալ վառ գոյներով կը նկարագրէ «շան-
թաժ»ի այս ողբերգութիւնները, և կ'ըսէ թէ սպառ-
նալիքը միայն միասեռականներու դէմ չուղղուիր,
այլև տարասեռականներու, — այսինքն անոնց որ
ընական հակումներ ունին, միայն կին կը սիրեն:
Յաճախ շանթաժիսները ամբողջ տարիներ անդու
անդադար կը հայածեն իրենց զոները: Այսպէս, կը
յիշուի եւրոպացի գրագէտ մը, որուն քսակը
իրենց սեփականութիւնը նկատած էին շանթաժիս-
ները: Աւելի քան քսան տարի. դրամաշորթներու
սերունդ մը անընդհատ հետապնդեց զայն, իբրև
եկամուտի ազահով աղբիւր: Խեղճը մէկ ձեռքէն
միւս ձեռքը կ'անցնէր: Դրամաշորթները մասնա-
ւորապէս կը սպասեն նաեւ հանրային լուացարան-
ներու, բաղնիքներու մէջ, և յանկարծ վայնասուն
կը հանեն թէ անպատշաճ փորձ մը եղաւ իրենց

պատուին դէմ, և լռութեան վարձք կը պահանջեն, որ սովորաբար կը տրուի, նոյնիսկ ոչ-միասեռականներու կողմէ: Այսպիսի դէպք մը պատահեցաւ Պերլինի մէջ, երբ բոլորովին անմեղ երիտասարդ վաճառական մը շէնք-շնորհք կը կողոպտուէր, և իր կինն էր որ արիաբար խայտառակեց անամօթ դրամաշորթը, և ազատեց զինքը այս բռնակալութենէն:

Անուրանալի է, սակայն, որ դրամաշորթութիւնը յաճախ տեղի կ'ունենայ իրապէս գործողութիւնը կատարուելէ յետոյ:

Մասնաւորապէս տեւտոնեան երկիրներուն մէջ օրէնքը ամենախիստ արամազրութիւններուն միասեռականութեան դէմ: Գերմանիոյ պատժական օրէնքին 17րդ յօդուածը կ'ըսէ.

Առական սեռէն երկու անձերու միջև ակրնական մոլութիւն, կամ մարդու մը եւ անասունի մը միջև յարաբերութիւն՝ բանտարկութեամբ կը պատժուի. յանցաւորները կրնան կորսնցնել նաեւ իրենց ֆալսֆայիլն իրաւունքները:

Նոյնիմաստ, և յաճախ աւելի խիստ տրամադրութիւններ կան Ա. սորբոյ-Հունգարիոյ, Նորվեկիոյ, Շուէտի, Տանրմարքայի, Ռուսիոյ, Պուլկարիոյ մէջ, Նիւ Եօրթի նահանգին, Չուիցերիոյ նահանգներու մեծ մասին և ժանաւանդ Անգլիոյ մէջ, ուր ամենախիստ պատիժներ կը տնօրինուին և ուր պատիժէ զերծ չեն նաեւ միասեռական կիները:

Տոքթ. Փօրէլ, կարգ մը առարկութիւններով հանդերձ, կ'առաջարկէ որ օրէնքը իր պաշտպա-

նութեան տակ առնէ երկու սեռերն ալ, գոնէ մինչև 17-18 տարեկանը: Եւ այս առթիւ երեւան կը հանէ հետաքրքրական պարագայ մը, — մարդկային ընկերութիւնը բոլորովին բնական, պատշաճ և անվտանգ կը նկատէ որ միեւնոյն սեռէն մարդիկ միասին լուացուին, պառկին և բնակին: Յիմարանոցներու, բանտերու, գիշերօթիկ հաստատութիւններու ևն. մէջ այրերը այրերուն վրայ կը հսկեն և կիները՝ կիներուն վրայ: Կաթոլիկ քահանաներու և մայրապետներու կամ ընդհանրապէս «կուսակրօն»ներու զգաստութեան ուխտն ալ պատճառ եղած է որ սեռերը անջատ ապրին: Եւ սակայն, այս բոլոր սովորութիւններուն մէջ, երբեք յրջօրէն նկատողութեան չառնուիր միասեռականութեան պարագան: Ուրեմն զարմանալի չէ որ միասեռականները օգտուին այսպիսի պատեհութիւններէ և նպաստաւոր վայրկեաններ փնտռեն, իրենց մոլի կիրքերը գոհացնելու, ազատ մնալով ծանր վտանգներէ: Շատեր կուսակրօն կամ հիւանդապահ կը դառնան, մանաւանդ յիմարապահ: Վերջին պարագան, իսկապէս, հրէշային շահագործման առիթ մըն է իրենց համար, քանի որ գիտեն թէ մտադար մը չպիտի կրնայ իր միաքը բացատրել, գանգատ յայտնել:



Բոլոր այն մոլորածները որոնց մասին խօսք եղաւ մինչև և այստեղ, կատարեալ, զուտ միասեռականներ են, — արտադրութիւնը՝ սեռային ախ-

տաւոր տրամադրութիւններու: Բայց կայ ուրիշ տեսակ մըն ալ: Շատեր կը տատանին երկու սեռերուն միջեւ: Այսպիսիները կը հրապուրուին երկու սեռերէն ալ, և երբեմն մէկուն հետ կը կենակցին, երբեմն միւսին հետ: Կան նաև ուրիշներ, որոնք ուղղակի կնոջ հետ յարաբերութիւնը կը սիրեն, բայց միասեռականներու կողմէ հրապուրուելով, կամաց կամաց կը պողին անկէ: Նորօրէն փոխադարձ գիջութեան և յարակից փորձերու: Այս կարգի մոլորածներէն անոնք որոնց սեռային բնազդը զերծ է անընկալան կամ ախտաւոր հանգամանքներէ, կրնան անմիջապէս թօթափել այդ ունակութիւնները, երբ կարենան կանոնաւոր յարաբերութիւն ունենալ կիներու հետ:

—

Սոշոր քաղաքներու մէջ, միասեռականները զանազան միջոցներ հնարած են, իրենց մոլութիւններուն ազատ արտայայտելու համար: Ժամադրութեան տեղեր, յատուկ փողոցներու և հրապարակներու մէջ ակումբներ, օթեւաններ, ճաշարաններ բացուած են: Հիրշֆելտ կը յիշէ գերմանական ընկերակցութիւն մը, որ կը բաղկանար միայն միասեռական իշխաններէ, կոմսերէ և պառոններէ: Այսպիսի ժամադրավայրներ կային Փարիզի մէջ, Ժ.Ը. դարուն: Մինչև 1840 Շանգէյի կարգ մը միջին ծառուղիները վերջապետէն յետոյ իբրև ժամադրավայր կը ծառայէին միասեռականներու, որոնք ոչ-միասեռականի մը թոյլ

չէին տար անցնիլ. չուաններով կը փակէին անցքը և պահապաններ կը դնէին, պատուիրելով անոնց՝ ոչ ոք ընդունիլ առանց նշանախօսքի: Նոյն իսկ ոստիկանութիւնը չէր համարձակեր մտնել այդ տեղերը: Գլխաւոր ժամադրավայրը կը կոչուէր «Այրիներու Ծառուղի (հիմա՝ Ավընիւ Մոնթէներ): «Այրի» կը յորջորջէին կրաւորականը:

Վիքթոր Հիւկօ, որ 1831ին այդ կողմերը կը բնակէր, յաճախ իր բարեկամներուն կ'ընկերանար բաւական ճամբայ, գիշերուան ուշ ժամուն: Ամէնքը խմբովին կը քայէին, խօսելով գրականութեան և արուեստի մասին: Որոշ տեղ մը՝ բանաստեղծը կը բաժնուէր իր բարեկամներէն և առանձին տուն կը դառնար, ճամբան նոր քերթուածներ հիւսելով: Յաճախ կը տեսնէր կարգ մը անհատներ, որոնք իրեն կը նայէին հեռուէն, առանց բառ մը արտասանելու, երբ կ'անցնէր Այրիներու Ծառուղիին առջեւէն: Ինք չէր կրնար հաւատալ որ այս մարդիկը գողեր են, և ինքնիրեն կը հարցնէր թէ ինչ է պատճառը որ միշտ կը սպասեն այս ամայի տեղին մէջ: Բայց նայելով որ միեւնոյն տեսարանները կը կրկնուէին միշտ, Թշուառներու հեղինակը աւելի չհետաքրքրուեցաւ:

Սակայն օր մը, երբ բանաստեղծական երազանքի մէջ թաղուած կը մնար, ղինքը խանդարեց մարդ մը, որ իր առջև նետուեցաւ թաւուտքի մը խորէն և քաղաքավար ողջոյնով մը դիտել տուաւ.

— Տէ՛ր, կը խնդրենք որ աւելի երկար չըս-

պատէք այստեղ: Մենք գիտենք թէ ո՛վ էք դուք, և չենք ուզեր որ մեր մէջէն ձեզի անծանօթ մը ռեւէ անհանգստութիւն պատճառէ ձեզի:

— Բայց ի՞նչ կ'ընէք այստեղ, պարո՛ն, պատասխանեց Վիքթօր Հիւկօ: Ես ամէն իրիկուն մարդիկ կը տեսնեմ որ կուգան կ'անցնին այստեղէն և ծառերուն մէջ անհետ կ'ըլլան:

— Մի՛ հետաքրքրուիք ատով, տէ՛ր, պատասխանուեցաւ. կտրո՛ւկ. մենք ոչ մէկը անհանգիստ կ'ընենք, ո՛չ մէկուն յիշատակը պատճառենք. բայց չպիտի թողաւորենք որ ռեւէ մէկը անհանգիստ ընէ մեզ կամ յիշատէ մեզի. մննի՛ այս տեղ մեր սեփական գեճնին վրայ ելի:

Հիւկօ հասկցաւ, դուրսը խոնարհեց և ճամբան շարունակեց: Ուրիշ իրիկուն մը, երբ իր բարեկամներուն հետ քալելով, կ'ուզէր միեւնոյն տեղին ուրիշ մէկ ծառուղիէն անցնիլ, տեսաւ որ անցքը գոցեր են իրարու կապուած աթոռներով.

— Ճամբայ չի կա՛յ, պոռաց սպառնալից ձայն մը:

Բայց ուրիշ մեղմ ձայն մը յարեց.

— Կը խնդրենք Պ. Վիքթօր Հիւկօէն որ այս անգամ միւս կողմէն անցնի...

Երկրորդ կայսրութեան օրով, Այրիներու Ծառուղին պահեց իր նախկին դիրքը: Այնտեղ հաստատուած էր ակումբ մը, որուն անդամները կը պատկանէին ընկերութեան ամենաբարձր դասերուն — արքունիքի պաշտօնատարներ, ծերակուտականներ, մեծ սեղանաւորներ ևւն.: Այստեղ կայսրուհիին անձնապահ գունդէն և կայսեր Հա-

րիւրնոց անձնապահ գունդէն զինուորներ թանկագին նուէրներու փոխարէն իբրեւ սիրական կը ծառայէին այդ նշանաւոր անձերուն: Ասկէ ծագում առաւ *Faire l'Impératrice* բացատրութիւնը:

Երբ ոստիկանութիւնը խուզարկութեան ենթարկեց այդ նոզկայի օջախը, գտաւ կնոջական զգեստներ և նման իրեր, — այնպիսիները զորս էօմէնի կայսրուհին կը գործածէր տօնական օրերու մէջ: Երևան հանուեցան նաև բաղմաթիւ նամակներ՝ որոնք փոխանակուած էին ակումբի անդամներուն և իրենց սիրական զինուորներուն միջեւ: Անմիջապէս տեղեկագիր մը զրկուեցաւ կայսեր, որ երբ տեսաւ թէ ամենաբարձր և տիտղոսաւոր անձնաւորութիւններ մեղսակից են այս կեղտոտ գործին, անմիջապէս հրամայեց փակել խնդիրը, և ըսաւ ընդհ. դատախազին.

— Պէտք է մեր մարդոց և մեր երկրին խնայենք այսպիսի գայթակղութիւն մը, որ ո՛չ մէկուն համար բարիք պիտի ըլլայ, և ընդհակառակն մեծ յիշատ պիտի պատճառէ:

Եւ իրապէս, մանրամասնութիւններ չհրատարակուեցան այս մասին:

Գերմանացիները իրենք ալ կը խոստովանին թէ չկայ քաղաք մը ուր այնքան միասեռական միութիւններ գտնուին, որքան Պերլինի մէջ: Տոքդ. Պլօխ այդպիսի 18-20 հաստատութիւններ կը հաշուէ, ուր պարբերաբար տեղի կ'ունենան երեկոյթներ, պարահանդէսներ, ամառնային հանդէսներ, հացկերոյթներ և ուրիշ կարգի խրախճանութիւն-

ներ: Նոյն իսկ զօրանոցը ազատ չէ միասեռականներու հետապնդութենէն. և թերթերը կամ դատարանները տարին տասներկու ամիս արձագանգ կ'ըլլան բերազան գայթակղելի դէպքերու, որոնց կը խառնուին սպաներու ազնուականներու, մեծամեծներու անունները, զոհերը միշտ զինուորներն ըլլալով: — Փարիզի մէջ այլեւս զոյութիւն չունին միայն միասեռականներու յատուկ ժամադրավայրեր, թէև հաստատուած են կարգ մը արեւելեան բաղնիքներ:



Տղամարդուն հետ բաղաւտելով, կնոջ միասեռականութիւնը շատ անկարեւոր է և նուազ յայտնի: Այս մոլութիւնը կը կոչուի սափիփովականութիւն կամ լեսպեան սէր, ինչպէս յիշեցինք առիթով մը: Այս կարգի տիպարներ շատ կային պատմութեան մէջ, բայց կը գտնուին նաեւ արդի մեծ քաղաքներու մէջ: Անոնք կը սիրեն տղամարդու պէս հագուել, և իրենք զիրենք տղամարդ կը նկատեն ուրիշ կիներու հանդէպ: Իրենց սեռային ցանկութիւնը յաճախ չափազանց սաստկութեան կը համնի և կատաղի ցոփակեացներ կը դառնան: Տոքդ. Փօրէլ կը յիշէ շատ մը կիներ, որոնք փոխադարձ գիջութեամբ կամ իրարու ծիլի լզելով հրապուրած էին բազմաթիւ մանկամարդ աղջիկներ, իրենց տարփուհի դարձուցած էին զանոնք:

Գիտուն մը կը գրէ թէ միասեռական կիներն ալ իրարու հետ նշանուելու, յաւիտենական հաւատարմութիւն խոստանալու պէտք կը զգան. անոնք նշանտուք կը կատարեն զաղտնարար կամ

յայտնապէս, երբ միասեռականը տղամարդու պէս կը հագուի և իբր այդ կը ներկայանայ. կամ վերջապէս երկուքին ծանօթ խորհրդանշան մը կը գործածեն, մատնիներ կը փոխանակեն ևն.: Այդօրը յաճախ մեծ դեր մը կը կատարէ այս կարգի խենէշութիւններու մէջ:

Կին միասեռականներու, քրիստոսներու ծայրայեղութիւնները աւելի ուժգին են քան այրերուն մէջ: Տափանքը տափանքին կը յաջորդէ, գիշեր ցորեկ, գրեթէ առանց դադարի: Իրենց անհատական և ընկերային յարաբերութիւնները գրեթէ նման են այր միասեռականներու յարաբերութեան, զուտ պրատոնական սէրէն իջնելով մինչեւ ամենազտորելի տափանքը: Քաթիւլ Մէնտէս իր «Protectrices» անուն գործին մէջ կը նկարագրէ «պղատոնական» տիպարներ, — զիրքի տէր կիներ որոնք «պաշտպանեալ» մը շոյելով կ'ապրին: Այդ «պաշտպանեալը» ընդհանրապէս թատրոնի մէջ ծառայող աղջիկ մըն է, որուն հետ ակնարկներ կը փոխանակեն, որուն ծախքերը կը հողան, որուն հետ կառքով պտոյտի կ'երթան, առանց ուղղակի յարաբերութեան մտնելու: Բայց, մեծամասնաբար, բուն սեռային գոհացումն է այս հետապնդումներուն իսկական նպատակը, և անոր կը հասնին համբոյրներով, գիրկընդխառնումներով, ծննդական գործարանները շօշափելով կամ վերջապէս սափիփովականութեամբ, երբ մէկը այր կ'ըլլայ և միւսը կին:

Բայց խիստ յատկանշական տարբերութիւն մը կայ երկու սեռերուն միջև: Երբ միասեռական

կին մը ուղէ հրապուրել մանկամարդ աղջիկ մը, դիւրաւ կը յաջողի: Նախ անոր համակրութիւնը կը շահի պղատոնական սիրոյ մը գգուանքներով, որոնք հագուազէպ չեն կիններուն մէջ: Համբոյրներ, գիրկընդիսառնումներ, գգուանքներ, միւսնոյն անկողնին մէջ պառկել՝ այնքան զարմանալի կամ անբնական չեն աղջիկներուն որքան մանչերուն համար. և այս կարգի մտերմութիւնները խորշում չեն պատճառեր նոյն իսկ մտքով և մարմնով առողջ աղջկան մը: Ու աստիճանաբար, վարպետ հնարքով մը, միասեռական կինը կը յաջողի հեշտագրգիւ գգայութիւններ պատճառել իր գոհին, համբուրելով անոր ստինքները և շոյելով ծլիկը: Շատ անգամ այս գգուանքներուն առարկան չի հասկնար թէ անբնական կամ անվայել բան մը տեղի կ'ունենայ. կամ պարզապէս անձնատուր կ'ըլլայ անոնց հեշտանքին, առանց անդրադառնալու, և ինքն ալ իր կարգին կը տափօտի:

Եթէ ուշադրութեամբ նկատողութեան առնենք կնոջ բնութիւնն իսկ, պարզ կ'երեւայ թէ ինչպէս կարգ մը կնոջական յափշտակութիւններ կրնան անդիտակցարար նախ պղատոնական և յետոյ տափական սիրոյ փոխուիլ: Ամէնէն առաջ, այդպիսի կիները շատ լաւ կը հասկնան իրար չափազանց կը համակրին իրարու, մտերմական յորջորջումներ կուտան, իրար կը փաթթուին, համբոյրներ կը փոխանակեն, ամէն կարգի գգուանքներ կը փորձեն: Յետոյ, գգուանքներու տեսակները յառաջանալով, կուգան անզգայաբար և գրեթէ անդիտակցաբար կը յանդին հեշտական

գրգռումներու: Եւ ահա թէ ինչպէս կ'ըլլայ որ մտքով և մարմնով առողջ՝ բնական կին մը, կանոնաւորապէս հրապուրուելով թրիպատէ մը, վերջը վերջը կը սիրահարի անոր և տարիներով սիրային ծայրայեղութիւններ կը գործէ անոր հետ: Տօքդ. Փօրէլ կը պատմէ թէ զարգացած կին-միասեռական մը իրեն խոստովանեցաւ որ հրապուրած և այլասերած էր տասերկու առողջ մանկամարդուհիներ, որոնց բոլորն ալ սիրահարեցան իրեն:

Այսպէս ուրեմն, մտքով-մարմնով առողջ տղամարդ մը՝ ուրիշ տղամարդու մը հանդէպ ունեցած համակրութեան կամ նոյն իսկ խանդավառ գուրգուրանքին մէջ երբեք չի դներ սեռային ո՛ր և է գգայութիւն. ան շատ փափաք չզգար համբուրելու կամ շոյելու իր ամէնէն սիրած բարեկամը. հետեւաբար, ո՛ր և է զգայասիրական՝ տափական գգուանք երկու այրերու միջեւ՝ կը նշանակէ թէ միասեռականի մը առջեւ կը զբտնուիք:

Իսկ կնոջ քով, ինչպէս ըսինք, համակրութեան չափազանց ջերմ գգացումները դիւրաւ յառաջ կը բերեն համբուրելու, գգուելու, զրկելու տափանքներ: Այդպիսի գգուանքները յաճախ գգայասիրական տարտամ վայելք մը կը պատճառեն կնոջ: Երբ այդ վայելքը կը տանի դէպի աստիճանական գգուանքներ, կը վերջանայ՝ կ'այլասերի փոխադարձ ծանանականութեամբ ևն.: Սակայն և այնպէս սերտօրէն կապուած կը մնայ հոգեկան յափշտակութեան և համակրութեան գգացումներուն, որոնցմէ չի կրնար անջատուիլ:

ինչպէս անջատ ու անկախ է տղամարդուն մէջ: Թերեւս ո՛չ մէկ պարագայի մէջ այնքան բացայայտ կ'երեւի երկու սեռերուն տարբերութիւնը, որքան միասեռական կնոջ մը և իր զուհերուն յարաբերութեան մէջ: Միասեռական կիներն ալ խորշում կը զգան բնական զուգաւորութենէն:



2.— Յաւառիք Վաւառսութիւն

Սեռային մոլութիւններու մէջ, միասեռականութենէն շատ աւելի սովորական է ուրիշ երեւոյթ մը, ցաւառիք վաւառսութիւնը, — «Սատականութիւն» և «Մագոխականութիւն», զոր Շրէնք Նոյնիկ բնորոշեց *algolagnia* ընդհանուր անունով:

Ինչպէս դիտել կու տայ Տոքզ. Պլօխ, եթէ մէկ կողմ դնենք կարգ մը ծայրայեղութիւններ — ինչպէս սպանութիւն կամ անձնասպանութիւն՝ տուխանքի համար — արկղանիան իր ամենաթեթեւ ձևերուն մէջ՝ սեռային ամենատարածուն խաթարումներէն մէկն է: Փորձառու կին մը կը խոստովանէր բռնկին թէ ինք միայն մէկ տղամարդ ճանչցաւ որ զերծ էր սատական ցանկու-

թիւններէ. իսկ միւս կողմէ, շատ քիչ կիներ կան որ ազատ ըլլան այդպիսի մոլութիւններէ: «Յաւառիթ վաւառսութիւնը» ամենախոր արմատներ ունի կենսաբանութեան մէջ. իր կորիզն է՝ հանոյթ ուրիշներու ցաւով կամ իր իսկ ցաւով (այս տեղ «ցաւ» բառը կը գործածուի իր ամենալայն իմաստով, թէ մտաւոր և թէ մարմնական): Եւ այս՝ սիրային գործունէութեան տարրական մէկ երեւոյթն է: «Սչրը իսկ և իսկ ցաւ է», կը գրէ պարսիկ բանաստեղծ Բումի: Յաւառիթ վաւառսութիւնը ամենամեծ դեր կը հատարէ թէ սոսկական անհատի կեանքին և թէ ընդհանրապէս քաղաքակիրթ մարդկութեան կեանքին մէջ: Անոր միջոցաւ կարելի է աստիճան մը թափանցել մարդկային հոգիի թաքուն խորութիւններուն, տեսնել նախնական-անասնական բնազդին զուգորդութիւնը՝ ամենարարձր գաղափարականութեան հետ:

Հաճոյքը և ցաւը երկու տիեզերական ոյժեր են, անբաժան իրարմէ: Սիրոյ հաճոյքը և սիրոյ ցաւը, ստեղծագործութեան և քանդումի ոյժերը, — երկուորեակ եղբայրները, ինչպէս կ'ըսէ բանաստեղծ Լէփարտին — բաժնուած են շա՛տնուրբ քօղով մը: Այս գաղափարը առաջին անգամ երեւան հանեց Սատի մարքիզը, ֆրանսացի այդ անարկու դէմքը, որուն վէպերը կը տքան վաւառսոտ նկարագրութիւններու ծանրութեան տակ: Եւ իր անունով կոչուեցաւ հաճոյքի առարկային ցաւ առիկու երեւոյթը, անգլիութեան վաւառսութիւնը (*sadism*). Թէև մարքիզը կ'ընդունի

նաև չարչարուելու վաւաշոտութիւնը, այսինքն միևնոյն երեւոյթին կրաւորախան մասը, որ հեղինակ Սախէր Մազոխի անունով կոչուեցաւ մազոխականութիւն (masochism):

Թէ ներգործական և թէ՛ կրաւորական «ցաւառիթ վաւաշոտութիւնը» լաւ ըմբռնելու համար, ամէն բանէ առաջ պէտք չէ մոռնանք որ զուտ կենսաբանական երեւոյթի մը հետ գործ ունինք, որ կ'արտայայտուի ամէն առողջ՝ բնականն սիրոյ մէջ: Սեռային գործողութիւնը և՛ ցաւ և՛ հաճոյք կը յաւաստեմք անքակտելի զուգորդութեամբ: Սիրոյ գիրկընդխառնումը «անոյշ ցաւ» մըն է, ցաւագին հաճոյք մը, ինչպէս կը նկարագրէ Սիրելու Ճամբաները» գրքին հեղինակը:

Վաւաշոտութեան զգացումին բուն էութիւնը մութ կը մնայ տակաւին, բայց պարզ է որ ցաւառիթ զգայութիւններ անբաժան մաս կը կազմեն անոր: Ցաւը աւելի որոշապէս կ'արտայայտուի բուն իսկ սիրոյ գիրկընդխառնութեան մէջ, — ինչպէս մոլեգին փաթթուքներ, զայարումներ, ակռայի կծրումներ, ճիշեր և խածատումներ, թէ կնոջ և թէ տղամարդուն կողմէ: Լուկրետիոս վառ գոյներով կը նկարագրէ զուգաւորութեան ներգործական և կրաւորական ցաւերը: Այս պարագային սատականութիւնը անշուշտ կը տիրապետէ տղամարդուն կողմէ — թէև ո՛չ տարամերժօրէն — իսկ մազոխականութիւնը՝ կնոջ կողմէ — թէև, դարձեալ ո՛չ տարամերժօրէն: Օրինակի համար, սատական սիրային խաթարումները աւելի յաճախագէտ են կիներուն կողմէ, մասնաւորապէս

վարենի ցեղերուն մէջ. իսկ պաւ ժողովուրդներուն մէջ, աւելի այրերն են որ համբուրելով կը խածնեն զուգաւորութեան ատեն:

Անանուն մղումներ

Կը փրփրին կուրծքիս քակ,
 Ինչպէս մրրիկ մը,
 Կ'ուզեմ խածնել քեզ, աղաւնեա՛կս,
 Կ'ուզեմ խածնել քեզ, ան՛ուսս,
 Այդպէ՛ս կը բելադրէ իմ ցանկութիւնս, իմ սեռս...
 Կ'երգէ գերմանացի բանաստեղծը:



Ա. Սասախանութիւնը կամ Սասիզմը, ինչպէս ըսինք, հաճոյքի առարկան չարչարելու ձգտումն է, և սովորաբար, եթէ ոչ միշտ, ինքնածին ու ժառանգական է: Զուգաւորութեան ամենասատիկ հեշտանքի պահուն, հազուադէպ չէ որ այրը կամ կինը խածնէ կամ ձանկրտէ, իր տուփական գիրկընդխառնումի մոլեգնութեան մէջ: Լօմպրօզօ մանրամասնօրէն կը պարզէ թէ սեռային ի՛նչ ծայրայեղութիւններու — թէ՛ հեշտագրգիւ և թէ՛ միանգամայն վայրագ — անձնատուր կ'ըլլան զինուորները, որոնց սպաննելու կատաղութիւնը ազատ ասպարէզ գտած է պատերազմի մոլեգնութեանէն: Այս պարագային պատճառն է որ արդիւնքին տեղ կ'անցնի կամ փոխադարձաբար: Այսպէս, ճակատամարտի մոլեգնութեան հետեւանքով, հոգին

կ'ենթարկուի հեշտանքի մոլեգնութեան. ինչպէս որ, հակառակ իմաստով, հեշտանքի սաստկութիւնը յաճախ ծնունդ կու տայ բռնութեան և արիւնասխանձ կիրքերու: Ջարդի, բռնաշարման, առեւանդութեան պատմութիւնները ինչքան կենդանի փաստեր կը ներկայացնեն այս տեսակէտով...:

Եւ արդէն, սէրն ու բարկութիւնը այն երկու ամենաբուռն ուժերն են որ ամէնէն շատ շարժում կ'արտադրեն: Այս պարզ իրողութիւնը կը բացատրէ թէ ինչպէս այդ երկուքը կրնան զուգորդուիլ շղթայազերծ կիրքերու մոլեգնութեան մէջ: Ասկէ զատ, մարդուն մէջ կայ առհաւակաւ բնազդ մը՝ ժառանգութիւն՝ իր հայրերէն որոնց արունները կատաղի կռիւներ կը մղէին, բռնութեամբ տիրանալու համար էգերուն, ինչ որ հեշտանք կը պատճառէր իրենց, — իբրեւ հետեւանք իրենց տափանքի առարկային բռնի նուաճման:

Ազգագրութիւնը և տիեզերական պատմութիւնը բազմաթիւ հետաքրքիր փաստեր կը ներկայացնեն այս մասին: Բովանդակ աշխարհի մէջ, թէ ներգործական և թէ կրաւորական չարչարանքը կը տիրէ հազարումէկ ձեւերով, և խմբական և կամ անհատական, և տիրած է բոլոր ժամանակներու և բոլոր երկիրներու մէջ: Այդ առհաւական բնազդին զարգացման նպաստած են պատերազմները, սրախաղութեան փորձերը, մարդորսութիւնը, ցլամարտները, զգայացունց սոսամները, հրոպարակային մահապարտութիւնները, հաւատաքննական և կախարդական դատաւարու-

թիւնները, արգի Սամերիկայի լինչական բռնութիւնները, նաեւ յեղափոխութիւնները (այս մասին բազմաթիւ կենդանի փաստեր քաղուած են ուսական վերջին շարժումէն), խմբական կոտորածները, ստիական բարբարոսութիւնները, մարդակերութիւնը, հաւատք՝ կախարդանքի և մարդազայրի մասին, ստրկութիւնը, կամ միջին դարու պատուհանները; ճգնութիւնն ու մարտիրոսութիւնը, հեշտագրգիւ արբանեակներ պահելու սովորութիւնը (ինչպէս կար Իտալիոյ մէջ) ևն.:

Թերթերը շարունակ կը նկարագրեն զարնուրելի շահատակութիւնները ամբօխային ցոյցերու, կամ «պատժական» արչաւախութիւններու, որոնք մոռցած իրենց պաշտօնը, աջ ու ձախ կը սպաննեն պարզապէս արիւնի ծարաւին համար. անոնք չեն խնայեր ո՛չ մանուկներուն, ոչ ալ կիներուն, — չյիշելու համար աւելի վայրագ պատիժները, որոնց նկարագրութիւնն հատորներ պիտի բնայէր:

Այս վայրագութիւններուն մէջ ալ տեսակ մը հաճոյք կայ, բուռն գրգռում և վրդովում, որ, իր կարգին կը սրէ տափանքը: Մարքիզ տը Սատ ալ կը խոստովանի որ հօր յուզումներէ ծնած գրգռումը մեծ ազդեցութիւն կը գործէ սեռային կիրքերու վրայ, կը սաստկացնէ զանոնք, կը փոփոխէ և անբնական, տարականոն արտայայտութիւններու կը մղէ: Բոլոր զգայութիւնները փոխադարձաբար կ'ազդեն իրարու վրայ: Բարկութիւնը, երկիւղը, կատաղութիւնը, ատելութիւնը, անգթութիւնը կ'աւելցնեն սեռային ճնշումը և հետեւաբար կը սաստկացնեն այդ ճնշումն արձակուելու հաճոյքը:

Բազմաթիւ բնախօսներ և մարդաբաններ փորձած են բնաշրջակաւ սկզբունքներով բացատրել բունութեան՝ անգթութեան և սեռային կիրքի առնչութիւնը: Անոնք կ'ըսեն թէ անհատին մէջ սեռային ցանկութեան գոհացումը սիրային ճակատամարտ մըն է, որ կը պահանջէ շատ մը հակառակորդներու գոհումը՝ սիրականին սիրտը շահելու համար: Ահա թէ ինչպէս ծնունդ առած է արիւն թափելու և սիրային վայելքի զուգորդութիւնը: Երբեմն ճակատամարտի մոլեգութիւնը յանկարծ մրցակցէն կը փոխադրուի բուն իսկ էգին վրայ, ստանալով սատական հանգամանք մը, ինչպէս յաճախ կը պատահի սիրային շահատակութիւններու մէջ և հանրակիներու համար: Այս սերտ կապակցութեան աւելի բացարձակ և կենդանի հետքերը կը գտնուին շատ մը ազգերու ժողովրդական սովորութիւններուն մէջ: Այսպէս, Նոր Բալեանիոյ մէջ, աղջիկները իրենց սիրահարներուն կողմէ կը հետապնդուին անտառին մէջ, և նուաճուելէ ու բռնաբարուելէ յետոյ, «ես կը բերուին, կը խածատուին, կը ճմլուին, կը ճանկրտուին, իրենց ուսերն ու ծոծրակները կը ծածկուին խածտուքներով»:

Կինն ալ, իրրեւ աւելի դիւրագրգիւ, աւելի բարձր՝ արհեստական անգթութիւն մը կը ցուցնէ սուփանքի արտայայտութեան մէջ: Մնաց որ, սղամարդու ամէնէն ծայրայեղ սատականութեան, անգթութեան սովորաբար կը միանայ կանացի փափկութիւն մը: Տոքդ. Պլօխ, կիներուն, ինչպէս և ջլատ, մեղկ, կնամարդի ցոփակեացներուն

անգթութիւնը կը վերագրէ վախի և երկչոտութեան, իրենց իսկ անձին տկարութեան նուաստացուցիչ գիտակցութեան, որ անգթութեան միջոցաւ վրեժ կը շուօժ ուրիշի մը ուժով, և պահ մը կը յղփանայ այդ ոյժի արբեցութեան մէջ: Ապահովաբար այս է պատճառը որ զարհուրելի անգթութիւններ կը գործէին ուժասպառ ցոփակեացներ, ինչպէս Տիբերիոս, Կայիգուլա, Ներոն, Դոմետիանոս, Հէլիօկապուլոս և Կեսար Պորճիա, իսկ կիներէն՝ Կատարինէ տը Մէտիչի, Մէսայինա, և այն «փափուկ գաղթածին ևւրոպացի կիները, «որոնք, սեւամորթ ստրուկի մը հետ զուգաւորութեամբ հեշտական հաճոյքներ վայելելէ յետոյ, կը սկսէին վայելել եւ այդ ստրուկին անողորմաբար խարազանուելու հաճոյքը...» Կատարինէ իր իսկ աչքերուն աւջեւ խարաղանել կուտար պատուակալ տիկիները, և վարդերով լոգանք կ'ընէր, միեւնոյն ատեն դիտելով բողոքականներուն ջարդը: Կիներուն անգթութեան ամենաթեթեւ ձեւն է արիւննիւլ աստիճան խածնել տղամարդը՝ մերձաւորութեան պահուն:

Ներգործական, բայց մանաւանդ կրաւորական անգթութեան գլխաւոր պատճառ մըն է կնոջ և տղամարդուն սեռային տարբերութեան բնութիւնը, անոնց խառնուածքն իսկ: Այրը որքան փոթորկոտ, բուն գործունէութիւն կը ցուցնէ, նոյնքան կրաւորական է կինը: Այս վերջինը նմանցուցած են մագնիսի մը, որ, հակառակ իր երեւութական անշարժութեան, անդիմադրելի կերպով կը քաշէ և կը բռնէ երկաթը, այսինքն տղամարդը, տեսակ մը գերի դարձնելով զայն: Այս կրաւորակա-

նութիւնն է պատճառ, որ կինը անվրիպելի գերակշռութիւն ունի զուտ զգայասիրական սիրոյ մէջ: Միայն ֆիզիքական բնութիւնը զերազանցութիւն մը կուտայ իրեն՝ տղամարդուն վրայ, թէև երեւութապէս անոր ստորադասուած ըլլայ: Այսպէս, կեդրոնական Պրազիլիոյ Հնդիկներուն մէջ տղամարդը պաշտօնապէս տէր ու տիրականն է կնոջ, — և սակայն կինը ուզածը կրնայ լնել: Պարագան նոյնն է քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճաններուն մէջ ալ, և մեծամասնաբար զգայասիրական յարաբերութիւններն են որ կը ճշգրեն կիներու և այրերու զիրքերը: Ոչ միայն եւրոպական քաղաքակրթութեան մէջ, այլ եւ մեր շուրջը, Թուրքիոյ մէջ անգամ, Պոլիս ըլլայ թէ իզմիր, կնկանը գերի կը դառնայ անոր տղամարդը, որ առաջին օրէն իսկ, անոր տիրապետութեան ենթարկուած է իր սեռային չափազանց պահանջներուն, իր տուփամոլութեան հետեւանքով:

Այդ պահանջները մշտապէս կնոջ սանձին տակ կը պահեն այրը իսկ այս տիրապետութիւնը հետզհետէ կ'ազդէ եւ ուրիշ յարաբերութիւններու վրայ: Եւ շատ սովորական երեւոյթ է տեսնել այրեր որոնք գերի դարձած են իրենց հոմանուն հիներուն, ճիշդ ինչպէս որ իշխաններ կամ թագաւորներ պարզ սեռային յարաբերութեամբ կը կապուին այս կամ այն կնոջ հետ, իբրև սիրուհի կը գործածեն զայն, բայց յետոյ աստիճանաբար կը տեսնեն որ ան ալ կ'ուզէ իր ձայնը լսեցնել պետական-քաղաքական գործունէութեան մէջ...

Ո՛րքան աւելի մեծ ըլլայ կնոջ կրաւորականութիւնն ու սեռային պաղութիւնը, այնքան դիւրութեամբ իր տիրապետութեան տակ կ'առնէ այրը: Այս նպատակին սիրական միջոցներէն մէկն է պրակտիկ (coquetterie): Անգլեւսաքսոն ֆլիրտը աւելի հոգեկան-գեղազիտական պչրանք է, մինչ բուն փոփոք զուտ զգայասիրական միջոցներու կը դիմէ, սեռային բընազգը միայն կը շահագործէ, առանց կարեւորութիւն տալու մտային յատկութիւններուն: Կինը բնազգօրէն կը ձգտի տղամարդը նուաճելու, հրպատակեցնելու. և հեշտական գրգռումը իր լաւագոյն միջոցն է: Եթէ այրը գերի և զոհ է իր զգայասիրութեան, կրաւորական չարչարանքի՝ մազոխականութեան տրամադրութիւն կը ցուցնէ. իսկ եթէ իր ուժով և իմացականութեամբ կը յաղթէ այդ տկարութեան, և սեռային յարաբերութեանց մէջ ցուցուցած բնական գործունէութեամբ ու կորովով, անհոգութեամբ և վայրագօրէն կը վարուի կնոջ հետ — որ ա՛յլ կատարելապէս կրաւորական դարձած կ'ըլլայ — ներգործական չարչարանք՝ սատականութիւնն է որ կը տիրապետէ իր մէջ: Ահա թէ ինչպէս կ'ըլլայ որ սատականութիւնն ու մազոխականութիւնը յաճախ կ'երեւին միեւնոյն անհատին մէջ:

Սատականութեան յատկանիչներէն մէկն է ձաղկելու խարաղանելու մոլութիւնը (flagellomania), սեռային գրգռում ստանալու համար: (Մազոխականութեան մէջ ալ կը տեսնուի միեւնոյն պարագան կրաւորական իմաստով, ձաղկուելու,

խարազանուերու ձգտումով, ինչպէս պիտի բացատրենք:)

Այս երեւոյթը կը տիրէ և ստորին աստիճանի կենդանիներուն մէջ: Մասնաւորապէս սալամանտրները ունին ձաղկելու ինքնատիպ ձեւ մը, որ կը գործածուի պոչին միջոցաւ, զուգաւորութենէն առաջ: Մարդկային տեսակին մէջ, ուժգին շփումներ կամ հարուածներ կը տրուին մասնաւորապէս ծննդական գործարաններուն և մանաւանդ յետոյքին, և սաստկացած հեշտանք մը յառաջ կուգայ շնորհիւ ցաւագին զգայութիւններու: Մորթի պարզ մարծումն և շփումն կամ կամիթն ալ կը բաւեն այս արդիւնքը ստանալու, մասնաւորապէս տաք լոգանքներէն ետք, ինչպէս տեղի կ'ունենայ արեւելեան բաղնիքներու մէջ: Անշուշտ երեւակայութիւնն ալ մեծ դեր ունի այս արհեստական հեշտագրգռութեան մէջ, բայց, ձաղկումի կամ խարազանի հարուածներուն տակ, արիւնը աւելի կը հոսի ծննդական գործարաններուն մէջ, և կը սաստկացնէ հեշտական զգայութիւնը: Արիւնի այս խռնումը միաժամանակ յառաջ կը բերէ և կանգնում: Ասոր համար է որ հիները ձաղկում ալ կը փորձէին, անկարողութիւնը դարմանելու համար:

Ներգործական ձաղկումի ատեն, գլխաւոր հեշտագրգիւղ դերը կը կատարեն, — հարուածին տակ դողդղացող մասերուն տեսարանը, մանաւանդ երբ անոնք կը կարմրին կամ նոյն իսկ կ'արիւնին, ենթակային աղաղակները ևն.:

Ձաղկումի տրամադրութիւնը, կրաւորական

ըլլայ թէ ներգործական, ընդհանրապէս կը ծնի պատճառաւ, դիպուածով, — ինչպէս խարազանումի գործողութեան մը տեսարանը, որ ատեն ակահատեսը սեռային գրգռման մէջ կը գտնէ ինքզինքը և կը հասկնայ պատճառը: Այս հետեւանքները կ'ունենան, օրինակի համար, պաշտօնական կամ ծիսական ձաղկումները՝ դպրոցներու, բանտերու, վանքերու, զօրանոցներու ևն. մէջ, ինչպէս և ընկերային խաղերու մէջ, հարուածներու փոխանակութիւնը, խարազանումները ևն.:

Մասնաւորապէս վտանգաւոր է մանուկներու խարազանումը, որովհետեւ անոնց սեռային բնազդը արդէն շատ յաճախ կը գրգռուի յետոյքէն կրած հարուածներով. և յետոյ այս գրգռումը մշտապէս իրենց մտքին մէջ անգլիտակցաբար կը կապուի խարազանումին հետ, որով աւելի ետք յառաջ կուգայ ձաղկումի մոլութիւնը: Ո՛րքան տգէտ ծնողներ կան որ տեսակ մը կուպտութեամբ կը շոյեն, կը հարուածեն մանուկներու յետոյքը, իբրեւ թէ սիրելու համար, բայց առանց մտածելու հետեւանքները:

Գպլոցներուն մէջ, աւելի տարածուած է այդ վտանգաւոր ունակութիւնը, — տղաքը ծեծելու, ձաղկելու սովորութիւնը, որ իբրեւ թէ մանկավարժական պահանջ է: Ուսուցիչը կրնայ, իր գործունէութեան սկիզբը, զերծ ըլլալ ձաղկումի որ և է ձգտումէ: Բայց երբ կը սկսի մարմնական պատիժներ տնօրինել, այդ ձգտումն ալ երեւան կ'ելլէ, և աստիճանաբար ուսուցիչը սեռային հա-

ճոյք մըն այ կը զգայ: Երբ այդ պատիժները կը տնօրինուէին չափաւոր սահմաններու մէջ և պատահաբար—թէեւ մարմնական պատիժը բոլորովին արգիւտած է արդի մանկավարժութեամբ—կարելի է ըսել թէ սեռային կիրքի պարզ խաթարում մը կայ, ինչպէս կը պատահի բազմաթիւ առողջ անհատներու ալ, եթէ նոյն իսկ ուսուցիչ չըլլան: Բայց երբ ձաղկելու կանոնաւոր մոլութիւն մըն է որ կ'աճի և վարակուած անձը միայն չի պատժեր, այլ և կը չարչրկէ, կը տանջէ աշակերտները, և այդ բարբարոսութեան կը դիմէ սովորաբար և անսանական անգթութեամբ,—կը նշանակէ թէ ցաւառիթ վաւաշոտութեան ներգործական ձեւն է որ զարգացեր է ախտաւոր տրամադրութեան մը մէջ:

Այսպիսի դէպք մը պատահեցաւ 1903-904ին, Գերմանիոյ մէջ, ահագին աղմուկ հանելով:—Համպուրկի Եզեռնադատ Ատեանը հանուեցաւ Տիբօլտ անուն ուսուցիչ մը, որ ճպտով չարաչար կը տիէր դպրոցի աշակերտները: Դատարանը դռնփակ մտիկ ըրաւ ձեռնելու գործողութեան ձեւերը, և ամբաստանեալը դատապարտեց մէկ տարի բանտարկութեան և երկու տարի քաղաքային իրաւունքներէ զրկման:

Աւելի յաճախ, ձաղկումի տրամադրութիւնը առաջին անգամ արհեստականօրէն կը գրգռուի բողանոցներու մէջ, որոնց անհրաժեշտ մէկ մասը կը կազմէ ճպտոր: Հազուադէպ է որ բող մը չունենայ այդ պարզ առարկան: Զաղկումի մոլութեան դատական երկիրն եղած է Անգլիան, ուր «ձաղկումի բողանոցներ» կային, ինչպէս կը հաստատէ Տոքթ. Պլօխ: Պատմական օրէնք մըն է Թէրէզա Պըրքլի, որ ոչ միայն հոչակաւոր հաստատութիւն մը ունէր, այլ և հնարած է մասնաւոր գործիք մը, —«Պըրքլի-Ձի»— այրերը խարազանելու համար: Կ'երեւայ թէ, կը յարէ Տոքթ. Պլօխ, Անգլիոյ մէջ իգական սեռը համ կ'առնէ ներգործական և կրաւորական ձաղկումէն: Իսկ գերման հեղինակ մը զիտել կուտայ որ կիները աւելի տրամադիր են ձաղկումի մոլութեան քան այրերը: Այս ձգտումը երբեմն կը քաջալիրուի այր ձաղկողներու կողմէ, որոնք հաճոյք կը զգան կիներ ձաղկելով: Հեղինակ մը կը պատմէ թէ Փարիզի մէջ կան գաղտնի տեղեր, ուր մանկամարդ կիներ և աղջիկներ կը հաւաքուին և կը կազմեն տեսակ մը «դպրոց», ուր այր սատականներ «մարզանք» կը կատարեն ճպտով... Իսկ Սիկֆրիտ Թիւրքել կը յիշէ դերասան մը, —«Առեւանգիչը» — որ առատօրէն վճարելով բողերուն, կը դրդէր զանոնք երբեմն ժամերով դիմադրել իրեն, և յետոյ երեւութապէս տեղի տալ իր գերակշիռ ոյժին: Անգամ մը աղջիկ մը տարու իր տունը, յանկարծ կապեց զայն, և այդ վիճակին մէջ բռնաբարեց:

Շատ անգամ կը չլթայեն ձաղկելի այրը կամ

կինը. զայն անպաշտպան դարձնելու համար, կամ երբ ինքն այդպէս ուզէ: Այս նպատակով այ զանազան գործիքներ կան, ինչպէս շղթայող-աթուռ, որ հնարուեցաւ ԺԸ. դարուն: Այս կարգէն են, նաև, շատ նեղ կոշիկները և ձեռնոցները, չափազանց պղտիկ սեղմիրաններ (corset discipline), որոնք կը գործածուին ձաղկելի տղամարդուն կամ կնոջ կողմէ, և գլխաւորապէս տեսնուած են Անգլիոյ մէջ:

Մարդիկ անգթութեան կը դիմեն ոչ միայն իրենց տուփական զգայութիւնները սաստկացնելու, այլ և երկարատե ցոփութիւններէ բթացած զգայորանքները սրելու համար: Շատ մը բողբեր և մարձող կիներ սատական կը դառնան նոյնքան տրամադրութեամբ որքան սովորութեամբ (վերջինը՝ մազոխական յաճախորդներու հետ մերձաւորուելով), և սեռային հաճոյք կը զգան տղամարդիկը չարչարելով:

Եւրոպացիներուն մէջ, տաք կլիմաներու մէջ բնակութիւնն այ ծնունդ կուտայ տեսակ մը անգթութեան՝ որ կը կոչուի հասարակածային մոզեզնութիւն, և որուն հետեւանքով, բազմաթիւ պաշտօնատարներ, մանաւանդ երբ անսահման լիազօրութիւն ստացած են, զարհուրելի բռնութիւններ կը գործեն հեռաւոր գաղթավայրերու մէջ: Ո՛չ միայն կլիման կ'ազդէ իրենց վրայ, այլ և տիրող բարքերը—մէկ կողմ դրուած ըլլալով պայմանագրական բարոյականի ձեւերը,—և իրենց վարչութեան յանձնուած ցեղը «ստոր» նկատելու հակուժը:

Կարգ մը սատականներ գոհացում կը ստանան բողբեր մտրակելով կամ զանոնք արիւնելու աստիճան խթելով, վիրաւորելով. մինչ ուրիշներ կը նախընտրեն յամրաբար մարտիրոսացնել իրենց զոհը և այսպէս հեշտանքի բարձրագոյն աստիճանին կը հասնին: Կան որ կը գոհանան ստրկացման խորհրդանշական տեսարաններով,—կը ստիպեն կինը՝ ծնրադրել իրենց, պաղատիլ, շնորհ խնդրել ևն.: Ոմանք կը շատանան կնոջ մազերը կարելով կամ ձեւի համար գլուխը գերծելով: Բազմաթիւ սատականներ կը գոհանան իրենց «սիրած» կինը աղտոտելով...

Յաճախ սատականութեան մոլեգնութիւնը մինչև մարդասպանութեան կը մղէ: Կը պատահին մարդակերպ վագրեր, որոնք անտառի մը մէջ հրապուրելով կտոր կտոր կ'ընեն մանկամարդ աղջիկներ: Շատեր կը սկսին զուգաւորութեան բռնադատել զանոնք՝ սարսափեցնելով կամ կիսովին խեղդամահ ընելով: Ուրիշներ գիջութիւն կ'ընեն անոնց բացուած ընդերքին վրայ: Բայց կան այ որ ո՛չ զուգաւորութիւն կ'ուզեն, ոչ այ անոր նմանող բան մը. այլ իրենց հեշտանքը գոհացում կը ստանայ իրենց զոհին սարսափի, տառապանքի և արիւնի տեսարանէն: Անոնք զոհը կը մարտիրոսացնեն՝ սպաննելէ առաջ, և այդ խի է իրենց վայելքը: Կան, վերջապէս, անանկ հրէշներ, որոնք գազանական կատաղութեամբ կտորներ կը լափեն իրենց զոհերու մարմնէն և անոնց արիւնը կը խմեն:

Արեւելեան կտորածներու պատմութիւնները

չատ լաւ կը բացատրեն այսպիսի երեւոյթներ...

Սատականները կատարեալ վարպետներ կը դառնան սպաննելու և անծանօթ մնալու արհեստին մէջ: Եւ, իրենցմէ շատերը քստմնելի անպատկառութեամբ, ստոն անտարրերութեամբ կը նկարագրեն իրենց վայրագութիւնները: Ամէն տեղ և ամէն օր թերթերը և դատարանները արձագանգ կ'ըլլան այսպիսի դէպքերու: Կարգ մը սատականներ մանուկներ կամ այրիք կը սպաննեն, երբ մանկամոլութեան կամ արուագիտութեան ախտով ալ վարակուած են:


Կատաղի սատականները միայն կենդանի մարդուն վրայ չէ որ կը յարձակին: Շատեր յիսկնեւոր ետեւէ կ'իյնան, կը յօշոտեն կամ կը բռնաբարեն զանոնք, և այսպէս գոհացում կը ստանայ իրենց սուփանքը: Ուրիշներ անասուն կը սպաննեն, և անոնց չարչարանքն ու արիւնը կը մեղմացնէ իրենց կիրքը:

Նմանօրինակ պատմական տիպարներուն մէջ, թերեւս ամէնէն կատաղիներն են Որովայնահատ ձէքի նմանները, որոնք իրենց զոհերուն առջեւ դարանի կը սպասեն կատուներու պէս, անոնց վրայ կը խոյանան, հաճոյք կը զգան, կը զուարճանան անոնց սարսափով և զանոնք կը սպաննեն կոտամահ՝ մշտաչարչար մահով, որպէսզի վաւաչուտութեամբ թաւալին անոնց արիւնին մէջ: 1902ին Նիւ Եօրքի մէջ մեծ սարսափ պատճառեց նոր որովայնահատ ձէք մը և Պերլինի մէջ՝ զարհուրելի մանկասպան մը, որ մէկ օրուան մէջ քանի

մը պզտիկ տղոց փորերը ճեղքեց մկրասներով և չձերբակալուեցաւ:

Սատականութեան մէկ սովորական երեւոյթն է նաև գողնալու նոյութիւնը, որ շատ յաճախ ծնունդ կ'առնէ սեռային մղումներէ, — արբունքի, դաշտանի անկանոնութիւններէ ևն.: Միշտ պատահած են դէպքեր երբ մեծահարուստ կիներ շարունակ անարժէք տուարկաներ կը գողնան, որոնց ոչ իսկ պէտք ունին: Այսպիսիները գողութեան պահուն զօրաւոր սուփանք մը կ'ունենան, որուն կ'ընկերանայ հոտու՝ ծննդական գործարաններէն: Ասոնք գողութիւնը կը գտնեն իբրև հետևանք սնդիմադրելի մշուճի մը, և յետոյ կը զղջան: Մեր Հայաստանն անգամ կը ներկայացնէ այսպիսի բնորոշ օրինակներ:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ



ՀՀ Ազգային ցրադարան



NL0793826

